

ՆՈՐԱՅՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՅՈՑ»-Ի
ՊԱՏՄԱՆՈՔԵՎՈՐ ՆԱՄԱԿԱՐԳԸ
ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ**

929: 947.925 և ուրիշներ հարկեր և այլն + 2

ՀՀ գիտութեամբնաբանական և պատմական
գիտութեամբնաբանական հաստիճան

ՆՈՐԱՅՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՄՈՎԱԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ
«ԴԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»-Ի
ՊԱՏՄԱՀՈԳԵԿՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ
ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

A 97143

ՄԵՍՐՈԲ ԱՐՔ. ԱՇԺԻԱՆ
ՍԱՏԵՆԱԾԱՐ
72



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
72

Handwritten signature in blue ink.

Երևան
Պատմության ինստիտուտ
2011



ՀՏԴ 941 (479.25):22
ԳՄԴ 63.3(2Հ)+86.3
Դ171

Աշխատանքը կատարված է ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտում

Գրախոս՝ Պ. Հ. Հովհաննիսյան

Դանիելյան Նորայր

Դ 171 Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի պատմահոգևոր համակարգը և Աստվածաշունչը / Ն. Է. Դանիելյան ; Գիտ. խմբ.՝ Է. Լ. Դանիելյան.- Եր.: Պատմ. ինստ. հրատ, 2011.- 224 էջ.- («Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշար, 72):

Գրքում ներկայացված է Մեսրոպ Մաշտոցի՝ հայ գրերի գյուտով (405 թ.) Աստվածաշնչի գրավոր թարգմանվելուն հաջորդած ժամանակաշրջանում, հայ պատմիչների և հատկապես Մովսես Խորենացու (V դ.)՝ պատմական և հոգևոր հարցերում ուշադրության կենտրոնում լինելը: Հատուկ հետազոտված է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում պատմական իրադարձությունների ու հոգևոր երևույթների փոխադրվածությունը նախաքրիստոնեական ու քրիստոնեական դարաշրջանների արժեքային ամբողջական համակարգում:

ISBN 978-99941-73-56-3

ՀՏԴ 941 (479.25):22
ԳՄԴ 63.3(2Հ)+86.3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում քրիստոնեությունն աշխարհում առաջինը պետական կրոն հռչակելուց (301 թ.) հետո եկեղեցիներում քարոզվող Աստվածաշունչը՝ Մեսրոպ Մաշտոցի իրականացրած հայ գրերի գյուտից (405 թ.) հետո գրավոր թարգմանվելով հայերեն, V դարից պատմագրության և աստվածաբանության ուշադրության կենտրոնում էր: Հայ պատմագրության մեջ Աստվածաշունչի ուսումնասիրության խնդրում կարևորվում է Մովսես Խորենացու (V դ.) «Պատմութիւն Հայոց»-ը¹: Ազգային և քրիստոնեական արժեքների փոխադրվածությամբ՝ պատմական իրադարձություններն շարադրելիս ու դավանաբանական հարցերին անդրադառնալիս՝ Պատմահայրն՝ Աստվածաշունչն օգտագործել է որպես հոգևոր և դավանաբանական դրույթների սկզբնաղբյուր:

Աստվածաշունչի հայերեն թարգմանությունը² նշանակալից երևույթ էր Հայ Առաքելական Եկեղեցու ազգային կյանքով ապրելու գործում, որի կարևորագույն բնագավառներից էր հայերեն թարգմանական և ինքնուրույն գրականության հիման վրա հայոց գիտակրթական համակարգի զարգացումը: Թարգմանական գործը, ինչպես նաև պատմագիտության, փիլիսոփայության և աստվածաբանության ասպարեզներում՝ սուրբգրյան վկայակոչումներ-

¹ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց: Աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913 (Լրացումները՝ Ա. Բ. Սարգսյանի, Երևան, 1991) (այսուհետև՝ Մովսես Խորենացի): Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ., ներածություն և ծան.: Ստ. Սալիսայանի, Երևան, 1961 (այսուհետև՝ Մովսես Խորենացի) (Մովսես Խորենացու և մյուս հայ պատմիչների գրաբար տեքստերի արևելահայերեն փոխադրություններում որոշ տեղեր սրբագրել ենք ըստ հրատարակված բնագրերի):

² XVIII դ. Մ. Վ. Լակրոզը ամբողջ Աստվածաշունչի հայերեն թարգմանությունը գերազանց գնահատելով (M. La Croze, Histoire du Christianisme d'Ethiopie et d'Arménie, La Haie, 1739 ; ch.7, p. 333), հատկապես, Նոր Կտակարանը հին թարգմանությունների շարքում համարել է «Թագուհի թարգմանությանց» (Le Nouveau Testament de notre Seigneur Jesus-Christ. Traduit en Français sur l'original Grec avec des notes littérales. T. I, 1718 ; p : CCXI): Տես նաև՝ Դ. Ս. Անասյան, Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը, «Էջմիածին», ԺԱ-ԺԲ, 1966, էջ 71:

րով քրիստոնեության դավանաբանական հիմնադրույթների մեկնությունները մեծագույնս նպաստեցին Հայաստանում հազարամյակների խորքից եկող պատմամշակութային արժեքների հետագա զարգացմանը:

Հայաստանում վաղ միջնադարում տեղի ունեցած իրադարձությունները խորը հետք են թողել հայ ժողովրդի կյանքում: IV դ. վերջին տասնամյակներում, երբ հայ Արշակունյաց թագավորությունը հայտնվեց պարսկա-բյուզանդական բաժանման իրողության առջև, իսկ այնուհետև՝ 428 թ. անկում ապրեց, առավել կարևորվեց Հայ Առաքելական Եկեղեցու նշանակությունը հոգևոր-մշակութային ավանդույթներով ազգային միասնության պահպանման գործում: Հայոց քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացումը բախվեց օտար տերությունների՝ Սասանյան Պարսկաստանի և Արևելահռոմեական՝ Բյուզանդական կայսրության զավթողական քաղաքականությանը: Անհրաժեշտ էին հզոր ազդակներ՝ նրանց նվաճումներին դիմակայելու և ազգային-ազատագրական պայքարը գաղափարապես նախապատրաստելու նպատակով՝ ուժերը կենտրոնացնելու և սեփական ազգային արժեհամակարգի պահպանմամբ՝ պատմական ուղին շարունակելու համար: Այս խնդրում կարևորվեցին ինչպես ռազմաքաղաքական և տնտեսական, այնպես էլ հոգևոր և մշակութային գործոնները:

Ազգային և քրիստոնեական արժեքների ներդաշնակումով՝ Մովսես Խորենացին պատմական իրադարձությունների և դավանաբանական երևույթների լուսաբանմամբ անդրադարձ է կատարել Աստվածաշնչին: Այս խնդրի հետազոտության աղբյուրագիտական հիմքն են կազմում Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը³ և Աստվածաշունչը⁴, ինչպես նաև V դարի մյուս

³ Մովսես Խորենացին իր հերթին «Չին պատմությունների» մասին խոսելիս՝ հիշատակել է Բերոսոսին (մ. թ. ա. IV-III դդ.), Աղեքսանդր Բազմավեպին (մ. թ. ա. I դ.), Աբյուղենոսին (II դ.) և Կեփաղիոնին (II դ. առաջին կես), որոնց աշխատությունների մասին տեղեկություններ են պահպանվել Եվսեբիոս Կեսարացու երկում (տես՝ Ա. Թոփչյան, Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը, Երևան, 2001):

հայ պատմիչների՝ Կորյունի⁵, Ագաթանգեղոսի⁶, Փավստոս Բուզանդի⁷, Եղիշեի⁸, Ղազար Փարպեցու⁹ և հետագա դարերի հայ պատմիչների՝ Սեբեոսի¹⁰ (VII դ.), Թովմա Արծրունու¹¹ (IX դ.), Հովհաննես Դրասխանակերտցու (X դ.)¹², Ասողիկի (X դ. երկրորդ կես-XI դ. առաջին կես)¹³, Սամուել Անեցու (XII դ.)¹⁴ երկերը: Հետազոտության ոլորտն են ներառվել «Կնիք հավատոյ»¹⁵ և

⁴ Գիրք Աստուածաշունչք Հին և Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1860, Աստուածաշունչ. Մատեան Հին և Նոր Կտակարանների: Արեւելահայերէն նոր թարգմանութիւն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994:

⁵ Պատմութիւն վարուց և մահուան առն երանելոյ սրբոյն Մաշթոցի վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին – տես՝ Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմ., առաջաբանով և ծան. ի ձեռն Ս. Աբեղյանի, Երևան, 1981 (այսուհետև՝ Կորյուն):

⁶ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Սկրտչեանի և Ստ. Կանայեանցի, Տիգրիս, 1909 (այսուհետև՝ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց): Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց: Աշխարհաբար թարգմ. ներածութիւնով և ծան.՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1977 (այսուհետև՝ Ագաթանգեղոս): Ա. Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի արաբական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը – «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1973, N 1, էջ 209-237:

⁷ Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց: Բնագիրը Զ. Պատկանյանի, թարգմ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987 (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ):

⁸ Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին: Թարգմ. և ծան.՝ Ե. Տեր-Սիմասյանի, Երևան, 1989:

⁹ Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան: Աշխատ. Գ. Տեր-Սկրտչեան և Ստ.Մալխասեան: Աշխարհաբար թարգմ. և ծան.՝ Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982 (այսուհետև՝ Ղազար Փարպեցի):

¹⁰ Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979:

¹¹ Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս էած Զ. Պատկանեանի, Ս. Պետերբուրգ, 1887:

¹² Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

¹³ Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885 (այսուհետև՝ Ասողիկ):

¹⁴ Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:

¹⁵ «Կնիք Հաւատոյ» Ընդհանուր սուրբ եկեղեցւոյ յուղղափառ և սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց, յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ». հրատարակություն Կարապետ եպիսկոպոսի, Էջմիածին, 1914 (Լուսատիպ վերահրատարակություն), Անթիլիաս, 1998:

«Կանոնագիրք Հայոց»-ի¹⁶, «Գիրք թղթոց»-ի¹⁷ նյութերը և փիլիսոփա-աստվածաբաններ Եզնիկ Կողբացու (V դ.)¹⁸ ու Ստեփանոս Սյունեցու (VII դ. վերջ – 735 թ.)¹⁹ երկերը: Կարևոր են նաև օտար սկզբնաղբյուրներից [(Ս. Կղեմես²⁰ (I դ. երկրորդ կես – II դ. առաջին տասնամյակ), Հերոնիմոս²¹ (347 – 420 թթ.), Լեբուբնա (Ղեբուբնա)²², Եվսեբիոս Կեսարացի²³ (260-339 թթ.), Ամմիանոս Մարկելլինոս²⁴ (325 թ.-IV դ. վերջ)] քաղված տեղեկությունները:

Աստվածաշնչի սկզբնաղբյուրային նշանակությունը շեշտադրվում է Մովսես Խորենացու և մյուս հայ միջնադարյան պատմիչների աշխատություններում եղած աստվածաշնչային թեմաներին անդրադարձ կատարելու բնույթով և առանձնահատկություններով:

Մովսես Խորենացու երկի «գերքննադատների»՝ նրա ժամանակը V դարից VIII կամ IX դարերը տեղափոխողների և «Պատմութիւն Հայոց»-ի գաղափարական նշանակությունը արժեզրկողների ու այդպիսի մոտեցումներից բխող դրույթների սնանկությունն ապացուցվում է Պատմահոր երկի բովանդակած նյութով և մյուս գրավոր սկզբնաղբյուրների պատմաբանասիրական

¹⁶ Կանոնագիրք Հայոց, հ. Ա, հ. Բ, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964-1971 (այսուհետև՝ Կանոնագիրք Հայոց):

¹⁷ Գիրք թղթոց. Մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901 (երկրորդ հրատ. Երուսաղէմ, 1994):

¹⁸ Եզնրկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914 (այսուհետև՝ Եզնրկայ վարդապետի Կողբացոյ):

¹⁹ Ստեփանոս Սիւնեցի, Մեկնութիւն չորից Աւետարանչաց: Աշխ. Գարեգին կաթողիկոս Չովսեփյանի, Երևան, 1994:

²⁰ The Apostolic Fathers with an English transl. by K. Lake, in 2 vol., First Epistle of Clement to the Corinthians.vol I, London, 1959..

²¹ Յերոնիմեայ վասն ի քսան և յերկուս գիրս առ ի Հերայեցոց զպատմութիւնսն բաժանելոյ: Գերմաներեն-հայերեն ներածութեամբ և հայ-լատին բնագրով հրատարակեց Հ. Արիստակէս Վարդանեան (Մխիթ. Ուխտէն), Վիեննա, 1920:

²² Լաբուբնեայ դիւանագիր դարի Եղեսիոյ Թուղթ Աբգարու, յեղեալ յասորոյն ի ձեռն սբ. թարգմանչաց, Վենետիկ, 1868:

²³ Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ Ժամանակականք երկմասնեայ, մասն Ա, Ժամանակագրութիւն պատմական, Վենետիկ, 1818, էջ 125:

²⁴ Ammiani Marcellini Rerum gestarum libri, qui supersunt, rec. C. U. Clark, vol. 1-2, Berolini, 1910-1915.

հետազոտությամբ²⁵:

Ռ. Թոմսոնը Մովսես Խորենացու երկի անգլերեն թարգմանության «Առաջաբանում», հետևելով «գերքննադատության» ջատագովներին (Ա. Կարիեր, Ա. Գուտշմիդ, Գ. Խալաթյանց և այլք), անհիմն կասկածով և մերժողական ու գիտական էթիկային անհարիր ոճով է մոտեցել Պատմահոր տեղեկությունների հավաստիությանը²⁶: Գ. Սարգսյանն իրավացիորեն քննադատել է Ռ. Թոմսոնի մոտեցումը Մովսես Խորենացու ժամանակը V դարից VIII դար տեղափոխելու և դրանով Պատմահոր օգտագործած որոշ սկզբնաղբյուրների (Մար Աբաս Կատինայի երկը, Սինոպի և Մծբինի դիվաններից Եդեսիայի դիվան բերված նյութեր և այլն) նկատմամբ ժխտողական դիրք գրավելու կապակցությամբ²⁷:

Ա. Այվազյանը, Ա. Թոփչյանը և Ա. Մուշեղյանը գիտական սկզբունքայնությամբ քննադատել են Մովսես Խորենացու ժամանակաշրջանը V դարից VIII դար տեղափոխողների, նրա երկի պատմագիտական արժեքն աղավաղողների և գիտական էթիկայի խախտումով՝ «գերքննադատության» ոգով անհիմն մեղադրանքներ ներկայացնողների աշխատությունները²⁸: V դարի հեղինակ Մովսես Խորենացու երկը սկզբնաղբյուր է ծառայել հաջորդ դարերի հայ պատմիչների համար:

Աստվածաշնչի հայերեն բնագրին և Պատմահոր երկին նվիրված հայ պատմագիտական ուսումնասիրությունները խմբավորվում են հետևյալ խնդիրների շուրջ.

²⁵ Տես՝ Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, Նույնի՝ Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966: Ա. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007:

²⁶ Moses Khorenats'i, History of the Armenians. Translation and Commentary on the Literary Sources by R. W. Thomson, Cambridge, Massachusetts, London, 1978, Revised edition, Ann Arbor, 2006, Introduction, p. 2-60 (այսուհետև՝ Moses Khorenats'i).

²⁷ Мовсес Хоренати, История Армении, перев. с древнеарм., введение и примечания Г. Х. Саркисяна, 1990 (այսուհետև՝ Мовсес Хоренати), с. XXVI-XXXV.

²⁸ Ա. Այվազյան, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագիտության մեջ (քննական տեսություն), Երևան, 1998, էջ 122-155, Ա. Թոփչյան, նշվ. աշխ., էջ 90-93, Ա. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, էջ 5-18, 300-323:

1. Հայաստանում IV դարում ստեղծված քաղաքական պայմանների ազդեցությունը լեզվական վիճակի վրա և եկեղեցական արարողությունների ժամանակ Աստվածաշնչից բանավոր հայերեն ընթերցումները²⁹:

2. Հայ պատմիչների հաղորդումները Աստվածաշնչի թարգմանության բնագրի լեզվի մասին՝ հունական և ասորական դպրության կարգված հայ աշակերտների Եդեսիա ու Սամոսատ քաղաքներ մեկնելուց մինչև Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի կողմից կատարված «զեկեղեցական գրոց գումարութիւն» տեքստերի թարգմանությունը³⁰:

3. Աստվածաշնչի հայերեն բնագրի շուրջ եղած տեքստաբանական ուսումնասիրություններ³¹, որոնք իրենց հերթին երեք ուղղություններ են ներառել.

ա) հայերեն թարգմանության արտաքին հանգամանքները,

բ) բուն հայերեն բնագրի քննությունը և սկզբնագրերի խնդիրը,

գ) առանձին գրքերի քննական բնագրերի հրատարակությունը³²:

²⁹ Մ. Օրմանեան, Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը, ու ներկայ կացութիւնը, Կ. Պոլիս, 1911 (Երևան, 1993), Հ. Մանանդյան, Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար. - «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, Երևան, 1962, էջ 25-84, Բ. Կիլեսերեան, Վարդապետութեան աստիճանները Հայ եկեղեցւոյ մէջ, Ամթիլիաս, 1980:

³⁰ Մ. Օրմանեան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, մասն Ա 1913: Կորյուն, էջ 5-52: Н.Адонц, Начальная история Армении у Сесвеса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фавста Византийского. - "Византийский вестник", т. VIII, 1901, вып. 1-2, Ե. Ադոնց, Մաշթոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների - «Մեսրոպ Մաշտոց», էջ 199-241, Հ. Մարկվարտ, Հայոց այբուբենի ծագումը և Մաշտոցի կենսագրությունը - «Մեսրոպ Մաշտոց», էջ 117-180, Ե. Տեր-Սիմսեանց, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ, Սբ. Էջմիածին, 1908, Ա. Մուշեղյան, Սուրբ Գիրքը հայերեն թարգմանելու հանգամանքները և Մեսրոպ Մաշտոցի համառոտ Աստվածաշունչը. - «Աստվածաշնչական Հայաստան», Երևան, 2005, էջ 406-420:

³¹ Մանրամասն տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, Երևան, 1976, էջ 308-667:

³² Գիրք Ծննդոց, Զննական բնագիր, աշխատ. Ա. Ս. Ջեյթունյանի, Երևան, 1985 (այսուհետև՝ Գիրք Ծննդոց): Գիրք Ելից, Զննական բնագիր, աշխատ. Ա. Ջեյթունյանի, Երևան, 1992: Գիրք Դեւտացւոց. Զննական բնագիր, աշխատ. Ա. Ջեյթունյանի, Երևան, 1992: Գիրք Դեւտացւոց. Զննական բնագիր, աշխատ. Ա. Ջեյթունյանի, Երևան, 1992:

դ) պատմիչների հաղորդումները Աստվածաշնչի թարգմանության տարբեր փուլերի մասին:

4. Հայաստանին վերաբերող աստվածաշնչյան տեղեկություններ և դրանց լույսի ներքո Հայոց հին և վաղմիջնադարյան պատմությանը նվիրված ուսումնասիրություններ³³, որոնցում քննվել են՝

ա) «Արարատյան լեռներ» և «Արարատյան թագավորություններ» տերմինները,

բ) Ծննդոց գրքի և Մովսես Խորենացու երկի «Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց» համադրմամբ առասպելաբանական և պատմա-ավանդական նյութերը,

գ) պատմական երևույթների մեկնությունները:

5. Առաջին երեք Տիեզերական ժողովների մասին վաղմիջնադարյան հայ պատմիչների և, հատկապես, Մովսես Խորենացու հաղորդումներին նվիրված ուսումնասիրություններ:

6. Հայաստանի քաղաքական պատմության հին ժամանակների առումով Հայկազունների տոհմաբանությանը և գաղափարական խնդիրներին առնչվող դավանաբանական հարցեր³⁴:

Եյանի, Անթիլիաս, 1993: Գիրք Մակաբայեցուց. Զննական բնագիր, աշխատ. Զ. Մ. Ամալյանի, Երևան 1996: Գիրք Թուոց, Զննական բնագիր, աշխատ. Ա. Զեյթունյանի, Անթիլիաս, 1998: Աստվածաշնչի հետ կապված որոշ տեղեկությունների տեքստաբանական քննություն են կատարել նաև Կ. Մուրադյանը (Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976) և Պ. Մուրադյանը (Ղազար Փարպեցու մի տեղեկության պատմամշակութային նշանակությունը - «Էջմիածին», 1980, N 1): Զր. Բարթիկյան, Մատթեոսի Ավետարանը հունարենի և հայերենի բաղդատությամբ, - Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005, էջ 429-444 :

³³ Զ. Վ. Ինզլիզեան, Հայաստան Սուրբ Գրքի մեջ, Վիեննա, 1947, Գ. Խ. Սարգսյան, Նախահայրենիքի, ժողովրդի կազմավորման և Ուրարտուի մասին - ՊԲՀ, N 1, 1990, էջ 37: Լ. Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», Երևան, 1992: Ջուստո Տրայինա, Մովսես Խորենացիի «դասական» ավանդությունը Հայոց պատմության Ա գրքի 5-րդ գլխուն մեջ - ՊԲՀ, 1992, N 1, էջ 29: G. Abgarjan, Selbstbild der Armenier. Bild der Armenier in Deutschland. "Europäische Hochschulschriften", Reihe, XXI, Berlin-Bonn-New York-Paris-Wien, 1993, Bd. 123, S. 104-105: Գ. Աբգարյան. Արարատը Կումրանի ձեռագրերում - «Աստվածաշնչական Հայաստան» ժողովածու, Երևան, 2005, էջ 112-114, Ա. Մուշեղյան, Ո՞ր լեռան վրա է իջել Նոյան տապանը - ՊԲՀ, 2003, N1, էջ 11-28:

³⁴ Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, Կ. Ա. Վենետիկ, 1784: Ղ. Ալիշան, Այրարատ. Բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 431-432, Н. Адонци, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, Ս. Մալխասյանց, Բանասիրական

Գ Լ ՈՒ Խ Ա Ռ Ա Զ Ի Ն

ԱՍՏՎԱԾԱՆԵՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. Աստվածաշնչի հայերեն թարգմանության պարբերացման հարցը

Հայաստանում IV դարի ընթացքում կարևորվեց Աստվածաշնչի հայերեն թարգմանության խնդիրը: IV դարի վերջին տասնամյակներից Մեծ Հայքի թագավորության պարսկա-հռոմեական բաժանվածության և երկրի արևմտյան մասում թագավորական իշխանության վերացման քաղաքական անբարենպաստ պայմաններում Հայոց Վռամշապուհ արքայի և Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի հովանավորությամբ և աջակցությամբ 405թ. Մեսրոպ Մաշտոցի հանձարով իրականացված հայ գրերի գյուտով³⁵ ազդարարվեց հազարամյակների խորքից եկող Հայոց հոգևոր և մշակութային կյանքի վերելքը վաղ միջնադարում, որի արգասիքը եղավ քաղաքական, կրոնական և գաղափարախոսական ասպարեզներում Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականությանը դիմակալող հայ ժողովրդի մտավորականության ստեղծած Ոսկեդարյան գրական մեծ ժառանգությունը:

հետազոտություններ, Երևան, 1982, Գ. Խ. Սարգսյան, Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ - «Բանբեր Մատենադարանի», N 3, 1956, էջ 31-42, Նույնի՝ Մովսես Խորենացու նախարարական տոհմերի ցանկը - ՊԲՀ, 1996, N 1-2, էջ 73-90, Мовсес Хоренаци, с. XI, XXIX, XXXVI; Г. X. Саркисян, "История Армении" Мовсеса Хоренаци, Ереван, 1991, с. 64, 66, Գ. Ա. Տիրացյան, Հին հայկական պետության առաջացումը - ՊԲՀ, 1966, N 4, էջ 83-102, Ա. Մուշեղյան, V դարի հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ - Ատենախոսություն բանասիրական գիտ. դոկտ. գիտ. աստիճան հայցելու համար, Երևան, 1996, Է. Դանիելյան, Մովսես Խորենացու ավանդազրույցի Սիսակ-Առանյան ճյուղի «նորագույն քննադատության» սնանկությունը - ՊԲՀ, N 2, 2008, էջ 178-197:

³⁵ Գրերի գյուտի շարժառիթներից էր Աստվածաշնչի թարգմանությունը և, ինչպես Մ. Օրմանյանն է նշել. «Սուրբ Գիրքը պետք էր ըլլար անոր նախընծա երախայրիքն ալ» (Մ. Օրմանեան, Ազգապատում, մ. Ա, էջ 278):

Աստվածաշնչի հայերեն թարգմանության խնդրին նվիրված բանասիրական ուսումնասիրություններն ընթացել են հիմնականում հայերեն թարգմանության հանգամանքների պարզաբանման և բուն հայերեն թարգմանության քննության ուղղություններով³⁶: Կարևորվում են նաև պատմագիտական հետազոտությունները՝ կապված հատկապես Աստվածաշնչի բանավոր թարգմանության՝ նախամեսրոպյան և հայերեն գրերի Մեսրոպ Մաշտոցի գյուտից հետո գրաբար թարգմանության ժամանակաշրջանների հետ:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության ժամանակաշրջանի, նախօրինակի, թարգմանիչների և այդ դարակազմիկ հրողությանը վերաբերող այլ տվյալների մասին հայ պատմագրության կարևոր սկզբնաղբյուրներն են V դարի հայ պատմիչների՝ Կորյունի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու երկերը, որոնց հաղորդումների հիման վրա կատարվում է Աստվածաշնչի հայերեն թարգմանության խնդրի լուսաբանումը³⁷:

IV դարի սկզբից մինչև հայերեն գրերի գյուտը՝ Աստվածաշնչի ընթերցման լեզվի խնդրի մասին խոսելիս, ուշադրություն է դարձվել այն հանգամանքի վրա, թե որ լեզուն էր գրավոր շրջանառության մեջ Հայաստանում:

Ըստ Ագաթանգեղոսի, «Տայր հրաման թագաւորն Տրդատ՝ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց և ի գաւառաց բազմութիւն մատաղ մանկւոյոյ ածել յարուեստ դպրութեան... Եւ գնոսա յերկուս բաժանեալ, զոմանս յԱսորի դպրութիւն կարգեալ, եւ զոմանս ի Հելլէն»³⁸: Այստեղից հետևում է, որ ժամասացությունն

³⁶ Գ. Չարբեհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ - ԺԳ), Վենետիկ, 1889, М.Тер-Мовсисян, История перевода Библии на армянский язык, СПб., 1902, և Ալինեան, Սուրբ Գրքի հայերեն թարգմանութիւնը.-«Հանդես ամսօրեայ», N 10-12, 1935, էջ 550-563, Հայր 3. Աւգեր, Ակնարկ մը սբ. Գրոց հայկական թարգմանութեան վրայ.-«Բազմավէպ», 1935, N 9-12, էջ 353-384, Հ. 3. Թորոսեան, Հայ Ոսկեդարը եւ Աստուածաշունչի թարգմանութիւնը.-«Բազմավէպ», 1935, N 9-12, էջ 293-313, և վրդ.Ծովական (Պողարեան), Աստուածաշունչի հայերեն հիմ թարգմանութիւնները - «Ափոն», 1945, էջ 47-50, 107-112, 145-148, 1946, էջ 16-19, Գիրք Ծննդոց, էջ 40-41:

³⁷ Հ. Ա. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, էջ 309-310:

³⁸ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 437-438: «Տրդատ թագավորը Հայոց երկրի տարբեր կողմերին հրաման տվեց՝ իր իշխանության նահանգներից,

ու ընթերցումները Սուրբ Գրքից հասկանում էին միայն նրանք, ովքեր այդ լեզուներով կրթություն էին ստանում: Փավստոս Բուզանդը գրում է. «Զի ՚ի վաղնջուց, յորմէ հետէ առին նոքա գանուն քրիստոնէութեանն, լոկ միայն իբրեւ գկրօնս ինն մարդկութեան յանծինս իւրեանց... Ոչ եթէ որպէս պարտն էր գիտութեամբ յուսով կամ հաւատով, բայց միայն սակաւ ինչ գհանգամանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեանց, որք էին հասու ինչ այնմ փոքր ի շատէ...»³⁹:

Վիճակը նույնն էր նաև Ներսես Մեծի (353-373 թթ.) ժամանակ: Նա Հայաստանի բոլոր գավառներում հիմնել էր դպրոցներ՝ հունարեն և ասորերեն դասավանդմամբ⁴⁰: Այս իրավիճակում Մեսրոպ Մաշտոցը «ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն»⁴¹: Նա «եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն»⁴²:

Հայոց արքա Խոսրով IV-ի (385-388թթ.)⁴³ պալատում Մեսրոպ Մաշտոցի՝ «յերամ մատենագիր արքունի դպրացն» կարգվելու մասին գրելով, Ղազար Փարպեցին նշում է, որ «ասորի եւ

գավառներից, ուսման համար մատաղ մանուկների բազմություն բերել և նրանց վրա հմուտ ուսուցիչներ կարգել... Նրանց երկու մասի բաժանեցին, ոմանց տվեցին ասորի դպրության և ոմանց՝ հելլենականին» (Ազաթանգեղոս, էջ 138-139):

³⁹ «Որովհետև վաղուց ի վեր, երբ նրանք քրիստոնեության անունն ստացան՝ այդ կրոնը հանձն առան հարկից ստիպված՝ իբրև մի մարդկային սովորություն... ոչ թե գիտությամբ, հույսով ու հավատով, ինչպես որ հարկն էր, այլ միայն քչերը, որոնք փոքր ի շատե ծանոթ էին հունական կամ ասորի դպրության՝ մասամբ հասկանում էին այդ (կրոնը)...» (Փավստոս Բուզանդ, էջ 54-55):

⁴⁰ Նույն տեղում, էջ 122:

⁴¹ Կորյուն, էջ 84-85:

⁴² Նույն տեղում:

⁴³ Գ. Մանանդյանը գրում է. «Մահակ Մեծը կաթողիկոս էր կարգվել Խոսրով IV-ի (ըստ Գ. Աստուրյանի, Մ. Օրմանյանի և Ն. Ալիևյանի, Խոսրով III-ի – Ն. Դ.) թագավորության երրորդ տարում, այսինքն՝ 388 թ. և իր պաշտոնը վարել էր 51 տարի, ուրեմն 388թ. մինչև 439 թ.» [Գ. Մանանդյան, Երկեր Բ, Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, մաս Ա, Երևան, 1978, էջ 250 (այսուհետև՝ Գ. Մանանդյան, Երկեր Բ)]:

յոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորացն Հայոց՝ արքունի դպիրքն, զվճռոցն եւ զհրովարտակացն»⁴⁴:

Ըստ Մովսէս Խորենացու՝ «...յունականան վարէին եկեղեցւոյ կարգք»⁴⁵, իսկ Ղազար Փարպեցին նշում է. «Պաշտօն եկեղեցւոյ եւ կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս եւ յեկեղեցիս Հայաստան ժողովորոցս...»: Թէ ինչ դժվարութիւններ չառնուին արդէն կանգնուին ժողովուրդն այդպիսի վիճակից, երևում է պատմիչի շարադրանքի շարունակութիւնից՝ «...յորմէ ոչ ինչ էին կարող լսել եւ՝ օգտել ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի, եւ լինէր պաշտօնէիցն աշխատութիւն եւ ժողովորոցն անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորւոյ»⁴⁶:

Մովսէս Խորենացին շեշտը դնում է հունարենի՝ որպէս եկեղեցական կարգը վարելու լեզվի վրա: Պատմահայրը նշել է, որ «Քրիստոսից ուրացող» Մեհրուժան Արծրունին Արշակի մահվանից հետո՝ Շապուհ II-ից (309-379 թթ.) զորք ստանալով, գալիս է Հայաստան՝ հատուկ հանձնարարութիւններ ունենալով պարսից արքայից: Վերջինս «խոստացել» էր նրան տալ Հայոց թագավորութիւնը, «միայն թէ զնախարարսն նուաճելով՝ ի դէն մազդեզանց զաշխարհս դարձուսցէ»⁴⁷: Մեհրուժանը երկրին շատ այլ չարիքներ պատճառելու հետ մեկտեղ «զամենայն կարգքիստոնէութեան ջանայր խափանել: Զեպիսկոպոսս եւ զքահանայս հարկաց պատճառաւ կապեալ՝ յերկիրն Պարսից տայր տանել: Եւ զորս միանգամ գիրս գտանէր՝ այրէր, եւ հրաման տայր մի՛ ուսանել զգպրութիւն յունարէն, այլ զպարսիկ, եւ մի՛ ոք իշ-

⁴⁴ «...արքունի մատենագիր դպրաց խմբի մեջ, քանի որ արքունի դպիրներն այն ժամանակ Հայոց թագավորների վճիռների և հրովարտակների գործը կատարում էին ասորերեն ու հունարեն գրերով» (Ղազար Փարպեցի, էջ 28-29):

⁴⁵ Մովսէս Խորենացի, էջ 301, «...եկեղեցու կարգը կատարվում էր հունարեն լեզվով» (Մովսէս Խորենացի, էջ 302):

⁴⁶ «...որից էլ ոչինչ չէին հասկանում կամ օգտվում այսպիսի մեծ երկրի բնակիչները: Եվ ասորերեն լեզուն չհասկանալուց եկեղեցական պաշտոնյաների աշխատանքն ու ժողովրդի ջանքերն ապարդյուն էին դառնում» (Ղազար Փարպեցի, էջ 30-31):

⁴⁷ Մովսէս Խորենացի, էջ 301, «...եթե միայն նախարարներին հնազանդութեան բերի և մեր երկիրը դարձնի մազդեզական կրոնին» (Մովսէս Խորենացի, էջ 302):

խեսցէ յոյն խօսել կամ թարգմանել, այսպիսի ինչ պատճառաւ, զի ամենևին մի՛ լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն եւ հաղորդութիւն սիրոյ, այլ ճշմարիտ՝ խափանել զքրիստոնէութեան ուսումն»⁴⁸:

Մեհրուժանը ուրանալով՝ Շապուհին խոստացել էր հայերին մազդեզականություն պարտադրել, դրանով պարսից մոզերն իրենց գորքերի աջակցությամբ մազդեզական ատրուշաններ էին շինում, որոնք սպարապետ Մուշեղ Մամիկոնյանն ավերեց՝ պարսից գորքերին պարտության մատնելով⁴⁹:

Ըստ Մովսէս Խորենացու, Մեծ Հայքի թագավորության բաժանումից (385/7 թթ.)⁵⁰ հետո երկրի արևելյան մասում պարսից արքունիքը պարտադրում էր ասորերեն ուսուցումը. «...դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց՝ չտային պարսիկ վերակացուքն յոյն ունեք ուսանել դպրութիւն յիրեանց մասինն, այլ միայն ասորի»⁵¹: Այդ թելադրված էր քաղաքական հանգամանքով՝ հունարենը Սասանյաններին թշնամի Հռոմեական կայսրության պաշտոնական լեզուն էր: Ավելին, Վռամշապուհի օրոք արքունի դպրատանը նույնիսկ պարսկերենի կիրառման մասին է հիշատակում Պատմահայրը. «...զի մինչ գնաց Մեսրոպ յարքունական դրանէն՝ ոչ զոք ի ճարտարաց գտանէր անդ ի դպրաց, քանզի պարսկականան ւն վարէին գրով»⁵²:

⁴⁸ «Լա ջանում էր խափանել քրիստոնեական բոլոր կարգերը, եպիսկոպոսներին և քահանաներին հարկերի պատճառով կապում ուղարկում էր Պարսկաստան: Ինչ գիրք որ գտնում, այրում էր և հրամայում էր հունարեն գրագիտության չսովորել, այլ պարսկերեն և ոչ ոք չհամարձակվի հունարեն խոսել կամ թարգմանել: Եվ այս այն պատճառով, որ հայերը ոչ մի ծանոթություն և բարեկամական հաղորդակցություն չունեման հույների հետ, բայց իրոք քրիստոնեության ուսմունքը խափանելու նպատակ ունեք» (Մովսէս Խորենացի, էջ 302):

⁴⁹ Փավստոս Բուզանդ, էջ 288:

⁵⁰ Հայ ժողովրդի պատմություն, հատոր II, Երևան, 1984, էջ 111-122:

⁵¹ Մովսէս Խորենացի, էջ 329, «...երբ Հայաստանը (երկու մասի) բաժանվեց, պարսիկ վերակացուներն իրենց մասում ոչ ոքի թույլ չէին տալիս հունարեն սովորել, այլ միայն ասորերեն» (Մովսէս Խորենացի, էջ 327):

⁵² Մովսէս Խորենացի, էջ 325, «...այն օրից, որ Մեսրոպն արքունական դռնից հեռացավ, մա (Վռամշապուհը - Ն. Դ.) ոչ մի ճարտար դպիր գտնել չէր կարողանում, որովհետև պարսկական գիր էին գործածում» (Մովսէս Խորենացի, էջ 325):

Ըստ Ղազար Փարպեցու վերոհիշյալ հաղորդման՝ Խոսրով IV-ի պալատում գրավոր լեզուներն էին ասորերենը և հունարենը: Պետք է նկատի ունենալ, որ Խոսրովը, բյուզանդական կայսր Թեոդոսիոս I-ի (379-395 թթ.), իսկ այնուհետև Վռամշապուհը՝ Արկադիոս կայսեր (395-408 թթ.) համաձայնությամբ որոշ ժամանակ, հարկ վճարելով, իշխում էին նաև Հայաստանի արևմտյան մասի վրա⁵³, դրանով իսկ՝ Մեծ Հայքի թագավորության արևելյան և արևմտյան մասերում: Ուստի, բաժանումից հետո ևս հունարենն ու ասորերենը Հայաստանում մնացել էին որպես գրավոր օգտագործվող լեզուներ, ընդ որում՝ արևմտյան մասում առավելությունը տրվել է հունարենին, իսկ արևելյան մասում՝ ասորերենին⁵⁴:

Պատմիչների հաղորդմամբ, հայ հոգևորականները, մինչև IV դարի վերջը քրիստոնեական արարողությունները կատարելիս, ստիպված էին բավարարվել հայերեն բանավոր քարոզով: Փաստորեն հայերեն բանավոր թարգմանության գործը սկսվել էր դեռևս Գրիգոր Լուսավորչի ժամանակներից: Դրանով իսկ, Սուրբ Գրքի ընթերցման լեզվական դժվարության խնդիրը մինչ գրերի գյուտը լուծվում էր հունարենից և ասորերենից բանավոր թարգ-

⁵³ Պատմահայրը, խնդրո առարկա իրադարձությունների կապակցությամբ միա-
հյուսելով Թեոդոսիոս I և Արկադիոս կայսրերի անձերը, գրել է. «Իբրև տիրեաց
Խոսրով ամենայն նախարարացն Յայոց, որու՛ ցանկայրն՝ յղէ առ Արկադ եւ
խնդրէ ի նմանէ հաւատալ յինքն զմասն Յունաց որ ի Յայս, զոր շէն կալեալ՝
հարկեսցեն նմա անսխալ, որպէս նորին գործակալաց: Եւ կասկածեալ Արկա-
դեայ ի միաբանութենէ նախարարացն Յայոց, թէ միաբանութեամբ հանիցեն ի
նմանէ և տացեն ի Պարսս զբաժինն զայն՝ կատարէ զխնդիրսն Խոսրովայ... Եւ
Վռամշապուհ ունէր զաշխարհս մեր, եւ ծառայէր երկոցունց թագաւորացն, տա-
լով հարկս, զմասինն Պարսից՝ Վռամայ, և զմասինն Յունաց՝ Արկադայ» (Մովսէս
Խորենացի, էջ 319-320, 324), «Եւր Խոսրով տիրեց Յայոց բոլոր նախարար-
ներին, ինչպէս ցանկանում էր, Արկադին դիմում է խնդրելով, որ իրեն հավատա
Յայաստանի հունական մասն էլ, որը շեն պահելով՝ նրան ճշտությամբ
հարկերը կվճարի, ինչպէս նրա գործակալները: Եվ Արկադը կասկածելով Յայոց
նախարարների միաբանությունից, թե նրանք միաբանելով իրենց բաժինը
կառնեն և պարսիկներին կտան, կատարում է Խոսրովի խնդրածը... Եվ Վռամ-
շապուհը տիրում էր մեր երկիրն և հ պատակվում էր երկու թագավորներին,
հարկ վճարելով՝ պարսից բաժնի համար Վռամին և հ ունաց բաժնի համար
Արկադին» (Մովսէս Խորենացի, էջ 319, 324):

⁵⁴ Գ. Մարկվարտ, Յայոց այբուբենի ծագումը և սբ. Մաշտոցի կենսագրությունը,
էջ 123:

մանիչներ պատրաստելու միջոցով: Տրդատ III թագավորի հրամանով հիմնված հելլեն և ասորի դպրոցներում, ամենայն հավանականությամբ, պատրաստում էին նաև թարգմանիչներ, որոնք սովորում էին այլալեզու գրականությունը, հատկապես Սուրբ Գիրքը, հայերեն բանավոր թարգմանել:

Հայ եկեղեցում գոյություն է ունեցել թարգմանիչների հատուկ դաս, որը բանավոր թարգմանել և ժողովրդին է հասցրել Սուրբ Գրքի օտարալեզու ընթերցումները⁵⁵: Բացի աղոթքներից ու սաղմոսներից ընդհանուր եկեղեցու մեջ ընդունված որոշ թվով նոր երգերի մի մասը, ըստ Մ.Աբեղյանի, «հայերենի նշանագրերից առաջ էլ թերևս ասորերենից կամ հունարենից թարգմանված է եղել բերանացի, քանի որ ժամերգությունը բերանացի էր կատարվում»⁵⁶:

Ըստ Հ. Մանանդյանի, ամբողջ IV դարի ընթացքում Հայաստանում գոյություն են ունեցել Աստվածաշնչի մասնակի թարգմանություններ՝ բանավոր հաղորդմամբ⁵⁷: Գ. Սարգսյանը նշել է, որ Հայաստանում մինչև հայ գրերի գյուտը քրիստոնյա քարոզիչները, որպեսզի հասկանալի լինեին ժողովրդին, հունարեն և ասորերեն լեզուներով կազմված իրենց քարոզները ստիպված էին բանավոր հայերեն թարգմանել⁵⁸: Այդպիսի երևույթի վկայությունն է Մովսես Խորենացու հաղորդումը Մաշտոցի քարոզչական գործունեության մասին. «Եւ ի վարդապետել երանելոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող եւ թարգմանիչ. եւ եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանդիպէր՝ զանխուլ ի ժողովրդոցն լինէր, յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ: Վասն որոյ եղ ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս. եւ արկեալ զանձն ի ջանս՝ պէս պէս փորձիւք տաժանէր»⁵⁹:

⁵⁵ Մ. Օրմանեան, Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կոստանդնուպոլիս, 1911, էջ 41:

⁵⁶ Կորյուն, էջ 39:

⁵⁷ Հ. Մանանդյան, Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը նշակութային ինքնուրույնության համար - «Մեսրոպ Մաշտոց», էջ 45:

⁵⁸ Мовсес Хоренаци, с. 261, прим. 675.

⁵⁹ Մովսէս Խորենացի, էջ 317, «Երբ երանելի Մեսրոպն ուսուցանում էր, ոչ փոքր նեղություն էր կրում, որովհետև ինքն էր թե կարդացողը և թե թարգմանողը, և եթե մի ուրիշն էր կարդում, երբ ինքն այնտեղ չէր լինում, ժողովրդին անհասկա-

Ղազար Փարպեցին Սուրբ Գրքի և, մասնավորապես, վարդապետների կողմից սաղմոսներն անգիր իմանալու մասին գրել է. «...որք քաջ գիտեն՝ զսաղմոսն Ղաւթի պաշտել միայն պիտոյ է ի ժամուն անսխալ, եւ ոչ միշտ զգիրսն ի ձեռին ունելով՝ խօսել զայլ-այլս իբրեւ զբանդագուշեալս: Իսկ մեր երանելի վարդապետքն զամենայն զկտակարանս եկեղեցւոյ երիցս եւ չորիցս ուսուցեալ մեզ ի սկզբանէ մինչեւ ի կատարած գրոցն՝ համարս պահանջէին ի մէջ զնոյնս, եւ իբրեւ զՂաւթի սաղմոսն պաշտել մեզ հարկաւոր էին...»⁶⁰:

Աստվածաշունչն անգիր անելու հիմքում տեսնելով նախամեսրոպյան շրջանի հանգամանքը՝ Բ. Կյուլեսերյանը գրել է. «Հարկաւ այսպիսի պահանջ մը եւ այսպիսի պարտաւորութիւն մը ծագում առած էր հայերէն սբ. Գրոց չգոյութենէն եւ ետքը իբր կանոն պարտաւորիչ եղած ըլլայ նոյնիսկ սբ. Գրոց հայացումէն ետքն ալ»⁶¹:

Սկզբնաղբյուրների քննությամբ Գ.Սարգսյանը այն կարծիքն է հայտնել, որ մինչ հայերեն գրերի ստեղծումը կանոնական տեքստերը բնագրից հայերեն բանավոր թարգմանությամբ են ընթերցվել⁶²: Լ. Տեր-Պետրոսյանը նույնպես անդրադառնալով այս

19743

նալի էր մնում՝ թարգմանիչ չլինելու պատճառով: Ուստի նա միտքը դրեց մի հնարք գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել, և աշխատանքի անձնատուր լինելով՝ զանազան փորձերով չարչարվում էր» (Մովսես Խորենացի, էջ 316):

⁶⁰ «...ով որ լավ է իմանում, Ղավթի սաղմոսը պետք է անսխալ արտասանի միայն պաշտաման ժամին և ոչ թե միշտ զիրքը ձեռքին բռնած ցնորվածի պես խոսի այլևայլ բաներ: Իսկ մեր երանելի վարդապետները երեք-չորս անգամ մեզ սովորեցնելով եկեղեցու բոլոր կտակարանները, սկզբից մինչև վերջ, մեզմից էլ հաշիվ էին պահանջում նույնը և մեզ հարկադրում էին այդ բոլորն իմանալ Ղավթի սաղմոսի պես...» (Ղազար Փարպեցի, էջ 480-481): Չամձա.՝ «Այլ և զսաղմոսն Ղաւթի ոչ գիտեն բովանդակ, առանց որոյ զնոսին զհարիւր և յիսունսն խօսել բերանով ընդ Աստուծոյ, ոչ մատչի պատարագ ըստ աւանդութեան կանոնի հարցն սրբոց: Ոմանք և ոչ զբանս աղօթից սրբոյ պատարագին գիտեն ՚ի բերան» (Ընդհանրական թուղթ սբ. Ներսեսի Շնորհալոյ, Յերուսաղեմ, 1871, էջ 59), ինչից հետևում է, որ սուրբ հայրերի կանոնի ավանդությամբ պատարագը մատչելի լինելու համար անհրաժեշտ էր Ղավթի սաղմոսները «խօսել բերանով ընդ Աստուծոյ» (Գիրք Ծննդոց, Ներածություն, էջ 65):

⁶¹ Բ. Կյուլեսերյան, Վարդապետութեան աստիճանները Չայ եկեղեցւոյ մէջ, էջ 39:

⁶² Г. Саркисян, К предыстория армянской письменности. – “Кавказ и Византия”, Ереван, 1980, вып. 2, с. 18.



խնդրին՝ գրել է. «Ավետարանների և սաղմոսների անգիր անելու սովորույթն ակներևաբար շարունակվել է նաև Աստվածաշնչի գրավոր բնագրի ստեղծումից հետո... Հայտնի է, որ սաղմոսների բերանացի իմացությունը միջնադարում պարտադիր է եղել հայ հոգևորականների համար»⁶³:

Մեսրոպ Մաշտոցը, քանզի «վարժեալ հելլենական դպրութեամբն», դեռևս արքունի պալատում եղած ժամանակ արդեն իսկ խորամուխ էր եղել Աստվածաշնչի ընթերցանության մեջ. «Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ եւ թեւամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս»⁶⁴:

Հայաստանում ուսուցումը հունարեն և ասորերեն դպրությամբ իրականացման պայմաններում տեղի էր ունենում հայերեն բանավոր թարգմանության արվեստի կատարելագործումը: Սակայն նաև պարզ է, թե այդ ընթացքում ինչ դժվարություններ էին առաջանում, քանզի մեծ թվով հմուտ թարգմանիչներ էին պահանջվում մայրենի լեզվով ամբողջ Հայաստանում քարոզչություն կատարելիս: Ղազար Փարպեցին ներկայացրել է Մեսրոպ Մաշտոցի խորը մտահոգությունն ազգապահպան այդ կարևորագույն խնդրի կապակցությամբ. «Զայս ի բազում ժամանակաց զմտաւ ատեալ երանելի առն Մաշտոցի, և փղծկացեալ յանձն իւր, մանաւանդ թէ զոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է՝ ինքեան ձայնիւ, եւ ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց եւ կանանց առ հասարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն»⁶⁵:

⁶³ Գիրք Ծննդոց, Ներածություն, էջ 64:

⁶⁴ «Եվ այնտեղ հենց ջանալով ուշադրությամբ հետևում էր աստվածային գրքերի ընթերցանությանը, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց, խորամուխ եղավ աստվածային հրամանների հանգամանքների մեջ» (Կորյուն, էջ 84-85):

⁶⁵ «Եվ երանելի այդ Մաշտոցն այս մասին երկար ժամանակ խորհում էր ու լալիս իր ներսում. չէ՞ որ կային հայերեն լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր էր սեփական ձայնով և ոչ թե մուրացածո լեզվով, եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը» (Ղազար Փարպեցին, էջ 30-31): Այս միտքը վկայություն է Հայաստանում մայրամաշտոցյան հայերեն գրերի մասին: Հոյն սոփիստ և հռետոր Լուցիոս Փլավիոս

Աստվածաշնչի հայերեն գրավոր թարգմանությունը Հայաստանում դարձել էր ժամանակի անհապաղ լուծում պահանջող խնդիր:

Սբ. Գրքի թարգմանության նախընթացի մասին մանրամասն պատմել է Կորյուն վարդապետը: Հայոց արքա Վռամշապուհի հրամանով և կաթողիկոս Սահակ Պարթևի միաբանությամբ Մեսրոպ Մաշտոցը մի խումբ աշակերտներով մեկնում է Եդեսիա և Ամիդ քաղաքները: Աշակերտներից ոմանց Եդեսիայում կարգում է ասորական, իսկ մյուսներին՝ հունական դպրության և ուղարկում է Կոնստանդնուպոլիս Սամոսատ քաղաքը: Կորյունը գրում է. «Եւ այսպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ: Որում պարգելէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ, հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ, յօրինէր սիղոբայիւք կապօք»⁶⁶: Մովսես Խորենացին հաղորդում է, որ Մեսրոպ Մաշտոցը, ապավինելով աղոթքին, «տեսանէ ոչ ի քուն երագ եւ ոչ յարթութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան վերջք գծին՝ կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երեւութացաւ, այլ եւ հանգամանք ամե-

Փիլոստրատոսը (մոտ 170-247 թթ.) նշել է. «Ասում են, թե մի անգամ Պամփյուլիայում բռնում են մի հովագ, որի ոսկե վզնոցին հայերեն տառերով գրված էր. «Արշակ (I, 34-35 թթ.-Ն.Դ.) թագավորը Նյուսիայի աստծուն» (Photius. Bibliothèque; t. V, 1967, p. 172, 324b 4-1): Զոմենացի աստվածաբան և գրող Յիպպոլիտոսը (III դ.) հայերին հիշատակել է այն ժողովուրդների (հույներ, իբերացիներ-խապանացիներ, լատինացիներ, հնդիկներ, հրեաներ մարեր և այլք) թվում, ովքեր դպրություն ունեին (Hippolitus. Werke, IV, Bd. Die Chronik, Leipzig, 1929, 81, 192) (տես՝ Դանիելյան Է., Հայ գրի, թարգմանական և ինքնուրույն գրականության պատմական նշանակությունը քաղաքակրթությունների երկխոսության տեսանկյունից - «21-րդ դար», 2010, N 1, էջ 16):

⁶⁶ «Եվ այսպես նա շատ նեղություններ կրեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես պարգևվեց նրան այդ բախտը. նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ - հայերեն լեզվի նշանագրեր: Եվ այնտեղ շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց սիղոբաներով - կապերով» (Կորյուն, էջ 96-97):

նայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ: Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր...»⁶⁷:

Մեսրոպ Մաշտոցն այնուհետև ժամանեց Սամոսատ քաղաքը «Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն զնրբագոյնն եւ զլաւագոյնն, զկարճն եւ զերկայնն, զառանձինն եւ զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ եւ յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք. որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յԵկեղեաց գաւառէն, եւ երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղմական տանէն: Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ Եթէ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Որ եւ գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով զմանուկս գրիչս նմին դպրութեան»⁶⁸:

Մեսրոպ Մաշտոցը Աստվածաշնչի գրավոր թարգմանության գործին ձեռնամուխ էր եղել Սամոսատում: Կորյունը գրել է. «Իսկ աշակերտասէր վարդապետին զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւնն կարգէր [ի քաղաքին Եղեսացուց], և զոմանս ի յունական դպրութիւնն՝ անտի ի Սամոսատական քաղաքն գումարէր: Եւ նորա իւրովք հաւասարօք

⁶⁷ Մովսէս Խորենացի, էջ 327, «Եվ տեսնում է ո՛չ երագ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպէս որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպէս ծյունի վրա: Եվ ոչ մի այն երևաց, այլև բոլոր (գրերի) հանգամանքները նրա մտքում հավաքվեցին ինչպէս մի ամանում: Եվ աղոթքից վեր կենալով ստեղծեց մեր նշանագրերը...» (Մովսէս Խորենացի, էջ 325-326):

⁶⁸ «Եվ հենց այնտեղ, նույն քաղաքում գտավ հելլենական դպրության մի գրագիր, Հռոփանոս անունով, որի ձեռով նշանագրերի բոլոր զանազանությունները՝ բարակն ու հաստը, կարճն ու երկայնը, առանձինն ու կրկնավորն ամբողջապէս հորինելուց և վերջացնելուց հետո ձեռնարկեց թարգմանություն անելու երկու մարդու, իր աշակերտների հետ, որոնցից առաջինի անունը Հովհան էր, Եկեղյաց գավառից, և երկրորդինը՝ Հովսէփ, Պաղմական տնից: Եվ սկսեց թարգմանել [սուրբ] գիրքը՝ նախ Սողոմոնի Առակներից, որ սկզբում հենց հանձնարարում է ծանոթ լինել իմաստության, ասելով, թե՝ «Ճանաչել իմաստություն ու խրատ, իմանալ հանճարի խոսքերը», որ և գրվեց այն գրագրի ձեռքով. միաժամանակ և սովորեցնում էին մանուկներին՝ գրագետներ [պատրաստելով] նույն դպրության համար» (Կորյուն, էջ 98-99):

զսովորականն առաջի եղեալ զաղօթս և զտքնութիւնս և զպաղատանս արտասուալից...»⁶⁹:

Մեսրոպ Մաշտոցի կատարած հայերեն թարգմանությամբ Սողոմոնի Առակների առաջին տողը գրվեց գրագիր Հռոփանոսի ձեռքով, որին Մովսես Խորենացին բնութագրել է՝ «հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեան»⁷⁰:

Գրերի գյուտից հետո հայ ժողովրդի հոգևոր հայրերը՝ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթև կաթողիկոսը, իրենց աշակերտների մասնակցությամբ ձեռնարկեցին Աստվածաշնչի թարգմանական գործը՝ V դարի առաջին տասնամյակներում: Աստվածաշնչի թարգմանության ընկալյալ բնագիրն ընդունեց իր վերջնական տեսքը և ստեղծվեց սրբագրված օրինակը: Լ. Տեր-Պետրոսյանը նշել է. «Բոլոր հետազոտողները համամիտ են այն հարցում, որ Աստվածաշունչը հայերենի է թարգմանվել Ե դարի սկզբին և որոշ ժամանակ անց խմբագրվել ըստ ձեռք բերված ստույգ հունարեն օրինակների»⁷¹: Ըստ Ա. Ջեյթունյանի՝ «Ապացուցված պետք է համարել, որ հայկական Աստվածաշնչի ընկալյալ բնագիրը ներկայացնում է V դ. 30-ական թթ. լեզվական վիճակը... Այդ թվականներին ստանալով իր վերջնական տեսքը, հայերեն թարգմանությունն այլևս չի ենթարկվել արմատական սրբագրության»⁷²:

Աստվածաշնչի ընկալյալ բնագրի մասին Հ. Անասյանը գրել է. «Ե դարի առաջին կեսում հայերն ունեին երկրորդ՝ վերա-

⁶⁹ «Իսկ աշակերտասեր ուսուցիչն իր հետ տարածներին երկու [խմբի] բաժանելով՝ ոմանց ասորական դպրության կարգեց [Եղեսիա քաղաքում] և ոմանց հունական դպրության [կարգելով]՝ այնտեղից ուղարկեց Սամուսատական քաղաքը: Եվ նա իր ընկերների հետ սկսեց սովորական աղոթքներն ու տքնությունները և արտասալից պաղատանքները...» (Կորյուն, էջ 94-97): Աստվածաշնչի հայերեն թարգմանության սկզբնաղբյուրային լեզվի խնդրին անդրադառնալով, Մ. Չամչյանը, «գրեցավ ձեռամբ այնորիկ գրչի» արտահայտությունը կապելով հույն գրիչ Հռոփանոսի հետ, Մեսրոպ Մաշտոցի կողմից արված առաջին թարգմանությունը նշել է կատարված. «ի յունաց զգիրս առակացն Սողոմոնի... և սկիզբն Մեսրոպ թարգմանեալ և զնոր Կտակարանս 'ի յունաց»: (Մ. Չամչեանց, նշվ. աշխ., էջ 493):

⁷⁰ Մովսես Խորենացի, էջ 327, «հունարեն գրչության հրաշալի արուեստ ուներ» (Մովսես Խորենացի, էջ 325):

⁷¹ Լ. Տեր-Պետրոսյան, Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախօրինակը, - «Էջմիածին», Ա, 1975, էջ 44):

⁷² Գիրք Ծննդոց, Ներածություն, էջ 34-35:

նայված ու լրացված թարգմանությամբ կանոնյալ Աստվածաշունչ մատյանը, որի բնագիրը հասել է մինչև մեր օրերը և հանդիսանում է հայկական Աստվածաշնչի ընկալյալ բնագիրը»⁷³:

Ըստ պատմիչների վկայությունների, Աստվածաշնչի հայերեն գրավոր թարգմանության գործը երկու փուլի է բաժանվում, որոնք ընդգրկում են՝ ա) գրերի գյուտին հաջորդած՝ մինչև Եփեսոսի Գ Տիեզերական ժողովն ընկած ժամանակաշրջանը, բ) Եփեսոսի Տիեզերական երրորդ ժողովին (431 թ.) հաջորդող տարիները⁷⁴:

Կորյունի հաղորդումներից հետևում է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության սկիզբը դրվել է հունարեն լեզվից թարգմանությամբ: Մ. Օրմանյանը Մեսրոպ Մաշտոցի՝ Հովհան Եկեղեցացու ու Հովսեփ Պաղնացու օգնությամբ սբ. Գրքից թարգմանած առաջին կտորի՝ Առակաց գրքի գրիչը նշել է Հռոփանոսին: Նա հավանական է համարել, որ հայերեն թարգմանությունը կատարված է հունական Յոթանասնից օրինակի հիման վրա՝ մինևույն ժամանակ նշելով, որ սբ. Գրքի թարգմանության առաջին կտորները կամ փորձերը կատարվեցին ասորերենի վրա, սակայն արդյունքը գոհացուցիչ չէր և գերազանցությունը հունարենից թարգմանությանը տրվեց⁷⁵:

Մեսրոպ Մաշտոցը վերադառնում է «Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատյան գավառին, առ սահմանօք Նոր Քաղաքին (Վաղարշապատ)», ինչպես նշել է Կորյունը, ծավալում է թարգմանչական բուռն գործունեություն Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի հետ միասին. «Եւ ի ձեռն առեալ այնուհետեւ աստուածագործ մշակութեամբ գաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել եւ յուսուցանել... Յայնմ ժամանակի երանելի եւ ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում յանկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, եւ

⁷³ Գ. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, էջ 317-318:

⁷⁴ Նույն տեղում, էջ 309-310:

⁷⁵ Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 278-280: Իսկ Աստվածաշնչի սկզբնական թարգմանության մասին Մ. Աբեղյանը գրել է. «Թե ո՞ր լեզվից են թարգմանել Աստվածաշունչը, այդ մասին չի հիշում Կորյունը... Ընդունում են, թե դա թարգմանված է եղել ասորերենից» (Մ. Աբեղյան, Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի ու գրականության սկիզբը - «Մեսրոպ Մաշտոց», էջ 287, 290):

յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանան Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախօսք գտան»⁷⁶:

«Երկուց հաւասարելոցն»՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի ձեռքով իրականացավ Հին Կտակարանի («օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարեական դասուն») և Նոր Կտակարանի («յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն») հայերեն առաջին ամբողջական թարգմանությունը, ինչի մասին վկայում է Կորյունի ևս մեկ հաղորդումը: Պատմելով Եփեսոսի ժողովին հաջորդած դեպքերի մասին՝ Կորյունն, անդրադառնալով նախորդ ժամանակաշրջանին, հիշատակել է. «Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն՝ կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարծուցեալ, եւ բազում եւս զհայրապետաց սրբոց զճճմարիտ զիմաստութիւնն»⁷⁷:

Մ. Աբեղյանը «զեկեղեցական գրոց գումարութիւն» արտահայտությունը ծանոթագրել է որպէս «եկեղեցական գրքեր»՝ նշելով, որ դրանք, ինչպէս «ընդունում են, եկեղեցում ժամասացության ժամանակ գործածված գրքեր են. ժամագիրք, պատարագամատուոյց, տոնական, որոնց հիմնական մասերը հին են»⁷⁸:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Կորյունի երկի սկզբնամասի հետևյալ հաղորդման վրա. «Իսկ մեծին Մովսէսի

⁷⁶ «Եվ այնուհետև աստվածային գործի մշակությունն անելով սկսեցին ավետարանական արվեստը՝ թարգմանել, գրել և ուսուցանել... Այն ժամանակ անպայման սքանչելի դարձավ մեր երանելի ու ցանկալի Չայոց աշխարհը, ուր երկու հավասարակիցների ձեռքով հանկարծ միանգամից եկան հասան հայաբարբառ հայրենախոս դարձան օրենսուսույց Մովսէսը՝ մարգարեական դասի հետ, և առաջադէմ Պողոսը՝ բոլոր առաքելական գնդով: Քրիստոսի աշխարհակեցոյց պվետարանի հետ միասին» (Կորյուն, էջ 102-104):

⁷⁷ «Իսկ երանելի Սահակն առաջ հունարեն հայերեն էր դարձրել եկեղեցական գրքերի ամբողջությունը և շատ սուրբ հայրապետների ճճմարիտ իմաստությունը» (Կորյուն, էջ 124): Կորյունի տեքստի գրաբար բնագրի «զճճմարիտ» բառը նույն հրատարակության աշխարհաբար և անգլերեն թարգմանություններում բաց է թողնված (Կորյուն, էջ 125, 291), իսկ ռուսերենում ճիշտ է թարգմանված «истинные» (էջ 214):

⁷⁸ Կորյուն, էջ 323, ծան. 124: «Չայրապետաց սրբոց զճճմարիտ իմաստութիւնն» արտահայտությունը Մ. Աբեղյանը բացատրել է որպէս «եկեղեցական բարձրագույն աստվածաբանական գիտության գրքեր» (նույն տեղում, էջ 323, ծան. 125):

զառաւելագոյն զաստուածամուխ մերծաւորութիւն՝ ամենայն եկեղեցական գրով հնչեցուցեալ...»⁷⁹: Հին Կտակարանի Ելից գրքից հայտնի Մովսէս մարգարեի աներոջ՝ Հոթորի⁸⁰, Նոր Կտակարանի Աստծո Միածին Որդու երանությունների⁸¹, «զառաջամուտ Կարապետի»՝ Հովհաննէս Մկրտչի⁸², Քրիստոսի տասներկու առաքյալների⁸³, Նաթանայելի⁸⁴, յուղի մի շիշ բանեցնելու⁸⁵, քանանացի կնոջ հավատքի⁸⁶, երկու դանկի ընծայողների գովեստի⁸⁷, Տիրոջ կողմից Պողոսին «անօթ ընտրութեան» անվանելու⁸⁸, Աստծո շնորհքը ամեն բանի մեջ հռչակելու⁸⁹, Աստծո ընտրյալների անբիծ լինելու⁹⁰, «Կաթողիկէ առաքելոցն»՝ Հակոբ, Պետրոս, Հովհաննէս, Հուդա առաքյալների ընդհանրական թղթերի և այլ տեղեկությունների մասին Կորյունի հաղորդումներից հետևում է, որ վերոհիշյալ «եկեղեցական գրով» արտահայտությունը վերաբերում է սբ. Գրքին⁹¹:

Այս տեսանկյունից պետք է մոտենալ «եկեղեցական գրոց գումարութիւնն» արտահայտությանը, ինչի մասին վկայում է նաև Հին Կտակարանի՝ Հերոնիմոս Ստրիդոնացու (մոտ 347-419/20 թթ.) լատիներեն թարգմանության (405 թ.) (XIII դարից կոչվեց Վուլգատա)⁹² Առաջաբանի V դարում կատարված հայերեն թարգմանության մեջ հիշատակվող «գումարութիւն» բառը⁹³:

Հերոնիմոսը գրել է. «Արդ որպէս ցուցաւ թէ քսան եւ երկու

⁷⁹ Նույն տեղում, էջ 76:

⁸⁰ Ելք, ԺԸ 17-23:

⁸¹ Մատթ., Ե 3-11:

⁸² Մարկ., Ա 2:

⁸³ Մատթ., Ժ 2-5:

⁸⁴ Յովհան., Ա 47:

⁸⁵ Մատթ., ԻԶ 7-13:

⁸⁶ Մատթ., ԺԵ 28:

⁸⁷ Ղուկ., ԻԱ 1-4:

⁸⁸ Գործք, Թ 15:

⁸⁹ Բ Կորնթ., Բ 14:

⁹⁰ Հռովմ., Ը 33:

⁹¹ Կորյուն, էջ 76-78:

⁹² Lexikon der Antike, Leipzig, 1972, S. 241, 584:

⁹³ Յերոնիմեայ վասն ի քսան և յերկուս գիրս առ ի Հեբրայեցոց զպատմութիւնսն բաժանելոյ, էջ 66-76, Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, էջ 311-312:

նշանագիրք են, որովք գրեալ ամենայն ինչ եբրայեցերէն բարբառով յառաջ եկեալ հասանի, նույնպէս քսան եւ երկու գիրք աստուածակերտ գումարութեանն թուին ընդ ամենայն ըստ նշանագրացն»:

Ըստ Հերոնիմոսի՝ առաջին գումարության մեջ մտնող գրքերի հաջորդականությունը հետևյալն է. «Ձառաջինն անուանեն Բրեսիթ, զոր մեք Արարածս կոչեմք, եւ զերկրորդն Եղդէ ամովթ, զոր մեք Ելս ասեմք, եւ զերրորդն Ո[րդի]երկա, զոր մեք Ղեւտական անուանեմք, եւ զչորրորդն Ուաւեդաբբեր, զոր մեք Թիւս ասեմք, եւ զհինգերրորդն Ելէ հաղդաբարիմ, զոր մեք Երկրորդումն աւրինաց կոչեմք: Սոքա հնգեքեան են գիրք Մովսէսի, զոր ճշմարտիւ Եբրայեցիք Արէնս անուանեն... Եւ երկրորդ գումարութեան առնեն սկիզբն եւ թուեն զգիրսն Յեսուայ որդւոյ Նաւեայ, որ առ ի Հեբրայեցւոց Յովսուէ բէն Նուն անուանի ապա դնեն զՍովտիմն, որ է Ղատաւորացն, ի նոյն յարեն զՀռութ, զի որ ինչ ի ժամանակս Ղատաւորացն եղեւ, զնոյն եւ Հռութ պատմէ. եւ երրորդ զՍամուէլ, զոր մեք առաջին եւ երկրորդ Թագաւորութեանցն կոչեմք, եւ չորրորդ զՄաղաքիմն, որ է Թագաւորութեանց, որ յերրորդում եւ ի չորրորդում՝ Թագաւորութեանցն կատարի: Բայց առաւել ճշմարտագոյն է Մաղաքիմն՝ այսինքն է Թագաւորաց կոչել քան զՄաղաքովթն, որ նշանակէ Թագաւորութեանց, քանզի ոչ եթէ զայլ եւ այլ ազգաց Թագաւորութենէ նշանակէ խմբագիրն, այլ զմիոյ զիսրայէլականէն, որ ի վերայ երկուտասան ցեղիցն սահմանեալ էր, հինգերորդ զԵսայեայն, վեցերորդ զԵրեմիային, եւթներորդ զԵզեկիէլին, ութերորդ զերկուտասան Մարգարէիցն, զոր նոքա Քարէ ասարն կոչեն: Եւ երրորդ դարձեալ գումարութիւն Եբրայեցւոց, յոր գարբագիրսն կարգեն եւ այնր առաջին զՅոբ դնեն, եւ երկրորդ զԴաւիթ, առնեն եւ հինգ մատենագրութիւնս, առաջին զԹուոցն գիր թուեն, երկրորդ զՍողոմոնին, երրորդ զԱռակացն, զոր նոքա Մասաղովթ կոչեն, եւ չորրորդ զԵկղեսիասուէն, զոր նոքա Կոհեղէթ անուանեն, եւ հինգերորդ զԱւրիհնութիւնն Աւրիհնութեանց, զոր նոքա Սիր ասիրիմ կոչեն, վեցերորդ զԴանիէլին, եւթներորդ զԴաբբէ իովմիմն, որ նշանակէ զբանս աւուրց, բայց յայտնագոյն(ս) ասիցէ ոք պատմութիւն ժամանակական, որ Գիրք Մնացորդացն անուանին, եւ զերկուսեան ողջ ապրեցուցանէ ի մէնջ, ութերորդ զԵզրրն

եւ այն առ ի Յունաց եւ ի Հռովմայեցւոց յերկուս գիրս բաժանեալ է, իններորդ զԵսթերայն: Եւ այսպէս գումարին միանգամայն հնոյ արէնսդրութեան գիրք քսան եւ երկու ընդ ամենայն. Մովսէսին՝ հինգ, Մարգարէիցն՝ ութ, սրբագրացն՝ ինն: Բայց ոմանք զՀռութեւ զԿիմովթ ընդ մարգարէսն կարգեն եւ ընդ նոսին համարին, զի այնու կարասցեն զհնոյ արէնսդրութեանն քսան եւ չորս գիրս թուել»⁹⁴:

Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» հայերեն թարգմանութիւնում Հին Կտակարանի հունարեն տեքստի ամբողջութիւնը «գումարութիւն» բառով է բնութագրված. «...ըստ եօթանասնիցն գումարութեան»⁹⁵:

Մովսես Խորենացին հաղորդում է. «Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն, բովանդակելով զքսան եւ զերկու յայտնիսն, եւ զնոր Կտակս յեղու ի հայ բան, նա եւ աշակերտք նորա Յոհան Եկեղեցացին եւ Յովսէփ Պաղնացի, միանգամայն եւ զարուեստ գրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն աշակերտացն»⁹⁶:

Պատմահոր հիշատակած «յեղուլ»⁹⁷ բայի մի նոր մեկնութիւն առաջարկելով՝ Ա. Մուշեղյանը գրել է. «Մեսրոպն Ասորիքում ոչ թե թարգմանել, այլ հայերենի է փոխադրել, այսինքն՝ համառոտակի շարադրել է Հին և Նոր Կտակարանները, անշուշտ, ուղեցույց ունենալով Տատիանոսի կազմած չորս ավետարանների ասորերեն Դիատեսարոն (քառապատում) կամ «խառն» կոչված համաբարբառը, որը մինչև 431 թ. Եփեսոսի ժողովը լայն գործածության մեջ էր Եղեսիայում, Մծբինում և նրանց շրջակայքում»: Հայ եկեղեցու առաջնորդները հոգ տարան նորագոյն հայ

⁹⁴ Նույն տեղում:

⁹⁵ Եվսեբիոս Կեսարացի, էջ 125:

⁹⁶ Մովսէս Խորենացի, էջ 327, «Եվ իսկոյն ձեռնարկեցին թարգմանութեան, սկսելով Առակներից, ամբողջ քսաներկու հայտնի գրքերը և Նոր Կտակարանը փոխադրում է հայերեն լեզվի, նույնպես և նրա աշակերտները, Յոհան Եկեղեցացին և Յովսէփ Պաղնացին, միևնույն ժամանակ իր ավելի փոքր աշակերտներին սովորեցնել տալով գրչութեան արվեստը» (Մովսէս Խորենացի, էջ 326) ուսուցանելու համար (Ա. Մուշեղյան, Սուրբ Գիրքը հայերեն թարգմանելու հանգամանքները, էջ 93):

⁹⁷ «Յեղուլ» նշանակում է «թարգմանել, վերածել յայլ լեզու». – տես՝ Նոր Բառգիրք Յայկազեան Լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837 (Երևան, 1979), էջ 355 (այսուհետև՝ ՆԲՅԼ):

գրերով և հայոց լեզվով նախ և առաջ ստեղծելու փոքրածավալ, առձեռն Աստվածաշունչ Մեծ Հայքի բոլոր եկեղեցիներում քրիստոնեություն քարոզելու և որպես համակարգված ուսմունք՝ դպրոցներում ուսուցանելու համար⁹⁸: Ըստ Ա. Մուշեղյանի, Տատիանոսի կազմած ասորերեն Diatessaron-ի⁹⁹ հիշատակությունը ոչ թե թարգմանության հիմք էր, այլ «ուղեցույց»¹⁰⁰:

Հերոնիմոսի և Եվսեբիոսի հաղորդումներից հետևում է, որ «քսան և երկու գրքերի գումարությունը» Հին Կտակարանին է վերաբերում, և Մովսես Խորենացին դրանք նշել է որպես «յայտնիսն» և դրանց հետ հիշատակել նաև Նոր Կտակարանը: Հ. Անասյանը նշել է, որ մատենագրական աղբյուրներում *յայտնի* տերմինով նշվում են Աստվածաշնչի *կանոնական* կամ *վավերական* գրքերը, իսկ *ծածուկ* տերմինով՝ *անկանոն* կամ *անվավեր* կոչված գրքերը¹⁰¹:

Հին Կտակարանի «քսաներկու գրերի գումարությունը» և Նոր Կտակարանը Կորյունը միասին է նշել, որպես «զեկեղեցական գրոց գումարութիւն»: Պատմիչը նախ հիշատակել է Հին Կտակարանից՝ Սողոմոնի Առակների թարգմանությունը, այնուհետև գրելով, որ Աստվածաշունչը թարգմանվել է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի ձեռքով, նշել է, որ Սահակ Պարթևն առաջ հունարեն լեզվից էր հայերեն թարգմանել «զեկեղեցական գրոց գումարութիւնն»¹⁰²:

Աստվածաշնչի թարգմանության մասին Ղազար Փարպեցին գրել է. «Ժողովեալ ամենայն աւագ քահանայք աշխարհին Հայոց հանդերձ երանելեան Մաշտոցի եւ ամենայն նախարարօք աշխարհիս Հայոց եւ մեծամեծ տանուտերօք առ թագաւորն

⁹⁸ Ա. Մուշեղյան, Սուրբ Գիրքը հայերեն թարգմանելու հանգամանքները, էջ 93:

⁹⁹ Տատիանոսը (մոտ 120-180 թթ.) չորս ավետարաններից քաղվածորեն կազմեց մի ավետարան ասորերեն լեզվով՝ «Աւետարան ըստ չորից» - Diatessaron (Το δια τέσσαρον εὐαγγέλιον), տես՝ Ե. Տեր-Մինասեանց, նշվ. աշխ., էջ 4:

¹⁰⁰ Ա. Մուշեղյան, Սուրբ Գիրքը հայերեն թարգմանելու հանգամանքները, էջ 93:

¹⁰¹ Գ. Ա. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Ա, Երևան, 1959, էջ X-XI և 896-901:

¹⁰² Կորյուն, էջ 124: Իսկ Մ. Աբեղյանն ընդունում է այն կարծիքը, որ «զեկեղեցական գրոց գումարութիւն»-ը «եկեղեցական ժամասացության ժամանակ գործածված գրքերն են՝ ժամագիրք, Պատարագամատույց, Տոնական, որոնց հիմնական մասերը հին են» (նույն տեղում, էջ 323, ծան. 124):

Հայոց Կռամշապուհ, եւ հանդերձ թագաւորաւն սկսան աղաչել զսուրբ կաթողիկոսն Սահակ, արկանել զանձն յաշխատութիւն հոգևոր եւ թարգմանել զաստուածաշունչ կտակարանս ի յոյն լեզուոյ ի հայ բարբառս»¹⁰³: Սահակ Պարթևին դիմելու անհրաժեշտութիւնը Ղազար Փարպեցին բացատրել է նրանով, որ «երանելին Մաշտոց եւ որ ընդ նմա պատուական քահանայքն էին՝ ոչ գորէին համարձակել յայսպիսի սաստիկ եւ կարելոր գործ, թարգմանել գիրս ի յոյն լեզուոյն ի հայ բարբառս. վասն զի ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յունարէն ուսմանն»¹⁰⁴: Թվում է, թէ Ղազար Փարպեցին այս միտքն արտահայտել է՝ հիմնվելով Կորյունի վերոհիշյալ այն հաղորդման վրա, թէ Սահակն էր ձեռնարկել Աստվածաշնչի թարգմանությունը հունարենից հայերեն:

Ղազար Փարպեցին գրել է, որ Սահակ Պարթևը «կամաւոր յօժարութեամբ ետ զանձն ի գործ, պանծացեալ յԱստուծոյ գործակցութիւնն, որ ետ նմա զայնպիսի շնորհս առաւելապէս գիտութեան. եւ անվեհեր ջանալով զցայգ եւ զցերեկ՝ թարգմանեաց զկտակարանս ամենայն, զխօսեցեալս ճշմարիտ մարգարէիւք սուրբ Հոգւոյն, եւ հաստատեալ կնքեաց երջանիկ առաքելովքն զնորոց կտակարանացն զլուսաւոր եւ զկենսատուր քարոզութիւնս նովին Հոգւով»¹⁰⁵: Կարելի է տեսնել, որ այդ թարգմանությունը վերաբերում էր Կորյունի հիշատակած «զեկեղեցական գրոց գումարութեան»-ը:

¹⁰³ «Հայոց աշխարհի բոլոր ավագ քահանաները, երանելի Մաշտոցով և Հայոց աշխարհի բոլոր նախարարներով ու մեծամեծ տանուտերներով հանդերձ, հավաքվեցին Հայոց թագավոր Կռամշապուհի հետ և թագավորի հետ միասին սկսեցին աղաչել Սահակ սուրբ կաթողիկոսին, որպեսզի նա իր անձը նվիրի հոգևոր աշխատանքի և աստուածաշունչ կտակարանները հունարեն լեզվից թարգմանի հայերեն լեզվի» (Ղազար Փարպեցի, էջ 36-37):

¹⁰⁴ «Երանելի Մաշտոցն ու նրա հետ եղած պատվական քահանաները չէին կարող համարձակվել ձեռնարկելու մի այսպիսի խիստ կարևոր գործ, ինչպես հունարենից հայերեն լեզվով թարգմանելը, որովհետև դեռ լրիվ տեղյակ չէին հունարենի ուսման գիտական հրահանգին» (նույն տեղում):

¹⁰⁵ «Կամավոր հոժարությամբ իր անձը տվեց գործին, պանծացրեց Աստծո գործակցությունը, որը նրան տվել էր առավելապես գիտության այնպիսի շնորհներ: Եվ անվեհեր կերպով տքնելով գիշեր ու ցերեկ, թարգմանեց բոլոր կտակարանները, Սուրբ Հոգու ճշմարիտ մարգարեների խոսածները և հաստատելով կնքեց Նոր Կտակարանի լուսավոր ու կենսատու քարոզությունները երջանիկ առաքյալներով ու նույն Հոգով» (նույն տեղում, էջ 38-39):

Ղազար Փարպեցին՝ չարամիտ Վարազվաղենի խայտառակ վախճանի մասին իր շարադրանքում, հիշատակել է ևս մեկ թարգմանություն. «Որ եւ զմնացորդս ժահահոտ չարահամ խորտկին իւրոյ եթող զաւակին իւրում, ըստ գրեցելումն ի վեշտասաներորդումն սաղմոսին. «Յագեցան կերակրօք, ասէ,- որ միւս եւս թարգման՝ խոզենեաւ ասէ,- եւ թողին զմնացուածս տղայոց իւրեանց»¹⁰⁶։

Լ. Տեր-Պետրոսյանը նշել է. «Սաղմոսների մեզ հասած հայերեն բնագիրը անտարակույս թարգմանված է հունարենից»¹⁰⁷։ Իսկ Ղազար Փարպեցու նշած «խոզենաւ» տարընթերցվածի, ինչպես նաև «Եվսերիոս Կեսարացու Պատմության սաղմոսյան մեջբերումների» տարբերությունների առնչությամբ գրել է, որ «կարող էին փութանակի թարգմանությունից բխել, քանի որ սրան ոչ մի ժամանակագրական հանգամանք չի հակասում»¹⁰⁸։ Պ. Մուրադյանի կարծիքով՝ Փարպեցին «նույնական որակում է տալիս իր բերած երկու տարբերակներին, իսկ դրանք քաղված են սաղմոսի թարգմանությունից և ոչ մեկնությունից: Հետևաբար՝ ընդգծված արտահայտությունը պիտի նշանակի «իսկ մյուս թարգմանիչը», ինչպես պատմիչն իր թղթում վաղամեռիկ Խոսրովիկին հիշատակում է որպես «միւս եւս թարգմանն»: Հետագոտողը նշել է, որ այստեղ ևս «թարգմանն» բառը նշանակում է «թարգմանիչ» և «Խոսրովիկին Սահակն ու Մաշտոցն էին ուղարկել թարգմանության արվեստի մեջ հմտանալու, և աղբյուրները նրան են հատկացնում Բարսեղ Կեսարացու երկու կանոնախմբերի թարգմանությունը», ինչը մանրամասնորեն հետագոտել է Կ. Մուրադյանը¹⁰⁹։ Պ. Մուրադյանը եզրակացրել է, որ «Ղազար Փարպեցին

¹⁰⁶ «Եվ նա իր ժահահոտ ու դառնահամ կերակրի մնացորդները թողեց իր զավակին՝ համաձայն տասնվեցերորդ սաղմոսում գրվածի, որ ասում է. «Հագեցան կերակուրներով,- մի այլ թարգմանիչ ասում է խոզի մտով,- և մնացորդները թողեցին իրենց զավակներին» (նույն տեղում, էջ 92-93):

¹⁰⁷ Լ. Տեր-Պետրոսյան, Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախորինակը, «Էջմիածին», Ա, 1975, էջ 44:

¹⁰⁸ Նույնի՝ Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախորինակը (շարունակություն), «Էջմիածին», Թ, 1975, էջ 56:

¹⁰⁹ Կ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 171-174:

ճանաչել ու բաղադրել է սաղմոսի տարընթերցումավոր երկու թարգմանություն»¹¹⁰:

Պատմիչների հաղորդումները վկայում են, որ Մեսրոպ Մաշտոցի Հայաստան վերադառնալուց հետո Սահակ Պարթևը մասնակցել է սբ. Գրքի առաջին ամբողջական հայերեն թարգմանության իրականացման գործին: Պատմահայրը Սահակ Պարթևին հիշատակել է Աստվածաշունչը թարգմանելիս՝ Մեսրոպ Մաշտոցի՝ Կրաց և Աղվանից կողմերը լուսավորչական աշխատանք կատարելուց և Մեծ Հայք վերադառնալուց հետո: Մեսրոպ Մաշտոցը. «գտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յասորւոյն, յոչ լինելոյ յունի: Քանզի նախ ի Մեհրութանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց՝ չտային պարսիկ վերակացուքն յոյն ունեք ուսանել դպրութիւն յիրեանց մասինն, այլ միայն ասորի»¹¹¹:

Այս իրադարձությունները, ըստ Մովսես Խորենացու, տեղի էին ունեցել Արկադիոսի մահվանից հետո՝ Թեոդոսիոս II-ի (408-450 թթ.) գահակալության սկզբնական ժամանակաշրջանում՝ Հայոց աշխարհի պարսկա-հռոմեական բաժանվածության պայմաններում:

Պատմահայրը գրել է. «Վախճանեալ Արկադեայ՝ փոխանակ նորա թագաւորէ որդի, որ կոչեցաւն Թէոդոս փոքր. եւ զնոյն բարեկամութիւն կալաւ ընդ մերում աշխարհիս եւ ընդ արքային մերում Վռամշապիոյ. բայց զմասն իւր ոչ հաւատաց նմա, այլ ինքեան կալաւ գործակալօք եւ խաղաղութիւն արար ընդ Յազկերտի արքայի պարսից: Ընդ այն ժամանակս եկալ Մեսրոպայ, եւ բերեալ զնշանագիր մերոյ լեզուիս, եւ հրամանաւ Վռամշապիոյ

¹¹⁰ Պ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 54-57:

¹¹¹ Մովսես Խորենացի, էջ 329, «...տեսնում է, որ Մեծն Սահակը զբաղված է (սբ. Գրքի) թարգմանությամբ ասորերենից, հունարեն չգտնվելու պատճառով: Որովհետև նախ Մեհրութանն այրել էր հունարեն գրքերը մեր ամբողջ երկրում, իսկ այնուհետև, երբ Հայաստանը (երկու մասի) բաժանվեց, պարսիկ վերակացուներն իրենց մասում ոչ ոքի թույլ չէին տալիս հունարեն սովորել, այլ միայն ասորերեն» (Մովսես Խորենացի, էջ 327): Պատմահոր այս հաղորդումը՝ Աստվածաշնչի ասորերենից հայերեն թարգմանության կողմնակիցների հիմնական փաստարկն է (Ե. Տեր-Մինասեանց, նշվ. աշխ., էջ 51-52: Մ. Աբեղյան, Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի ու գրականության սկիզբը, տես՝ Կորյուն, էջ 41):

Եւ մեծին Սահակայ ժողովեալ մանկունս ընտրեալս, ուշեղս եւ աջասունս, փափկածայնս եւ երկարոգիս, եւ դպրոցս կարգեաց յամենայն գաւառս. եւ ուսոյց զբնաւ կողմանս բաժնոյն Պարսից, բայց ի Յունաց մասնէն...»¹¹²:

Հնարավոր է, որ Պատմահոր մոտ միահյուսվել են Կորյունի հաղորդումներն Աստվածաշնչի թարգմանության ընթացքի մասին՝ նախ Սամոսատում Հին Կտակարանի մասնակի թարգմանությունը, այնուհետև Մեծ Հայքի թագավորություն վերադառնալուց հետո՝ Ավետարանի թարգմանությունը սկսելը և սբ. Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի կողմից Աստվածաշնչի ամբողջական թարգմանության իրականացումը, որին հաջորդել էր Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեության ծավալումը Մեծ Հայքի Սյունյաց աշխարհում և Հայոց Արևելից կողմերում՝ Արցախում ու Ուտիքում, ինչպես նաև Վիրքում և բուն Աղվանքում («Մեսրոպայ երթեալ յաշխարհն Վրաց՝ առնէ եւ նոցա նշանագիրս տուեցելովն ի վերուստ շնորհան... Եւ ինքն յԱղուանս իջեալ... ստեղծ գնշանագիրս կոկորդախօս աղխազուր խժական խեցբեկագունին այնորիկ Գարգարացոց լեզուին») ¹¹³:

Ըստ Կորյունի, Մեսրոպ Մաշտոցը Աստվածաշնչի թարգմանությունը սկսելով Սամոսատում՝ այնուհետև Հայաստանում ավարտել է Սահակ Պարթևի մասնակցությամբ, իսկ Ղազար Փարպեցու հաղորդմամբ՝ սբ. Գրքի հունարենից թարգմանությունը հայերեն կատարել է Սահակ Պարթևը:

¹¹² Մովսես Խորենացի, էջ 328: «Արկաղի վախճանվելով՝ նրա տեղը թագավորեց նրա որդին, որ կոչվեց Թեոդոս Փոքր. նա նույնպիսի բարեկամություն պահպանեց մեր երկրի և մեր Վռամշապուհ թագավորի հետ, բայց իր մասը նրան չվստահեց, այլ իրեն պահեց՝ գործակալներով, և պարսից Յազկերտ թագավորի հետ խաղաղություն կնքեց: Այս ժամանակներն եկավ Մեսրոպը, բերելով մեր լեզվի նշանագրերը: Նա Վռամշապուհի և Մեծն Սահակի հրամանով՝ ընտրությամբ մանուկներ ժողովեց, ուշին, առողջակազմ, լավ ծայնով և երկար շնչառությամբ, բոլոր գավառներում դպրոցներ հիմնեց և պարսից բաժնի բոլոր կողմերը սովորեցրեց, բացի հունական մասից...» (Մովսես Խորենացի, էջ 326):

¹¹³ Մովսես Խորենացի, էջ 328-329, «Մեսրոպը Վրաց երկիրը գնալով՝ նրանց համար էլ, իրեն տրված երկնային շնորհով, ստեղծում է նշանագրեր... Ինքն իջնում է Աղվանք... նա նշանագրեր ստեղծեց գարգարացիների այն կոկորդածայն, կոչտ, խժական, կոպիտ լեզվի համար» (Մովսես Խորենացի, էջ 326-327):

Այս հարցի կապակցությամբ Հ. Մարկվարտը կարծիք է հայտնել. «Սահակով հմայված Ղազարն ուզում է Սահակին վերագրել ոչ միայն Աստվածաշնչի թարգմանության, այլև նույնիսկ հայ գրերի հորինման գլխավոր վաստակը: Իսկ սրա համար բնականաբար պետք է, որ դեպքերի վայրը տեղափոխվեր Հայաստան և Մաշտոցից խլվեր արդարությամբ վաստակված փառքի վաստակը: Ղազարն արժանի է սաստիկ կշտամբանքի՝ իր կատարած այս փորձի համար, մի փորձ, որը կարելի է նշել որպես պատմական փաստերի աղավաղում»¹¹⁴:

Սակայն այսպիսի կարծիքը չի բխում սկզբնաղբյուրների քննությունից, քանզի Կորյուն վարդապետի երկի վրա հիմնված Մեսրոպ Մաշտոցի գործունեությանը նվիրված Ղազար Փարպեցու շարադրանքում ասվում է. «Ի ժամանակս սորա (Վռամշապուհ - Ն. Դ.) թագաւորութեանն տուաւ շնորհ հոգողութեան յամենախնամէն Աստուծոյ առն միում ճշմարտի՝ Մաշտոց անուն կոչեցելոյ, որ էր ի գաւառէն Տարունոյ, ի Հացեկաց գեղջէ, որդի առն, որում անուն էր Վարդան... Եւ զայս թէ կամիցի ոք գիտել հաւաստեաւ՝ ի պատմութենէ գրոց առն ցանկալի Կորեան, աշակերտի նորին երանելոյն Մաշտոցի, կարդացեալ տեղակասցի զվարս կենաց նորա եւ զիւր հայերէն նշանագրացն... բազմաժամանակեայ մտածութիւնն երանելոյ առն Մաշտոցի ընկալեալ յամենախնամ մարդասիրէն Աստուծոյ՝ զօրացոյց զնա հոգուով ողորմութեան իւրոյ... Ջօրացեալ ի սուրբ Հոգւոյն յորդորմամբ եւ եկեալ առ սուրբ կաթողիկոսն Հայոց Սահակ՝ զեկուցանէր նմա զիւրոյ բազմաժամանակեայ մտածութեամբ զխնդիրն, եւ ընկալեալ ի նմանէ քաջալերութեան աւետիս... Եւ մտեալ սրբոյ կաթողիկոսին Հայոց Սահակայ հանդերձ երանելեան Մաշտոցիւ առ թագաւորն Վռամշապուհ եւ իմացուցեալ նմա զպէտս իրացն... Ինքնին Մեսրովբ քջանէ ի Միջագետս հանդերձ աշակերտօք... անցանէ յեղեսիա... Յայնժամ Մեսրովբայ օգնականութիւն ի Բաբելոսէ եպիսկոպոսէ գտեալ, եւ անցեալ ընդ Փյունիկէ՝ ի Սամոս դիմէ¹¹⁵... Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր

¹¹⁴ Դ. Մարկվարտ, Հայոց այբուբենի ծագումը և Մաշտոցի կենսագրությունը - «Մեսրոպ Մաշտոց», էջ 153:

¹¹⁵ Ղազար Փարպեցին հետևելով Մովսես Խորենացուն (էջ 327)՝ հիշատակել է Փյունիկեն և Սամոսը: Գ. Խ. Սարգսյանը Յամոս կղզու հիշատակությունը

հանդերձ Հռոփանոսի, կերպարանաձեւեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայ, փոխատրելով զհայերէն աթութայսն ըստ անսայթաքութեան սիղոբայիցն ի հելլենացւոյն»¹¹⁶:

Ս. Օրմանյանը հենվելով Ղազար Փարպեցու հաղորդման վրա՝ գրել է. «Բայց մենք կը կարծենք, որ ոչ այբուբենի առաջին թերի կազմութեան ատեն Սուրբ Գրքէն բան մը թարգմանուած չըլլայ, եւ ոչ ալ Սամոսատի մէջ կանոնաւոր թարգմանութիւն լրացնել հնարաւոր եղած ըլլայ: Հաւանաբար ուզած են միայն նորոգ կազմակերպութեան արդիւնքը փորձել, ինչը որ բնական էր, եւ Առակաց գիրքին թարգմանութիւնն են ըրած: Ըստ այսմ խորենացիին յիշատակած ամբողջ Աստվածաշունչի թարգմանութիւնը, Սամոսատի մէջ եղածէն պէտք է զատել, եւ ընդհանուր կերպով գիրի գիւտէն յառաջ եկած արդիւնքի պէս իմանալ: Աւելի

Մովսես Խորենացու մոտ շփոթմունք է համարել, Կոմագենեի մայրաքաղաք Սամոսատի փոխարեն (Μοσσεσ Χορωνασι, прим. 692, с. 261-262): Կոմագենեի Սամոսատը և եզեյան ծովի կղզիներից՝ Սամոսը հիշատակված են Ստրաբոնի (մ.թ.ա. 64-մ. թ. 24 թթ.) «Աշխարհագրությունում» (Strabo. The Geography, with an English translation by H. L. Jones, Camb., Mass., London, in eight volumes, vol. VI, 1960, XIV, 1, 13-14; 2, 29): Սամոսատը հիշատակել է նաև Կղավդիոս Պտղոմեոսը (83-161թթ.) իր «Աշխարհագրությունում» (Claudii Ptolemaei Geographia. Vol. Primi, Pars Secunda, Parisiis, 1901, V, 14.8, p. 967):

¹¹⁶ «Սրա (Վռամշապուհ - Ն. Դ.) թագավորության ժամանակ ամենախնամ Աստվածը հոգողության շնորհ տվեց Մաշտոց անունով մի արդար մարդու, որը Տարոն գավառից էր, Հացեկաց գյուղից, որդին էր Վարդապետ անունով մի մարդու... Թե որևէ մեկը ցանկա ավելի հավաստի իմանալ նրա կենսագրության, հայերեն նշանագրերի մասին, կարող է կարգալ ու տեղեկանալ նույն երանելի Մաշտոցի սիրելի աշակերտ Կորյունի գրքի պատմությունից... ամենախնամ մարդասեր Աստվածն ընդունեց երանելի այր Մաշտոցի բազմաժամանակյա մտածությունը և իր ողորմության հոգով զորացրեց նրան... Սուրբ Հոգու հորդորանքով զորացած գալով Հայոց սուրբ կաթողիկոս Սահակի մոտ, (Մաշտոցը) նրան զեկուցեց իր բազմաժամանակյա մտածության խնդիրը և նրանից ստացավ քաջալերության ավետիս... Եվ Հայոց սուրբ կաթողիկոս Սահակը, երանելի Մաշտոցի հետ միասին, մտնելով Վռամշապուհ թագավորի մոտ, նրան բացատրեց գործի կարևորությունը... Մեսրոբ ինքն իր աշակերտների հետ գնաց Միջագետք... անցավ Եդեսիա... Այն ժամանակ Մեսրոբը, Բաբելոս եպիսկոպոսից օգնություն ստանալով և Փյունիկեից անցնելով, գնաց Սամոս... Եվ աղոթքից վեր կենալով՝ Մեսրոբն ստեղծեց մեր նշանագրերը, Հռոփանոսի հետ միասին կերպ ու ձև տվեց հայերեն այբուբենին, ըստ հունարեն տառերի անսայթաքության» (Ղազար Փարպեցի, էջ 28-35):

որոշ պարագաներով կը պատմէ Փարպեցին սբ. Գրոց թարգմանութեան գործը»¹¹⁷:

Այնուհետև Մ. Օրմանյանը անդրադառնալով Սահակ Պարթևի ջանքերով սբ. Գիրքը թարգմանելու մասին Ղազար Փարպեցու շարադրանքին՝ եզրակացրել է. «Յառաջ բերուած կտորներուն բաղդատութենէն յայտնի կը տեսնուի, որ երկու թարգմանութիւններ եղած են ժամանակին, մին Մեսրոպէ, իբր սկզբնական փորձ եւ միւսը Սահակէ իբր վերջնական գործ»¹¹⁸:

Հայկական սկզբնաղբյուրներից բերված տվյալների և դրանց նվիրված ուսումնասիրությունների քննության հիման վրա կարելի է եզրակացնել, որ Սահակ Պարթևը մասնակցել է Աստվածաշնչի թե՛ հունարեն և թե՛ ասորերեն տեքստերից կատարված թարգմանության աշխատանքներին:

Հ. Անասյանը քննարկելով Նոր Կտակարանի թարգմանության հարցի կապակցությամբ Մովսես Խորենացու և Կորյունի տեղեկությունները՝ գրել է. «Միայն հայտնի է, որ թարգմանվել էին ավետարանները, Պողոսի թղթերը և առաքելական մյուս թղթերը. բայց թե առաքելական թղթերից որո՞նք էին ընդունելի համարվում այդ ժամանակ և Նոր Կտակարանի մյուս գրքերը ևս թարգմանվե՞լ էին, թե ոչ, անհայտ է մնում»: Հ. Անասյանը Աստվածաշնչի թարգմանության այս փուլում կատարված թարգմանական աշխատանքների կապակցությամբ եզրակացրել է. «Հին և Նոր Կտակարանների հիմնական մասերը հայացվել էին հայկական թարգմանությունների այս առաջին շրջանում, և դա է, որ օգտագործման մեջ էր Հայաստանում մինչև Եփեսոսի տիեզերական ժողովը»¹¹⁹:

Հայ պատմագրության մեջ Աստվածաշնչի թարգմանության երկրորդ փուլը համապատասխանում է Եփեսոսի Տիեզերական Գ ժողովից հետո ընկած ժամանակաշրջանին, որի ընթացքում Հայաստանի թե՛ քաղաքական և թե՛ հոգևոր կյանքում բավականին բարդ կացություն էր ստեղծվել¹²⁰: Հայ Արշակունյաց

¹¹⁷ Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 279:

¹¹⁸ Նույն տեղում:

¹¹⁹ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, էջ 314:

¹²⁰ Ն. Դանիելյան, Աստվածաշնչի հայերեն թարգմանության փուլերի մասին, ՊԲՀ, N 1, 2001, էջ 3-15:

թագավորության անկումից (428 թ.) հետո Սասանյանները հաջորդ երկու տասնամյակների ընթացքում փորձեցին հայ ժողովրդին պարտադրել Իրանում դեռևս III դարի երկրորդ կեսից որպես պաշտոնական կրոն ընդունված զրադաշտությունը:

Աստվածաշնչի և դավանաբանական գրականության թարգմանությունը կարևորվում էր նաև Տիեզերական (Ընդհանրական) եկեղեցու ընդունած քրիստոնեական վարդապետության ուսուցմանն ու պաշտպանությանն ուղղված Հայ եկեղեցու հայրերի ջանքերի կենտրոնացումով՝ ազգային խնդիրների լուծմանը: Տիեզերական եկեղեցին այդ ժամանակաշրջանում ալեկոծվել էր Կոստանդնուպոլսի պատրիարք Նեստոր Անտիոքացու (428-431 թթ.) պաշտպանած ուսմունքի դեմ պայքարելու հետևանքով: Նեստորը Հիսուս Քրիստոսի մեջ բաժանում էր աստվածային և մարդկային բնությունները, և նրանում երկու տարբեր անձեր տեսնելով, ժխտում էր աստվածային Փրկչի և Աստվածամոր պաշտամունքը¹²¹:

Աղեքսանդրիայի եպիսկոպոս Կյուրեղը (412-444 թթ.) դատապարտեց Նեստորի ուսմունքը և հերքեց Քրիստոսի մասին նրա պաշտպանած «բաժանման» («երկու բնությունների») տեսությունը՝ գրելով. «...զի է Աստուած. վասն Բանին, որ ի բնութեանն է Աստուծոյ, ի սուրբ Կուսէն մարմնացաւ...»¹²²: Այս ոգով էլ Եփեսոսի Տիեզերական Գ ժողովում հռչակվեց Կյուրեղ Աղեքսանդրացու քրիստոսաբանական բանաձևը՝ «մի բնութիւն Բանին մարմնացելոյ»¹²³ և դատապարտվեց Նեստորի ուսմունքը¹²⁴:

Կարապետ եպիսկոպոսը հետևյալ գնահատականն է տվել Հայ եկեղեցու պաշտպանած դավանաբանական սկզբունքներին. «Հայոց եկեղեցին նշելով, որ հավատարիմ է մնացել այն նախնաւանդ սկզբունքներին, որ ընդունել էր արդեն սբ. Լուսա-

¹²¹ The Cambridge Medieval History, IV: The Byzantine Empire. Cambridge, 1966, Part I, Byzantium and its Neighbours, p. 20, 56.

¹²² Կնիք Հաւատոյ Ընդհանուր սուրբ եկեղեցւոյ յուղղափառ եւ սուրբ հոգեկիր հարցն մերոյ դաւանութեանց, յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի (613-627 թթ.) համահաւաքեալ, հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի Սբ. Է ջմիածին, 1914, էջ 157 (Լուսատիպ վերահրատարակություն, եպիս. Տեր-Մկրտչեանի, Անթիլիաս-Լիբանան, 1998, էջ 126) (այսուհետև՝ Կնիք Հաւատոյ):

¹²³ Տես՝ Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 311:

¹²⁴ Մովսէս Խորենացի, էջ 342:

ւորչի օրով, վերջնական ձևակերպությամբ իւրացրել սբ. Սահակի օրով... Նա յիրաւի Կիրեղ Աղէքսանդրացու քրիստոսաբանութիւնը լիակատար կերպով ընդունելուց յետոյ, միեւնոյն կետի վերայ անշարժ կանգնած չմնաց, այլ իւր մասնակցութիւնն ունեցավ դաւանական զարգացման յաջորդ աստիճանների ստեղծած շարժումների մէջ...»¹²⁵:

Մովսէս Խորենացին անդրադարձել է Եփեսոսի ժողովի Նեստորին դատապարտող որոշմանը, այնուհետև գրել է. «Ապա եկեալ թարգմանիչքն մեր, զորոց զանուանսն յիշատակեցաք յառաջագոյն՝ գտին զմեծն Սահակ եւ զՄեսրոպս յԱշտիշատ Տարօնայ, եւ մատուցին զթուղթսն եւ զկանոնս ժողովոյն Եփեսոսի, վեց սահմանեալ կանոնաւ եւ զստոյգ օրինակս Գրոց»¹²⁶:

Այստեղ խոսքը մինչ Եփեսոսի ժողովը Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի կողմից՝ Եդեսիա ուղարկված և այնտեղից Կոստանդնուպոլիս գնացած ու Եփեսոսի ժողովից հետո Հայաստան վերադարձած Հովսեփ Պաղնացու և Եզնիկ Կողբացու, ինչպես նաև Բյուզանդիա գնացած և նրանց միացած Կորյունի, Ղևոնդի, Հովհանի և Արծանի մասին է, որոնց հանձնարարված էր առաջին սուրբ հայրերի գրվածքների թարգմանության գործը: Մովսէս Խորենացին գրել է. «Ապա եկեալ եւ առեալ Մեսրոպայ եւ մեծին Սահակայ գնոյն աշակերտս, զՅովսէփ եւ զմիւս ընկեր մին ի Կողբ գեղջէ, որում անուն Եզնիկ կոչէր՝ առաքեն ի Միջագետս ի քաղաքն Եդեսիայ. զի որ միանգամ գտցին անդ գիրք ասացեալ նոցին սրբոց հարցն առաջնոց՝ թարգմանեալ ի մեր լեզուս բերցեն, զի յետ այնր ի Բիւզանդիոն առաքեսցին ի նոյն գործ... ընկերաց իւրեանց աշակերտակցաց, որոց անուանքն Ղևոնդ եւ Կորիւն կարդային՝ յիւրեանց կամաց ելին առ նոսա ի Բիւզանդիոն: Ապա ելանեն անդր Յովհան եւ Արծան, զորս կանխագոյն առաքեալ էր մեծին Սահակայ եւ Մեսրոպայ...»¹²⁷:

¹²⁵ Կնիք Հաւատոյ, էջ LXXXII, LXXXV:

¹²⁶ Մովսէս Խորենացի, էջ 343, «Այնուհետև եկան մեր թարգմանիչները, որոնց անուններն առաջուց հիշել ենք, և գտան Մեծն Սահակին և Մեսրոպին Տարօնի Աշտիշատում, հանձնեցին թղթերը և Եփեսոսի ժողովի կանոնները, սահմանված վեց կանոն, այլև սբ. Գրքի ստույգ օրինակները» (Մովսէս Խորենացի, էջ 339): Կորյունի մոտ կարդում ենք. «Ճշմարիտ օրինակօք...» (Կորյուն, էջ 124):

¹²⁷ Մովսէս Խորենացի, էջ 341, «Այնուհետև Մեսրոպը ետ եկավ, և նա ու Մեծն Սահակը նոյն աշակերտներին, Հովսեփին և նրա մյուս ընկերոջը Կողբ գյուղից,

Կորյունն այս նույն իրադարձության մասին գրել է. «...ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս, դիմել իջանել ի կողմանս Յունաց, որ եւ Ղեւոնդէս առաջնոյն անուն էր, եւ երկրորդն՝ Կորինս, եւ մատուցեալ յարէին յեզնիկն, իբրև առ ընտանեգոյն սննդակից՝ ի Կոստանդինական քաղաքին, եւ անդ միաբանութեամբ հոգեւոր պիտոյիցն գխնդիրն վճարէին: Որոց յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն եւ բազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբք, եւ Նիկիական եւ Եփեսոսական կանոնօք. գային երեւելով աշխարհին Հայոց, եւ առաջի դնէին հարցն զբերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ»¹²⁸:

Սա արդեն Աստվածաշնչի հայերեն թարգմանության հետեփեսոսյան ժամանակաշրջանն էր: սբ. Գրքի «ստույգ», «ճշմարիտ» կամ «հաստատուն օրինակների» մասին տեղեկությունը վկայում է այն մասին, որ Աստվածաշնչի կրկին թարգմանության խնդիրը ծագել էր ոչ այնքան արդեն կատարված թարգմանության անբավարար որակից, որքան բնագրի ոչ ամբողջական տեքստի ընդգրկումից, ինչը ստիպել էր, որ Աստվածաշնչի թարգմանության սկզբնական փուլի արդյունքը պատմիչները բնութագրեին որպես «գփութանակի գթարգմանութիւնս»¹²⁹ կամ «թարգմանեալն փութանակի»¹³⁰: Ուստի Կորյունի հաղորդումից հետևում է, որ առաջին «փութանակի թարգմանությունը» հիմնականում կատարվել էր հունարենից:

Հատկանշական է թովմա Արծրունու տեղեկությունը սաղմոսների մասին, որպես «գիին թարգմանեալսն վարդապետացն Հայոց»¹³¹, ինչը պետք է վերաբերի հայերեն «փութանակի» թարգմանությանը: Այդ մասին Կորյունի և Մովսես Խորենացու

որի անունն էր Եզնիկ, ուղարկեցին Միջագետք, Եդեսիա քաղաքը, որպեսզի ինչ զրքեր որ այնտեղ գտնվեն առաջին սուրբ հայրերից գրված, մեր լեզվով թարգմանեն ու բերեն, որպեսզի այնուհետև Բյուզանդիոն ուղարկվեն նույն գործով... Նրանց աշակերտակից ընկերները, որոնց անուններն էին Ղևոնդ և Կորյուն, ինքնակամ էլան գնացին Բյուզանդիոն: Սպա նրանց մոտ են գալիս նաև Յովիանն ու Արծանը, որոնց մեծն Սահակն ու Մեսրոպը դեռ ավելի վաղ էին ուղարկել...» (Մովսես Խորենացի, էջ 337-338):

¹²⁸ Կորյուն, էջ 122-124:

¹²⁹ Նույն տեղում:

¹³⁰ Մովսես Խորենացի էջ 343:

¹³¹ Թովմայի վարդապետի Արծրունիոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 121:

հաղորդումներն ուսումնասիրել է Հ. Անասյանը՝ Աստվածաշնչի թարգմանության հարցը հետազոտելիս¹³²։ Նրա կարծիքով՝ սբ. Գրքի «ստույգ», «ճշմարիտ» կամ «հաստատուն օրինակները» «Բյուզանդական եկեղեցում Հին և Նոր Կտակարանների պաշտոնապես ընդունված այն բնագրերն էին, որ 311 թ. Կոստանդիանոս Մեծի պատվերով Եվսեբիոս Կեսարացին Կ. Պոլիս էր ուղարկել Պաղեստինյան Կեսարիայից»¹³³։ «Ստույգ օրինակները» ըստ Հ. Անասյանի, ներկայացնում էին «հունական աշխարհում ընդունված Յոթանասնից բնագիրը, որի կանոնը, բացի այն 39 նախականոն գրքերից, որոնք ասորական Պեշիտտայի կանոնն էին կազմում, ընդգրկում էր նաև այսպես կոչված երկրորդականոն գրքերը՝ Եզրի Ա, Յուդիթ, Տովբիթ, Մակաբայեցուց Ա-Դ (Դ գրքի թարգմանության հետքերը չեն նկատվել հայ մատենագրության մեջ), Իմաստութիւն Սողոմոնի, Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ և Բարուք... Նոր Կտակարանը ևս վերանայվեց և լրացվեց նոր թարգմանություններով...»¹³⁴։

Դեռևս մեկ դար առաջ՝ Նիկիայի 325թ. Տիեզերական ժողովից հետո պետք է տեղի ունենար նշված բնագրերի առաքումը Կեսարիայից Կոստանդնուպոլիս, քանզի, ինչպես նշված է. «Երբ Կոստանդիանոսի նոր քաղաքը՝ Կոստանդնուպոլիսը, եկեղեցական ծես շատ նոր եկեղեցիներում հանդիսավորությամբ կատարելու համար սբ. Գրքի օրինակների օգտագործման պահանջ զգաց, կայսրը գրեց Եվսեբիոսին՝ խնդրելով նրան ուղարկել լավ գրված և հեշտ ընթերցելի սբ. Գրքի հիսուն օրինակ»¹³⁵։

Նորայր Բյուզանդացին հետազոտելով սկզբնաղբյուրների հաղորդումները՝ եզրակացրել է. «Հաւանական է որ Եզնիկ Եւ հինգ ուսումնակիցք իւր՝ յետ իբր երեքամեայ վարժից յոյն լեզուի ի կայսերական մայրաքաղաքին՝ խմբովին մեկնած են ի Կոստանդնուպոլսէ յամին 434 Եւ դարձած ի Հայս առ իւրեանց վարդապետս, պարգեւ բերելով նոցա յառատածեռնութենէ Թէոդոս II

¹³² Գ. Անասյան, Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը, էջ 76: Նույնի՝ Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, էջ 315-316:

¹³³ Նույն տեղում:

¹³⁴ Նույն տեղում:

¹³⁵ Eusebius. The History of the Church. Transl. by G.A. Williamson. Revised and edited with a new introduction by A. Louth, London, 1989, Introduction, p. xvi.

կայսեր եւ Պրոկոլ պատրիարքի... ընտիր ընտիր յոյն ձեռագրեր, յորոց գլխաւորքն էին Հին եւ Նոր Կտակարանաց օրինակք...»¹³⁶: Այստեղ չափազանցված է ներկայացված Թեոդոսիոս II-ի «առատածեռնությունը», քանզի սբ. Գրքի «ստույգ օրինակների» կապակցությամբ նա չի հիշատակված ո՛չ Կորյունի և ո՛չ էլ Մովսես Խորենացու կողմից:

Սբ. Գրքի «ճշմարիտ օրինակների» կամ «ստույգ օրինակների» վերստին թարգմանությամբ իր ավարտին էր հասնելու Աստվածաշնչի թարգմանության վերջին՝ հետեփեսոսյան շրջանը, որի ընթացքում իր գործունեությամբ հանդես եկավ նաև Մովսես Խորենացին:

2. Աստվածաշնչի թարգմանությանը Մովսես Խորենացու մասնակցության խնդիրը

Մովսես Խորենացին¹³⁷ իր ներդրումն ունի սբ.Գրքի թարգմանության գործում: Պատմահոր ճանապարհը դեպի իր դարակազմիկ «Պատմութիւն Հայոց» երկը տոգորված էր Աստվածաշնչի հոգևոր լիցքով, ինչպես ինքն է գրել. «Եւ սկսայց՝ յորոց եւ այլքն, որք յեկեղեցւոջ եւ ոյք ըստ Քրիստոսի»¹³⁸: Սբ. Գրքի թարգմանության և հնագույն սկզբնաղբյուրներից եկող տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում Մովսես Խորենացին համակողմանի ներկայացրեց հայ ժողովրդի պատմությունը՝ ազգաբանական, քաղաքական, տնտեսական, մշակութային և աստվածաբանական տեսանկյուններից:

Աստվածաշնչի թարգմանության կապակցությամբ կատարած ճանապարհորդությանը նվիրված Պատմահոր երկի գլուխներից մեկը վերնագրված է՝ «Ի վարդապետսն, յինքն եւ ի ճանա-

¹³⁶ Ն. Բիւզանդացի, Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Գիրք Մակաբայեցւոց, Եթաղ Աղեքսանդրացի, Ագաթանգեղոս եւ Փաստոս Բիւզանդ, Տփղիս, 1900, էջ 4:

¹³⁷ Ասողիկ, էջ 53, 77:

¹³⁸ Մովսես Խորենացի, էջ 12, «Եվ կսկսեմ նրանից, որից սկսում են և ուրիշները, ոմանք ըստ եկեղեցական (պատմության), ոմանք էլ ըստ Քրիստոսի» (Մովսես Խորենացի, էջ 84):

պարհորդութիւն ուսմանն, օրինակաւ երկնային զարդու»¹³⁹: Անտիկ աշխարհից մնացած գիտակրթական ժառանգություն մասին նրա պարունակած տեղեկությունները լույս են սփռում ճանապարհորդության իմացաբանական նշանակության խնդրի վրա:

Աստվածաշնչի թարգմանության ուղղությամբ ձեռնարկվող աշխատանքները պահանջում էին աստվածաբանական և լեզվաբանական խորը գիտելիքներ: Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը մեծ պատասխանատվությամբ էին մոտենում Աստվածաշնչի թարգմանության գործին և աշխատանքն ավարտված չէին համարում: Քրիստոնեական դավանանքի բնագավառում Աստվածաշնչի հետ կապված յուրաքանչյուր հարց մեծ հոգածություն էր պահանջում՝ թելադրված նաև քաղաքական հանգամանքներով, քանի որ Հայ Արշակունյաց թագավորության անկումից հետո Սասանյանները, սաստկացնելով նվաճողական քաղաքականությունը, իրենց պաշտոնական կրոնը՝ զրադաշտությունը (իմա՝ մագդեգականություն), փորձում էին տնտեսական և քաղաքական ճնշումներով պարտադրել հայ ժողովրդին¹⁴⁰:

Հայաստանում տիրող բարդ իրավիճակի պատճառով Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը չէին կարողացել գնալ Եփեսոս՝ Տիեզերական Երրորդ ժողովին մասնակցելու, ուստի ուղարկել էին իրենց աշակերտներին՝ Հովսեփին, Եզնիկ Կողբացուն, Կորյուն վարդապետին, Ղևոնդին, Հովհաննին, Արծանին: Վերադառնալով Եփեսոսից՝ նրանք ներկայացել էին իրենց ուսուցիչներին Տարոնի Աշտիշատում և հանձնել եկեղեցական թղթերն ու Եփեսոսի ժողովի սահմանած վեց կանոնները, ինչպես նաև Սուրբ Գրքի ստույգ օրինակները¹⁴¹:

Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցն իրենց աշակերտներին սպասում էին Աշտիշատում, ուր նրանք «դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի, հանդերձ նո-

¹³⁹ Մովսէս Խորենացի, էջ 343, «Ուսուցիչների, իր և ուսումնական ճանապարհորդության մասին, երկնային զարդի մմանությամբ» (Մովսէս Խորենացի, էջ 339):

¹⁴⁰ Եղիշէ, էջ 30-54:

¹⁴¹ Մովսէս Խորենացի, էջ 343:

քօք (աշակերտների - Ն. Դ.) վերստին յօրինեալ¹⁴² նորոգմամբ»¹⁴³:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության երկրորդ՝ հետեփեսոսյան շրջանի մասին Կորյունը գրել է. «Իսկ երանելւոյն Սահակայ գեկեղեցական գրոց զումարութիւնն՝ կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ եւ բազում եւս զհայրապետաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն: Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եզնակաւ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս՝ հաստատէր ճշմարիտ օրինակոք բերելովք»¹⁴⁴: Այս փուլում, փաստորեն, սրբագրվել և բարելավվել էր բնագրի նախորդ թարգմանությունը՝ ստույգ օրինակների հիման վրա:

Մովսես Խորենացին գրել է. «Բայց քանզի անգէտք էին մերումս արուեստի՝ ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր. վասն որոյ առեալ մեծին Սահակայ եւ Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղեքսանդրիայ, ի լեզու պանծալի, ի ստոյգ յօդանալ ճեմարանին վերաբանութեան»¹⁴⁵:

Ըստ Գ. Տեր-Մկրտչյանի, Աստվածաշնչի Սահակ-Մեսրոպայան թարգմանության բնագրից տարբերվել է «նորապատում» կամ «նորաբեր» թարգմանությունը¹⁴⁶, որի մասին տեղեկություն կա Թեոդորոս Քոթենավորի (Ճգնավոր, VII դ. սկիզբ – 680 թ.)¹⁴⁷ «Ընդդէմ Մայրագոմացոյն» ճառի մեջ¹⁴⁸: Հետագոտողը

¹⁴² «Բարուք օրինակաւ կազմէլ, կարգաւորել, ուղղել» (ՆԲՅԼ, հ. Բ, էջ 382):

¹⁴³ Մովսես Խորենացի, էջ 343, «նորից թարգմանեցին մի անգամ շտապովի թարգմանվածը, նրանց հետ միասին, նորից հորինելով ու նորոգելով» (Մովսես Խորենացի, էջ 339): Ս. Մալխասյանը նշել է, որ «Սահակն ու Մեսրոպը սր. Գիրքն ուղղում էին ըստ հունարեն բնագրի (կամ հունարենից երկրորդ անգամ էին թարգմանում)» (նույն տեղում, էջ 10, հմմտ. Мовсес Хоренати, с. 263, прим. 727):

¹⁴⁴ Կորյուն, էջ 124:

¹⁴⁵ Մովսես Խորենացի, էջ 343: «Բայց որովհետև նրանք մեր արվեստին տեղյակ չէին, ուստի գործը շատ կողմերից թերի էր դուրս գալիս: Այս պատճառով Մեծն Սահակը և Մեսրոպը մեզ առան ուղարկեցին Աղեքսանդրիա, պանծալի լեզուն սովորելու, իսկական ճեմարանում կատարելագործվելու» (Մովսես Խորենացի, էջ 339):

¹⁴⁶ Գ. Տեր-Մկրտչյան, Տիմոթեոս Կուզի Հակաճառութեան հայ թարգմանութեան ժամանակը եւ Սուրբ Գրքի երրորդ կամ «նորաբեր» հայ թարգմանութիւնը, «Արարատ», Էջմիածին, 1908, էջ 564-586:

¹⁴⁷ Ս. Աբեղյան, Երկեր, հ. 3, Երևան, 1968, էջ 400-407:

նակ անդրադարձել է Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» հայերեն թարգմանության աստվածաշնչյան վկայակոչումներին, որոնք որոշ չափով տարբերվում են սբ. Գրքի հայերեն ընկալյալ բնագրից, և եզրակացրել է, որ այդ տարբերություններն արգասիք էին երրորդ կամ «նորաբեր» թարգմանության: Այս կարծիքը քննադատել է Հր.Աճառյանը՝ նշելով, որ Տիմոթեոսի վկայակոչումները վերստին թարգմանվել են «Հակաճառութեան» թարգմանչի ձեռքով Աստվածաշնչի բնագրին զուգընթաց, այլ ոչ թե վերցված են Աստվածաշնչի պատրաստի մի թարգմանությունից¹⁴⁹:

Լ. Տեր-Պետրոսյանը կարծում է, որ Մովսես Խորենացու տեղեկությունը չի կարող հիմք ծառայել երրորդ հայերեն թարգմանության գոյության մասին ենթադրության համար, որովհետև նախ՝ այնտեղ խոսք չկա գործի իրականացման մասին, երկրորդ՝ Հայոց եկեղեցական կյանքում տիրող այնպիսի մթնոլորտում, որ նկարագրված է Փարպեցու «Թղթում», դժվար թե հանդուրժվեր որևէ փոփոխություն Սահակ-Մեսրոպյան սրբացված բնագրի նկատմամբ»¹⁵⁰: Հետազոտողն անդրադարձել է նաև Բո Յոնսոնի և V դարի հայ մատենագրության մեջ գրանցված սուրբգրյան վկայակոչումները հետազոտած Ս.Լիոնեի կարծիքներին: Ըստ Բո Յոնսոնի, Աստվածաշունչը հայերեն է թարգմանվել նախ ասորերենից, ապա սրբագրվել Փոքր Ասիայից բերված հունարեն սկզբնագրերի, իսկ այնուհետև Աղեքսանդրիայից բերված Որոգենյան խմբագրության հիման վրա¹⁵¹, իսկ ըստ Ս.Լիոնեի, Ավետարանի երկու հայերեն բնագրեր են գոյություն ունեցել, մեկը՝ թարգմանված Տատիանոսի ասորական Diatessaron-ից և մյուսը՝

¹⁴⁸ Յովհաննու Իմաստասիրի Աւծնեցոյ Մատենագրութիւնք, Վեներտիկ, 1953, էջ 180:

¹⁴⁹ Հր. Աճառյան, Տիմոթեոս Կուզ և սբ. Գրքի նորաբեր թարգմանութիւնը - «Շողակաթ», գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 1-22:

¹⁵⁰ Գիրք Ծննդոց, Ներածություն, էջ 61:

¹⁵¹ Որիզենս Աղեքսանդրացու (մոտ 185-253/54 թթ.) գրչին է պատկանում Հին Կտակարանի՝ վեց տարբերակներով (Hexapla) եբրայերեն և հունարեն խմբագրությունը (տես՝ Lexikon der Antike, S. 393), որից պահպանված առանձին ձեռագրական պատահիկներ ժողովվել են տարբեր հրատարակություններում (Frederick Field, Origenis Hexaplorum quae supersunt, Oxford, 1867-1875, Johnson Bo, Die armenische Bibelübersetzung als hexaplarischer Zeuge im 1. Samuelbuch, Lund, 1968, S. 158-160):

հունարենից¹⁵²: Լ. Տեր-Պետրոսյանը, չընդունելով նրանց կարծիքները, եզրակացրել է, որ Աստվածաշնչի ընկալյալ բնագիրը ներկայացնում է V դարի 30-ական թվականների լեզվական վիճակը և հենց այդ թվականներին էլ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը ստացել է իր վերջնական տեսքը և այլևս էական խմբագրման չի ենթարկվել¹⁵³:

Մովսես Խորենացին իր ընկերների հետ վերադարձել էր Հայաստան Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մահվան լուրը ստանալուց հետո, ուրեմն, խոսքը V դարի 30-ական թթ. վերջի և 40-ական թթ. սկզբի մասին է, և նրա երկը հենց այդ ժամանակաշրջանով էլ ավարտվում է: Ըստ վերոհիշյալ տեսակետի, քանի որ V դարի 30-ական թթ. հետո Աստվածաշնչի հայերեն բնագիրն այլևս էական խմբագրման չի ենթարկվել, ուստի, ընդունելով Մովսես Խորենացու երկի նշված տեղեկության պատմականությունը, կարելի է ենթադրել.

1. Այդ տեղեկությունը վերաբերում է ոչ թե մի նոր՝ երրորդ թարգմանությանը, այլ Սահակ-Մեսրոպյան բնագրի լեզվաոճական հղկմանը, քանզի նա չի գրել թարգմանության մասին, այլ գրել է «մերումս արուեստի» և «լեզու պանծալի»-ի մասին:

Նշենք, որ Մովսես Խորենացին մինչ այդ արդեն օգտագործել էր «թարգմանութիւն» բառը, նախ՝ երբ գրել էր Մեսրոպ Մաշտոցի մասին՝ «Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ...» և այնուհետև իր մասին՝ «անպարապ ի թարգմանութեանց»¹⁵⁴: Այնպես որ, եթե խոսքը լիներ նոր թարգմանության մասին, ապա Խորենացին այդ մասին կգրեր: Այնինչ նա օգտագործել է «արուեստ» բառը, որն այստեղ պետք է կիրառված լինի «ճարտարութիւն» իմաստով¹⁵⁵: Իսկ եթե նկատի ունենանք, որ այդ ժամանակաշրջանում եկեղեցական արարողություններում անցում էր տեղի ունենում բանավոր թարգմանություններից գրավորին, ապա կարելի է ասել, որ խոսքը վերաբերում էր վերջինիս համապատասխանեցմանը ճարտարության արվեստի կանոնե-

¹⁵² S. Lyonnet, Les origines de la version Armenienne et le Diatessaron. – Biblica et Orientalia N 13, Roma, 1950, p. 57-98.

¹⁵³ Գիրք Ծմնորոց, Ներածություն, էջ 62-66:

¹⁵⁴ Մովսես Խորենացի, էջ 327, 353:

¹⁵⁵ ՆԲՅԼ, հ. Ա, Վեներիկ, 1836, էջ 371:

րին:

2. Խոսքը ոչ թե «Սահակ-Մեսրոպյան սրբացված բնագրի» փոփոխության, այլ՝ ճարտարության ոճավորման տեսանկյունից մշակման մասին է:

Ռ. Թոմսոնը մերժել է Մովսես Խորենացու նշված հաղորդման պատմականությունը՝ գրելով. «Մովսեսը պնդում է, որ ինքը V դարի սկզբներին ակտիվ էր հայկական այբուբենը ստեղծող Մեսրոպի և Սահակ հայրապետի շրջապատում գտնվող աշակերտների շրջանում: Եփեսոսի Տիեզերական ժողովից (431 թ.) հետո հունարեն տարբեր տեքստեր, ներառյալ սբ. Գիրքը, հայերի տասարդ ուսումնառողների կողմից Բյուզանդական կայսրությունից բերվեցին Հայաստան: Սահակը և Մեսրոպը պատրաստեցին հայերեն Աստվածաշնչի ստուգված տարբերակը՝ հիմնված այդ տեքստերի վրա, սակայն, քանի որ նրանց աշխատանքը «թերի» էր, նրանք ուղարկեցին Մովսեսին Աղեքսանդրիա ճարտարություն ուսումնասիրելու համար... Նրա պատմածը մի քանի առումով կասկածելի է...»¹⁵⁶: Ռ. Թոմսոնի նման անհիմն քննադատական մոտեցման մեկնակետը այն դրույթն է, թե Մովսես Խորենացին ոչ թե V դ., այլ VIII դ. հեղինակ էր¹⁵⁷, ինչը քննադատել է Գ. Սարգսյանը՝ ելնելով Պատմահոր V դարի հեղինակ լինելու իրողությունից¹⁵⁸:

Մովսես Խորենացու հաղորդումը դիտելով Աստվածաշնչի ոչ թե նոր թարգմանության, այլ Սահակ-Մեսրոպյան բնագրի ճարտարության ոճով մշակման տեսանկյունից՝ կարելի է ենթադրել, որ այդ կատարվելու էր ճանապարհորդության տարիներին ծեռք բերված գիտելիքների շնորհիվ: Այնպես որ, Մովսես Խորենացու տեղեկությունը՝ ուսումնական նպատակով տեղի ունեցած ճանապարհորդության մասին, հավաստի է:

Հնագույն ժամանակներից աշխարհաճանաչողության կարևոր միջոց էր ճանապարհորդությունը: Պատմական սկզբնաղբյուրները հարուստ են տարբեր նպատակներով կատարած ճանապարհորդությունների մասին տեղեկություններով: Զանազան երկրների, դրանց ժողովուրդների ու ցեղերի, նրանց սովորույթ-

¹⁵⁶ Moses Khorenats'i, Introduction, p. 2.

¹⁵⁷ Ibid., p. 60.

¹⁵⁸ Мовсес Хоренаци, с. XVI-XVII.

ների ու կենցաղի, աշխարհագրական միջավայրի ու բնական հարստությունների մասին տեղեկությունները զրանցվել են սկզբնաղբյուրներում՝ ռազմական արշավանքների ու առևտրական նպատակներով կատարված ուղևորությունների հիման վրա: Ավելի հազվադեպ են զուտ ուսումնական նպատակով ձեռնարկված ճանապարհորդությունների մասին տեղեկությունները: Այս տեսակետից կարևոր է Մովսես Խորենացու և իր ընկերների կատարած ճանապարհորդության նկարագրությունը:

Աստվածաշնչի թարգմանությունը գտնվում էր հետեփետոսյան փուլում, որը, կարելի է ասել, համապատասխանում էր թարգմանության երկրորդ փուլին կամ երկրորդ թարգմանությամբ: Ս. Մալխասյանցը, ընդունելով Մովսես Խորենացու հաղորդումը, գրել է. «Սահակը և Մեսրոպը կարիք զգացին քաջ հունագետների՝ քերթողական արվեստին հմուտ գիտնականների. ուստի որոշեցին իրենց ամենաընդունակ աշակերտներից մի քանիսին ուղարկել Ալեքսանդրիա, գիտությունների այն ժամանակվա կենտրոնը... Այս ճանապարհորդությունը ենթադրում ենք 432-ից հետո, ոչ ուշ, քան 435 թվականը»¹⁵⁹:

Մինչ Աղեքսանդրիա հասնելը Մովսես Խորենացին իր ընկերների հետ նախ եկել էր Եդեսիա քաղաքը և «թեթևակի ընդ խորս դիւանին նաւեալ՝ անցաք ի սուրբ տեղիսն երկրպագել, եւ մնալ վայրկեան ի Պաղեստինցւոց հրահանգս»¹⁶⁰: Եդեսիայի դիվանի մասին Մովսես Խորենացին գրել է իր երկի երկրորդ գրքում. «...ի քարտէս դիւանին Եդեսիայ, որ է Ուռհայ, որ յաղագս թագաւորացն մերոց պատմէր. որ մատյանքն ի Մծբնայ էին փոխեալ անդր եւ ի Սինոպայ Պոնտոսէ ի մեհենական պատմութեանցն»: Այստեղ Պատմահայրը հատուկ նշել է. «Մի՛ ոք անհաւատացի, քանզի եւ մեզէն իսկ ականատես եղաք այնմ դիւանի»¹⁶¹, ինչը տեղի էր ունեցել իրենց ճանապարհորդության ժամանակ:

¹⁵⁹ Մովսես Խորենացի, էջ 11:

¹⁶⁰ Մովսես Խորենացի, էջ 344, «թեթևակի նավեցինք դիվանի խորքերի վրայով, այնտեղից անցանք սուրբ տեղերին երկրպագելու և կարճ ժամանակ պաղեստինցիների ուսմամբ պարապելու» (Մովսես Խորենացի, էջ 340):

¹⁶¹ Մովսես Խորենացի, էջ 120, «Թող ոչ ոք չկասկածի, որովհետև մենք ինքներս մեր աչքով տեսանք այն դիվանը» (Մովսես Խորենացի, էջ 161):

Հետաքրքիր է Մովսես Խորենացու հաղորդումը «պաղեստինցիների» ուսմամբ պարապելու մասին: «Սուրբ տեղերը երկրպագելու» մասին պատմելով՝ Պատմահայրը նկատի է ունեցել Նոր Կտակարանում հիշատակվող վայրերը, որոնք կապված էին Հիսուս Քրիստոսի անվան հետ: Ինչ վերաբերում է «պաղեստինցիների ուսմամբ պարապելուն», կարելի է ասել, որ այն նպատակաուղղված էր Աստվածաշունչը բնագրի լեզվով կարդալուն և ուսումնասիրմանը:

«Եւ այնպիսեալ սաղապաճեմիւ մտաք յԵգիպտոս», - շարունակում է Մովսես Խորենացին՝ մանրամասն նկարագրելով երկրի բնաշխարհը՝ բերքառատ Նեղոս գետով և Աղեքսանդրիա քաղաքով, որի հոգևոր կերպարանափոխության մասին նշում է. «Սորա առաջի այժմ ոչ անցեալ նստի Պղոտեմիոս¹⁶² հինգակատար զագաթամբն, զանսպառ աշխարի պատելով, այլ Մարկոս աստարանական քարոզութեամբն. եւ ոչ վիշապագին դիւցանակաց գերեզմանք, այլ սրբոցն վայելչանան վկայարանք... Եւ ոչ զոհել չար դիւին Սարապեայ, այլ զՔրիստոսի արիւնն մատուցանել պատարագ»: Մովսես Խորենացին իր ուսումնական ճանապարհորդության բուն նպատակի մասին գրում է. «Ուսանել զգորութիւնս պէսպէս իմաստից ի նորն Պղատոնէ, յիմն ասեմ վարդապետէ, որում ոչ անարժան գտայ աշակերտ...»¹⁶³:

Մովսես Խորենացու նկարագրությամբ, իրենց ուղևորությունը նաև ուխտագնացության բնույթ է կրել: Նրանք նախ

¹⁶² Սանդարամետի («երկրի խորագույն անդունդները, ստորերկրյա վիհ», «դժոխք», տես՝ Զր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. IV, Երևան, 1979, էջ 172) «իշխանը» կամ «թագավորը» հունական առասպելաբանության մեջ անվանվում է *Պլուտոն-Ֆադեոս* (տես՝ J.E. Zimmerman, Dictionary of Classical Mythology, New York, 1980, p. 213)

¹⁶³ Մովսես Խորենացի, էջ 344-346: «Այդպիսի շրջագայությամբ մտանք Եգիպտոս... Այժմ այս (քաղաքի) առաջը չի նստում Պղոտեմիոսը իր հինգ զագաթով, անսպառ աշխարհը պատելով, այլ Մարկոսը իր Ավետարանի քարոզությամբ. չկան վիշապի ցեղից դյուցազունների գերեզմաններ, այլ վայելչանում են սրբերի վկայարանները... Այլևս չեն զոհում Սարապիսի չար դևին, այլ Քրիստոսի արյունը պատարագ են մատուցանում... Սովորում են պեսպես գիտություններ նոր Պղատոնից, իմ ուսուցչից, որին անարժան աշակերտ չհանդիսացա... » (Մովսես Խորենացի, էջ 340-341):

Աղեքսանդրիայում էր մ.թ.ա. III-I դդ. կատարվել Հին Կտակարանի հին հունարեն Յոթանասնից կոչվող թարգմանությունը (The Septuagint version of Old Testament, with an English translation, Michigan, 1970/1971).

երկրպագել են սուրբ տեղերը Պաղեստինում, այնուհետև Աղեքսանդրիայում անցել են սբ. Մարկոսի, իսկ Հռոմում՝ սբ. Պետրոս և սբ. Պողոս առաքյալների քարոզչության վայրերով: Մովսես Խորենացին այդ ճանապարհորդության եվրոպական երթուղու մասին գրել է. «Նաեւ յԵլլադայ կամելով՝ յԻտալիա բռնութեամբ անկաք հողմոց. եւ ողջունեալ ի հանգիստ սրբոցն Պետրոսի եւ Պաւղոսի, եւ ոչ բազում ի Հռովմայեցւոցն կացեալ քաղաքի, անցանելով ընդ Ելլադայ յԱտտիկէ, սակաւ ինչ մնացաք յԱթէնս: Եւ ի կատարել ծմերայնոյն՝ դէմ եղեալ ի Բիւզանդիոն Ելանել, փափագելով մերոց հայրենեացն»¹⁶⁴:

Հայ երիտասարդներն իրենց ուսուցիչների հանձնարարությունը կատարում էին հոգևոր մեծ լիցքով ու պատասխանատվությամբ: Նրանց նպատակապալացության գաղափարական հիմքը հավատքն էր առ Աստված, ինչպես հետագայում Եզնիկ Կողբացին է գրել. «Յորժամ գաներելութէն եւ գնորին զմշտնջենաւոր զորութենէն ճառիսցե ոք, քանզի (ինքը) մարմնաւոր լեալ է, պարտի զմիտս յստակը եւ զխորհուրդս սրբել, գլոյսս շարժմանց պարզել, զի յայն զոր առաջի եդ՝ հասանել կարասցէ»¹⁶⁵:

Մովսես Խորենացին և իր ընկերները, տեղեկանալով իրենց ուսուցիչների՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի մահվան մասին, Բյուզանդիայից շտապ վերադառնում են Հայաստան:

Ասլան Շահնազարյանը բարձր գնահատելով Մովսես Խորենացու ուսումնական նպատակով դեպի հին աշխարհի գիտական կենտրոնները կատարած ճանապարհորդությունը՝ եզրա-

¹⁶⁴ Մովսես Խորենացի, էջ 346: «Կամենալով նավով Ելլադա գնալ, սաստիկ քամիներով մղվեցինք ընկանք Իտալիա, սուրբ Պետրոսի և Պողոսի հանգստարանները ողջունեցինք և երկար չմնացինք հռոմայեցիների քաղաքում. Ելլադայով անցանք Ատտիկէ, քիչ ժամանակ մնացինք Աթենքում: Չմեռն անցնելուց հետո ճանապարհ ընկանք Բյուզանդիոն, մեր հայրենիքին փափագելով» (Մովսես Խորենացի, էջ 341):

¹⁶⁵ Եզնրկայ վարդապետի Կողբացւոյ, էջ 5, «Երբ մեկը խոսի աներևոյթի և նրա հավիտենական զորութեան մասին, քանի որ ինքը մարմնավոր է ստեղծված, պետք է միտքը հստակի, մտածմունքները մաքրի, հոգեկան խռովքը վերացնի, որպեսզի կարողանա հասնել այն բանին, ինչ որ նպատակադրել է» (Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց, Աղանդների հերքումը, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 31, այսուհետև՝ Եզնիկ Կողբացի):

կացրել է. «Նա ձեռք է բերել իր ժամանակի հիմնական կրթությունը, գիտե պատմության փիլիսոփայությունը և շատ լավ ըմբռնում է, թե ինչ է նշանակում գրել մի ազգի պատմություն ամենահին ժամանակներից մինչև իր օրերը...»¹⁶⁶:

Մովսես Խորենացու, Կորյուն վարդապետի, Եզնիկ Կողբացու ուսումնական ճանապարհորդությունն ուրույն դեր ունեցավ նրանց հետագա գիտական գործունեության մեջ:

3. V դարի հայ պատմիչների պատմահամեմատական մոտեցումն Աստվածաշնչին

Մովսես Խորենացին պատմահամեմատական մեթոդով է անդրադարձել Աստվածաշնչից քաղված հատվածներին իր կողմից շարադրվող նյութում: Աստվածաշնչական թեմաների կիրառման անհրաժեշտությունը, ինչպես երևում է Պատմահոր երկից, բխում էր թե՛ համաշխարհային պատմության մեջ Հայաստանի տեղը ցույց տալու և թե՛ Հայոց պատմությունը հոգևոր ամբողջականության մեջ շարադրելու անհրաժեշտությունից:

Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում Աստվածաշնչից քաղված նյութերի օգտագործման բնույթից երևում է նրա աշխարհայացքային ընկալումներից բխող պատմագիտական հայեցակարգը, որի առանցքում է Հայոց տեղաբնիկ տոհմաբանության ու այդ հիմքի վրա բարձրացած և ազատագրական պայքարով ձեռք բերված ու պահպանվող պետականության գաղափարը:

Առաջին գրքում Մովսես Խորենացին Հայոց հնագույն պատմության շարադրանքը միախյուսել է մարդկության ազգաբանությանը, ըստ Աստվածաշնչի, ցույց տալով Հայոց պատմության տեղը հին աշխարհի պատմության մեջ: Պատմահայրն ընդգծել է, որ Նոյի սերունդների ազգաբանությանն անդրադառ-

¹⁶⁶ Ասլան Շահնազարյան, Բագրատունյաց նախարարական տոհմի ծագումը - Պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», հ. I, Երևան, 1948, էջ 177:

նալիս, սբ. Գրքից բացի, նաև հին պատմություններից է հավաստի տեղեկություններ քաղելու¹⁶⁷:

Մովսես Խորենացին հայ պատմիչներից առաջինն էր, որ Հայոց աշխարհի ամբողջական պատմությունն իր ժամանակի ոգով դիտել է Աստվածաշնչի համատեքստում: Հայկ նահապետի բնակեցրած տեղի մասին նա գրել է. «Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխին ընդ արեւմուտս հիւսիսոյ. գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, եւ անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այս ինքն թէ հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ»¹⁶⁸: Իսկ մեկ այլ տեղ, գրելով՝ հետագա իրադարձությունների մասին, մ.թ.ա. VI դ. առունով Մովսես Խորենացին նշել է. «...վկայէ եւ Երեմիա մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. «Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն եւ Ասքանազեան գնդին»¹⁶⁹: Երեմիայի մարգարեությունում Բաբելոնի դէմ ուղղված խոսքը Տիրոջ անունից է. «Առէք նշան ի վերայ երկրիդ, փող հարէք ընդ ազգս ամենայն, հրաւիրեցէք ի վերայ դորա զունդս, պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն եւ Ասքանազեան գնդին»¹⁷⁰:

Կորյունն իր շարադրանքում Ասքանազյան անվանումը դիտել է Հայոց աշխարհի և ազգի կապակցությամբ. «զԱզքանա-

¹⁶⁷ Մովսես Խորենացի, էջ 17:

¹⁶⁸ Մովսես Խորենացի, էջ 33, «Իսկ ինքը, ասում է (Մար Աբասը), իր մնացած մարդկանցով և տուն ու տեղով շարժվում է դեպի հյուսիս արևմուտք և գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք, այսինքն՝ թե այստեղ բնակվողները հայրեր են Թորգոմի տան սերունդի» (Մովսես Խորենացի, էջ 99):

¹⁶⁹ Մովսես Խորենացի, էջ 67: Աստվածաշնչում Հայաստանի հետ կապված հիշատակությունների (Արարատյան երկիր, Թորգոմի տուն, Ասքանազյան գունդ) քննությունը տես՝ V. Inglisian, Armenien in der Bibel, Wien, 1935, թարգմ.՝ Հ. Վ. Ինգլիզեան, Հայաստան Սուրբ Գրքի մեջ, G. Abgarjan, Selbstbild der Armenier, S. 104-105, Ա. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, էջ 346-347:

¹⁷⁰ «Դրոշ բարձրացրեք երկրի վրա, փող փչեցեք բոլոր ազգերի մեջ, զորագնդեր կանչեցեք նրա դեմ: Իմ կողմից հրաման տվեք Այրարատյան թագավորություններին և Ասքանազյան գնդին» (Եր. ԾԱ. 27): Հայերեն թարգմանությունում *Այրարատ* աշխարհի անունն է, իսկ եբրայերեն բնագրից թարգմանությունում առկա է. «... զազգս կոչեցեք ի վերայ դորա զթագաւորութիւնս Արարատայ, Սինույ, եւ Ասքանազայ» (Աստուածաշունչ մատեան, Հին եւ Նոր Կտակարանաց, Երեւան, 1997, էջ 835, ծան. 9):

զեան ազգին եւ զՀայաստան աշխարհին զաստուածապարզեւ գրոյն...»¹⁷¹, իսկ Ագաթանգեղոսը («Ընթերցեալ զԹորգոմայ ազգիս, զՀայաստան աշխարհիս զաստուածապարզև աւետեացն Աւետարանին քարոզելոյ բանին կենաց...», «... յԱյրարատեան գաւառին, ի թագաւորանիստ կայեանսն, բխեցին Հայոց տանն Թորգոմայ շնորհք քարոզութեան Աւետարանին պատուիրանացն Աստուծով...», «Այս իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ, զորս զունարեաց թագաւորն Տրդատ...»¹⁷²), Փափստոս Բուզանդը¹⁷³ և Մովսես Խորենացին՝ Թորգոմայ անունը:

Մովսես Խորենացու, Կորյունի և Ագաթանգեղոսի հիշատակած «ազգ տանն Թորգոմայ», «Թորգոմայ ազգ» և «Ասքանագեան ազգ» անվանումները ծագում են բիբլիական Նոյան Հաբեթի որդու՝ Գամերի որդիների՝ Թորգոմի և Ասքանագի անուններից¹⁷⁴:

Մովսես Խորենացին, ընդգծելով Հայկազունների տեղաբնիկ լինելը, ինչպես նաև Հայոց պատմության առումով դիտարկելով Աստվածաշունչը, գրել է. «Արդ՝ այժմ անցից ի թիւ մերոց արանց, մանաւանդ թէ թագաւորաց, մինչեւ ցտէրութիւնն Պարթեւաց: Քանզի ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք եւ իմոյ արեան առուք եւ հաւաստի հարազատք: ...Եւ զի արդարեւ զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ

¹⁷¹ Կորյուն, էջ 70:

¹⁷² Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 12-13, 403, 415, «Կարդալով Ավետարանի աստվածապարզև ավետիսները և կենաց խոսքը մեր Թորգոմյան ազգին և մեր Հայաստան աշխարհում քարոզելու [զրկվածք]...», «... Արարատյան նահանգում, թագավորանիստ կայանում Հայոց Թորգոմյան տանը բխեցին Աստծու պատվիրանների Ավետարանի քարոզության շնորհները», «Սրանք են Հայաստան աշխարհի, Թորգոմի տան ընտիր իշխանները, կուսակալները, հազարապետները, բյուրավորները, որոնց հավաքեց Տրդատ թագավորը...» (Ագաթանգեղոս, էջ 30, 119, 126):

¹⁷³ Փափստոս Բուզանդ, էջ 284:

¹⁷⁴ Ծննդ., Ժ 2-3: Ասքանագ անունը հիշատակված է Աստվածաշնչի նաև Ծննդոց (Ժ 3) և Ա Մնացորդաց (Ա 5) գրքերում, որպես Հաբեթի թոռան անուն: Ըստ Մ. Աբեղյանի, հայ թարգմանիչները հայերին կոչել են «Ասքանագյան ազգ», այն դիտելով Աստվածաշնչում արտացոլված «Այրարատեան թագաւորութեանցն և Ասքանագեան գնդին» անվանումների առումով (Կորյուն, էջ 302, ծան. 2):

թագաւորութիւն՝ վկայէ եւ Երեմիա մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ...»¹⁷⁵:

Երեմիայի մարգարեությունից քաղված հատվածին Մովսեսը հորենացին ցուցաբերել է պատմագիտական մոտեցում: Այն ներկայացնելով որպէս Հայոց թագավորության պատմության որոշակի ժամանակաշրջանին (մ. թ. ա. VI դար) վերաբերող ժամրակշիռ փաստ՝ Պատմահայրը գրել է. «Եւ այս հաւաստի գոլոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ»¹⁷⁶:

Մովսեսը հորենացին Հայոց պատմության հնագույն ժամանակներից եկող, նախաքրիստոնէական՝ հեթանոսական և քրիստոնէական դարաշրջաններն ընդգրկող իր շարադրանքի սկզբնաղբյուրային հիմքին անդրադառնալով՝ գրել է. «Եւ սկսայց՝ յորոց եւ այլքն, որք յեկեղեցւոջ եւ ոյք ըստ Քրիստոսի, աւելորդ համարելով զարտաքնոցն երկրորդել յաղագս սկզբանն առասպելս, բայց եթէ զկնիսն՝ ժամանակս ինչ արդեօք եւ զարս յայտնիս, որում եւ աստուածայինքն ի ճահ գայցեն պատմութիւնք բանից. մինչեւ երթեալ հասանիցեմք ի հեթանոսականսն զրուցատրութիւնս. սակայն եւ ի նոցանէ՝ զոր ինչ հաւաստին կարծեմք, առնուլ»¹⁷⁷: Այս տողերը ներկայացնում են Մովսեսը հորենացու պատմահամեմատական մեթոդն իր օգտագործած սկզբնաղբյուրների նկատմամբ¹⁷⁸:

Կորյունը իր երկի վարքագրական բնույթին բնորոշ ոգով

¹⁷⁵ Մովսեսը հորենացի, էջ 66-67, «Այժմ ես կանցնեմ թվարկելու մեր մարդկանց, մանավանդ թե թագավորներին մինչև պարթևների տերության (հաստատվելը): Որովհետև մեր թագավորների մեջ ինձ այս մարդիկն են սիրելի, իբրև բնիկներ, այրունակիցներ և իսկական հարազատներ» (Մովսեսը հորենացի, էջ 122):

¹⁷⁶ Մովսեսը հորենացի, էջ 67, «Սա ապացույց է, որ այդ ժամանակ մենք ունեցել ենք թագավորություն» (Մովսեսը հորենացի, էջ 122):

¹⁷⁷ Մովսեսը հորենացի, էջ 12, «Եվ կսկսեմ նրանից, որից սկսում են և ուրիշները, ոմանք ըստ եկեղեցական պատմության, ոմանք էլ ըստ Քրիստոսի, ավելորդ համարելով երկրորդել արտաքին հեղինակների առասպելները սկզբնական պատմության մասին, բայց հետագայից կհիշենք որոշ ժամանակներ և հայտնի անձեր, որքան նրանք զուգադիպում են Սուրբ գրքի պատմությանը, մինչև որ բնականաբար կհասնենք հեթանոսական զրույցներին. բայց սրանցից էլ կառնենք, ինչ որ հավաստի կհամարենք» (Մովսեսը հորենացի, էջ 84):

¹⁷⁸ Ն. Դանիելյան, Աստվածաշնչին անդրադառնալու Մովսեսը հորենացու պատմահամեմատական մեթոդը - «Հայոց պատմության հարցեր», ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2001, էջ 6-11:

գրել է. «Եւ արդ առեալ նախաբանեսցուք, եթէ իցէ՞ համարծա-
կութիւն գրով նշանակել զվարս արանցն կատարելոց... Աստու-
ծոյ բարերարին այսպէս բարեխորհեալ զհիւրոց սիրելեաց, ոչ
միայն ըստ առաքինութեան վարուց՝ զչքնաղ զբարձրագոյն հա-
տուցումն բաւական համարել յանսպառ յաւիտեանսն, այլ եւ աս-
տէն իսկ կանխագոյն, զի անցաւոր ժամանակօքս մատենապա-
տում երկնաբերձ պայծառացուցեալ, զհոգեղինացն եւ զմարմնա-
կանացն առ հասարակ փայիցեն»¹⁷⁹:

Կորյուն վարդապետն այս կապակցութեամբ հիշատակել է
Հին Կտակարանն այն անվանելով «Մովսիսական պատմութիւն»
և ասելով, որ այնտեղից է քաղել ճշմարիտ հավատքի հաստա-
տությունը, աստվածամերժությունը, աստվածամոտ կյանքի վա-
յելչությունը, սքանչելի կյանքի պայծառությունը ներկայացնող
օրինակները¹⁸⁰, որոնցում նա անուններ չի թվարկել, սակայն
դրանց բովանդակությունից երևում է, որ խոսքը վերաբերում է
Աբելին, Ենոքին, Նոյին, Աբրահամին: Ընդ որում՝ Կորյունը նաև
մեկնողական ոճով է գրել, քանզի նրանցից յուրաքանչյուրի բնու-
թագիրը մեկնել է Աստվածաշնչի համապատասխան տեղեկու-
թյան համաձայն: Մաշտոցի կյանքի հոգևոր ընթացքը ներկայաց-
նելիս Կորյունի մոտեցումը Հին և Նոր Կտակարանների որոշ
գրքերին (Ծննդոց, Ելից, Թագաւորութեանց, Յոբայ, Սաղմոսաց,
Առակք Սողոմոնի, Եսայի գրքեր, Դանիէլի, Եզեկիէլի մարգա-
րեություններ, Աւետարան ըստ Մատթէոսի, Աւետարան ըստ
Մարկոսի, Աւետարան ըստ Ղուկասու, Աւետարան ըստ Յովհան-
նու, Գործք Առաքելոց, Թուղթք Պաւղոսի Առաքելոյ՝ առ Հռովմա-
յեցիս, առ Կորնթացիս, առ Եփեսացիս, առ Գաղատացիս, առ Փի-
լիպեցիս, առ Տիմոթէոս, առ Տիտոս, առ Եբրայեցիս, Յակոբայ

¹⁷⁹ «Բայց արդ՝ նախ մի առաջաբան անենք, թե թույլատրելի՞ է արդյոք կատա-
րյալ մարդկանց վարքի մասին գրել... Բարերար Աստված այնպես է բարի
կամեցել իր սիրելիներին, որ ոչ միայն արժանի համարի [տալ նրանց] ըստ
[իրենց] առաքինի վարքի չքնաղ և բարձրագոյն հատուցումն անսպառ հավի-
տենակամութեան մեջ, այլ և հենց այստեղ, այս աշխարհում, առաջուց այս
անցավոր կյանքում մատչանի մեջ պատմել տալով [նրանց մասին]՝ երկնա-
բարձր կերպով պայծառացնի [նրանց], որպեսզի [նրանք] ընդհանրապես և՛
հոգևոր, և՛ մարմնավոր փայլով փայլեն» (Կորյուն, էջ 72-73):

¹⁸⁰ Կորյուն, էջ 72:

առաքելոյ) հնարավոր է բնութագրել որպէս քրիստոնէական հավատքի վրա հիմնված բարոյագիտական խրատների շարք:

Պատմահոր և Կորյունի մեկնությունների համեմատությունն ի հայտ է բերում այն առանձնահատկությունը, որ նրանցից յուրաքանչյուրը ելել է իր առջև դրված խնդրից: Մովսէս Խորենացու շարադրանքը մարդկության սկզբնական ժամանակներից սկսվող պատմություն էր, ինչպէս ինքն է ձևակերպել. «Յաղագս Արմատոյն հանուր մարդկութեանս, կամ թէ հաճոյ ումեք թուիցի ասել ծայրին, պարտ էր մեզ սակաւ ինչ անցանել բանի...»¹⁸¹: Այս տեսանկյունից պատմաքննական մոտեցում ցուցաբերելով այլ սկզբնաղբյուրների նկատմամբ (Բերոսոս, Բազմավեպ, Աբյուդենոս)՝ Պատմահայրը իր մեկնություններով գրել է Աբելի, Ենովքի և Նոյի մասին¹⁸²:

Աստվածաշնչին մեկնողական և վարքագրական բնույթով պայմանավորված մոտեցմամբ աչքի է ընկնում նաև Ազաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ը, որի «Առաջաբանում» պատմությունը և պատմագրումը համեմատված են փոթորկալից ծովի հետ, որի ալիքների վրա հայտնված նավարկողների բաղձալի իղձն է՝ խաղաղությամբ հասնել նավահանգիստ, իսկ ալիքները համեմատված են լեռնաձև կուտակումների հետ, որոնք «...մէտ ի մէտ խոնարհին, ըստ աղեգէտն պատմողին մարմնաքնար Պաւթեան երգոյն, թէ «Ելանեն լեռնանան, և իջանեն դաշտանան»¹⁸³:

Ազաթանգեղոսը պատկերավոր կերպով խոսքն ուղղել է ապագային և կրկին հենվելով Սաղմոսների վրա՝ գրել. «Կարգել հաստատական, յեղեղուկ հոլովել զանիւ պատմութեան բանիցս, զի կամակարագոյնս նաւիցեմք զալեօք ժամանակագրական ծովուս. պատմել յազգ յայլ ժողովրդին ստացելոյ, որք օրինեսցեն զտէր¹⁸⁴, որք յետ այսր անցեալ ժամանակաց գալոցն իցեն, որք

¹⁸¹ Մովսէս Խորենացի, էջ 13, «Ամբողջ մարդկության արմատի կամ, եթե մեկը կամենա ասել, ծայրի մասին պետք է մեզ մի քանի խոսք ասել» (Մովսէս Խորենացի, էջ 84):

¹⁸² Մովսէս Խորենացի, էջ 13:

¹⁸³ Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 1-2, «...խոնարհվում ելելէջներով, ըստ քանքարավոր քնարահար Ղավթի երգի «ելնում են – լեռնանում և իջնում են - դաշտանում» (Ազաթանգեղոս, էջ 21), Սաղմ., ԵԳ 8:

¹⁸⁴ «Գրեսցի այս յազգ յայլ, ժողովուրդ զոր ստացեալ է օրինեսցէ զՏէր» (Սաղմ., ԵԱ 19), «Սա պիտի գրվի այլ ազգի համար. ժողովուրդը, որը ստանում է, պիտի

հարցեալ զհայրենական մատեանսն՝ պատմեսցի նոցա, եւ զծրագիր կարգեալս՝ եւ ասացի նոցա»¹⁸⁵:

Ըստ Ազաթանգեղոսի, հոգևոր արժեքների վեհությունը և հոգևոր լույսի մարգարիտները կարող են «ցուցանել զէս երկնաւոր ճանապարհացն առ Աստուած վերանելոյ. նոքա են ուղեւորք արքայութեանն ճանապարհացն Աստուծոյ»¹⁸⁶: Ազաթանգեղոսը հենվելով Հին և Նոր Կտակարանների վրա՝ գրել է, որ հոգևոր առաքինությունները զգեստավորում են մերկերին և նրանց, «որք մեղօքն են մերկացեալ ըստ նմանութեանն Ադամայ՝ լուսաւոր պատմուճանօք զգեցուցանեն... նոքա եւ զգանձն երկնաւոր յաւելուն տան այնոցիկ որ առաւելագոյն ունիցին, զի «Որ ունիցին՝ տացի նմա եւ յաւելցի»¹⁸⁷:

Ազաթանգեղոսն իր երկի բուն տեքստի՝ «Սուրբ Գրիգորի վարքը և պատմությունը» շարադրանքում քաղվածաբար մեջբերումներ է կատարել Աստվածաշնչից, որոնք, կարելի է ասել, ջատագովական և վարքագրական արտահայտչաձևին բնորոշ ծաղկաքաղ են Աստվածաշնչի գրքերից (Ծննդոց, Սաղմոսաց, Նէեմի, Առակաց, Մակաբայեցւոց գրքերից, Եսաեայ, Երեմեայ, Եզեկիէլի, Դանիէլի, Ովսեայ, Ամբակումայ, Սոփոնեայ մարգարեութիւնք, Աւետարան ըստ Մատթէոսի, Աւետարան ըստ Դուկասու, Աւետարան ըստ Յովհաննու, Գործք Առաքելոց, Թուղթք Պօղոս Առաքելոյ՝ առ Հռովմայեցիս, առ Կորնթացիս, առ Եփեսացիս, առ Տիմոթէոս, Պետրոսի Առաքելոյ):

օրինի Աստծուն»:

¹⁸⁵ Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 12, «Հաստատորեն կարգավորելով կպտտեցնեն, կդարձնեն խոսքերի պատմության անիվը, որպեսզի տիրաբար նավեն ժամանակագրութեան ծովի ալիքների վրա: Կպատմեն այս բաներն ստացող մարդկանց և մեր ժամանակներից հետո եկող ազգերին, որոնք օրհնելու են Տիրոջը, և հայրենի մատյանները պրպտելիս թող այս ամենը պատմվի նրանց և հաղորդվի կարգավորված ծրագիրը» (Ազաթանգեղոս, էջ 29-30):

¹⁸⁶ Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 7, «...ցույց տալ երկնային ճանապարհների էլքն առ Աստված բարձրանալու համար: Ուղեցույց են Աստծո արքայության ճանապարհների» (Ազաթանգեղոս, էջ 25-26):

¹⁸⁷ Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 8: «Զի ոյր գուցե՝ տացի նմա եւ յաւելցի» (Մատթ., ԺԳ 12), «...որ Ադամի նման մեղքերով մերկացած են, լուսավոր պատմուճաններով զգեստավորվում են... երկնային զանձը տալիս են նրանց, որոնք առավելագույնն ունեն, քանզի «ով որ ունի, կտրվի նրան և կավելացվի» (Ազաթանգեղոս, էջ 26):

Այսպես՝ Տրդատ III թագավորի հետ ծառաների և տերերի հարաբերության, ինչպես նաև նրա կամքին Գրիգոր Լուսավորչի հնազանդվելու մասին պատմիչն Ավետարանի խոսքով ասում է. «Հրամայեալ է յԱստուծոյ, զի «Ծառայք հնազանդ լիցին մարմնաւոր տերանց»¹⁸⁸: Գրիգորը հանդիմանելով Տրդատին՝ ասել էր. «...ծեր յուսահատութիւն այն է, զի ոչ ճանաչէք զԱրարիչն ձեր, որ պահանջէ ի ձէնջ վասն այնորիկ, զի ոչ ելէք ի խնդիր տեառն Արարչին ձերոյ, եւ ոչ ծանեայք զնա: Արդարեւ իսկ իբրեւ զծիս եղէք կամ իբրև զջորիս, զի ոչ գոյ ի նոսա իմաստութիւն, եւ քան զեզն եւ զէշ եւ պակասամտագոյն գտայք, զի ոչ ծանեայք զձեր հաստիչն. որ ի ժամանակի իւրում ի սանծս եւ ի դանդանաւանդս ճնլեսցէ զկզակս ձեր, որ առ նա դուք ոչ մարթայցէք մերծենալ»¹⁸⁹: Այստեղ պատմիչը հենվել է Սաղմոսների գրքի վրա («Մի՛ լինիք որպէս զծիս եւ զջորիս զի ոչ գոյ ի նոսա իմաստութիւն. ի սանծս եւ ի դանդանաւանդս ճնլեսցես զկզակս նոցա, որ առ քեզ ինչ ոչ մերծեսցին»¹⁹⁰):

Նման կարգի հղումների թվին են պատկանում դրախտի, կենաց ծառի, Ենովքի մասին հիշատակությունները Գրիգորի խոսքում¹⁹¹: Նոյին վերաբերող հատվածը մեկնողական բնույթի է: Ազաթանգեղոսն անդրադառնալով Աստուծուն ուղղված Հռիփսիմեի աղաչանքներին՝ Նոյյան տապանը մեկնելով խաչի իմաստով, գրել է. «Տէր Աստուած ամենակալ... Դու ես, Տէր, որ ետուր յողող ջուրց զանօրէն պղծալից մարդիկ... եւ փրկեցեր զսիրելին քո զՆոյ, որ պահեաց զիրաման բանին քոյ, եւ ապրեցուցեր խաչանման փայտին ի ջուրցն հեղեղէ: Որ յայնժամ օրինակավ խա-

¹⁸⁸ Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 30-31: «Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց» («Ծառաներ, հնազանդ եղէք ձեր մարմնավոր տերերին») (Եփես., 2 5):

¹⁸⁹ Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 37, «...դուք հուսահատ եք, քանզի չէք ճանաչում ձեր Արարչին, որը ձեզանից վրեժ կ'ուծի նրա համար, որ չէք փնտրել ձեր տեր Արարչին և չէք ճանաչել նրան: Արդարև նման եք ծիերին ու ջորիներին, որովհետև նրանք չունեն իմաստություն և նույնիսկ մտքով եզից ու էշից էլ պակասամիտ գտնվեցիք, քանի որ չճանաչեցիք ձեր ստեղծողին, որը երբ ժամանակը գա, սանծով կճմլի ձեր կզակներն այն բանի համար, որ չկարողացաք մերծենալ նրան» (Ազաթանգեղոս, էջ 44):

¹⁹⁰ «Մի՛ եղէք ծիերի և ջորիների պես, որոնք զիտակցություն չունեն. սանծով ու պախուրցով պետք է նրանց կզակը ճնլել, որ չնոտենան» (Սաղմ., ԼԱ 9):

¹⁹¹ Ազաթանգեղոս, էջ 47:

չին արարեր գիրկութիւն՝ եւ այժմ արա ճշմարտութեամբ խաչիդ քոյ, յոր ելեր եւ հեղեր գարիւն քո ի բժշկութիւն ցափոց մերոց»¹⁹²:

Ծննդոց գրքում հիշատակվող Նոյյան տապանի մասին հաղորդմանն անդրադառնալու փաստ է գրանցված նաև Փավստոս Բուզանդի մոտ: Խոսքով Կոտակի ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները նկարագրելիս՝ պատմիչը նշել է. «Ջայնու ժամանակաւ խաղաց գնաց մեծ եպիսկոպոսն Մծբնացոց, այր սքանչելի ծերունի, վաստակասէր 'ի գործս ճշմարտութեան, որում անուն Յակոբ... այր ընտրեալ յԱստուծոյ, յիւրմէ քաղաքէ անտի գալ հասանել 'ի լերինս Հայոց, 'ի լեառնն Սարարադայ 'ի սահմանս Այրարատեան տէրութեան 'ի գաւառն Կորդուաց. այր լի շնորհօքն Քրիստոսի... Արդ իբրեւ էր նա խոնձեալ 'ի վեր 'ի դժուարին տեղուոջն մօտ 'ի կատարն, եւ կարի վաստակեալ էր, ննջեաց նա, եւ եկն հրեշտակ Աստուծոյ եւ ասէ ցնա. Յակոբ, Յակոբ: Եւ նա ասէ. Աւասիկ Տէր: Եւ ասէ հրեշտակն. Ահա ընկալաւ Տէր գաղաչանս քո, եւ կատարեաց գխնդրուածս քո. այդ, որ կայ ընդ սնարս քո, է ի փայտից տապանակին. ահա բերի քեզ, անտի է այդ...»¹⁹³:

Ս. Մալխասյանցը գրել է, որ «Սարարադ ձևը կարող է կասկածելի լինել, առաջ եկած երկու կից բառերի սխալ տրոհումից... ԻԼԵՐԻՆՍԱՐԱՐԱՏԱՅ տրոհել են «ի լերին սարարատայ», փոխանակ «Ի ԼԵՐԻՆՍ ԱՐԱՐԱՏԱՅ»¹⁹⁴: Դրա հետ մեկտեղ նա

¹⁹² Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 93, «Տեր Աստված ամենակալ... որ ջրով հեղեղեցիր անօրեն պղծալի մարդկանց... և փրկեցիր քո սիրելի Նոյին, որ քո հրաման խոսքը պահեց և խաչանման փայտով փրկեցիր ջրհեղեղից: Եթե այնժամ խաչի օրինակով փրկություն տվեցիր, ապա այժմ էլ արա նույնը ճշմարտությամբ քո խաչի, որի վրա բարձրացար և թափեցիր քո արյունը ի բժշկություն մեր ցավերի» (Ագաթանգեղոս, էջ 76):

¹⁹³ «Այն ժամանակները Մծբնի մեծ եպիսկոպոսը, մի սքանչելի ծերունի, ճշմարտության գործերով զբաղված, որի անունն էր Յակոբ... Աստու ընտրած մարդը, վեր կացավ իր քաղաքից, որպեսզի գա հասնի Հայոց լեռները, Սարարադ լեռը, որ գտնվում էր Այրարատյան տերության սահմաններում, Կորդվաց գավառում: Նա լի էր Քրիստոսի շնորհքներով... Արդ՝ երբ նա սաստիկ հոգնած էր վերը, կատարի մոտ, դժվար տեղերում՝ ուժասպառ եղավ և քունը տարավ: Եվ Աստու հրեշտակը եկավ ու նրան ասաց. «Յակոբ, Յակոբ»: Եվ նա ասաց. «Այստեղ եմ»: Եվ հրեշտակն ասաց. «Տերը քո աղաչանքներն և խնդիրդ կատարեց. այդ, ինչ որ գլխիդ տակ դրված է՝ տապանակի փայտերից է, ինքս բերի քեզ համար, այնտեղից է...» (Փավստոս Բուզանդ, էջ 36-39):

¹⁹⁴ Փավստոս Բուզանդ, էջ 36-38: Արարատ անվանման «Արարադ» տարըն-

նշել է. «Բայց այդ լեռան Սարարադ կամ Արարատ կոչվելը երկրորդական նշանակություն ունի. կարևորն այն է, որ սկզբներում այդ լեռան տակ չեն եղել հասկանալիս այժմյան Արարատ=Մասիս լեռը, այլ մի ուրիշ լեռ կամ տեղ Կորդվաց նահանգում... Տապանակիր լեռ լինելու պատիվը Մասիսին անցավ միջին դարերում, հայտնի չէ, թե երբ իսկապես և ինչի հիման վրա, բայց այս կարծիքը հետզհետե ընդհանրացավ...»¹⁹⁵:

Անհրաժեշտ է նշել, որ տապանակիր լեռան՝ Կորդվաց գավառի հետ կապված վարկածն առաջացել է սբ. Գրքի ասորերեն թարգմանության (Պեշիտտա) հետևանքով: Գ. Աբգարյանը հետազոտել է այս հարցը և իրավացիորեն եզրակացրել. «Աստվածաշունչը եբրայերենից ասորերեն թարգմանելիս, ասորիները «Արարատ» անվան փոխարեն ներմուծել են մի լեռան (Կարդու) անուն: Բայց 1947 թ. Մեռյալ ծովի մերձակայքում, Կումրանում գտնված եբրայերեն ձեռագրերը ցույց են տալիս, որ Աստվածաշունչի ասորերեն թարգմանությունը միտումնավոր կերպով կեղծված է»¹⁹⁶:

Արարատ-Մասիսը տապանակիր լեռ լինելու տեսակետի օգտին ծանրակշիռ փաստարկ է Եղիշեի հետևյալ հաղորդումը. «Արարատու լեռն ոմանք զԿորդուացն ասեն, այլ ճշմարտութիւն յայտնի առնէ զնա ի Մասիս գոլ...»¹⁹⁷:

Փավստոս Բուզանդը IV դարի իրադարձությունների բարոյա-հոգևոր կողմն ընդգծելու նպատակով իր շարադրանքում նույնպես հենվել է Աստվածաշունչի (Ծննդոց գիրք, Դանիելի մարգարեութիւն, Աւետարան ըստ Մատթեոսի, Աւետարան ըստ Յովհաննոսի) վրա: Պատմելով Վաղես կայսեր կողմից աքսորվածների թվում Ներսես կաթողիկոսի մասին՝ Փավստոս Բուզանդը Ծննդոց գրքից օրինակներ քաղելով, գրել է. «Ապա մխիթարել եւ քաջալերել սկսաւ զամենեսեան Ներսէս, եւ ասէ. Պինդ կացէք, հաստատուն լերուք, եւ մի՛ երկնչիք. զի այն տէր մեր Յիսուս Քրիստոս՝ որ հրամայեաց ծառոյն սաբեկայ բերել զխոյն

թերցվածին, ապա Պատմահոր տեքստի ձեռագրական տարբերակներում նշված է *Արարատեան* (Մովսէս Խորենացի, էջ 33-34):

¹⁹⁵ Փավստոս Բուզանդ, էջ 423, ծան. 32:

¹⁹⁶ G. Abgarjan, Selbstbild der Armenier, S. 104-105.

¹⁹⁷ Լ. Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», էջ 245:

պտուղ¹⁹⁸, եւ ընկալաւ զԻսահակ կենդանի զոհ, եւ օրհնեաց զՅակոբ 'ի պանդխտութեան, եւ ապրեցոյց զՅովսէփ 'ի ծառայութենէն...»¹⁹⁹:

Փալստոս Բուզանդն Աստվածաշնչից տեղեկություն է օգտագործել նաև Ներսես կաթողիկոսի՝ Արշակ թագավորին Արշակավանի կապակցությամբ ասված խոսքում. «...սկսար անօրինել առաջի տեառն աստուծոյ քո, եւ զամբարշտութիւնս եւ զանօրէնութիւնս եւ զանիրաւութիւնս կարի նմանութիւն սողոմացոցն²⁰⁰ պարծանօք յայտնապէս պատմել»²⁰¹:

Նույն մոտեցումը Աստվածաշնչին (Ծննդոց, Սաղմոսներ, Դատաւորք, Օրինաց, Թագաւորաց, Ամբակ գրքերը, Եզեկիէլի, Եսայու, Դանիէլի, Երեմիայի մարգարեությունները, Մատթեոսի, Ղուկասի, Հովհաննու ավետարանները, Պողոս առաքյալի թղթերը Փիլիպեցիներին Կորնթացիներին, Հռովմայեցիներին, Թեսաղոնիկեցիներին, Եբրայեցիներին) Եղիշեի և Ղազար Փարպեցու երկերում է:

Վարդան Մամիկոնյանը տեսնելով Խաղխաղի մոտ հավաքված պարսից մեծաքանակ զորքը՝ Հայոց զորքին քաջալերանքի խոսք ասաց, որն իրենց երկերում պահպանել են Եղիշեն և Ղազար Փարպեցին: Եղիշեն գրել է. «Դատեա, Տէր, գայնոսիկ, ոյք դատին զմեզ. մարտիր ընդ այնոսիկ, որ մարտնչինս ընդ մեզ. զինու եւ ասպարաւ քով օգնեա մեզ: Շարժեա եւ դողացո զգունդագունդ բազմութիւն անօրինացս. ցրուեա եւ վատնեա զչար միաբանութիւն թշնամեաց քոց առաջի քոյոյ փրկական մեծի նշանիս, եւ տուր ի ձեռն սակաւուցս զքաջութիւն յաղթութեան ի վե-

¹⁹⁸ Երբ Տիրոջ հրեշտակը Աբրահամին արգելում է Իսահակին զոհաբերել, Աբրահամը նայում է շուրջը և տեսնում, որ մացառուտ քիփերի մեջ եղջյուրներից մի խոյ է կախված, վերցրեց այն ու ողջակիզեց իր որդու փոխարեն (Ծննդ., ԻԲ 1-13):

¹⁹⁹ «Այն ժամանակ Ներսեսը սկսեց բոլորին քաջալերել ու մխիթարել՝ ասելով. «Հաստատ ու պինդ մնացեք, մի վախենաք, որովհետև մեր տեր Հիսուս Քրիստոսն էր, որ սաբեկա ծառին հրամայեց խոյ բերել իբրև պտուղ, որ Իսահակին կենդանի զոհ ընդունեց, որ Հակոբին օրհնեց պանդխտության մեջ, որ Հովսէփին ստրկությունից փրկեց...» (Փալստոս Բուզանդ, էջ 144-145):

²⁰⁰ Ծննդ., ԺԹ:

²⁰¹ «... սկսեցիր անօրենություններ գործել, ամբարշտություն և անօրենություններ և անիրավություններ բոլորովին սողոմացոց նման, և այս բաները դու հայտնապես պարծենալով պատմում ես» (Փալստոս Բուզանդ, էջ 174-175):

րայ անհնարին բազմութեանս: Ոչ ի պարծանս սնոտի փառասիրութեան անօգուտ վաստակոց ինչ աղաչեմք, կամ յագահութիւն ընչասիրութեան զանցաւոր մեծութիւն կապտելոյ, այլ զի ծանիցեն եւ զիտացեն ամենեքեան այնոքիկ, որ ոչն հնազանդին սուրբ աւետարանին քարոզութեան, եթէ դու ես Տէր կենաց եւ մահու, ի ձեռն քո է յաղթութիւն եւ պարտութիւն: Եւ մեք պատրաստ ենք ի մեռանել վասն քո սիրոյդ. եւ եթէ սպանանել եւս հասանէ զնոսա, եղիցուք վրէժխնդիրք ճշմարտութեանն»²⁰²:

Եղիշէի շարադրանքում ակնարկված աստվածաշնչական միտքը ուղղակի բերել է՝ Ղազար Փարպեցին. «Մի՛ պարծեսցի հզօրն ի զօրութեան իւրում, եւ մի՛ պարծեսցի մեծն ի մեծութեան իւրում. այլ որ պարծելոցն իցէ՝ յԱստուած պարծեսցի»²⁰³:

Ավարայրի ճակատամարտից առաջ Հայոց զորքին ուղղված իր խոսքում Վարդան Մամիկոնյանն ասել է. «Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ. մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, եւ գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք եւ յօժարութեամբ առաջ-

²⁰² «Ղատիր, Տեր, նրանց, ովքեր դատում են մեզ. կռվի ելիր նրանց դեմ, ովքեր ահա մարտնչում են մեր դեմ. քո զենքով ու ասպարով օգնիր մեզ: Շարժիր և դողացրու անօրեմների զունդագունդ բազմությունը. ցրիր և ոչնչացրու քո թշնամիների չար միաբանությունը այս քո փրկական մեծ նշանի առջև և մեր՝ սակավաթիվներիս ձեռքով քաջություն ու հաղթություն պարգևիր այս անհամար բազմության դեմ: Ոչ թե անօգուտ վաստակների սնոտի փառասիրությամբ պարծենալու համար ենք աղաչում կամ թե ընչասեր ագահությամբ անցավոր մեծության կողոպտելու, այլ որպեսզի ճանաչեն ու իմանան այն բոլորը, ովքեր չեն հնազանդվում սուրբ Ավետարանի քարոզությանը, թե դու ես կյանքի ու մահվան տերը, և քո ձեռին է հաղթությունն ու պարտությունը: Իսկ մենք պատրաստ ենք մեռնելու քո սիրո համար. և եթե պետք լինի նրանց սպանել էլ, ճշմարտության համար վրէժխնդիր կլինենք» (Եղիշէ, էջ 152-153):

²⁰³ «Թող հզօրն իր հզօրությամբ չպարծենա և մեծն էլ չպարծենա իր մեծությամբ, այլ թե պարծենալու է, Աստծով թող պարծենա» (Ղազար Փարպեցի, էջ 152-153): «Մի՛ պարծեսցի հզօրն ի զօրութիւն իւր, եւ մի՛ պարծեսցի մեծն ի մեծութիւն իւր: Այլ յայն պարծեսցի. որ պարծիցին՝ իմանալ եւ ճանաչել զիս, թէ ես եմ Տէր...» (Երեմ., Թ 23, հմմտ. Սաղմ., ԼԱ 14): Ընդդիմախոսելով Բ. Կիւլեսերյանի տեսակետին, որի համաձայն, Եղիշէն օգտվել է Ղազար Փարպեցուց (Բ. Կիւլեսերեան, Եղիշէ. Զննական ուսումնասիրութիւն - Ազգային Մատենադարան, ԾԷ, Վիեննա, 1909, էջ 175-199), Ե. Տեր-Մինասյանը հիմնավորապես ապացուցել է հակառակը (Ե. Տեր-Մինասյան, Եղիշէի «Վարդանանց պատմությունը» և նրա քննադատները - Տես՝ Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 139):

նորդ եւ զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ եւ բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց եւ փոքունց... Հաստատուն կացէք յանշուշտ զօրագլուխն մեր, որ ոչ երբէք մոռացի զգործս նահատակութեան ձերոյ... չէ մեր մարդ զօրավար, այլ զօրագլուխն ամենայն մարտիրոսաց...»²⁰⁴:

Եղիշեն այս հատվածում երեք անգամ է օգտագործել զօրագլուխ բառը: Նախ՝ խոսքը հենց Վարդան Մամիկոնյանի մասին է, ապա՝ Հիսուս Քրիստոսի: Աստվածաշնչում ասվում է. «Հայեսցուք ի զօրագլուխն հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր՝ յանձն առ զխաչն, արհամարհեաց զամօթն, նստաւ ընդ աջմէ աթոռոյն Աստուծոյ»²⁰⁵:

Վարդան Մամիկոնյանի խոսքի շարունակությունում, ուր ասվում է, որ մեծ պարգև է մեռնել «ի վերայ մեծի վկայութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», Եղիշեն մի մեջբերում է կատարել հենվելով Ավետարանի վրա. «Ուր առաւել եղեն մեղքն, անդէն առաւելան շնորհքն Աստուծոյ»²⁰⁶, որը, ինչպես ցույց է տալիս համեմատությունն Ավետարանի («Ուր առաւել եղեն մեղքն, առաւել եւս յաւելեան շնորհքն»²⁰⁷) հետ, մեկնողական բնույթի է, քանի որ բացատրում է՝ «շնորհքն Աստուծոյ»:

Ինչպես հաղորդում է Ղազար Փարպեցին, Ներսեհապատի ճակատամարտից (483 թ.) առաջ Հոհան (Հովհան) Մանդակունին ավետարանական խոսքով օրհնում է Հայոց զորքին և քաջալերելով ասում. «Յուսացեալքն յԱստուած ոչ երբէք ամաչեցին. ընտիր անօթ սուրբ Հոգւոյն Պօղոս գոչէ համարձակածայն

²⁰⁴ «Արդ, աղաչում եմ ձեզ, ով իմ քաջ նիզակակիցներ, մանավանդ, որ ձեզանից շատերը քաջությամբ ինձնից ավելի լավ եք և հայրենական գահի պատվով՝ ավելի բարձր. բայց երբ ձեր կամքով ինձ կարգեցիք ձեզ առաջնորդ և զորագլուխ, թող իմ խոսքերը ախորժալուր և բաղձալի թվան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին... Հաստատ մնացեք մեր անդրդվելի զորագլխի վրա, որ երբեք չի մոռանա ձեր քաջագործությունները...: Սեր զորավարը մարդ չէ, այլ բոլոր մարտիրոսների զորագլուխը...» (Եղիշէ, էջ 204-211):

²⁰⁵ «Նայենք Յիսուսին՝ հավատի զորագլխին, այն կատարելագործողին, որն իր առաջ ուրախության համար հանձն առ խաչը, արհամարհեց ամոթը և նստեց Աստծու աթոռի աջ կողմում» (Եբր., ԺԲ 2):

²⁰⁶ «Ուր ավելի եղավ մեղքը, այնտեղ էլ ավելացան Աստծու շնորհները» (Եղիշէ, էջ 208-209):

²⁰⁷ «Ուր որ մեղքը շատացավ, շնորհն առավել ևս շատացավ» (Հռովմ., Ե 20):

բարբառով եւ ասէ. «Յոյս երբէք ոչ ամաչեցուցանէ, յորոց սիրտս սէրն Աստուծոյ սփռեալ է»²⁰⁸:

Պատմելով Վահան Մամիկոնյանի եղբոր՝ Վարդի պարսկական գերութիւնից փախուստի և այդ կապակցությամբ հայերի համընդհանուր ուրախության մասին՝ Ղազար Փարպեցին Աստվածաշնչից մեջբերումներ է կատարել. «Զի՞նչ բարի, կամ զի՞նչ վայելուչ, այլ բնակել եղբարց ի միասին»²⁰⁹: «Եւ առ սաստկապէս բեկումն թշնամեացն եւ բարձրանալ սրբոյ եկեղեցւոյ՝ ասէին սաղմոսելով. «Սոքա խափանեցան եւ անկան, մեք յարեաք եւ ուղիղք եղաք»²¹⁰. և «Ձամենայն եղջերս մեղաւորաց փշրեսցես, եւ բարձր եղիցի եզջեր արդարոյ»²¹¹: Եւ շնորհակալութեամբ գովութիւն ի մէջ առեալ ասէին. «Մեք ժողովուրդք եւ խաշն արօտի քո, խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան. ազգէ յազգ պատմեսցուք զօրհնութիւնս քո»²¹²:

Հայ պատմիչների կողմից Աստվածաշնչի օգտագործման եղանակը հետազոտելիս՝ անհրաժեշտ է անդրադառնալ ականավոր փիլիսոփա Եզնիկ Կողբացու մոտեցումներին, քանզի իր «Եղծ աղանդոց»-ում քննարկված հարցերն առնչվում են վաղմիջնադարյան հայ պատմագրության մեջ արծարծվող կրոնագա-

²⁰⁸ «Աստծո վրա հույս դնողները երբեք չեն ամաչել: Եվ Սուրբ Հոգու ընտիր անոթ Պողոս համարձակածայն զօչելով ասում էր. «Հույսը երբեք ամոթահար չի թողնում նրանց, ում սրտում սփռված է սերն Աստծո» (Ղազար Փարպեցի, էջ 312-313): «Յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ. զի սէրն Աստուծոյ սփռեալ է ի սիրտս մեր ի ձեռն Հոգւոյն Սրբոյ որ տուաւ մեզ» (Հռովմ., Ե 5): Լ. Տեր-Պետրոսյանը մշել է, որ «Վ դ. երկրորդ կեսի հայ հեղինակների մոտ ավետաբանական վկայակոչումները շեղվելով Աստվածաշնչի ընկալյալ բնագրից, նույնանում են տատիանյան ընթերցվածներին» («Հայ հնագույն թարգմանությունների մատենաշար»-ի Ներածություն, Գիրք Ծննդոց, էջ 64):

²⁰⁹ «Ի՞նչ կա առավել բարի ու վայելուչ, քան եղբայրների միասին բնակվելը» (Ղազար Փարպեցի, էջ 318-321): «Որքա՞ն բարի, որքա՞ն վայելուչ է, որ եղբայրները բնակվում են միասին» (Սաղմոս, ԵԼԲ, 1):

²¹⁰ «Թշնամիներին սաստիկ նվաստացնելու և սուրբ եկեղեցին բարձրացնելու համար՝ սաղմոսելով ասում էին. «Նրանք կործանվեցին ու ընկան, մենք հառնեցինք ու ուղղվեցինք» (Սաղմոս, ԺԹ 9) (Ղազար Փարպեցի, էջ 320-321):

²¹¹ «Մեղավորների բոլոր եղջուրները փշրվեցին և բարձրացան եղջուրներն արդարի» (Սաղմոս, ՀԴ 11):

²¹² «Ապա շնորհակալությամբ գովելով ասում էին. «Բայց մենք քո ժողովուրդը և քո արտոյի ոչխարներն ենք, հավիտյան պիտի քեզ հավատանք՝ սերնդե - սերունդ պատմենք քո օրհնությունները» (Սաղմոս, ՀԸ 13) (Ղազար Փարպեցի, էջ 320-321):

ղափարախոսական խնդիրներին և հատկապես մագդեզական կրոնի քննադատությանը: Եզնիկը, քննարկելով բարու և չարի, լույսի ու խավարի, կյանքի և մահի, մեղքի և ապաշխարության մասին հարցերը, հենվել է Աստվածաշնչի վրա²¹³:

Մովսես Խորենացին հիշատակել է Եզնիկ Կողբացուն, երբ գրում է առաջին սուրբ հայրերի գրքերի հայերեն թարգմանության նպատակով իր ընկերների հետ Եդեսիա, Կոստանդնուպոլիս և Եփեսոս մեկնելու ու այնտեղից «զստոյգ օրինակս Գրոց» իրենց հետ բերելու մասին²¹⁴:

Սուրբ Գիրքը Եզնիկ Կողբացու համար աղբյուր է ծառայել իր աստվածաբանական և փիլիսոփայական դրույթները հիմնավորելու համար: Հայ մեծ փիլիսոփայի քննարկումները կարևոր են նաև պատմագիտական տեսանկյունից, քանի որ որպես գաղափարախոսական առանցք ունենալով աղանդավորականության դեմ մղվող պայքարը կարող էին հայ պատմիչներին և հատկապես Մովսես Խորենացուն ծառայել որպես տեսական հիմք:

Այսպիսով, վաղ միջնադարյան հայ պատմիչների աշխատություններում պատմագիտական սկզբունքների կիրառման տեսանկյունից որոշակի առանձնահատկություններ են նկատվում Աստվածաշնչի օգտագործման կապակցությամբ: Կորյունի, Ազաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի և Ղազար Փարպեցու երկերի առումով այն պայմանավորված էր ժամանակագրական սահմաններով: Նրանց երկերում Աստվածաշնչի նկատմամբ պատմահամեմատական մեթոդը կիրառված է IV-V դդ. ինչպես պատմության դրվագների հետ համեմատելիս ու մեկնելիս, այնպես էլ նշանավոր անձանց վարքագրական բնութագրերը ներկայացնելիս: Աստվածաշնչի տեղեկությունները Մովսես Խորենացին «Պատմութիւն Հայոց» երկի համապատասխան մասերում միահյուսել է իր շարադրանքին, ըստ ժամանակագրական կարգի: Ընդհանրապես Մովսես Խորենացու շարադրանքին բնորոշ է ինչպես որոշ պատմական իրադարձությունների, այնպես էլ կերպարների միահյուսման հնուց եկող ոճը: Այդպիսի երևույթի

²¹³ Նշվել է, որ Եզնիկի հիմնական աղբյուրը եղել է Աստվածաշունչը (Ե. Դուրեան, Նկատողութիւններ Եզնիկի աստուածաշնչական վկայութիւններու մասին. «Ամբողջ երկեր», 2, Երուսաղէմ, 1935, էջ 365-386):

²¹⁴ Մովսես Խորենացի, էջ 341, 343:

Մովսես Խորենացու մոտ հանդիպում ենք Երվանդյանների, Տիգրանի (Տիգրան Երվանդյան և Տիգրան Բ Մեծ), Վաղարշակի և այլոց կապակցությամբ²¹⁵: Հայոց թագավորների վարքը շարադրելիս Մովսես Խորենացին անդրադարձել է նրանց հոգածությանը ժողովրդին բարեկեցիկ կյանքով ապահովելու գործում: Պատմելով Տիգրան Երվանդյանի (մ.թ.ա. VI դ.) մասին՝ Պատմահայրը գրել է. «Խաղաղութան եւ շինութեան բերող, իւղով եւ մեղու գամենայն հասակ պարարեալ»²¹⁶: Այստեղ զգացվում է Աստվածաշնչի ոճը, որտեղ կարդում ենք. «...Տէր ինքնին նշան. Ահա կոյսն յղացի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմանուել: Եւ եւ մեղր կերիցէ. մինչեւ ինչ իցէ ծանուցեալ նորա կամ ախորժեալ յառաջագոյն զչարութիւն. ընտրեսցէ զբարին»²¹⁷: «Եւ զհացն իմ զոր ետու քեզ՝ եւ զնաշիին եւ զեղ եւ զմեղր զոր քամբեցի քեզ՝ եղիր առաջի երեսաց նոցա ի հոտ անուշից»²¹⁸:

Աստվածաշնչի նկատմամբ Մովսես Խորենացու պատմահամեմատական մեթոդով մոտեցման հանգամանքը պայմանավորված էր նրա երկի՝ հնագույն ժամանակներից Հայոց բազմադարյան պատմության ընդգրկման բնույթից:

4. Առասպելներին մոտեցման պատմագիտական սկզբունքը

Մովսես Խորենացին իր դարաշրջանի ոգով Աստվածաշնչին մոտեցել է թե՛ հոգևոր տեսանկյունից և թե՛ որպես պատմական, վարքագրական ու մեկնողական կարգի գիտելիքներ պարունակող սկզբնաղբյուրի:

Պատմահոր երկի առաջին գրքի բովանդակության առանցքում է Հայոց ծագումնաբանական արմատների դիտարկ-

²¹⁵ Մովսես Խորենացի, էջ 104-108, 118-121, 127-128, 144-148, 161, 239:

²¹⁶ Մովսես Խորենացի, էջ 72, «Լա խաղաղություն և շենություն բերեց, բուրդին լիացրեց յուղով ու մեղրով» (Մովսես Խորենացի, էջ 125):

²¹⁷ «...Տերն ինքը ձեզ նշան է տալու: Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, և նրա անունը պիտի լինի Էմանուել: Յուղ ու մեղր պիտի ուտի նա. նախքան չարը ճանաչելը կամ այն ցանկանալը նա պիտի ընտրի բարին» (Ես., է. 14-15):

²¹⁸ «Դացն էլ, որ տվել էի քեզ, նաշիից, յուղն ու մեղրը, որոնցով սնել էի քեզ, - որպես անուշահոտություն նրանց առաջ դրեցիր» (Եզեկիել, ԺԶ 19):

ման ամրագրումը Աստվածաշնչի տվյալներով: Պատմահայրն իր կողմից հիշատակվող յուրաքանչյուր պատմական կերպարի կամ դրվագի մասին խոսելիս, Աստվածաշնչի վրա հիմնված ուղղակի և արտաքին սկզբնաղբյուրներից եկող փաստարկների միջև նույնիսկ հակասությունների առաջացման դեպքում, լուծումները փնտրում է՝ հաշվի առնելով Աստվածաշնչից բխող ընկալումները:

Սկզբնաղբյուրների տարաբնույթ տեղեկություններից առաջացող հակասություններից խուսափելու անհրաժեշտությունից ելնելով՝ Պատմահայրը յուրաքանչյուր դեպքում իր ուրույն վերաբերմունքն է ցուցաբերել, օրինակ՝ գրելով. «Եւ այսոքիկ գրոյցք սուտ եւ կամ թէ արդարեւ լեալ՝ մեզ չէ ինչ փոյթ»²¹⁹: Այստեղ խոսքը տարբեր տեղեկություններից առաջացած Քսիսութրոսի և նրա որդիներից Սիմ-Ջրվանի²²⁰ և Տարբանի մասին գրույցն է²²¹: Մովսես Խորենացու մոտ նաև այլ տեղեկություններ կան, որոնք նույնպես գրույցներից էին քաղվել²²²:

Գ. Սարգսյանը նշել է, որ համաշխարհային ջրհեղեղի առասպելը զարգացման երեք փուլ է անցել՝ «ամեն մի փուլում փոփոխելով գլխավոր հերոսի անունը՝ Ջիուսուդրա-Ուտնապիշտի-Նոյ...»²²³: Գիլգամեշին նվիրված շումերական դյուցազնավե-

²¹⁹ Մովսես Խորենացի, էջ 27, «Եվ այս գրույցները սուտ են թե իրոք եղած՝ մեզ համար կարևոր չէ» (Մովսես Խորենացի, էջ 94):

²²⁰ «Կողմանք արեւելից Ջրուան զՍեմ կոչեն» (Մովսես Խորենացի, էջ 26), «Արևելքի կողմերում Սեմին Ջրվան են կոչում» (Մովսես Խորենացի, էջ 94): Այստեղ միահյուսվել են սեմական ժողովուրդների անվանադիրնախնի Սեմի (Мифы народов мира, т. II, М., 1992, с. 436) և իրանական առասպելաբանությունում ժամանակն ու ճակատագիրն անձնավորող Ջրվան աստծո կերպարները (Мифы народов мира, т. I, М., 1991, с. 467):

²²¹ Մովսես Խորենացի, էջ 13, 25-26:

²²² Գնթունիների տոհմանվան ծագման մասին Պատմահայրը պամել է, որ Վաղարշակ թագավորը «զգեցուցանողս իւր զՉեռէս ի գաւակէ Քանանացոց. եւ անուն կոչէ ազգին Գնթունիս» («...զգեստներ հազցնող նշանակում է Չեռեսին, քանանացիների սերնդից և նրա ցեղի անունը դնում է Գնթունի»): Պատմահայրն ինքն է նշել, որ այս կարգի տեղեկությունը կասկած է հարուցում՝ «...ոչ գիտեմ է՛ր աղագաւ» (Մովսես Խորենացի, էջ 110, «...չգիտեմ ինչ պատճառով», Մովսես Խորենացի, էջ 154):

²²³ Գ. Սարգսյան, Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները (Հայկի և Հայկյանների առասպելի պատմականության և զարգացման փուլերի խնդիրը), ՊԲՀ, 1992, N2, էջ 35:

պում ջրհեղեղի մասին առասպելի հերոսի անունը Ջիուսուդրա-
Ուտնապիշտի է (հունարեն՝ Քսիսութրոս, ըստ Բերոսոսի)²²⁴:

Ըստ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի պատմա-
հոգևոր համակարգի, Հայկ նահապետի գլխավորած Հայկյանները՝
Արամը, Արա Գեղեցիկը... («Սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան
– Հայկ, Արամ, Տիգրան. քանզի ըստ քաջացն՝ ազգք քաջք»)՝
մարմնավորում են նախնիների պաշտամունքը Հայոց դիցարա-
նում, որի կերպարներից են արեգակնային Վահագնը (Վիշապա-
քաղ) («Երկներ երկին, երկներ երկիր, երկներ եւ ծովն ծիրանի.
երկն ի ծովուն ուներ եւ գլարմրիկն եղեգնիկ. ընդ եղեգան փող
ծուխ ելանէր, ընդ եղեգան փող բոց ելանէր. եւ ի բոցոյն վազէր
խարտեաշ պատանեկիկ. նա հուր հեր ուներ, ապա թէ բոց ուներ
մօրուս, եւ աչկունքն էին արեգակունք»), Տորք Անգեղը...²²⁵:

Պատմահայրը բարձր գնահատելով հայկական և հունա-
կան առասպելները՝ բացասական է արտահայտվել պարսից
առասպելների մասին²²⁶, դրանցում տեսնելով Իրանում III դ. կե-
սերից Սասանյանների կողմից (որոնք նաև ձգտում էին իրենց
ազդեցությունը տարածել հարևան երկրների վրա) պետական
կրոն հռչակված զրադաշտականության՝ Աքեմենյանների ժամա-
նակները (մ.թ.ա. VI դ. կես -330 թ.) հասնող արմատները²²⁷:

Մովսես Խորենացին գրել է այն բռնությունների և ավերա-
ծությունների մասին, որ III դ. 60-80-ական թթ. կատարվել էին

²²⁴ Мифы народов мира, т. I, с. 468.

²²⁵ Մովսես Խորենացի, էջ 85-86, 116, 122: Հայոց առասպելաբանական հա-
մակարգի մասին տես՝ Ս.Բ. Арутюнян, Армянская мифология, в кн: Мифы
народов мира, т. I, с. 104-106. Հայ ազգագրություն և բանահյուսություն,
նյութեր և ուսումնասիրություններ, 18, Դ.Մ. Вардумян, Дохристианские
культы армян, Еրևան, 1991, էջ 61-146: Ս.Բ. Հարությունյան, Հայոց
առասպելաբանություն, Երևան, 2000, էջ 7, 75, 109, 204 և այլն:

²²⁶ Օրինակ՝ դիմելով Սահակ Բագրատունուն՝ Պատմահայրը գրել է.
«Բայց զի՞նչ արդեօք տարփանք քեզ՝ եւ Բիրասպեայ Աժդահակայ
փծուն եւ անձոռնի առասպելքն իցեն...» (Մովսես Խորենացի, էջ 89), «Բայց
ի՞նչ ցանկություն է արդյոք, որ ունես. Բյուրասպի Աժդահակի առասպելները
փծուն ու անհեթեթ են...» (Մովսես Խորենացի, էջ 141):

²²⁷ Р. Фрай, Наследие Ирана, М., 1972, с. 117, 162-165, 302. Ս. Երեմյան, Նախշ-ի-
Ռուստեմի «Թաաբա ի Չարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայու-
թյունները Հայաստանի մասին - ՊԲՀ, 1966, N 2, էջ 68, В. Г. Луконин, Иран в III
в., М., 1979, с. 6-7.

Հայաստանում քաղաքական և հոգևոր ասպարեզներում, երբ Հայոց գահին նստել էին պարսից արքայազները: Պատմահայրը, պատմելով Հայաստանում, մասնավորապես, սասանյան արքայազն Ռմիզդ-Արտաշիի գահակալության տարիների մասին, այդ ժամանակաշրջանը բնութագրել է որպես «ամս անիշխանութեանն», երբ պարսիկ մոզերը պղծում և քանդում էին հին հայոց պաշտամունքային հուշարձանները և շինությունները²²⁸:

Տրդատ III Մեծի (297/8-330 թթ.) գահակալությամբ²²⁹ և Մծբինի 40-ամյա պարսկա-հռոմեական պայմանագրի (298 թ.) կնքումից հետո Մեծ Հայքի թագավորությունը վերականգնեց իր անկախությունը և հզորությունը:

Հայ Արշակունյաց թագավորության վերջին փուլի (IV դ. վերջ - 428 թ.) ականատեսն էր Մովսես Խորենացին: Պատմահորից ենք տեղեկանում, հատկապես, Սահակ Պարթևի կաթողիկոսության ընթացքում Սասանյանների խարդավանքների մասին: Սասանյան արքաները չէին հանդուրժել Մեծ Հայքի թագավոր Խոսրով IV-ի ինքնուրույն քայլերը: «Շապուհ էր ցասմամբ ընդ Խոսրովայ ի բարեկամանալն Արկադեայ անձամբ, եւ յանհրաման կարգել յեպիսկոպոսութիւն զմեծն Սահակ. վասն որոյ յղեալ մեղադրութիւն հանդերձ սպառնալեօք...»²³⁰: Խոսրով IV-ի փոխարեն պարսից արքունիքը Արևելյան Հայաստանում թագավոր է նշանակում նրա եղբորը՝ Վռամշապուհին:

Վռամշապուհից (388-414 թթ.) և մի քանի ամիս Հայոց գահին վերահաստատված Խոսրով IV-ից հետո Հազկերտ I-ը (399-420 թթ.) Հայոց գահին նստեցրել էր իր որդուն՝ Շապուհին, որի գահակալությունը Պատմահայրը բնութագրել է. «...անարգաբար թագաւորեալ Հայոց Շապիոյ»²³¹:

..

²²⁸ Մովսես Խորենացի, էջ 215-217:

²²⁹ Նույն տեղում, էջ 224:

²³⁰ Նույն տեղում, էջ 320-321, «Շապուհ նեղացած էր Խոսրովի վրա, որ մասնական բարեկամություն հաստատեց Արկադի հետ և առանց իր հրամանի եպիսկոպոս նշանակեց Մեծն Սահակին, ուստի նրան մեղադրություն ուղարկեց սպառնալիքով...» (Մովսես Խորենացի, էջ 320): Մովսես Խորենացու հիշատակած իրադարձությունները տեղի էին ունեցել 388 թ. ոչ շուտ, ուրեմն այստեղ խոսքը Շապուհ III-ի (383-388 թթ.) մասին է:

²³¹ Մովսես Խորենացի, էջ 332:

Հայոց վերջին Արշակունի թագավոր Արտաշես-Արտաշի-րին թագավորական իշխանությունից զրկելուց և ձերբակալելուց հետո պարսից արքա Վռամ (Վառահրան) V-ը (421-439 թթ.) հրամայել էր «նոյնպէս եւ զմեծն Սահակ, եւ զտունն կաթողիկոսական ունել յարքունիս: Եւ տալ փոխանակ նորա յաթոռ եպիսկոպոսապետութեանն Հայոց զՍուրմակն զայն»²³²: Սասանյանների բռնությունները կրոնական ասպարեզում ուղղված էին Հայ Առաքելական եկեղեցու թուլացմանը, որը Հռոմեական կայսրության սահմաններում գտնվող Կեսարիայի միտրոպոլիտների ազդեցությունից ազատ էր գործում, որպես ազգային եկեղեցի:

Մ. Օրմանյանը նշել է. «Բոլոր պատմական պարագաներն ալ կը հաստատեն, թե ոչ անոր յաջորդ Կեսարիոյ հայրապետներ, երբեք Հայաստանի վրա եկեղեցական իշխանություն չգործածեցին և գործածել չձեռնարկեցին, այլ Լուսավորիչ եւ անոր յաջորդներ ինքնագլուխ եւ անկախօրէն հովուեցին, եւ եկեղեցւոյ պէտք եղած կարգադրութիւնները հաստատեցին»²³³: Ա. Մուշեղյանն այդ իրողության մասին գրել է. «Պապ թագավորի ջանքերով Հայ եկեղեցուց վերացավ Կեսարիայի աթոռի գերիշխանությունը, իսկ Հայաստանը դադարեց լինել «Կեսարիայի աթոռի նահանգ», ինչպես համարվում էր Գրիգոր Լուսավորչի ձեռնադրման ժամանակից ի վեր»²³⁴:

Սասանյան արքունիքը, գիտակցելով Հայ եկեղեցու ազգապահպան և միավորիչ նշանակությունը հայ ժողովրդի կյանքում, պառակտիչ գործողություններ էր ձեռնարկում կաթողիկոսական իշխանության դեմ: Այդ ուղղությամբ կատարվող քայլերից էր Սուրմակի կարճատև աթոռակալությունից հետո ոմն ասորի Բրքիշոյի աթոռակալումը: Նրա օրոք Հայ եկեղեցուն հասցված վնասի մասին Պատմահայրը գրել է. «Սա եկեալ վատթար ընկերակցօք, ածեալ ընդ ինքեան եւ կանայս տնկալուչս, անժուժաբար եւ աւելորդօք եւ յափշտակութեամբ վախճանեցեալոցն վիճակաց վարեալ ամս երիս»²³⁵:

²³² Նույն տեղում, էջ 349, «...Ուոյնպես և Մեծն Սահակին, կաթողիկոսական տունը արքունիք գրավել, և նրա փոխարեն եպիսկոպոսապետության աթոռը տալ Սուրմակին» (Մովսես Խորենացի, էջ 343):

²³³ Մ. Օրմանեան, Ազգապատում, մ. Ա, էջ 92-93:

²³⁴ Ա. Մուշեղյան, Գայ եկեղեցու և Գայոց պետության փոխհարաբերությունները V դարի հայ մատենագրության մեջ - «Գայոց եկեղեցի և պետություն», Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2000, էջ 53:

²³⁵ Մովսես Խորենացի, էջ 349:

Այս ժամանակաշրջանում, նույնիսկ պարսից արքունիքի հետապնդումների պայմաններում, այնքան մեծ էր Սահակ Պարթևի հեղինակությունը, որ Բրքիշոյից հետո Վռամը խիստ սահմանափակումներով թույլ տվեց նրան վերադառնալ Հայաստան, սակայն մեկ այլ ասորի դրածոյի հետ, ինչպես հաղորդում է Մովսես Խորենացին՝ «Եւ զմեծն Սահակ արծակեալ՝ թողու ի նա գեղս սակաւս ի նորին տանէ, զի նստցի միայն յինքեան վիճակի, իշխանութիւն ունելով միայն վարդապետութեան սովորական կրօնիցն, եւ ձեռնադրութեան զայնոցիկ՝ զորոց եւ Շամուէլն յանձն առնուցու»²³⁶: Շամուէլի օրոք շարունակվեցին Բրքիշոյի ժամանակներից Սասանյանների սադրանքներով կիրառվող հալածանքները Հայ եկեղեցու և հատկապես Սահակ Պարթևի նկատմամբ:

Սահակ Պարթևը, չնայած պարսից արքայի կողմից զրկվել էր կաթողիկոսական աթոռից, այնուամենայնիվ, իր հնարավորության սահմաններում շարունակում էր հոգևոր-կրթական գործը, ինչպես հաղորդում է Պատմահայրը. «Այլ մեծն Սահակ ոչ ինչ կասեաց զհոգևոր կաթնն դիեցուցանել մանկանց եկեղեցւոյ հանդերձ Մեսրոպաւ, զոր թողեալ խարսխեաց յեկեղեցւոջն կաթողիկէ, որ ի Վաղարշապատ քաղաքի, ինքն կալով ի Բագրեւանդ գաւառի, ի տեղւոջն՝ ուր ծագեաց լոյս յերկնից ի մկրտել սրբոյն Գրիգորի զՏրդատ արքայ և զբոլոր Հայս»²³⁷: Շամուէլի մահվանից հետո, երբ նախարարները խնդրեցին Սահակ Պարթևին կրկին բարձրանալ կաթողիկոսական աթոռին, նա չհամաձայնվեց իր հրաժարումը հիմնավորելով իրեն երևացած տեսիլքով:

Պարսից արքունիքի վարած քաղաքականության հետևանքով Հայոց կաթողիկոսական աթոռի շուրջ ժամանակի ընթացքում ստեղծված անբարենպաստ մթնոլորտն արդյունք էր Հայաստանում Սասանյանների մագդեզականության (կամ զրադաշտակա-

²³⁶ Նույն տեղում, էջ 350, «Իսկ Մեծն Սահակին արծակելով՝ նրան թողնում է մի քանի գյուղ նրա (կաթողիկոսական) տանից, որպեսզի նստի միայն իր վիճակում, իրավունք ունենալով միայն՝ ուսուցանելու սովորական ուսմունքը և ձեռնադրելու նրանց, որոնց կհամաձայնի Շամուէլը» (Մովսես Խորենացի, էջ 345):

²³⁷ Մովսես Խորենացի, էջ 353-354, «Իսկ Սահակ Մեծը չէր դադարեցնում հոգևոր կաթով սնել եկեղեցու զավակներին Մեսրոպի օգնությամբ, որին նա հաստատել էր Վաղարշապատ քաղաքի կաթողիկէ եկեղեցւում, իսկ ինքը մնում էր Բագրևանդ գավառում, այնտեղ ուր երկնքից լոյս ծագեց, երբ սբ. Գրիգորը մկրտում էր Տրդատ արքային և բոլոր հայերին» (Մովսես Խորենացի, էջ 348):

նության) տարածման ծրագրի, որի արտահայտությունն էր հայերին ներկայացրած պարսից արքունիքի պահանջը՝ հրաժարվել քրիստոնեությունից և ընդունել մազդեզական կրոնը: Արտաշատում Հովսեփ կաթողիկոսի գլխավորությամբ գումարված եկեղեցական ժողովը նախարարների ու ամբողջ ժողովրդի համաձայնությամբ մերժեց Սասանյանների՝ դավանափոխ լինելու պահանջը²³⁸: Ըստ Եղիշեի, Արտաշատի ժողովը (449 թ.) և սբ. Վարդանանց պատերազմը (450-451 թթ.) հայ ժողովրդի պատասխանն էր Սասանյանների նվաճողական քաղաքականությանը:

Այսպիսի իրողությունով էր թելադրված Պատմահոր խիստ քննադատական մոտեցումը պարսից առասպելներին: Պարսից և հունական առասպելների նկատմամբ տարբեր վերաբերմունքը բխում էր քաղաքական և կրոնական իրավիճակից: Թե՛ Սասանյան Պարսկաստանը և թե՛ Արևելա-հռոմեական կայսրությունը նվաճողական քաղաքականություն էին վարում Հայաստանի նկատմամբ: Սակայն Տիեզերական եկեղեցին Քաղկեդոնի ժողովով դեռևս չէր պառակտվել, և Հայ Առաքելական եկեղեցու գավակ Մովսես Խորենացին հոգևոր միասնություն էր տեսնում նրա հետ:

Ուստի, առասպելների մասին խոսելիս Պատմահայրը, կիրառելով համեմատական մեթոդը, պարսկական առասպելներից զանազանել է հունական առասպելները՝ նշելով. «Մի՞ արդեօք յունական պերճ եւ ողորկ առասպելքն իցեն հանդերձ պատճառաւ...»²³⁹: Մովսես Խորենացին այնուհետև կարևոր ընդհանրացում է կատարել այս կարգի առասպելների պատմական արժեքի մասին, գրելով՝ «...որք զճշմարտութիւն իրաց այլաբանաբար յինքեանս ունին թաքուցեալ»²⁴⁰: Այս եզրահանգումը հին գրույցների և առասպելների ուսումնասիրության բնագավառում Պատմահոր կիրառած պատմահամեմատական մեթոդի արգասիքն է, ինչն արժեքավոր ներդրում էր հայ և համաշխարհային պատմագիտական մտքի պատմության մեջ:

²³⁸ Եղիշե, էջ 55-82, 148-242:

²³⁹ Մովսես Խորենացի, էջ 89-90, «Մի՞թե սրանք հույների պերճ ու ողորկ, պատճառաբանված առասպելներն են... » (Մովսես Խորենացի, էջ 142):

²⁴⁰ Մովսես Խորենացի, էջ 90, «...որոնց տակ այլաբանորեն թաքնված են ճշմարիտ իրողություններ» (Մովսես Խորենացի, էջ 142):

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՄՈՎԱՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԻՆ ՀԱՅՈՑ»-ՈՒՄ

1. Ծննդոց գրքի մեկնությունը Մովսես Խորենացու երկում

Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ում Ծննդոց գրքին անդրադարձները մեկնողական, առասպելաբանական և պատմաավանդական բնույթի են: Այդ երևում է արդեն իսկ հետևյալ տողերից. «Բայց ես այժմ ուրախացայց, հաւ առնելով առաջիկայիցս ինձոց բանից ի սիրելոյն իմնէ եւ քան զշատս արդարախօսողէ, ի Բերոսեանն Սիբիլայ: «Յառաջ քան զբուրգն, ասէ, եւ զբազմաբարբառն լինել ձայնի ազգի մարդկան, եւ զկնի նաւարկութեանն Քսիսութրեայ ի Հայս՝ Ջրուանն եւ Տիտանն եւ Յապետոսթէ լինէին իշխանք երկրի»: Որ ինձ թուին Սեմ, Քամ եւ Յաբեթ»²⁴¹:

Բիբլիական Նոյի որդիներին՝ Սեմին, Քամին և Հաբեթին²⁴² նույնացնելով իրանական և հունական դիցաբանությունների Ջրվանի, Տիտանի և Հապետոսթեի հետ, ինչպես նաև միախյուսելով հնդեվրոպական և սեմա-քամյան աշխարհներում պատկերացվող քառսային ուժերը մարմնավորող դիցաբանական կերպարները՝ Մովսես Խորենացին Բելին նույնացրել է «Տիտա-

²⁴¹ Մովսես Խորենացի, էջ 23, «Բայց ես այժմ կուրախանամ իմ առաջիկա խոսքերը սկսելով ինձ սիրելի և շատերից ավելի ճշմարտախոս Բերոսյան Սիբիլայից: Նա ասում է. «Նախքան աշտարակը և մարդկային խոսակցության բազմալեզու դառնալը, և Քսիսութրոսի դեպի Հայաստան նավարկությունից հետո, երկրի իշխաններ են դառնում Ջրվանը, Տիտանը և Հապետոսթեն», որ ինձ թվում են Սեմը, Քամը և Հաբեթը (Մովսես Խորենացի, էջ 92):

²⁴² Ա. Սարգսյանը նշել է. «Խորենացին Հայոց պատմությունը ներկայացրել է ոչ թե մեկուսացված, այլ համաշխարհային պատմության լայն ետնախորքում: Հնագույն ժամանակների համար դա արտահայտվում է երկշար և եռաշար ցանկերով: Նոյի Հաբեթ որդուց սերվող հայ նահապետների շարքին զուգահեռ նա ներկայացնում է Սեմի և Քամի ճյուղերը՝ մինչև համապատասխանաբար Արա Գեղեցիկ, Աբրահամ և Նինվաս, Արայան Արայից մինչև Սկայորդի...» (Ա. Սարգսյան, Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» և Մովսես Խորենացին, Երևան, 1991, էջ 95):

նեան» Կռոնոսի և Նեբրովթի հետ («Յայտարարութիւն սակաւութ, թէ ըստ արտաքնոցն ասացեալ Բելլո՝ ըստ աստուածային բանից ճշմարտութեամբ է Նեբրով... բայց ես ասեմ զԿռոնոս անուն եւ զԲելլո՝ Նեբրովթ լեալ») ²⁴³, և այնուհետև, գրելով Հայկի դեմ Բելի հարձակման մասին, վիրջինիս անվանել է «Տիտանեան» ²⁴⁴:

Մովսես Խորենացին, որպէս սկզբնաղբյուր հիշատակելով Մար Աբաս Կատինայի երկը, շարադրել է Հայկի կռիվը Բելի դեմ, որի արդյունքում Հայկը Հայոց Ձորում կործանեց «Տիտանեան» Բելին ²⁴⁵, իսկ հետագայում Հայկյան Արամը պարտության մատնեց «Տիտանեան» Պայապիս Քաաղեային:

Մար Աբասի պահպանած պատմական շարադրանքը հիմնված էր Նինվեի արքունի դիվանից հայտնաբերված մատյանի վրա, որի մասին Պատմահայրը տեղեկացնում է. «Այս մատեան հրամանաւ Աղեքսանդրի ի Քաղղեացոց բարբառոյ փոխեալ ի յոյն, որ ունի գրուն հնոցն և զնախնեացն բանս...» ²⁴⁶:

Մերժելով Ռ. Թոմսոնի անհիմն կարծիքը, թե «Հայաստանին վերաբերող արխիվային նյութերի՝ Մովսեսի կողմից վերագրումը առասպելական Մար Աբասին, ընդամենը գրական հնարք է» ²⁴⁷, Գ. Սարգսյանը Մովսես Խորենացու հաղորդումը Մար Աբաս Կատինայի մասին հավաստի է համարել՝ նշելով, որ նրա աշխատությունը հիմնական նյութ է մատակարարել Պատմահոր երկի ամբողջ Ա գրքի և Բ գրքի իննը գլուխների համար: Գ. Սարգսյանը նշել է, որ չնայած Մովսես Խորենացին Մար Աբաս Կատինային համարել է մ.թ.ա. II դարի հեղինակ, սակայն ելնելով «Մար» մասնիկի օգտագործումից, որը քրիստոնեական հատկանիշ ունի և ասորերեն նշանակում է «տեր», նա պետք է ապրած լիներ III դ. վերջին - IV դ. սկզբին: Գ. Սարգսյանը Մար Աբաս Կատինային նույնական է համարել Անանունի հիշատակած Մարա-

²⁴³ Մովսես Խորենացի, էջ 27, «Համառոտ բացատրություն, թե արտաքին հեղինակների Բել կոչածը ըստ սբ. Գրքի իսկապէս Նեբրովթն է... ես ասում եմ, թե Կռոնոս կոչվածը և Բելլո՝ Նեբրովթն է եղել» (Մովսես Խորենացի, էջ 94):

²⁴⁴ Մովսես Խորենացի, էջ 34:

²⁴⁵ Նույն տեղում, էջ 37:

²⁴⁶ Նույն տեղում, էջ 30-31, «Այս մատյանն Աղեքսանդրի հրամանով քաղղեացվոց լեզվից թարգմանած է հունարեն և պարունակում է բուն հների և նախնիների պատմությունները», Մովսես Խորենացի, էջ 97):

²⁴⁷ Moses Khoreznats'i, Introduction, p. 55.

բա Մծուրնեցու հետ²⁴⁸: Մարաբայի՝ Մծուրնացի թե Մծբնացի լի-
նելու հարցը, իր ենթադրական լուծումներով հանդերձ, չի խան-
գարում այն կարծիքին, որ թե՛ Մովսես խորենացին և թե՛ Անանու-
նը Մարաբայի Մատյանից օգտվել են իրարից անկախ:

Մովսես խորենացին, «Տիտանյանների» կապակցությամբ
հիշատակելով Աստվածաշունչը, գրել է. «Այլ զՏիտանսն եւ
զՌափայիմսն յիշեն աստուածային Գիրք»²⁴⁹:

Պատմահայրն այստեղ նկատի է ունեցել «Երկրորդ Թա-
գաւորութեանց» գրքի հետևյալ տողը. «Եւ այլազգիքն եկին հա-
սին եւ խառնեցան ի հովիտս Տիտանացն»²⁵⁰:

Աստվածաշնչի հայերեն թարգմանությունում, հետևելով
Յոթանասնիցին²⁵¹, նշվել է «հովիտս Տիտանացն» «Երկրորդ Թա-
գաւորութեանց» այն տողում, ուր սբ. Գրքի եբրայերեն բնագիրն
ունի Rephaim անուն²⁵²: Սբ. Գրքի թե՛ եբրայերեն և թե՛ հունարեն
տեքստերի նշված տներում Տիտաններ և Ռափայիմներ անուննե-
րը միասին հանդես չեն գալիս, իսկ «Պատմութիւն Հայոց»-ում
Պատմահայրը դրանք միասին է հիշատակել՝ «զՏիտանսն եւ
զՌափայիմսն»: Ուրեմն՝ Մովսես խորենացին այս առիթով իր
խոսքը ամփոփել է՝ հենվելով ինչպես հունարեն, այնպես էլ եբ-
րայերեն տեքստերի վրա: Ի դեպ, Ռափայիմներ անունը երկրան-
վան բնութագրով հիշատակված է Հեսուի գրքի երեք տեքստե-
րում էլ (եբրայերեն, հունարեն, հայերեն)²⁵³:

Հայոց ծննդաբանության կարգը մինչ Ծննդոց գրքի շա-
րադրանքի հետ համեմատելը՝ Մովսես խորենացին, դիմելով
Սահակ Բագրատունուն (V դար), գրել է. «Առ որ այսչափ միայն
ասացից. միթէ մատեա՞ն մերձ կայցէ ինձ, որպէս ասի ի Յովբ,

²⁴⁸ Мовсес Хоренаци, с. 223 прим. 67.

²⁴⁹ Մովսես խորենացի, էջ 25, «Բայց Տիտայանյաններին և Ռափայիմներին սբ.
Գիրքն էլ հիշում է» (Մովսես խորենացի, էջ 93):

²⁵⁰ «Այլազգիները եկան ու հավաքվեցին Տիտանյանների հովիտներում»
(Բ. Թագ. Ե. 18, հմմտ. Երկ. Օրնաց, Բ. 11):

²⁵¹ The Septuagint Version of the Old Testament, p. 407.

²⁵² The Hebrew-English Old Testament from the Bagster Polyglot Bible, London, 1971, 2
Samuel V. 18. Յոթանասնիցում եբրայերեն Սամուէլի գիրքը բաժանվել է երկու
գրքի, որոնք ստացել են *Առաջին և Երկրորդ* (չորս գրքերից) Թագաւորութեանց
անվանումը:

²⁵³ Յեսու, ԺԵ 8:

կամ դպրութիւն քոց հայրենեացն...»²⁵⁴: Պատմահայրն այստեղ ուրույն կերպով է ներկայացրել Հոբի գրքի այն հատվածը, որտեղ Եղիուսը հարցնում է Հոբին. «Միթէ մատեա՞ն, կամ դպի՞ր մերձ կայցէ առ իս...»²⁵⁵: Համեմատությունը Մովսես Խորենացու շարադրանքի և նրա սկզբնաղբյուրի միջև ցույց է տալիս, որ նա նախադասության երկրորդ մասն անձնավորել է Սահակ Բագրատունու առումով:

Մովսես Խորենացին հայ ժողովրդի ազգաբանությունը (ինչպես ինքն է ասում՝ «Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց») լուսաբանելիս՝ առանձնակի տեղ է տվել Աստվածաշնչի Ծննդոց գրքի մեկնությանը՝ նշելով սկզբնաղբյուրների հետևյալ շարքը.

ա) Աստվածաշունչ և եկեղեցական մատենագրություն

բ) «արտաքին հեղինակների» առասպելներ սկզբի և որոշ ժամանակների ու հայտնի անձանց մասին, որոնք համահունչ են Աստվածաշնչին

գ) հեթանոսական պատմական ավանդություններից քաղված և հավաստի համարվող տեղեկություններ²⁵⁶:

Հիմնվելով Աստվածաշնչի վրա՝ Մովսես Խորենացին նախ գրել է «Յաղագս Արմատոյն (կամ «Ժայրին») հանուր մարդկութեանս», որի վրա հիմնված է ազգաբանությունը, այնուհետև նշել է, թե «Եւ այս յայտնի է ամենեցունց, զի դժուարահաւաք եւ տաժանելի է որպէս զիւտ ժամանակացն ի սկզբանէ մինչեւ առ մեզ՝ առաւել եւս զիւտ նախարարականաց ազգաց ծննդոց յերից որդւոցն Նոյի, ցորքան կամք իցեն խուզել ումեք ըստ իւրաքանչիւր դարուց: Մանաւանդ զի աստուածայնոյն Գրոյ զիւրսն ի բաց հատեալ յինքն սեպիական ազգ՝ ելիք զայլոցն իբր զարհամարիելեացն եւ իւրոց անարժան կարգելոց բանից: Զորոց մեք սկսեալ ճառեսցուք՝ որքան է կարողութիւն, որպէս գտաք զհաւաստին ի հնոց պատմութեանց, մերով մասամբ ամենեւին անսուտ»²⁵⁷:

²⁵⁴ Մովսես Խորենացի, էջ 12, «Այս առիթով այսքան միայն կասեմ, կա՞ արդյոք իմ ձեռքի տակ մատյան, ինչպես ասված է Հոբի գրքում, կամ քո հայրենիքն ունի՞ գրականություն...» (Մովսես Խորենացի, էջ 83-84):

²⁵⁵ Յոբ ԼԷ 20:

²⁵⁶ Մովսես Խորենացի, էջ 12:

²⁵⁷ Նույն տեղում, էջ 17, «Եվ այս հայտնի է ամենքին, թե դժվարագյուտ և տաժանելի է ժամանակագրություն կազմելը սկզբից մինչև մեր ժամանակները, մանավանդ որոշելը նախարարական ցեղերի սերունդը Նոյի երեք որդիներից:

Գ. Սարգսյանը նշել է, որ Սովսես Խորենացու տեքստում «սեպհական ազգ» արտահայտության տակ «նկատի է առնված հրեա ժողովուրդը»²⁵⁸, իսկ Զ. Տրայինան գրել է. «Թեև աստվածաշնչական պատգամը տիեզերական պատգամ մըն է, սակայն Աստվածաշունչը եբրայեցիներուն համար գրված էր: Այնուհետև Պատմահայրը կներկայացնե իր սեփական պատմական կարգը ընտրությամբ»²⁵⁹:

Զ. Տրայինան, այսպիսի դիտողություն անելով, երկու հանգամանք հաշվի չի առել. նախ, որ Պատմահայրը «Պատմութիւն Հայոց»-ի Ա գրքի ողջ շարադրանքը վերնագրելով «Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց», ազգաբանական շարքերը կառուցելիս և քննարկելիս հիմնականում օգտագործել է Հին Կտակարանը²⁶⁰: Ուստի, վերոհիշյալ հատվածում «աստուածայնոյն Գրոյ» ասելով՝ Սովսես Խորենացին նկատի է ունեցել միայն Հին Կտակարանը: Եվ երկրորդ, նշելով, որ «Աստվածաշունչը եբրայեցիներուն համար գրված էր», Զ. Տրայինան աստվածաբանական տեսանկյունից անտեսել է այն հանգամանքը, որ Նոր Կտակարանի՝ ավետարանական խոսքով բոլորը հավասար են հավատքի մեջ, քանզի «զի ոչ գոյ խտիր հրէի եւ հեթանոսի, քանզի նոյն Տէր է ամենեցուն, բաւական յամենեսին ոյք կարդան առ նա. զի ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ»²⁶¹ և, ինչպես Ստեփանոս Սյունեցին (VII դարի վերջ-735 թ.) է մեկնել «Գիրք Ծննդեան Յիսուսի Քրիստոսի...» արտահայտությունը. «Գիրք լինելութեան ասեմք զլինելիութեանն, որ յաղագս մերոյ փրկութեան եղել մարդ եւ նմանեցաւ մեզ ամենելիմբ բայց ի մեղաց»²⁶²:

Որքան էլ որևէ մեկը կամենա հետազոտել ըստ դարերի, մանավանդ, որ սբ. Գիրքը յուրայիններին զատելով իբրև իր սեփական ազգ՝ մյուսներինը լքեց, իբրև արհամարհելի և իր կողմից նշանակվելու անարժան: Սրանց մասին մենք կսկսենք խոսել, որքան կարող ենք, ինչպես որ հավաստին գտանք հին պատմությունների մեջ» (Սովսես Խորենացի, էջ 87-88):

²⁵⁸ Мовсес Хоренаци, 1990, с 220, прим. 28.

²⁵⁹ Զ. Տրայինա, նշվ. աշխ., էջ 30:

²⁶⁰ «Պատմութիւն Հայոց»-ի Ա գրքում Նոր Կտակարանից մի միտք կա (Գործք, ԺԳ 19; Սովսես Խորենացի, էջ 25), որն իր հերթին բխում է Հին Կտակարանից (Յեսու, Գ. 10):

²⁶¹ Հռովմ., Ժ 12:

²⁶² Ստեփանոս Սյունեցի, էջ 15:

«Հին պատմությունների» մասին խոսելիս Մովսես Խորենացին հիշատակել է մի շարք հեղինակների՝ Բերոսոսին²⁶³, Աղեքսանդր Բազմավեպին (մ.թ.ա. I դ.), Աբյուղենոսին (II դ.) և Կեփաղիոնին (II դ. առաջին կես). որոնց աշխատությունների բովանդակության վերաբերյալ տեղեկություններ է պահպանել Եվսեբիոս Կեսարացին (260-339թթ.): Բերոսոսի աշխատությունը սկզբնաղբյուր է եղել Աղեքսանդր Բազմավեպի և Աբյուղենոսի համար: Պատմահայրը Եվսեբիոս Կեսարացու անունը հիշատակել է նրա «Եկլէսիաստէ»-ի²⁶⁴ կապակցությամբ, իսկ Բերոսոսի, Բազմավեպի և Աբյուղենոսի կապակցությամբ չնայած անվանապես չի հիշատակել Եվսեբիոսին և նրա «Ժամանակագրություն»-ը²⁶⁵, սակայն, պահպանելով այդ երկուսն էրվող վերոհիշյալ հեղինակների ժամանակագրական կարգը, նրանց հաղորդած տեղեկություններն ամփոփել է Աբյուղենոսից քաղված տողերով: Պատմահայրը «քաղղեացի Բերոսոսին» հիշատակել է որպես «զվարժ ամենայն իմաստութեամբ», իսկ հղումներ կատարելիս հիմնականում հիշատակել է Աբյուղենոսի անունը:

Ազգաբանության առնչությամբ Մովսես Խորենացու մոտեցումը սբ. Գրքին եղել է պատմահամեմատական բնույթի, իսկ ընդհանուր առմամբ՝ աստվածաբանական: Կարելի է ասել, որ նման մոտեցման յուրահատկությունը պայմանավորված էր աղբ-

²⁶³ Մովսես Խորենացին Բերոսոսին հիշատակել է որպես Եգիպտոսի թագավոր Պտղոմեոս Եղբայրասերի (Զ. ա. 285-247 թթ.) ժամանակակից, որի հորդորներով Բերոսոսը ձեռնամուխ էր եղել ուրիշ ազգերի թագավորների դիվանների և մեխյանների գրքերը հունարեն թարգմանելուն (Մովսես Խորենացի էջ 8-9): Պտղոմեոս թագավորի օրոք Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքում 72 գիտնականներ երայերենից հունարեն թարգմանեցին սբ. Գիրքը, որը կոչվում է «Եօթանասնից թարգմանութիւն» (Մովսես Խորենացի, էջ 360, ծան. 2): V դարի սկզբին *Յոթանասնից* էր կատարվել հայերեն թարգմանությունը:

²⁶⁴ Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն Եկեղեցւոյ, յեղեալ յասորոյն ի հայս, պարզաբանեալ նոր թարգմանութեամբ ի յոյն բնագրէն ի ձեռն Յ. Աբրահամ վ. Եարեան, Վենետիկ, 1877:

²⁶⁵ Գ. Սարգսյանը նշել է, որ Մովսես Խորենացին Բերոսոսի, Աբյուղենոսի և Բազմավեպի հաղորդումների առումով լայնորեն օգտագործել է Եվսեբիոս Կեսարացու՝ «Ժամանակագրութիւն» («Քրոնիկոն») և «Պատմութիւն Եկեղեցւոյ» երկերը: Եվսեբիոսի անունը Պատմահայրը բերել է միայն «Պատմութիւն Եկեղեցւոյ»-ի կապակցությամբ, իսկ «Ժամանակագրության» դեպքում, հետևելով միջնորդի անունը չբերելու իր կանոնին, այն չի հիշատակել (Мовсес Хоренаци, 1990, с 238, прим. 270):

յուրների ընձեռած հնարավորություններով, ինչպես հետևում է Պատմահոր խոսքից՝ «... մեք սկսեալ ճառեսցուք՝ որքան է կարողութիւն»: Ուստի, հիմնավորված չէ Ռ. Թոմսոնի դիտողությունը, թե Մովսես խորենացին «այստեղ պարտական է Եվսեբիոսի «Քրոնիկոնին» իր ընդհանուր մոտեցման և, ավելին՝ տոհմածառերի տեքստերի համար»²⁶⁶: Եվսեբիոս Կեսարացու և Մովսես խորենացու կողմից սբ. Գրքի հանդեպ ցուցաբերված պատմահամեմատական մոտեցման խնդիրներով պայմանավորված մեթոդաբանությունը տարբեր է:

Եվսեբիոսն օգտակար է համարել գրել սբ. Գրքից վերցված «Եբրայական նախնեացն պատմութիւն, եւ զժամանակագրութիւն»: Միևնույն ժամանակ նշելով, որ «ո՛չ յունաց... եւ ո՛չ այլոց անդստին իսկ յեբրայեցւոց մարթի հաւաստեալ ուսանել զամենայն աշխարհի զժամանակագրութիւն»²⁶⁷: Ի տարբերություն Մովսես խորենացու վերոհիշյալ մոտեցման, ըստ Ջ. Տրայինայի՝ «Եվսեբիոս դեռ կջատագովե եբրայեցիներու ճշմարտությունը, զոր խորենացին չի ժխտեր, սակայն կվիճի այդ ճշմարտության ամբողջականության մասին»²⁶⁸:

Մովսես խորենացու հոգևոր ընկալումների սկզբնաղբյուրն Աստվածաշունչն էր, որի հետ չմիաբանող որոշ պատմագիրների գրվածքները նա համարել է Սուրբ Հոգուն հակառակ («հակառակ Հոգւոյն խորհեալ») մտածողության արդյունք²⁶⁹: Մովսես խորենացու «անմիաբանությունը» վերաբերում է ինչպես «սկիզբն... ազգի մարդկան», այնպես էլ «զՆաւակառուցէն եւ զայլոց նահապետացն»: Առաջինի վերաբերյալ Պատմահայրը գրել է «Յաղագս Արմատոյն հանուր մարդկութեանս» և նրա սերունդների մասին²⁷⁰ հենվելով Աստվածաշնչի վրա, որտեղ կարդում ենք. «Այս է գիր արարածոց մարդկան, յաւուր յորում արար Աստուած զԱդամ, ըստ պատկերի Աստուծոյ ստեղծ զնա»²⁷¹:

²⁶⁶ Moses Khorenats'i, Introduction, p. 16.

²⁶⁷ Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանականց երկմասնեայ, մ. Ա, էջ 2, 5 («Չմարավոր չէ հավաստի ուսանել ամբողջ աշխարհի ժամանակագրությունը ոչ հույներից... և ոչ էլ մյուսներից և նույնիսկ՝ հենց եբրայեցիներից»):

²⁶⁸ Ջ. Տրայինա, նշվ. աշխ., էջ 30:

²⁶⁹ Մովսես խորենացի, էջ 13:

²⁷⁰ Նույն տեղում:

²⁷¹ «Աս մարդկանց ազգաբանության այն օրերի պատմությունն է, երբ Աստված

Ըստ Մովսես Խորենացու, Աստվածաշնչի հետ չմիաբանվողները տարբեր անուններ և ժամանակագրական սահմաններ են նշել:

Եվսեբիոս Կեսարացին գրել է. «Ձայս՝ Բերոսոս յառաջնում մատենին պատմեաց, եւ յերկրորդումն զթագաւորսն մի ըստ միոջէ յօրինեալ գրեաց... Ձայս ասէ եւ եւս յառաջ մատուցեալ՝ մի ըստ միոջէ կարգաւ թուէ զթագաւորս Ասորեստանեայց. Ժ. թագաւոր յԱղովրայ յառաջին թագաւորէն մինչեւ ցՔսիսութրոն. առ որով ասէ լեալ զմեծ եւ զառաջին ջրհեղեղէն, զորմէ եւ Մովսէս յիշատակէ... Ձայս՝ ըստ Բազմավեպին, Բերոսոս յառաջնում մատենին պատմէ... Արիղենայ վասն առաջին թագաւորութեան քաղղեացւոյ... Թագաւորել աշխարհին նախ զԱղովրայ ասեն. այլ վասն իւրոյ անծինն այսչափ ինչ բանք են պատմելոյ. զի զնա ժողովրդեանն ամենախնամ Աստուած եցոյց հովիւ. որ թագաւորեաց շարս Ժ»²⁷²:

Այս վերջին տողերին անդրադարձել է Մովսես Խորենացին. «Եւ զնա ամենախնամն Աստուած եցոյց հովիւ եւ առաջնորդ ժողովրդեանն... թագաւորեաց Աղովրոս շարս տասն...»²⁷³: Պատմահայրը քննադատորեն է մոտեցել Նոյին այլ կերպ անվանող և չափազանց երկար ժամանակ վերագրող հեղինակներին, միևնույն ժամանակ նշելով. «...թէպէտ եւ վասն ջրոյն սաստկութեան եւ վասն ապականութեան երկրի՝ զոյգ հոգեւորացն բարբառին բանից. նոյնզունակ եւ զթիվ նահապետացն տասն՝ Քսիսութրեաւ հանդերձ թուեն»²⁷⁴: Պատմահայրն այդպէս էլ գրել է. «...իսկ թուով նահապետացն և ջրհեղեղին յիշատակաւ՝ զոյգ և հաւասար Մովսիսի»²⁷⁵: Թվային (բայց ոչ անունների) այսպիսի

ստեղծեց Աղամին, ըստ Աստու պատկերի ստեղծեց նրան» (Ծննդ., ե. 1):

²⁷² Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանականք երկմասնեայ, մ. Ա, էջ 10, 26, 46: «Բաժանեալ զշար մի ի թիւ երից հազարաց և վեց հարիւր ամաց» (նույն տեղում, էջ 11):

²⁷³ Մովսէս Խորենացի, էջ 13, «Ամենախնամ Աստված նրան նշանակեց ժողովրդին հովիվ և առաջնորդ... Աղովրոսը թագավորեց տասը շար...» (Մովսես Խորենացի, էջ 84): Բաբելոներեն «շար» տերմինը համապատասխանում է 3600 տարվա ժամանակաշրջանին (նույն տեղում, էջ 363, ժան. 10):

²⁷⁴ Մովսէս Խորենացի, էջ 13, «...թեպէտև ջրերի սաստիկ (հորդության) և երկրի ոչնչացման վերաբերմամբ խոսում են համաձայն սբ. Գրքի պատմածին, նույնպես և նահապետների թիվը, Քսիսութրոսով միասին, տասն են հաշվում» (Մովսես Խորենացի, էջ 85):

²⁷⁵ Մովսէս Խորենացի, էջ 23, («...իսկ նահապետների թվով և ջրհեղեղի

համաձայնությունը նկատել էր դեռևս Եվսեբիոս Կեսարացին. «Եւ զի այսիւ և Աբիղէնոս զնոյն ձեւ բանից եբրայեցոց պատմութեանն զքրիեղեղէն միաբանէ, թուի ինձ թէ ամենեցուն իսկ յայտ է»²⁷⁶:

Ադամից մինչև Նոյ և վերջինից սերած Սեմից, Քամից և Հաբեթից, ըստ նրանց տոհմաշարերի՝ մինչև Աբրահամ, Նինոս և Արամ՝ սկզբնաղբյուրների հաղորդումներին անդրադառնալով՝ Մովսես Խորենացին ասում է, որ համառոտ հիշատակելու է, թե հին վիպասաններն ինչպես գրեցին իր կողմից վերը նշված անձերի մասին, նշելով՝ «թէպէտ եւ ոչ ունիմ այժմ ասել, յամբարանոցս մատենից թագաւորա՞ցն այսպէս արդեօք գտեալ, եթէ ըստ ախորժելոյ որպէս կամեցան իւրաքանչիւրքն փոփոխել զանուանս եւ զրոյցս եւ զժամանակս»²⁷⁷:

Մովսես Խորենացին այդ փոփոխությունները բացատրել է, որ կատարվել են ըստ նրանց հայեցողության («ըստ ախորժելոյ»), կամ «վասն այլ զինչ եւ իցէ պատճառաց»: Ընդ որում, նա հատկապես նշել է, թե «Որպէս ի սկզբանն երբեմն ճշմարտեն, երբեմն ստեն - որպէս յաղագս նախաստեղծին, ոչ առաջին մարդ ասելով զնա, այլ թագաւոր, սոյնպէս անուն խժական նմա եւ աննշանակ կոչելով, եւ ամս տալով երեսուն եւ վեց հազար»²⁷⁸, այսինքն՝ Ադամի կապակցությամբ այլ անուն՝ «Աղովրոս», տիտղոս և տարիներ են նշվել, իսկ նահապետների թվի և ջրիեղեղի մասին հին հեղինակների հաղորդումները համահունչ են Աստվածաշնչին:

Աստվածաշնչում Ադամից մինչև Նոյ նահապետների թիվը տասն է (Ադամ, Սեթ, Ենոս, Կայնան, Մադադաել, Յարեդ, Ենք,

հիշատակությամբ զուգընթացում են Մովսիսին», Մովսես Խորենացի, էջ 92):
²⁷⁶ Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ ժամանականք երկմասնեայ, մ. Ա, էջ 50, «Ինձ թվում է, թե ամենքին էլ պարզ է, որ Աբյուղեմոսը նույն ձևով է պատմում ջրիեղեղի մասին, ինչպես եբրայեցիների պատմությունն է»:

²⁷⁷ Մովսես Խորենացի, էջ 22, «...թեպետ ներկայումս չեմ կարող ասել, թե արդյոք թագավորների մատենադարաններում այնպես գտան, թե ամեն մեկն ըստ իր ճաշակի կամեցավ փոփոխել անունները, զրույցները և ժամանակները» (Մովսես Խորենացի, էջ 91):

²⁷⁸ Մովսես Խորենացի, էջ 22-23, «...ինչպես սկզբի մասին երբեմն ճշմարիտ են ասում և երբեմն ստում են, - օրինակ՝ նախաստեղծին չկոչելով առաջին մարդ, այլ թագավոր, նրան օտարոտի և նշանակությունից զուրկ անուն տալով երեսունվեց հազար տարվա կյանք վերագրելով» (Մովսես Խորենացի, էջ 91):

Մաթուսաղա, Ղամբք, Նոյ)²⁷⁹: Նույն թիվն է, ըստ Եվսեբիոս Կեսարացու, նաև վերոհիշյալ հին պատմագիրների մոտ, սակայն նրանք ներկայացված են որպես «զթագաւորս Ասորեստանեայց»՝ տարբեր անուններով (Աղովրոս, Աղապարոս, Աղմէդոն, Ամմէովն, Ամեգաղարոս, Դավոնոս, Եդովանքոս, Ամենփոնիոս, Ոտիարտէս, Քսիսութրոս)²⁸⁰:

Մովսես Խորենացին քննադատորեն մոտենալով Նոյի հետ Քսիսութրոսին նույնացնող հեղինակների կարծիքին՝ վերջինիս ապրած տարիներին, ահռելի թիվ վերագրելու կապակցությամբ, նշել է. «Ոչ միայն ըստ բոլորման առ ի յարեգականէ չորեքժամանակեան ըստ մեզ լինելոյ տարւոյն՝ հեռանայ յամաց մերայնոցն, մանաւանդ թէ եւ յաստուածայնոցն, այլ եւ ոչ որպէս Եգիպտացիքն զլուսնականսն հաշուեն ծագմունս...»²⁸¹:

Նշված պատմագիրների անմիաբանությունը սբ. Գրքի հետ (ըստ Մովսես Խորենացու բացատրության, որպես Սուրբ Հոգուն հակառակ մտածողության արդյունք), թերևս այն իրողության արտացոլումն էր, որ Բերոսոսը և Բազմավեպը, ապրելով նախաքրիստոնեական ժամանակաշրջանում, չէին կարող ծանոթ լինել Սուրբ Երրորդության գաղափարին՝ ըստ Նոր Կտակարանի, իսկ Աբյուդենոսը, ապրելով քրիստոնեական դարաշրջանում, հավասար կերպով չի մոտեցել Հին և Նոր Կտակարաններին, այ-

²⁷⁹ Ծնն. Ե. 3-32, Թ. 29:

²⁸⁰ Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ ժամանականք երկմասնեայ, մ. Ա, էջ 11, 31:

²⁸¹ Մովսես Խորենացի, էջ 13-14, «Այս ըստ արեգակնային չորս ժամանակյա տարու (հաշվելով), ոչ միայն չի համապատասխանում մեր տարիներին, մանավանդ նաև Աստվածաշնչի, այլև հեռանում է եգիպտացիների տարիներից, որոնք լուսնի ծնունդներով են հաշվում» (Մովսես Խորենացի, էջ 85): Ըստ Ա. Սարգսյանի, «նախաքրիստոնեական ժամանակների հավատալիքների՝ հեթանոսության պատմությունը Մովսես Խորենացու երկում այնպիսի կուռ ամբողջականություն և անընդհատություն չի կազմում, ինչպես քրիստոնեական եկեղեցունը: Սա հասկանալի է և բացատրելի մախ, հավամաբար, համապատասխան աղբյուրների բացակայությամբ և ապա՝ անշուշտ, քրիստոնյա պատմիչի դարաշրջանի պահանջներով: Եվ, այնուամենայնիվ, պարզ զգացվում է, որ նա աշխատել է իր ձեռքի տակ եղած տեղեկություններն ու տվյալները ամենացորդ օգտագործել՝ դրանք իրար կապելով ու կապակցելով» (Ա. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 97):

լապես կնկատեր, որ, Նոյին Քսիսութիւնս անվանելով՝ անհամա-
ձայնութիւն էր առաջանում նաև Նոր Կտակարանի հետ²⁸²:

Մովսես Խորենացին վաղմիջնադարյան քրիստոնէական
դավանաբանութեանը հարազատ՝ սկսել է այնտեղից, «յորոց եւ
այլքն, որք յեկեղեցւոջ եւ ոյք ըստ Քրիստոսի»: Մովսես Խորենա-
ցին պատմաքննական մոտեցում է ցուցաբերել այլ կարծիքների
նկատմամբ, որոնք սկզբնաղբյուրային որոշակի արժէք ունեն:
Պատմահայրը, ներառելով դրանք իր հետազոտութիւնների աս-
պարեզում, գրել է. «Արդ օրէն էր մեզ աստանօր գկարծիս նոցա
յայտնել ըստ կարողութեան, թէ զինչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ
խորհեցան այսպէս զայսոսիկ գրել. այլ վասն երկարութեան առա-
ջիկայ գործոյս՝ այլում տեղւոյ եւ ժամանակի զայսոսիկ թողեալ,
հատցուք աստանօր զբանս, սկսանելով յաղագս այսորիկ՝ որպէս
եւ հաւատացեալ ենք»²⁸³:

Միևնույն ժամանակ Պատմահայրը, հիմնվելով Ծննդոց
գրքի վրա, աստվածաբանական կարգի մեկնութիւններ է արել,
ինչպէս նաև քննել է Հայոց ազգաբանութեան սկզբնավորումը:
Այս հարցը հետազոտելով՝ Ջ. Տրայինան նշել է, որ Ա գրքի 5-րդ
գլխում «Նոյի հաջորդներուն ցանկ մը կհաստատեն, որ Ծննդոց
Գրքին թեև կնմանի, բայց զոր արդարեւ ի հնոց պատմութեանց
կքաղէ»²⁸⁴:

Մովսես Խորենացին մեկնողական բնույթի նշում է կատա-
րել Ադամի կապակցութեամբ: «Ադամ ճշմարտապէս աստուա-
ծաստեղծ. եւ սա բերանոյ Աստուծոյ առեալ ասի պատուէր, այլ եւ
յանցուցեալ եւ ի թագստեան եղեալ՝ զՈ՛ւր ես-ն յԱստուծոյ եւ ոչ
յայլմէ ումեքէ հարցանի»: Պատմահայրն ընդգծել է, որ «Ո՛ւր ես»

²⁸² Նոր Կտակարանում տապանով փրկությունը համեմատված է մկրտության
հետ և Նոյը անվանված է «արդարության քարոզիչ» (Ա Պետր., Գ. 20-21, Բ
Պետր., Բ. 5):

²⁸³ Մովսես Խորենացի, էջ 14, «Պետք է այստեղ իսկապէս նրանց կարծիքներն
ըստ մեր կարողության բացատրել, թե նրանցից յուրաքանչյուրը ի՞նչ մտածեց
այս բաները այսպէս գրել. բայց մեր առաջիկա գործի երկարութեան պատ-
ճառով՝ այդ բանը կթողնենք ուրիշ տեղի և ժամանակի և մեր խոսքը կընդ-
հատենք այստեղ, ու կսկսենք պատմել հետևյալի մասին, ինչպէս որ համոզված
ենք» (Մովսես Խորենացի, էջ 85):

²⁸⁴ Ջ. Տրայինա, նշվ. աշխ., էջ 30:

հարցը եւ հանցանքի պատժի մասին խոսքը Ադամը լսել էր Աստծուց եւ ոչ ուրիշ մեկից²⁸⁵։ Վերջինիս «Ճշմարտապէս աստուածաստեղծ» համարելով՝ Պատմահայրը իր հոգևոր ընկալումն է ներկայացրել Ադամի կապակցությամբ Աստվածաշնչի հաղորդման նկատմամբ²⁸⁶։

Հիշատակելով նաև Աբելին («մերձաւոր եւ ծանօթ Աստուծոյ լեալ՝ պատարագ մատուցանէ, եւ ընկալեալ լինի») ²⁸⁷, Մովսեսը Խորենացին եզրակացրել է, Ադամը և Աբելը «յընդունելութիւն եւ ծանօթութիւն Աստուծոյ լեալ»²⁸⁸։ Այսպէս Խորենացին հանգում է Աստվածաշնչի՝ այն տողին, որում ասվում է, որ Ենովսը «յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ»²⁸⁹։ Խորենացին մեկնել է. «Ենովս, որ առաջին յուսացաւ կոչել զԱստուած»²⁹⁰։ Նա Ենովսի մասին ասվածի կապակցությամբ ընդգծում է, որ «Առաջին սա ասի կոչել զԱստուած»²⁹¹։ Եթե Ադամը և Աբելը Աստծուց ընդունված էին, ապա ինչո՞ւ է այդպէս ասվում Ենովսի մասին։ Այս հարցին է, որ Պատմահայրը փորձել է պատասխան գտնել քրիստոնեական աստվածաբանության հիման վրա։

Մովսեսը Խորենացին անդրադարձել է Ադամի վարքին՝ նրա դրախտում եղած ժամանակ. Աստծուց ընդունված լինելուն հաջորդում է նրա հանցանքը, որի համար պատիժը նա լսում է Աստծո բերանով, «Քանզի ի պատուիրազանցութեան գտեալ

²⁸⁵ Մովսեսը Խորենացի, էջ 14:

²⁸⁶ Ծննդ., Ա. 27, Ե. 1: Եղիշեն (V դար) այսպէս է մեկնել այս տողը. «Մարդ ոչ մարմնով, այլ մտաւք է պատկեր Աստուծոյ» (տե՛ս Լ. Խաչիկյան, Եղիշէի «Արարածոց մեկնութիւնը», էջ 242):

²⁸⁷ Մովսեսը Խորենացի, էջ 14, «...Աստուծուն մերձավոր ու ծանօթ լինելով՝ նրան զոհ է մատուցանում, որ ընդունելի է լինում» (Մովսեսը Խորենացի, էջ 85):

²⁸⁸ Մովսեսը Խորենացի, էջ 15:

²⁸⁹ Ծննդ., Դ. 26: Հմմտ. «Ենովս մեկնի մարդ. և առեալ լինի այժմ սա, ո՛չ խառնուածն, այլ՝ հոգւոյն բանական մասն՝ միտքն. որում դէպ եղև առանձին գոլ յուսալ. քանզի անասուն կենդանիքոյ յուսոյ անբաժք են: Եւ յոյս՝ նախախտութիւն իմն է խնդութեան. յառաջ քան զխնդութեան՝ արեաց ակնկալութիւն է» (Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ՚ի Հայս, որ են մեկնութիւն Ծննդոց եւ Ելից, ճառք ՚ի Սամփսոն, ի Յովնան եւ յերիս մանկուսն կամ ՚ի հրեշտակս, հայերէն բնագիր և հանդիպարիր լատիներէն թարգմանութիւն, աշխատասիրութեամբ Մ. Ավգերեանց, Վենետիկ, 1826, էջ 55):

²⁹⁰ Մովսեսը Խորենացի, էջ 14:

²⁹¹ Նույն տեղում, էջ 15:

առաջինն ի մարդկանէ՝ ի դրախտէն եւ Աստուծոյ, չարին աղա-
գաւ, որպէս ասացեալ է, գտանի արտասահմանեալ»²⁹²:

Եղիշեն քննադատորեն է մոտեցել այն հեղինակներին,
որոնք, շեղվելով Աստվածաշնչից, մարդու դրախտում գտնվելու
առումով ինչ-որ ժամանակագրական սահմաններ են նշել: Նա
գրել է. «Համարձակեցան ոմանք, յարտաքնոցն, ասել լինել մար-
դոյն ի դրախտն զհազար ամ... Իսկ այլք՝ յընտանեաց, Խ օր ասա-
ցին»²⁹³:

Ըստ Մովսես Խորենացու, պատվիրանազանցությունն էր
պատճառը, թե ինչու Ադամը չէր կարող կոչել Աստծուն: Ծննդոց
գրքում Ադամի պատվիրանազանցության կապակցությամբ
«հանցանք» բառը չի հիշատակվում: Այնտեղ ասված է. «Անի-
ծեալ լիցի երկիր ի գործս քո»²⁹⁴: «Հանցանք» բառն այս առթիվ
կիրառված է Նոր Կտակարանում, ուր գրված է. «Ձի որպէս ի մի-
ջոցէ մարդոյ մեղք յաշխարհ մտին եւ ի մեղայ անտի՝ մահ, եւ այն-
պէս յամենայն մարդիկ տարածուեցաւ մահ որով ամենեքին մե-
ղան... թագաւորեաց մահ յԱդամայ մինչեւ ի Մովսէս եւ ի վերայ
չյանցուցելոցն ըստ նմանութեան յանցուածոցն Ադամայ»²⁹⁵:

Մովսես Խորենացին իր մեկնությունը կատարել է Նոր
Ուխտի ոգով, ինչից բխել է նաև նրա եզրակացությունը Ենովսի
մասին. «Ուրեմն յօգնականութիւն կոչէ սա զԱստուած»²⁹⁶: Պատ-
մահայրը «յուսացաւ կոչել» արտահայտությունը մեկնել է՝ «յօգ-
նականութիւն կոչել», ինչը, կարելի է ասել, բխում է Նոր Կտա-
կարանից, ուր կարդում ենք. «Ձի յուսով ապրեցաք... Նոյնպէս եւ
Հոգին ի թիկունս հասնէ տկարութեանս մերում»²⁹⁷: Այս ոգով է
Մովսես Խորենացին մեկնել Ծննդոց գրքի վերոհիշյալ տողերը:

²⁹² Նույն տեղում: «Որովհետև մարդկանցից առաջինը պատվիրազանց գտնվե-
լով՝ իր գործած չարիքի պատճառով արտաքսվեց դրախտից և Աստծու (տեսու-
թյունից) ինչպես ասված է» (Մովսես Խորենացի, էջ 85):

²⁹³ Լ. Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», էջ 243:

²⁹⁴ Ծննդ. գ. 17:

²⁹⁵ «Ինչպես մարդու միջոցով մեղքն աշխարհ մտավ, և մեղքով էլ՝ մահը,
այնպես էլ բոլոր մարդկանց մեջ տարածվեց մահը, որովհետև բոլորն էլ մեղան-
չեցին... մահը թագավորեց Ադամից մինչև Մովսես նույնիսկ նրանց վրա, որոնք
Ադամի հանցանքի նման հանցանք չգործեցին» (Հռովմ., Ե. 12, 14):

²⁹⁶ Մովսէս Խորենացի, էջ 15:

²⁹⁷ «Հույսով փրկվեցինք... Նույնպես և Հոգին օգնության է հասնում մեր

Աղամից մինչև Նոյ Ծննդոց գրքի տողերը մեկնելիս՝ Պատմահայրը նշել է, թե «սկսանելով յաղագս այսորիկ՝ որպէս եւ հաւատացեալ ենք»²⁹⁸: Նոյի հետ կապված շարադրանքում դրսևորվել են Մովսես Խորենացու թե՛ աստվածաբանական և թե՛ պատմագիտական մոտեցումները. Պատմահայրը նախ հոգևոր կարգի մեկնություն է կատարել, այնուհետև՝ «հնախոսների» հաղորդած տարաբնույթ տեղեկությունների քննություն: Նա հատուկ ուշադրություն է դարձրել Ծննդոց գրքում Նոյին վերաբերող «որդի» և «հանգստացնել» բառերի վրա այն տողերի առումով, որտեղ բերվում են վերջինիս հոր՝ Ղամեքի խոսքերը. «Սա հանգուսցէ զնեզ ի գործոց մերոց, եւ ի տրտմութեանց ձեռաց մերոց, եւ յերկրէ գոր անէժ Տէր Աստուած»²⁹⁹: Պատմահայրը գրել է. «Եւ ընդէ՞ր արդեօք զսա միայն որդւոյ անուամբ յորջորջեաց, իսկ վասն այլոցն ամենեցուն պարզաբար ասաց, թէ ծնան»³⁰⁰:

Նոյը որպես «որդի» հիշատակվելու կապակցությամբ Մովսես Խորենացին հոգևոր իմաստ է տեսել և կատարել հետևյալ մեկնությունը. «Իսկ որդւոյ անուամբ մեծարեաց զնա Գիր՝ իբրեւ զյայտնի եւ զնշանաւոր եւ զարժանաւոր ժառանգ հայրենեացն առաքինութեանց»³⁰¹: Ղամեքի խոսքերը, ըստ Պատմահոր, մեղքից մաքրվելու՝ ապաշխարելու խորհուրդ էին պարունակում, ինչպես հետևում է Նոյին վերաբերող նրա մեկնությունից, քանի որ «հանգուսցէ» բառը Մովսես Խորենացին մեկնել է «ջնջումն» իմաստով:

տկարություններին» (Հռովմ., Ը. 24, 26): Հին Կտակարանում ասվում է Տիրոջ վրա հույս դնողների մասին (Երեմ., ԺԷ 7, Դան., ԺԳ 60): Նոր Կտակարանում՝ հույսի մասին խոսելիս, բոլորի հույսը համարվում է Հիսուս Քրիստոս (Մատթ., ԺԲ 32, ԻԷ 43, Բ. Կորնթ., Ա. 11, Եփես., Ա. 12, Փիլիպ., Բ. 19, Ա. Տիմ., Դ. 10):

²⁹⁸ Մովսես Խորենացի, էջ 14:

²⁹⁹ «Սա մեզ կհանգստացնի մեր գործերից մերոց, մեր ձեռքերի ցավերից և այն երկրից, որ անիծեց Տեր Աստված» (Ծննդ., Ե. 29):

³⁰⁰ Մովսես Խորենացի, էջ 16, «Եվ ինչո՞ւ արդյոք միայն սրան որդի անունով կոչեց, իսկ բոլոր մյուսների մասին պարզաբար ասաց, թե սերեցին» (Մովսես Խորենացի, էջ 87):

³⁰¹ Մովսես Խորենացի, էջ 16, «Իսկ որդի անունով մեծարեց սբ. Գիրքը (Նոյին), իբրև հայտնի ու նշանավոր մարդու և հայրենական առաքինությունների արժանավոր ժառանգի» (Մովսես Խորենացի, էջ 87):

Այսպիսով, ինչպես Մովսես խորենացին է ասում Նոյի մասին՝ «ընդդէմ իմն մարգարէանայ հայրն»³⁰²: Պատմահայրն այստեղ ևս իր մեկնությունը կատարել է Նոր Կտակարանի ոգով: Նա գրել է «Որ եղել ոչ հանգիստ, այլ ջնջումն որ ինչ միանգամ ի վերայ երկրի: Ինձ թուի՝ հագուցանելն դադարեցուցանել է. իսկ դադարեցուցանելն՝ զամբարշտութիւն եւ զչարիս, սատակմամբ մարդկան զագրագործաց... Քանզի գեղեցկաբար ասաց, թէ «ի գործոց մերոց», որ է յանօրէնութեանց, «եւ ի տրտմութենէ ձեռաց», որովք կատարեմք զպղծութիւնս: Բայց եւ հանգչին արդարեւ ըստ այսմ մարգարէութեան ոչ ամենեքին, այլ կատարեալքն յառաքինութեան ոգիք, յորժամ չարիք որպէս հեղեղաւ ջնջեալ մաքրին, իբր առ Նոյի մուլեալքն ի չարիս»³⁰³:

Մովսես խորենացին, խոսելով Առաքինությամբ կատարյալ ոգիների մասին, աստվածաբանական այնպիսի կարևոր եզր է շոշափել, որպիսին Աստվածաշնչում հոգևոր կատարելություն խորհրդանշող³⁰⁴ և հայ վաղմիջնադարյան պատմագիտական³⁰⁵ ու մեկնողական գրականության մեջ արտացոլված «Աստուծոյ որդիներ» արտահայտությունն է³⁰⁶:

Ջրհեղեղի մասին Հին Կտակարանի շարադրանքը հետևյալ կերպ է մեկնված Նոր Կտակարանում. «Յաւուրս Նոյի յորս տապանն կազմէր, յորս նուազունք, այսինքն ոգիք իբրեւ ութ, ապրեցան ի ջրոյն. Որ եւ զձեզ ըստ նմին օրինակի կացուսցէ մկրտութիւնն... Աստուած... եւ ոչ ի սկզբանն աշխարհի խնայեաց. բայց զուրբորդն զՆոյ՝ զարդարութեանն քարոզ, պահեաց ի

³⁰² Մովսես խորենացի, էջ 16, «Սրա մասին հայրն ինչ որ հակառակ բան է զուշակում» (Մովսես խորենացի, էջ 87):

³⁰³ Մովսես խորենացի, էջ 16, «...որ իրոք եղավ ոչ թե հանգիստ, այլ ջնջում ամեն բանի, որ երկրի վրա կար: Ինձ թվում է, թե «հանգստացնելը» նշանակում է դադարեցնել, իսկ դադարեցնելը՝ ամբարշտություն է և ամբողջ չարիքը (վերացնելն է)... որովհետև գեղեցիկ ասաց, « մեր գործերից», այսինքն՝ անօրինություններից, և «ձեռքերի նեղությունից», որոնցով պղծություն ենք կատարում: Բայց ըստ այս մարգարեության հիրավի հանգչում են, բայց ոչ բոլոր, այլ առաքինությամբ կատարյալ հոգիները, երբ չարիքներն, որպես հեղեղելով ջնջված, մաքրվում են, ինչպես Նոյի ժամանակ չար գործերի անձնատուր մարդիկ» (Մովսես խորենացի, էջ 87):

³⁰⁴ Մատթ., Ե. 9:

³⁰⁵ Եղիշէ, էջ 220:

³⁰⁶ Ստեփանոս Սիւնեցի, էջ 33:

ջրհեղեղ է աշխարհի ամպարշտելոցն ածեալ»³⁰⁷: Կարելի է ասել, որ այս ոգով է Մովսես Խորենացին կիրառել «հանգուցանել» բառի հոմանիշ «հանգչել» բառը ջրհեղեղից փրկված՝ առաքինության բնույթի կատարյալների կապակցությամբ: «Առաքելական հայրեր» անվանվող հեղինակներից սբ. Կղեմեսը (I դ. երկրորդ կես – II դ. առաջին տասնամյակ) գրել է. «Նոյը քարոզեց ապաշխարություն, եւ հնազանդվողները փրկվեցին»³⁰⁸: Այսպիսով, Մովսես Խորենացու մեկնությունները՝ համաաշխարհային ջրհեղեղից ոչնչացվածների և փրկվածների մասին՝ խարսխված են Աստվածաշնչից բխող հոգևոր ընկալումների վրա:

Մովսես Խորենացին Նոյի և ջրհեղեղի մասին խոսում է ըստ Աստվածաշնչի, իսկ ջրհեղեղից փրկվածների մասին՝ համաձայն Բերոսյան Սիբիլայի և Ուլիմպիոդորոսի պահպանած՝ Քսիստորոսի ի Հայս կատարած նավարկության վերաբերյալ տեղեկության: Ընդ որում՝ Արարատի («Արարող և Այրարատ» տարընթերցումներով) մասին էլ խոսվում է Հայկի ու Բելի կռվին վերաբերող, ինչպես նաև Երեմիայի մարգարեությունից բերված վերոհիշյալ հատվածներում: Շարադրանքի այսպիսի կարգը վկայություն է, որ Պատմահայրը, ինչպես ինքն է նշել, օգտագործել է տարբեր բնույթի սկզբնաղբյուրներ:

Գ. Սարգսյանը քննել է Մովսես Խորենացու օգտագործած սկզբնաղբյուրների նկատմամբ Ռ. Թոմսոնի գերքննադատ մոտեցման հարցը (օրինակ, առանց որևիցե հիմնավորման, նա հավանական է համարել, որ «Ուլիմպիոդորոս»-ը Մովսես Խորենացու կեղծանունն է³⁰⁹) է, նշելով, որ «Պատմութիւն Հայոց»-ում օգտագործված սկզբնաղբյուրներից կատարված հղումներին ժամանակակից պահանջներով մոտեցումը, ինչպես այդ անում է Թոմսոնը, «նշանակում է կոպիտ սխալ կատարել»³¹⁰:

³⁰⁷ «...Նոյի օրերը, երբ տապանն էր շինվում: Այդ օրերին քչերը, այսինքն՝ ուր հոգի փրկվեցին ջրից: Սկրտությունն էլ, ըստ նույն օրինակի, ապրեցնում է ձեզ... Աստված... չխնայեց նաև հին աշխարհին, երբ ամբարիշտների աշխարհի վրա ջրհեղեղ բերեց... փրկելով միայն ութ հոգու, այդ թվում նաև Նոյին՝ արդարության քարոզչին» (Ա. Պետր., գ. 20-21, Բ. Պետր., Բ. 5):

³⁰⁸ The Apostolic Fathers, vol I, First Epistle of Clement to the Corinthians, VII. 6, p. 21.

³⁰⁹ Moses Korenats'i, Introduction, p. 15; I, 6 (p. 79, n. 11).

³¹⁰ Мовсес Хоренаци, с. XXX.

Մովսես Խորենացու մոտ ակնհայտ է Հայք=Արարատի երկիր, Այրարատյան թագավորություն անվանումների նույնությունը³¹¹, և այդ կապակցությամբ հետևյալ առանձնահատկությունն է նկատվում: Պատմահայրը Նոյի և նրա որդիների մասին՝ Աստվածաշնչի հաղորդմանը զուգահեռ, Բերոսյան Սիբիլայի տեղեկությունը բերելիս (Նոյը հիշատակված է Քսիսութրոս անունով)՝ նշել է Հայք անվանումը. «...զկնի նաւարկութեանն Քսիսութրեայ ի Հայս՝ Ջրուանն եւ Տիտանն եւ Յապետոսթէ լինէին իշխանք երկրի»³¹², «Ուլիմպիոդորոս...», այսպէս ասաց. «...յետ նաւելոյն Քսիսութրեայ ի Հայս եւ դիպելոյ ցամաքի...»³¹³: Ավելին, այստեղ հիշատակված Հայք անվան հետ մեկտեղ Պատմահայրն այդ զրույցի շարունակությունում բերում է նաև Հայքի լեռներից՝ Սիմ և գավառներից՝ Տարոն ու Ջարավանդ, իսկ վայրերից՝ Տրոն անվանումները: Պատմահայրը գրել է, որ Նոյի որդիներից Սեմը, գնալով դեպի հյուսիս-արևմուտք, հանդիպում է փոքր դաշտի մի երկայնանիստ լեռան մոտ, որի միջով գետ էր հոսում դեպի Ասորեստանի կողմերը, «դադարէ առ գետովն... եւ անուանէ յանուն իւր զլեռանն Սիմ, եւ դառնայ անդրէն յարեւելս հարաւոյ, ուստի եկն: Իսկ ի կրտսերագունից որդւոցն նորա Տարբան անուն... մեկնեալ ի հօրէն՝ բնակէ անդէն ի նոյն գետեգեր, յորոյ անուն եւ գաւառն անուանէ Տարան, եւ գանուն տեղոյն ուր բնակեցան՝

³¹¹ Տե՛ս Գ. Ղ. Ինժիճեան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Սեծ Հայք, Վենետիկ, 1822, էջ 376: Գ. Ղեւոնդ վրդ. Ալիշան, Այրարատ, էջ 11-12: Բ. վրդ. Գեորգեան (ճուղուրեանց), Խորենացուն Խորենացով պետք է հասկանալ, Ա և Բ հատորներ, Վաղարշապատ, 1899, Բ հատոր, էջ 40-68: G. Abgarjan, Selbstbild der Armenier. S. 104-105:

³¹² Մովսես Խորենացի, էջ 23, «...Քսիսութրոսի դեպի Հայք նավարկությունից հետո, երկրի իշխաններ են դառնում Ջրվանդ, Տիտանը և Հապետոսթեն» (Մովսես Խորենացի, էջ 92): Անհրաժեշտ է հիշել, որ Աստվածաշնչում հիշատակվող «լեռինս Արարատայ» արտահայտության («նստաւ տապանն յեթներորդում ամսեանն ի քսան եւ յեթն ամսոյն ի լեռինս Արարատայ», Ծճնդ. Ը.4) փոխարեն լատիներեն Վուլգատա տարբերակում «montes Armeniae» անվանումն է («requievitque arca mense septimo vicesima septima die mensis super montes Armeniae» (Genesis 8.4, Biblia Sacra Vulgata):

³¹³ Մովսես Խորենացի, էջ 25-26, «Ուլիմպիոդորոսը... այսպէս ասաց. «...Քսիսութրոսը նավեց դեպի Հայք և ցամաքի հանդիպեց...» (Մովսես Խորենացի, էջ 93-94), հմմտ. Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ ժամանականք երկմասնեայ, մ. Ա, էջ 36-37:

կոչէ Յրօնս. զի անդ զառաջինն սկիզբն եղեւ բաժանելոյ որդւոց նորա ի նմանէ... կողմանք արեւելից Ջրուան զՍեմ կոչեն, եւ Ջարուանդ զգաւառն անուանեալ ասեն մինչեւ ցայժմ»³¹⁴:

Այս կապակցութեամբ Գ. Սարգսյանը հետևություն է արել, թէ Հայկից առաջ Հայկական լեռնաշխարհը, «ըստ Մովսէս Խորենացու, այցելել են ոչ թէ նրա նախնիները՝ Թորգոմը, Թիրասը, Գամերը կամ ինքը՝ Հաբեթը, այլ Նոյի մյուս որդի Սեմը՝ իր որդի Տարբանի հետ, որոնց հետնորդներին էլ Հայկը հանդիպում է լեռնաշխարհի տարբեր վայրերում»³¹⁵: Սակայն Մովսէս Խորենացին քննական մոտեցմամբ անվստահություն է ցուցաբերել նման զրույցների նկատմամբ՝ նշելով. «Եւ այսոքիկ զրոյցք սուտ եւ կամ թէ արդարեւ լեալ՝ մեզ չէ ինչ փոյթ»³¹⁶: Պատմահայրը նաև նշում է այս կարգի առասպելական զրույցների աղբյուրը. «Բայց առաւել յաճախագոյն հինքն Արամագնեայց ի նուագս փանդիռան եւ յերգս ցցոց եւ պարուց զայսոսիկ ասեն յիշատակաւ»³¹⁷:

2. Աստվածաշնչական աշտարակաշինության ավանդության արձագանքը «Պատմութիւն Հայոց»-ում

Մովսէս Խորենացին Աստվածաշնչում նկարագրված բաբելոնյան աշտարակի կործանման ավանդույթի շարունակության հետ է կապել Հայկի և Արարատի երկրի («...յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ գնայ յերկիրն Արա-

³¹⁴ Մովսէս Խորենացի, էջ 26, «...գետի մոտ նա կանգ է առնում... լեռն իր անունով կոչում է Սիմ և վերադառնում է արևելահարավ՝ որտեղից որ եկել էր: Իսկ նրա կրտսերագոյն որդիներից Տարբան անունով... հորից բաժանվելով բնակություն է հաստատում հենց այնտեղ նույն գետի ափին, որի անունով էլ զավառը կոչվում է Տարոն, իսկ այն տեղը, որտեղ բնակվեց, կոչվում է Յրոնք. որովհետև այնտեղ առաջին անգամ որդիները բաժանվեցին նրանից... արևելքի կողմերում Սեմին Ջրվան են կոչում, իսկ զավառը՝ Ջարուանդ մինչև այսօր» (Մովսէս Խորենացի, էջ 94):

³¹⁵ Գ. Խ. Սարգսյան, Նախահայրենիքի, ժողովրդի կազմավորման և Ուրարտուի մասին, ՊԲՀ, N 1, 1990, էջ 37:

³¹⁶ Մովսէս Խորենացի, էջ 27, «Եվ այս զրույցները սուտ են թէ իրոք եղած՝ մեզ համար կարևոր չէ...» (Մովսէս Խորենացի, էջ 94):

³¹⁷ «Բայց ավելի հաճախ Արամյան ազգի ծերունիները փանդիռների նվազակցությամբ ցուցների և պարերի երգերում հիշատակում են այս բաները» (նույն տեղում):

րադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ»³¹⁸), Բելի ներխուժման («Ապա զօրածողով լինի ի վերայ նորա Տիտանեանն Բէլ ամբոխիս հետեւակ զօրաց. զայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադմեայ»³¹⁹) մասին դրվագները, ինչպես նաև անմիջականորեն հենվել է Երեմիայի մարգարեության վրա³²⁰, ինչը վկայում է նրա պատմական հայեցակարգի մասին՝ Բաբելոնի դեմ գործող ուժերի համախմբման վերաբերյալ³²¹:

Հայկի և Բելի հակամարտության նախապատմության մեջ Պատմահայրը, անդրադառնալով Բաբելոնյան աշտարակաշինությանը, գրել է. «յաշտարակագործութենէն մինչեւ առ մեզ ի հասողութիւն քեզ ի մերումս ածել ջանասցուք պատմութեան...»³²²:

Աշտարակագործութեան մասին Մովսես Խորենացին իր շարադրանքը հիմնել է ոչ թե ուղղակի Աստվածաշնչի, այլ աստվածաշնչական ավանդույթի՝ Մար Աբաս Կատինայի գտած «Մատյանում» արտացոլված և փոխակերպված տարբերակի վրա: Պատմահայրը շատ լավ տեղյակ էր Աստվածաշնչի տեքստի շարադրանքին իր ամբողջության մեջ, քանի որ, ինչպես հետևում է իր իսկ վերոհիշյալ հաղորդումից, նա Աստվածաշնչի գրաբարյան թարգմանությունը լեզվաոճական խմբագրություն կատարողների խմբի մեջ է եղել: Իսկ քանի որ աշտարակաշինության հարցը Պատմահորը հետաքրքրել է Հայոց պատմության տեսանկյունից, նա նյութեր է քաղում Մար Աբասի օգտագործած «Մատյանից»: Մովսես Խորենացին գրել է. «Յայսմ մատենէ Մար Աբաս Կատինայ զմերոյ ազգիս միայն հանեալ զպատմութիւն հաւաստի՝ բերէ առ Վաղարշակ արքայ ի Մծբին յոյն եւ ասորի

³¹⁸ Մովսես Խորենացի, էջ 33, «Բաբելոնում Արամնյակ որդին ունենալուց հետո, չվեց գնաց Արարադի (ձեռագրական տարբերակներում նշված է *Արարատեան*, ինչը համահունչ է Աստվածաշնչի բնագրին) երկիրը, որը գտնվում է հյուսիսային կողմերում» (Մովսես Խորենացի, էջ 99):

³¹⁹ Մովսես Խորենացի, էջ 34, «Այն ժամանակ Տիտանյան Բելը զորք է ժողովում նրա դեմ և հետևակ զորքի մեծ բազմությամբ գալիս հասնում է հյուսիս՝ Արարադ երկիրը, Կադմոսի մոտ» (Մովսես Խորենացի, էջ 100):

³²⁰ Երեմ., ԾԱ 2:

³²¹ Մովսես Խորենացի, էջ 67:

³²² Նույն տեղում, էջ 28, «աշտարակաշինությունից սկսած մինչև ներկա ժամանակներս պատահած բոլոր բաները ջանանք մեջ բերել մեր պատմության մեջ...» (Մովսես Խորենացի, էջ 95):

գրով»³²³: Պատմահոր հաջորդ շարադրանքը, որը ներկայացնում է Մար Աբասի երկից հատվածաբար կատարված մի վիպագրություն, իր մեջ շաղկապել է հին առասպելաբանությունների դիցաբանական պատկերացումներն Աստվածաշնչում նկարագրված աշտարակաշինության թեմայի հետ:

«Մատյանում» ներկայացված պատմության սկզբի մասին Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ում կարդում ենք. «Ահեղք եւ երեւելիք առաջինքն ի դից, եւ աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի եւ բազմամարդութեան: Եւ ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայիցն, անհեղեղք, յաղթանդամք մարմնով եւ վիթխարիք. որք յլացեալ ամբարտաւանութեամբ՝ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն, եւ ի նոյն լինէին ի գործ անկեալք. յոր հողմ ահագին իմն աստուածային շնչեցեալ ի դիցն ցասմանէ՝ ցրէ զամբարտակն, եւ մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ, աղմուկ շփոթի ի մէջ արկանէին: Յորոց մի էր եւ Յապետոսթեանն Հայկ, անուանի եւ քաջ նախարար, կորովածիզ եւ հաստաղեղն»³²⁴:

Աստվածաշնչում աշտարակաշինության մասին կարդում ենք. «Եւ էր ամենայն երկիր լեզու մի, եւ բարբառ մի ամենեցուն: Եւ եղեւ ի խաղալն նոցա յարեւելից՝ գտին դաշտ մի յերկրին Սեւաար, եւ բնակեցան այնդ: Եւ ասեն այր ցընկեր իւր, Եկայք արկցուք աղիւս, եւ թրծեսցուք զայն հրով: Եւ եղեւ նոցա աղիւսն ի տեղի քարի եւ կուպր ի տեղի եւ շաղախոյ: Եւ ասեն, Եկայք շի-

³²³ Մովսես Խորենացի, էջ 31, «Մար Աբաս Կատինան այս մատյանից հանելով միայն մեր ազգի հավաստի պատմությունը հույն և ասորի գրերով՝ բերում է Մծբին՝ Վաղարշակ թագավորին» (Մովսես Խորենացի, էջ 98):

³²⁴ Մովսես Խորենացի, էջ 31-32, «Աստվածներից առաջիններն ահեղ և երևելի ու աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի և բազմամարդության սկիզբը: Սրանցից առաջ եկան հսկաների սերունդը, անհեթեթ, հաղթանդամ, վիթխարի մարդիկ, որոնք ամբարշտությամբ հղանալով ծնան աշտարակաշինության անօրեն խորհուրդը, որը և ձեռնարկեցին իրագործելու: Աստվածների ցասումից ինչ-որ ահագին և աստվածային հողմ փչելով ցրում է աշտարակը (Պատմահայրը ասում է «ցրէ զամբարտակն», այլ ոչ թե «կործանում է աշտարակը», ինչպես թարգմանված է աշխարհաբար) մարդկանց յուրաքանչյուրին տալիս է (մյուսներին) անհասկանալի լեզուներ, որով նրանց մեջ սղմուկ և շփոթություն է ընկնում: Սրանցից մեկն էր Հապետոսթյան Հայկը, անվանի և քաջ, կորովածիզ և հաստաղեղ նախարար» (Մովսես Խորենացի, էջ 98):

նեսցուք մեզ քաղաք եւ աշտարակ, որոյ լինիցի զլուխն մինչ եւ յերկինս: ...Եւ ասէ Տէր, Ահա ազգ մի եւ լեզու մի ամենեցուն, եւ զայդ սկսան գործել... եւ արդ ոչինչ պակասէ ի նոցանէ, զամենայն զոր ինչ յօժարեսցին գործել. Եկայք իջցուք եւ խառնակեսցուք անդ զլեզուս նոցա, զի մի՛ լսիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ: Եւ սփռեաց զնոսա Տէր Աստուած անտի ընդ երեսս ամենայն երկրի, եղեւ դադարեցին ի շինելոյ զքաղաքն եւ զաշտարակն: Վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա Խառնակութիւն. զի անդ խառնակեաց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի, եւ անտի ցրուեաց զնոսա Տէր Աստուած ընդ երեսս ամենայն երկրի»³²⁵:

Աշտարակաշինության մասին Աստվածաշնչի տեղեկության համեմատությունը «Մատյանի» հետ ի հայտ է բերում որոշ բովանդակային տարբերություններ, որոնց առկայությունը պայմանավորված էր վերջինիս ստեղծման ժամանակաշրջանով և միջավայրով:

«Մատյանում» արարչությունը տրված է հունական և իրանական դիցաբանական համակարգերի համաձայն: Ըստ առաջինի՝ աշխարհն առաջացել է քառսից, երկիրը՝ Պեան, ու երկինքը՝ Ուրանոսը, ծնել են տիտաններին³²⁶: Իսկ ըստ երկրորդի՝ իրանական դիցարանի զլխավոր աստված համարվող բարումարմնավորում Ահուրա-Մազդան (որը նույնական է հունական

³²⁵ «Այն ժամանակ ողջ երկիրը մեկ լեզվով, մեկ բարբառով էր խոսում: Արևելքից տեղաշարժվելու ժամանակ նրանք Սեննաար երկրում մի դաշտ գտան և բնակվեցին այնտեղ: Նրանք միմյանց դիմելով՝ ասացին. «Եկեք աղյուս շինենք, ու այն թրծենք կրակով»: Աղյուսը նրանց համար ծառայեց իբրև քար, իսկ կուպրը՝ իբրև շաղախ: Նրանք ասացին. «Եկեք մեզ համար քաղաք կառուցենք և աշտարակ, որի գագաթը հասնի մինչև երկինք... Տերն ասաց. «Արանք մեկ ժողովուրդ են, ունեն մեկ լեզու և սկսել են այդ գործն անել: Արդ, ոչինչ չի խանգարում նրանց, որ կառուցեն այն, ինչ կամենում են: Արի իջնենք և խառնենք նրանց լեզուն այնպես, որ ոչ մեկը չհասկանա իր ընկերոջ ասածը»: Տեր Աստվածն այնտեղից նրանց սփռեց աշխարհով մեկ, և նրանք դադարեցին քաղաքն ու աշտարակը կառուցել: Դրա համար այն կոչվեց Խառնակություն (Բաբելոն), որովհետև Տեր Աստված այնտեղ խառնեց ամբողջ երկրի բնակիչների լեզուները, և այնտեղից նրանց սփռեց ողջ աշխարհով մեկ» (ԾԱՆՈՒ., ԺԱ. 1-9):

³²⁶ И. Д. Рожанский, Развитие естествознания в эпоху античности, М., 1979, с. 129, 150.

պանթեոնի գլխավոր աստծու՝ Ջևսի հետ) մարմնավորում էր արարչական սկիզբը³²⁷:

Եթե, ըստ Աստվածաշնչի, ուղղակի մարդիկ էին, ովքեր ձեռնարկեցին աշտարակաշինությունը, ապա ըստ «Մատյանի», այդ գործին ձեռնամուխ եղան հսկաները, որոնք հիշեցնում էին հունական առասպելաբանության տիտաններին: Նմանապես տարբեր են աշտարակաշինությունը կասեցնելու մասին տեղեկությունները: Ըստ Աստվածաշնչի, Աստված խառնում է մարդկանց լեզուները, իսկ ըստ «Մատյանի»՝ «աստվածային հողմն» է կործանում «ամբարտակը»: Ուշագրավ է, որ Մովսես խորենացին այս կապակցությամբ մեկ անգամ հիշատակել է «աշտարակաշինություն» բառը, այնուհետև կիրառել է «ամբարտակ» բառը:

Աստվածաշնչում էլ խոսքը ոչ թե աշտարակի քանդելու մասին է, այլ լեզուները «խառնելու» և այնուհետև «սփռելու» «ընդ երեսս ամենայն երկրի»: «Ամբարտավան» բառը, ինչպես նշել է Հր. Աճառյանը, համեմատվում է պահլավերեն ձևին, որը ծագում է «լցնել» արմատից, որից և ամբար, ամբարել, ամբարտակ. ամբարտավանը նշանակում է բուն «լցեալ, լի հպարտությամբ»³²⁸: «Ամբարտավան» և «ամբարտակ» բառերի իմաստային նման կապը նկատի է ունեցել Մովսես խորենացին, երբ «ամբարտակ»³²⁹ բառն օգտագործել է որպես «աշտարակ» բառի հոմանիշ, այսինքն՝ «ամբարտավանությամբ» լցված մարդկանց «աշտարակ», որտեղից «աստվածային հողմը» նրանց «ցրում է»³³⁰:

Կարելի է ասել, որ Մովսես խորենացին պատահական չէր ընտրել «Մատյանի» սկզբնամասը, ուր խոսվում է թե՛ արարչության, թե՛ աշտարակաշինության և թե՛ ազգաբանության մասին: Ընդ որում, քանի որ նախորդ գլուխներից մեկում Աստվածաշնչի մեկնությունը նա սկսել է ոչ թե արարչությունից, այլ

³²⁷ P. Фрай, ук. соч., с. 134, История древнего Востока, М., 1979, с. 321.

³²⁸ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 150:

³²⁹ «Ամբարտակ» բառը ՆԲՂԼ-ում բացատրված է որպես «շինուած ամբարձեալ յերկրէ յերեւելի բարձրութեան. որպէս Բուրգն. աշտարակն Բաբիլոնի», (ՆԲՂԼ, հ. Ա, էջ 55):

³³⁰ ՆԲՂԼ, հ. Բ, էջ 919:

Աղամից, ուստի այստեղ Խորենացին ինչ-որ չափով լրացրել է այդ բացը, սակայն ոչ թե աստվածաշնչյան, այլ առասպելաբանական մի այլ համակարգի միջոցով:

Իր հերթին լեզուների և «դիցն» («աստվածների») մասին «Մատյանի» տեղեկությունը որոշ չափով տարբերվում է Աստվածաշնչի հաղորդումից: Քանի որ Աստվածաշնչում խոսքն ընդհանրապես մարդկանց և Աստծո մասին է, ապա ասվում է, որ «խառնակեց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի», իսկ «Մատյանում» «հսկաների սերնդի, վիթխարի մարդկանց» մեջ է «աղմուկ և շփոթություն ընկնում» մարդկանցից յուրաքանչյուրին անհասկանալի լեզուներ տրվելու պատճառով: Եվ միայն դրանից հետո է ասվում, որ Հապետոսթյան Հայկը խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնության դեմ այն ժամանակ, «ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի»³³¹:

«Մատյանի» այս հաղորդումը համահունչ է Աստվածաշնչի հետևյալ արտահայտությանը. «...ընդ երեսս ամենայն երկրի»³³²: Հենց այստեղ էլ ավարտվում է Նոյից նրա որդիներին՝ Սեմին, Քամին և Հաբեթին, ինչպես նաև աշտարակաշինությանը և բաբելոնյան «խառնակությանը» վերաբերող Աստվածաշնչի ընդհանուր շարադրանքը: Դրանից հետո Ծննդոց գրքում խոսվում է Սեմից սերող սերունդների («ծնունդք Սեմայ») մասին³³³: Իսկ Մովսես Խորենացին, հետևելով Մար Աբաս Կատինայի միջոցով «Մատյանից» քաղված տեղեկություններին, գրել է Հայկի և նրա սերունդների մասին:

Հաջորդ իրադարձությունների աշխարհագրությունը, ըստ «Մատյանի», ընդգրկում է Բաբելոնից հյուսիս գտնվող Արարատի երկիրը: Աստվածաշնչային ետաշտարակաշինության ժամանակների մասին Մովսես Խորենացին նշել է. «Անդ մուլեզնեալ այր իւրաքանչիւր, սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով՝ ջանային տիրել ի վերայ միմեանց. ու պատահմունք ի դէպ ելանէին Բելայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր: Որում ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելո-

³³¹ Մովսես Խորենացի, էջ 32, «...երբ մարդկային ազգը սփռվում, տարածվում էր ամբողջ երկրի լայնության վրա...» (Մովսես Խորենացի, էջ 98):

³³² Ծննդ., ԺԱ 9:

³³³ Նույն տեղում, ԺԱ 10:

նի չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդու վք իրովք եւ դստերք եւ որդուց որդու վք, արամբք զօրաւորօք, թուով իբրեւ երեքհարիւր, եւ այլովք ընդոժնօք... Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց եւ տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամանեկայ»³³⁴:

Այստեղ հիշատակված «ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն» հասկացությունը³³⁵, թերևս, իր հիմքում ունի Աստվածաշնչի տեղեկությունները, թե՛ ջրհեղեղից հետո աշխարհով մեկ սփռված մարդկանց եւ թե՛ աշտարակաշինության խափանվելուց հետո «անտի ցրուեաց գնոսա Տէր Աստուած ընդ երեսս ամենայն երկրի»³³⁶ վերաբերյալ: Երկու դեպքում էլ առկա են Աստվածաշնչից եկող ընդհանրական բնույթի հասկացությունները:

Մովսես Խորենացին աստվածաշնչային վկայությունները դիտարկել է համամարդկային ծագումնաբանության պատմության ենթատեքստում, ինչն առկա է նաև Հայաստանի տարածքում հնագույն ժամանակներում ապրածների մասին նրա շարադրանքում՝ «բայց սքանչելի իմն ասէ պատմագիրն, թէ ի յոլով

³³⁴ Մովսես Խորենացի, էջ 33, «Այս ժամանակ (Բաբելոնում - Ն. Դ) ամեն մի մարդ, կատաղած, սուրն ընկերի կողն էր հարվածում, ձգտում էին մեկը մյուսի վրա տիրելու: Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և ամբողջ երկիրը գրավել: Սրան Հայկը չկամենալով հնազանդվել, Բաբելոնում Արամանյակ որդին ունենալուց հետո, չվեց գնաց Արարադի երկիր, որը գտնվում է հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, զորավոր մարդկանցով՝ թվով մոտ երեք հարյուր հոգի, և ուրիշ ընդոժիններով... Գնում բնակվում է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց ցրվածներից: Հայկը նրանց իրեն հնազանդեցնելով՝ այնտեղ կալվածական բնակելի տուն է շինում և տալիս է ժառանգություն Կադմոսին՝ Արամանյակի որդուն» (Մովսես Խորենացի, էջ 99):

³³⁵ Այս մարդկանց ևս մեկ անգամ նկատի ունենալով և հենվելով Մար Աբասի երկի վրա՝ Պատմահայրը գրել է. «Ի հարաւոյ կողմանէ դաշտիս (Հարք - Ն. Դ.) այսորիկ, առ երկայնանստեղ միով լեռամբ, բնակեալ յառաջագոյն արք սակաւոք, ինքնական հնազանդեալ դիւցազինն (Հայկ - Ն. Դ.)» (Մովսես Խորենացի, էջ 33), «...այս դաշտի հարավային կողմում, մի երկայնամիստ լեռան մոտ, ապրելիս են եղել առաջուց սակավաթիվ մարդիկ, որոնք կամովին հնազանդվել են դյուցազնին» (Մովսես Խորենացի, էջ 100):

³³⁶ ԾՆՆՂ., ԺԱ 9:

տեղիս գտանէին բնակեալք ի մարդկանէ յերկիրս մերում ցան եւ ցիր սակաւք յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնւոյն Հայկայ»³³⁷: Այդ մարդկանց էթնիկական պատկանելության մասին Մովսէս Խորենացին չի հիշատակել, այլ նա նրանց մասին գրել է՝ հենվելով Աստվածաշնչի վրա («Եւ էին որդիք Նոյի որ ելին ի տապանէ անտի, Աէմ, Քամ, Յաբեթ... Երեք սոքա էին որդիք Նոյի, եւ ի սոցանէ սփռեցան ընդ ամենայն երկիր»)՝³³⁸:

Պատմահոր վերոհիշյալ տեղեկությունների հիման վրա կարծիք է հայտնվել, թե նախքան Հայկի գալը Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում բնակչություն էր ապրում, որը հնազանդվեց դյուցազնին³³⁹: Սակայն, անհրաժեշտ է հիշել, որ տասնամյակներ առաջ Ասլան Շահնազարյանը, ուշադրություն դարձնելով Պատմահոր այն հաղորդման վրա, որում ասվում է, որ Հայկը «անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այս ինքն թէ հարք են աստէն բնակեալք...»³⁴⁰, և, հենվելով՝ նրա՝ «Աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք»³⁴¹ հաղորդումման վրա, կարևոր եզրակացության է հանգել՝ «հայերը տեղական ծագում ունեին եւ ոչ թե եկվոր էին դրսից»³⁴²:

Աշտարակաշինության վերաբերյալ շարադրանքներում նմանություն է նկատվում Անանունի և Ազաթանգեղոսի հաղորդումների միջև մի արտահայտության կապակցությամբ: Ազաթանգեղոսը գրել է. «Իսկ յղութիւն նոցա ծնոյց զանլուր միմեյանց

³³⁷ Մովսէս Խորենացի, էջ 39, «Բայց սքանչելի մի բան է ասում պատմագիրը, թե շատ տեղերում ցիրուցան բնակվում էին սակավաթիվ մարդիկ մեր երկրում նախքան մեր բնիկ նախնի Հայկի գալուստը» (Մովսէս Խորենացի, էջ 104):

³³⁸ «Նոյի՝ տապանից դուրս եկած որդիներն էին Սեմը, Քամը, Հաբեթը... Այս երեքն էին Նոյի որդիները, և ժողովուրդները սրանցից սերվելով տարածվեցին ողջ երկրի վրա» (Ծննդ., Թ 18):

³³⁹ Мовсес Хоренаци, с. XXXVII.

³⁴⁰ Մովսէս Խորենացի, էջ 33: Հմմտ. Անանունի հաղորդումը, ուր ասված է. «...կոչեցաւ անուն դաշտին այնորիկ Հարք, յանուն Հարցն» (Սեբեոս, էջ 48):

³⁴¹ Նույն տեղում, էջ 37: Հմմտ. Անանունի գրվածքի հետևյալ տողը. «Իսկ երկիրն ըստ նմին պատշաճի կոչեցաւ անուն Հայք, որ են հայազամբք հանդերձ» (Սեբեոս, էջ 49):

³⁴² Նա հաշվի է առել նաև Գ. Ղափանցյանի բացատրությունը. «Հայկը... հայ ցեղի անունն է կրում և յուր մեջ անձնավորում է այդ ցեղի և ազգության կազմավորումը» (Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 217, Ասլան Շահնազարյան, նշվ. աշխ., էջ 188):

ծայնիցն շփոթութիւն»³⁴³: Ըստ Անանունի՝ «Ի մեծ երկանցն աշտարակին յղութիւն ծնանելով ցրէր ընդ մեծ անապատ անթիւ, որ ի կայս անլուրս ծայնից անդադար ի վերայ առն ընկերի առնոյր սուրն Տիտան. յորում առաջին թագաւորեաց ի վերայ երկրի»³⁴⁴: Մովսես Խորենացին, այս ենթատեքստում օգտագործելով «յղացեալ» և «ծնան» բառերը, իրար է շաղկապել Աստվածաշնչում նկարագրված «նախաջրհեղեղյան» և «ետջրհեղեղյան» ժամանակներին վերաբերող տեղեկությունները³⁴⁵: Աստվածաշնչում կարդում ենք. «Եւ եղև իբրև սկսան մարդիկն բազմանալ ի վերայ երկրի, եւ դուստերք ծնան նոցա: Տեսեալ որդւոցն Աստուծոյ զդստերս մարդկան զի գեղեցիկ էին, առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին: ...Եւ սկայք էին ի վերայ երկրի յաւուրսն յայնոսիկ. եւ յետ այնորիկ իբրև մտանէին որդիքն Աստուծոյ առ դուստերսն մարդկան, եւ ծնան իւրեանց որդիս, նոքա էին սկայքն որ յաւիտենից արք անուանիք»³⁴⁶: Ամենայն հավանականությամբ, այս հատվածում հիշատակվող հսկաներին է նկատի ունեցել Մովսես Խորենացին, երբ, հիշատակելով Մար Աբաս Կատինայի երկը, գրել է նրանց մասին: Աստվածաշնչում Աստծո որդիներին և նրանցից ծնված «ազգ սկայիցն»՝ հսկաներին վերաբերող շարադրանքից հետո ասվում է, որ մարդկանց չարագործությունները բազմացան երկրի վրա և «իբրև ետես Տէր Աստուած եթ բազմեցան չարիք մարդկան ի վերայ երկրի, եւ ամենայն ոք խորիէր ի սրտի իւրում խնամով ի չարիս զամենայն աւուրս: Եւ ստրջացաւ Աստուած զի արար զմարդն ի վերայ երկրի, եւ մտախոհ եղև ի սրտի իւրում: Եւ ասէ Տէր Աստուած, ջնջեցից զամենայն մարմին զոր արարի յերեսաց երկրէ...»³⁴⁷: Այ-

³⁴³ Ագաթանգեղոս, էջ 319:

³⁴⁴ Սեբեոս, էջ 48:

³⁴⁵ Մովսես Խորենացի, էջ 31-32:

³⁴⁶ «Երբ սկսեցին մարդիկ բազմանալ երկրի վրա և դուստրեր ունեցան, Աստծու որդիները տեսնելով որ մարդկանց դուստրերը գեղեցիկ են, կին առան նրանց, ում ընտրեցին...Այդ օրերին հսկաներ էին ապրում երկրի վրա: Երբ Աստծու որդիները մարդկանց դուստրերի հետ պառկեցին, իրենց համար որդիներ ծնեցին: Նրանք այն հսկաներն էին, որոնք հնուց ի վեր անվանի մարդիկ էին» (Օճննդ., 2 1-4):

³⁴⁷ «Երբ Տեր Աստված տեսավ, որ մարդկանց չարագործությունները բազմա-

նուհետև Աստվածաշնչում նկարագրվում է ջրհեղեղը, որից հետո Նոյի որդիների՝ Սեմի, Քամի և Հաբեթի սերունդները «սփռեցան ընդ ամենայն երկիր»³⁴⁸:

Մովսես Խորենացու մեկնությամբ Մար Աբասի տեղեկության մեջ իրար են շաղկապվել Աստվածաշնչի տեղեկությունները «նախաջրհեղեղյան» հսկաների և «ետջրհեղեղյան» աշտարակաշինության մասին: Մար Աբասի երկում, ըստ Պատմահոր, կարդում ենք, որ այդ հսկաները «յղացեալ ամբարտաւանութեամբ՝ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն»³⁴⁹: Այսպիսով, մի կողմից Մովսես Խորենացու, իսկ մյուս կողմից՝ Ագաթանգեղոսի և Անանունի այս հարցի կապակցությամբ մեկնությունները տեքստային առանձնահատկություններ ունեն:

Իր հերթին, Մար Աբասի երկի պարունակած տեղեկությունը լեզուների մասին նույնպես որոշ չափով տարբերվում է Աստվածաշնչի հաղորդումից: Քամի որ Աստվածաշնչում ընդհանրապես մարդկանց կապակցությամբ է ասվում՝ «խառնակեաց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի», իսկ «Մատյանում» «հսկաների սերնդի վիթխարի մարդկանց» մեջ է «աղմուկ և շփոթություն ընկնում»՝ մարդկանցից յուրաքանչյուրին անհասկանալի լեզուներ տրվելու պատճառով: Դրանից հետո է ասվում, որ այն ժամանակ, երբ «ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի»³⁵⁰, Հապետոսյան Հայկը, խրոխտանալով, ձեռք բարձրացրեց Բելի բռնավորության դեմ:

Այսպիսով, Մովսես Խորենացու՝ ետջրհեղեղյան ժամանակաշրջանին վերաբերող շարադրանքի հիմքում Աստվածաշունչն է և հին հեղինակների երկերում արված աստվածաշնչային վկայությունների մեկնությունները:

նում են երկրի վրա, և ամեն ոք իր մտքում ամեն օր խնամքով չարագործություններ է նյութում, զոջաց Աստված, որ մարդ է ստեղծել երկրի վրա, և տրտմեց իր հոգու խորքում: Տեր Աստված ասաց. «Երկրի երեսից վերացնելու եմ իմ ստեղծած ամեն մի եակ...» (Ծննդ., 2 5-7):

³⁴⁸ Ծննդ., Թ 19:

³⁴⁹ Մովսես Խորենացի էջ 31-32:

³⁵⁰ Նույն տեղում, էջ 32:

3. Հայոց ազգաբանությունը «ազգերի ծննդաբանության» լույսի տակ

Մովսես Խորենացին, անդրադառնալով Նոյից սերող երեք որդիների աստվածաշնչյան ծննդաբանությանը, առաջին հերթին գրել է ժամանակագրական և տոհմաբանական կարգի հետազոտական դժվարությունների մասին³⁵¹: Ընդ որում՝ «նախարարականաց ազգաց ծննդոց յերից որդւոցն Նոյի» արտահայտությունում «նախարարականաց»-ը օգտագործված է «նահապետական» իմաստով³⁵²:

Այս դժվարությունը հաղթահարելու նպատակով Պատմահայրը սկզբնաղբյուրային քննություն է կատարել մնացյալ ազգերի կապակցությամբ, ինչպես ինքն է ասում՝ «Զորոց մեք սկսեալ ճառեսցուք՝ որքան է կարողութիւն, որպէս գտաք զհաւաստին ի հնոց պատմութեանց, մերով մասամբ ամենեւին անսուտ»³⁵³: Այս վերջին նշումը կարևորվում է նրանով, որ Մովսես Խորենացին, Նոյի երեք որդիներից սերող ազգաբանության հիմքը վերցնելով Աստվածաշնչից, համապատասխան մեկնությունները և Քամից ու Հաբեթից սերող ճյուղերի մասին լրացուցիչ նյութերը ներկայացրել է՝ իր խոսքով ասած, «հնոց պատմութեանց», որոնք նա ճշմարիտ է համարել: Դրանց շարքին է պատկանում Աբյուդենոսի «Մանր ազգաբանությունը», որն «աստ ուրեմն ոմանք բարձին»³⁵⁴: Իր աշխատանքի արդյունքը Պատմահայրը հետևյալ կերպ է նախաբանել. «Իսկ դու, ո՛վ ուշիմ ընթերցասէրդ, հայեաց աստանօր ընդ հաւասարութիւն կարգի երից ազգացդ մինչև ցԱբրահամ, ցՆինոս և ցԱրամ, եւ զարմացիր»³⁵⁵:

Զ. Տրայինայի կարծիքով՝ Մովսես Խորենացին «Հայոց պատմության» V գլխի սկզբում «կապացուցանե թե անկարելի է շարադրել Հայաստանի հնագույն պատմությունը լոկ Աստվածաշնչի և Եվսեբիոսի միջոցով», քանզի՝ «կվիճի այդ ճշմարտության ամբողջականության մասին: ...V գլուխին մեջ Նոյի հաջորդ-

³⁵¹ Նույն տեղում, էջ 17:

³⁵² ՆԲՅԼ, հ. Բ, էջ 399:

³⁵³ Մովսես Խորենացի, էջ 17:

³⁵⁴ Նույն տեղում, էջ 21:

³⁵⁵ Նույն տեղում, էջ 17:

ներուն ցանկ մը կհաստատե, որ Ծննդոց գրքին թեև կնմանի, բայց զոր արդարև ի հնոց պատմութեանց կբաղէ»³⁵⁶:

Հենվելով «հնոց պատմութեանց» վրա՝ Պատմահայրը Հայոց ազգաբանության սկզբնավորումը կապել է աստվածաշնչյան ազգաբանության հետ՝ իր հետազոտությունը կառուցելով նաև այլ սկզբնաղբյուրներից բերված տեղեկությունների քննական-համեմատական եղանակով: Միևնույն ժամանակ նա՝ իր տարակուսանքն է հայտնել աղբյուրներում նկատվող անհամաձայնությունների կապակցությամբ: Պատմահայրն իր մտահոգությունը հայտնել է Սահակ Բագրատունուն, որին անվանել է «ուսումասէր այր»: Մովսես Խորենացին՝ հենվելով իր կողմից նշված սկզբնաղբյուրների վրա, անդրադարձել է հայոց ազգաբանությանը: Արդի պատմագիտությունը, հենվելով պատմագրության, համեմատական լեզվաբանության, հնագիտության, մարդաբանության, պատմական աշխարհագրության, առասպելաբանության և դիցաբանության վրա հնագույն ցեղերի և ժողովուրդների առաջացումը կապում է լեզվական ընդհանրությունների «նախահայրենիքների» հետ: Այսպես, համալիր հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհը՝ հայ ժողովրդի բնօրրանը, ընդգրկել է «հնդեվրոպական նախահայրենիքի»³⁵⁷ զգալի մասը³⁵⁸:

Անդրադառնալով սկզբնաղբյուրների հաղորդումներին՝ Ադամից մինչև Նոյ և նրանից սերված Սեմ, Քամ և Հաբեթ ու նրանց սերունդները, Մովսես Խորենացին ասում է, որ համառոտ խոսքերով հիշատակելու է, թե հին վիպասաններն ինչպես գրեցին նրանց մասին, միևնույն ժամանակ նշելով՝ «Թէպէտ եւ ոչ ոնիմ այժմ ասել, յամբարանոցս մատենից թագաւորա՞ցն այսպէս

³⁵⁶ Ջ. Տրայիմա, նշվ. աշխ., էջ 30:

³⁵⁷ Вяч. Вс. Иванов, Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Вахаггу - ՊԲՀ, 1983, №4, с. 32-33; Т.В.Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, т. 2, с. 895, 912, 914.

³⁵⁸ Գ. Բ. Չահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987, էջ 73-76: Գ. Ե. Джаукян О соотношении хайасского и армянского языков - ՊԲՀ, 1988, № 2, с. 86, Օ. Карагезян, Проблема этногенеза и самоназвания армянского народа по клинописным источникам - «Լրաբեր» հաս. գիտ., 1988, № 7, с. 57-76, Է. Դանիելյան. Հին Հայաստանի պատմության հայեցակարգային հիմնահարցերը պատմագրության մեջ, ՊԲՀ, № 3, 2003, էջ 30-37:

արդեօք գտեալ, եթէ ըստ ախորժելոյ որպէս կանեցան իւրաքան-
չիրքն փոփոխել զանունս եւ զրոյցս եւ զժամանակս»: Պատմա-
հայրն այդ փոփոխութիւնները բացատրում է կամ որպէս նրանց
հայեցողութեան («ըստ ախորժելոյ») արդյունք, կամ էլ՝ «վասն այլ
զինչ եւ իցէ պատճառանաց»³⁵⁹:

Վաղ միջնադարյան հայ պատմագրութիւնը զարգանում
էր ազգային ավանդական հենքի վրա՝ անտիկ դարաշրջանից
եկող և քրիստոնեական ոգով մշակվող սկզբունքներով: Քրիստո-
նեությունը ավելի քան մեկ ու կես դար առաջ պետական կրոն
հռչակած Հայաստանում,՝ ինչպես և վաղ միջնադարյան մյուս
քրիստոնեական երկրներում պատմագիտական ընդհանրացում-
ները համապատասխանեցվում էին Աստվածաշնչին, ինչպես Խո-
րենացին է գրել. «Եւ սկսայց՝ յորոց եւ այլքն, որք յեկեղեցւոջ եւ
ոյք ըստ Քրիստոսի»³⁶⁰:

Մովսես Խորենացու քննական մոտեցումը սկզբնաղբյուր-
ների հաղորդումներին՝ ազգերի ծագումնաբանութեան մասին,
նրա գիտական սկզբունքայնութեան դրսևորումն է:

«Պատմություն Հայոց»-ի Ա գրքում Պատմահայրը
շարադրել է «Ծննդաբանություն Հայոց Մեծաց»-ը, որի արմատ-
ները սերում են հայրենի ազգաբանութեան տոհմածառից: Մով-
սես Խորենացին, ըստ «հնոց պատմութեանց», այն ներկայաց-
նում է հին ժողովուրդների պատմութեան մեջ:

Ինչպես նշել է Գ. Սարգսյանը, Մովսես Խորենացին հա-
մաշխարհային պատմութեան մասին շատ տեղեկություններ է քա-
ղել Աստվածաշնչից, և այդ հանգամանքը կարևոր գործոն էր նրա
պատմական հայեցակարգի ձևավորման համար, քանի որ այդ
«հանգեցրեց Հայաստանի պատմութեան ոչ թե մեկուսի, այլ
մնացյալ աշխարհի երևութների ետնահենքի վրա ուսումնասի-
րութեանը»³⁶¹:

Մովսես Խորենացին հետևյալ կերպ է համեմատական
կարգով ներկայացրել Նոյի որդիներին և նրանց սերունդներին.

³⁵⁹ Մովսես Խորենացի, էջ 22:

³⁶⁰ Նույն տեղում, էջ 12:

³⁶¹ Мовсес Хоренаци, с. XI.

| | | |
|---|--|--|
| Մեն Արփաքսաթ Կայինան Սաղայ Եբեր Փաղեկ Ռազաւ Սերուք Նաքովր Թարայ Աբրահամ | Քան Քուշ Մեստրայիմ Նեբրովթ Բաբ Անեբիս Արբէլ Քայաղ միւս Արբէլ Նինոս Նինուաս | Յաբեթ Գամեր Թիրաս Թորգոմ Հայկ Արամանեակ Արամայիս Ամասիայ Գեղամ Հարմայ Արամ Արա Գեղեցիկ ³⁶² |
|---|--|--|

Մովսես Խորենացին, ի հաստատումն իր կազմած ազգաբանական ցուցակների վավերականության, գրել է. «Այսոցիկ վկայէ եւ Կեփաղիովն. քանզի ասէ ի միում գլխոցն այսպէս. «Մանր զամենայն ի սկզբան մերոյ աշխատութեանս սկսաք գրել զազգաբանութիւնսն ի դիւանացն արքունի. այլ առաք հրաման ի թագաւորաց՝ թողուլ զաննշանից եւ զվատաց արանց ի հնոցն գլիշատակն, եւ գրել միայն զքաջս եւ զիմաստունս եւ զաշխարհակալս նախնիս...»³⁶³:

Մովսես Խորենացին Աբյուղենոսին այնպիսի մի աշխատության հեղինակ է համարել, որում խոսվել է «Մանր ազգաբանութեան» մասին: Վերոհիշյալ հատվածում Պատմահայրը կրկին հիշատակել է «Մանր... ազգաբանութիւնսն»³⁶⁴:

³⁶² Մովսես Խորենացի, էջ 17-19:

³⁶³ Նոյն տեղում, էջ 21, «Սրանց վկայում է և Կեփաղիոնը, որովհետև ասում է (իր գրքի) գլուխներից մեկում. «Մեր աշխատության սկզբում սկսեցինք գրել բոլոր մանր ազգաբանություններն արքունական դիվաններից, բայց թագավորներից հրաման ստացանք հներից բաց թողնել աննշան և վատասիրտ մարդկանց հիշատակությունը, այլ հիշել միայն քաջ, իմաստուն և աշխարհակալ նախնիներին...»:

³⁶⁴ «Մանր» նաև նշանակում է «մանրապէս, մանրամասնաբար» (ՆԲՅԼ, հ. Բ, էջ 207): Այս իմաստով էլ Ստ. Մալխասյանն այն փոխադրել է աշխարհաբար («...մանրամասն գրել բոլոր ազգաբանություններն...»), Մովսես Խորենացի,

Ուրեմն, կարելի է ասել, որ ըստ Պատմահորը հասած տեղեկությունների, Աբյուդենոսը «Մանր ազգաբանության» հեղինակ էր, իսկ Կեփաղիոնը արքունի դիվանում օգտվել է նման մի գրվածքից:

Անհրաժեշտ է նշել, որ Ծննդոց գրքում և Մնացորդացի Ա գրքում, նախ, ընդհանուր առմամբ ասվում է Նոյի որդիների (Սեմ, Քամ, Հաբեթ հաջորդականությամբ) մասին, այնուհետև նրանց սերունդների տոհմաբանությանը վերաբերող շարադրանքում առկա է Հաբեթ, Քամ, Սեմ հաջորդականությունը³⁶⁵: Ընդ որում, վերջինիս սերունդների կապակցությամբ բերվում են տարիքային որոշ տվյալներ, որոնք բացակայում են Հաբեթի և Քամի տոհմացուցակներում³⁶⁶:

Հաբեթի սերունդների մասին միայն կարդում ենք. «Եւ ի սոցանէ մեկնեցան կղզիք ազգաց յերկրի իւրեանց, իւրաքանչիւր՝ ըստ լեզուս յազգս իւրեանց եւ ի տոհմս իւրեանց»³⁶⁷: Նրանց վերաբերող տարիքային տվյալների բացակայության հանգամանքի վրա հատուկ ուշադրություն է դարձրել Մովսես Խորենացին՝ գրելով. «Ամք ժամանակաց ծննդոց Քամայ... ոչ ուրեք գտանին թուեալ, եւ կամ թէ առ մեզ ոչ հասեալ..., իսկ մերոյն Յաբեթի ամենեւին ոչ...»³⁶⁸:

էջ 90): Սակայն այստեղ անհրաժեշտ է նաև աշխարհաբար պահպանել «մանր» բառը:

³⁶⁵ Ըստ Ծննդոց գրքի, ջրհեղեղից հետո աշխարհով մեկ սփռված ժողովուրդները Նոյի երեք որդիների սերունդներից էին առաջացել (Ծննդ., Ժ. 1-32, Ա. Մնացորդաց, Ա. 1-26):

³⁶⁶ Շ. Աճեմյանն գրել է. «Խորենացիի Պատմութեան գիրքի անունէն կը սկսի արդէն կապը Աստուածաշունչին հետ, երբ հին տպագրութիւններուն մէջ գիրքը կը կոչուի «Ազգաբանութիւն Տոհմին Յաբեթեան» (1695, Ամսօրթիւմ և 1752, Կենետիկ)... Ծննդաբանութիւններուն նպատակն է հաստատել թէ հայերուն նախահայրն է Թորգոմը, որ թողն է Յաբեթի, երրորդ զավակը Նոյի: Ուրեմն ազգերու ցանկին մէջ կը ճշտուի Հայոց տեղը՝ «ազգ հիւսիսականաց»: (Շահե արք. Աճեմեան. Խորենացին և Աստուածաշունչը - Միջազգային գիտաժողով՝ Աստվածաշնչական Հայաստան, Ջեկուցումների դրույթներ, Օշական, 1999, էջ 58):

³⁶⁷ «Սրանցից մեկնեցին ազգերի կղզիներ իրենց երկրներից՝ յուրաքանչյուրն ըստ իրենց ազգերի լեզվի և լեզուների և իրենց տոհմերի» (Ծննդ., Ժ. 5):

³⁶⁸ Մովսես Խորենացի, էջ 20, «... թեպետ Քամի սերունդների տարիները... ոչ մի տեղ թվարկված չեն, կամ թե մեզ չեն հասել..., իսկ մեր Հաբեթի սերունդներինը բոլորովին չկան...» (Մովսես Խորենացի, էջ 89):

Հին Կտակարանի մնացյալ շարադրանքում որոշ չափով արտացոլված է Սեմից սերված սերունդների պատմությունը, ինչով և պատճառաբանված էր Մովսես Խորենացու վերոհիշյալ քննադատական խոսքը «սեպհական ազգ»-ի վերաբերյալ:

Մովսես Խորենացու երկի միջոցով Հովհաննես Դրասխանակերտցու (X դ.)³⁶⁹ Աստվածաշնչին անդրադառնալու մասին Ա. Սարգսյանը գրել է. «Կաթողիկոս պատմիչը Ջրհեղեղից մինչև Հայկ նահապետ ընկած ժամանակաշրջանի համար Աստվածաշնչին անմիջապես չի էլ դիմել: Նրա ուղղակի աղբյուրներն են եղել հենց Խորենացու Պատմությունը (V դ.), մասամբ նաև VII դ. հայտնի ժամանակագրությունը:

Մովսես Խորենացին տալիս է մի շարք արտաքին հեղինակների անուններ, մեջբերելով և քննելով նաև նրանց՝ սբ. Գրքին համընկնող և անհարիր տեղեկությունները: Մինչդեռ Դրասխանակերտցուն հայտնի «արտաքին» պատմությունները (առավել ևս, եթե դրանք սահմանափակվել են միայն Խորենացիով և վերոհիշյալ «ժամանակագրությամբ») արդեն կամ կառուցված են եղել Աստվածաշնչի հիման վրա, կամ հիմնականում վերջինիս հարմարեցված ու նրա հետ համաձայնեցված»³⁷⁰:

Սեմից մինչև Աբրահամ Մովսես Խորենացին նշել է ըստ Ծննդոց գրքի ԺԱ գլխի, իսկ ինչ վերաբերում է Հաբեթի և Քամի սերունդներին, խնդիրն այստեղ ավելի բարդ է, և հենց այդ նկատի ունենալով՝ Մովսես Խորենացին որոշ մեկնություններ է կատարել:

Եթե Սեմի ճյուղագրությունը Աստվածաշնչում իրոք հանգում է Աբրահամին, ապա այլ է Հաբեթի³⁷¹ և Քամի³⁷² կապակցու-

³⁶⁹ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցույ Պատմութիւն Հայոց, էջ 11-15:

³⁷⁰ Ա. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 60:

³⁷¹ Ըստ Աստվածաշնչի, Հաբեթի որդիներն են Գամերը, Մագովգը, Մադան, Յավանը, Ելիսան, Թոբելը, Մոսոքը և Թիրասը: Գամերի որդիներն են Աքանազը, Ռիփաթը և Թորգոման: Յավանի որդիներն են Ելիսան և Թարսիսը (Ծննդ., Ժ. 2-4):

³⁷² Ըստ Աստվածաշնչի, Քամի որդիներն են Քուշն ու Մեստրենը, Փուրն ու Քանանը: Քուշի որդիներն են Սաբան, Եվիլան, Սաբաթան, Ռեզման ու Սաբակաթան: Ռեզմայի որդիներն են Սաբան և Յուդանանը: Քուշը ծնեց Նեբրոթին ...Քանանը ծնունդ տվեց Սիդոնին՝ իր անդրանիկ որդուն (Ծննդ., Ժ. 6-8, 15):

թյամբ Մովսես Խորենացու՝ Նինոսին և Արամին վերաբերող հիշատակությունների հարցը:

Հաբեթին և Քամին վերաբերող՝ Մովսես Խորենացու բերած տոհմացուցակի սկզբնամասը համապատասխանում է Աստվածաշնչին: Սակայն այնուհետև թե՛ Քուշի եղբայրը՝ Մեստրայինը (Մեստրեն) և թե՛ Գամերի եղբայրը՝ Թիրասը, համապատասխանաբար նշված են որպես նրանց որդիներ³⁷³:

Այս տարբերության վրա մատնացույց է արել հենց ինքը՝ Մովսես Խորենացին. «...ամենայն ի ժամանակագրացն գրեն... զԹիրաս՝ չորրորդ ի Նոյէ,՝ իսկ Յաբեթայ երրորդ. թեպէտ եւ ըստ մերում թարգմանութեանս ոչ ուրեք ի բնագրի գտանի:

Իսկ զՄեստրայիմ չորրորդ ի Նոյէ եւ երրորդ ի Քամայ՝ ոչ ի մերում թարգմանութեանս եւ ոչ ի ժամանակագրաց ուրեք կարգեալ գտանեմք: Այլ այսպէս զսա կարգեալ գտաք ի յուշմագունէ եւ զընթերցասիրէ ումեմնէ Ասորոյ...»³⁷⁴:

Այսինքն, բիբլիական տոհմաբանությամբ՝ Թորգոմը Թիրասի եղբոր՝ Գամերի որդին էր, իսկ Նեբրովթը Մեստրայիմի եղբոր՝ Քուշի որդին, այնինչ, Մովսես Խորենացու պահպանած տեղեկությամբ, Թիրասը Թորգոմի հայրն էր (ըստ հին ժամանակագիրների), իսկ Մեստրայիմը՝ Նեբրովթի (ըստ Մար Աբաս Կատինայի):

Բ. եպիսկ. Գևորգյանը, անդրադառնալով Պատմահոր շարադրանքի նշված հատվածին, գրել է. «Խորենացու բերած այս ազգաբանութեան (Յաբեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ) մասին Գարագաշյանն առանց արժանին ուշադրութեան՝ գրում է. «Յայտնի է թէ այս ազգաբանութիւնը Ծննդոց է»³⁷⁵: - Այդ անունները յիրաւի կան Ծննդոց Գրքի

³⁷³ Այս հարցին անդրադարձել է Ս. Մալխասյանը՝ քննելով աստվածաշնչյան և Խորենացու կողմից բերված տոհմաբանական ցուցակները (Ստ. Մալխասյան, Բանասիրական հետազոտություններ, էջ 116-117):

³⁷⁴ Մովսես Խորենացի, էջ 19-20, «...բոլոր ժամանակագիրները գրում են... Թիրասիմ Նոյից չորրորդ և Յաբեթից երրորդ, թեպետ և ըստ մեր (սբ. Գրքի հայերեն) թարգմանության ոչ մի տեղ չի գտնվում բնագրի մեջ: Իսկ Մեստրայիմին իբրև Նոյից չորրորդ և Քամից երրորդ նշանակված չենք գտնում ոչ մեր թարգմանության մեջ և ոչ որևէ ժամանակագրի կողմից: Բայց այսպես սրան նշանակված գտանք մի շատ ուշիմ և ընթերցասեր ոմն ասորու կողմից» (Մովսես Խորենացի, էջ 89):

³⁷⁵ Ա. Գարագաշեան, Զննական պատմութիւն Ղազար, մասն Ա, Նախնական ժամանակ, Թիֆլիս, 1895, էջ 133:

մէջ, սակայն՝ ոչ նոյն կարգը ազգաբանութեան, այնտեղ Գամեր եւ Թիրաս եղբայրներ են, մինչ Խորենացու ցանկում՝ հայր եւ որդի...»³⁷⁶:

«Ի բնագրի» արտահայտությունը Ստ. Մալխասյանը թարգմանել է՝ «ուղղակի ճյուղագրության մէջ»³⁷⁷, բացատրելով, որ հեղինակն այն «գործ է ածել նախնական նշանակությամբ՝ ծառի բունը, հակադրությամբ նրա ճյուղերի»³⁷⁸:

Եթե նկատի ունենանք, որ նախորդ նախադասությունում Պատմահայրը գրել է, որ «ամենայնք ի ժամանակագրացն» նշել են Կայնանին իբրև Նոյից չորրորդը և Սեմից երրորդը, այնուհետև ավելացրել՝ «նույնպէս եւ զԹիրաս...», ապա հետևում է, որ բոլոր ժամանակագիրները Կայնանի մասին գրել են ըստ Աստվածաշնչի կարգի, իսկ Թիրասին նույնպես Նոյից չորրորդն են նշել («իսկ ի Յաբեթայ երրորդ»), «թէպէտ եւ ըստ մերում թարգմանութեանս ոչ ուրեք ի բնագրի գտանի»³⁷⁹:

Այս է նկատի ունեցել Պատմահայրը՝ օգտագործելով «բնագիր» բառը³⁸⁰: Այնպես որ Պատմահայրը, խոսելով «բնագրի» մասին, նկատի է ունեցել ոչ թե ճյուղագրությունը, այլ Աստվածաշնչի բնագիրը՝ ըստ, ինչպես ինքն է ասում, «մերում թարգմանութեան»:

Մովսէս Խորենացին Նեբրովթին, որն ըստ Աստվածաշնչի Քուշի որդին էր, համարելով Մեստրայիմի որդի՝ աշխարհագրական կարգի դատողություն է արել, ելնելով Եգիպտոսի և Եթովպիայի սահմանակցության պարագայից, ինչպես նաև Աստվածաշնչի տեքստի «Մեստրայիմ» և «Քուշ» անունների ցեղագրական և աշխարհագրական նշանակությունից: «Մեստրայիմը է Մեծրայիմ, որ իմանի Եգիպտոս. եւ բազումք ի ժամանակագրաց զՆեբրովթ, որ է Բէլ, եթովպացի գոլ ասելով՝ հաւանեցուցին զմեզ

³⁷⁶ Բարդուղիմէոս Եպիսկ. Գեորգեան (ճուղուրեանց), Խորենացին Ե. դարի առաջին քառորդից մատենագիր, Վաղարշապատ, 1908, էջ 11:

³⁷⁷ Մովսէս Խորենացի, Գայոց Պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ.Մալխասյանի, Երևան, 1981, էջ 23:

³⁷⁸ Նույն տեղում, էջ 461, ծան. 18:

³⁷⁹ Մովսէս Խորենացի, էջ 19:

³⁸⁰ Այն այդպես էլ բացատրված է ՆԲՅԼ-ի Ա հատորում՝ «Սուրբ Գիրք ըստ սկզբնագրին» (էջ 494):

այսպէս հաւաստի լինել, յաղագս բնակութեան սահմանացն ընդ Եգիպտոս»³⁸¹:

Այստեղ մենք գործ ունենք դիցաբանական, տոհմաբանական և աշխարհագրական անունների մի ամբողջ համակարգի հետ³⁸², եթե դրանց գումարենք նաև Բաբից մինչև Նինվաս հիշատակված անունները: Աստվածաշնչի եբրայերեն տեքստում Քամի որդիներից մեկի «Միցրայիմ» (Մեստրիմ, Մեստրայիմ) անունը նշանակում է «Եգիպտոս», իսկ ավագ որդու «Քուշ» անունը՝ «Եթովպիա»³⁸³:

Ծննդոց գրքի տոհմացուցակում Քամի սերունդների հիշատակությունը եզրափակվում է նրա թոռների՝ Նեբրովթի և Սիդոնի անուններով: Մովսես խորենացին, բացի այդ տոհմացուցակից, Նեբրովթին նույնացնելով Բելի հետ, իր կազմած ցուցակի շարունակությունում օգտագործել է նաև Աբյուդենոսի հայտնած տեղեկությունները: Պատմահայրն իր անհամաձայնությունն է հայտնել այլ կարծիքների կապակցությամբ³⁸⁴, ինչից երևում է նրա քննական մոտեցումը՝ հին հեղինակների շրջանում վեճեր հարուցած հարցերի կապակցությամբ:

Մովսես խորենացին, հենվելով «ընթերցասէր Ասորու» (Մար Աբաս Կատինա) և Աբյուդենոսի հաղորդումների վրա, հիմնավորում է Քամի տոհմածառում կատարված լրացումները: Պատմահայրը Աստվածաշնչում հիշատակվող Հաբեթի թոռ Թոր-

³⁸¹ Մովսես խորենացի, էջ 20, «Այդ Մեստրայիմը Մեծրայիմն է, որի տակ հասկացվում է Եգիպտոսը: Եվ ժամանակագիրներից շատերը Նեբրովթին, որ Բելն է, եթովպացի եղած ասելով, համոզեցին մեզ, որ այսպէս ստույգ է, որ իսկապէս այսպէս է եղել, Եգիպտոսի սահմանին մոտ բնակության պատճառով»:

³⁸² Նշված է, որ Քամի որդիների անուններն արտացոլում են Եգիպտոսի, ինչպէս նաև փյունիկյան, ասորական քաղաքների, Բաբելոնի և այլ աշխարհագրական անունները (История Древнего Востока, т. 2, Москва, 1988, с. 272):

³⁸³ Biblia Hebraica, Stuttgart, 1990. Gen 10. 6; 12. 10. The Holy Bible. New York, 1953, Gen. 10. 6. The Pentateuch and Haftorahs, Hebrew text, English translation and commentary, Second edition, London, 1997, p. 36. Տես նաև՝ Hebraisches und aramaisches Wörterbuch zum Alten Testament, herausgegeben von G.Fohrer, Berlin-New York, 1989, S. 21, 158.

³⁸⁴ Մովսես խորենացի, էջ 20-21:

գոմին որպես նրա ծոռ է նշել, իսկ Հաբեթի տոհմածառում ներկայացված Հայկին³⁸⁵ ժամանակակից է համարել Նեբրովթ-Բելին:

Ինչպես գրել է Մովսես Խորենացին, «Նոյնպէս եւ զմերն՝ ի Հայկայ մինչեւ ցԱրայն Գեղեցիկ, զոր եսպան կաթոտն Շամիրամ թուէ այսպէս. Արայն Գեղեցիկ՝ Արամայ, Հարմայ, Գեղամայ, Ամասեայ, Արամայիսայ, Արամանեկայ, Հայկայ, որ եղեւ հակառակ Բելայ, միանգամայն եւ կենախուզ: Եւ զայս մեզ Աբիւղենոս յիւրում առաջնում առանձնականի իմն մանր ազգաբանութեան ասէ...»³⁸⁶:

Պատմահայրը, կրկին հավաստիացնելով իր ներկայացրած լրացումների և մեկնությունների սկզբնաղբյուրային հենքի ճշմարիտ լինելը, գրել է. «Եւ գտաք զայսոսիկ արդարեւ Յունաց դպրութեամբ. զի թէպէտ եւ Յոյնք ինքեանք ի Քաղղէացւոց փոխեցին յիւրեանց լեզուն, եւ թէպէտ եւ Քաղղէացիք ինքնական յոժարութեամբ եւ կամ ի հրամանէ թագաւորաց հարկեալ զայս իրագործել, որպէս Առիոս ոմն եւ այլք բազումք, սակայն մեք Յունաց համարիմք, որպէս ի նոցանէ ուսեալք»³⁸⁷:

³⁸⁵ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունում Օրիոնի փոխարեն հիշատակվում է Հայկի անունը (Եսայի, ԺԳ, 10, Յովք ԼԸ, 31): 2008 թվականի օգոստոսի 11-ին (Նավասարդի 1-ին) լրացավ «Հայոց Բուն թվականի» 4500 տարին: «Հայկայ շրջանի» պարբերականության վրա հիմնված տոմարագիտական հաշվարկը կատարել է Ղևոնդ Ալիշանը, գրելով՝ «յամի 2492 Քրիստոսէ առաջ» Հայկ Նահապետը «մտաւ Այրարատ աշխարհքը օգոստոսի 11-23ին և հրամայեց, որ նոյն օրը տարւոյն սկիզբն սեպտիկ... Այս է ահա մեր մէջը օգոստոսի 11ին տօնին պատճառն»: «Հայկայ դարձէն քիչ տարի վերջը» տեղի ունեցավ Բելի պարտությունը և սպանվելը (Ղևոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, Խ. Ա. Վենետիկ, 1869, էջ 94-95):

³⁸⁶ Նույն տեղում: «Նույնպէս մերը՝ Հայկից մինչև Արա Գեղեցիկը, որին վավաշոտ Շամիրամն սպանեց՝ թվարկում է (Աբյուղենոս -Ն. Դ.) այսպես. «Արա Գեղեցիկը՝ (որդի) Արամի, (որդի) Հարմայի, (որդի) Գեղամի, (որդի) Ամասիայի, (որդի) Արամայիսի, (որդի) Արամանյակի, (որդի) Հայկի, որ դուրս եկավ Բելին հակառակորդ և միաժամանակ նրա կյանքին վերջ դնող»: Այս բանն ասում է Աբյուղենոսը իր առաջին առանձին մանր ազգաբանության մեջ...» (Մովսես Խորենացի, էջ 90):

³⁸⁷ Մովսես Խորենացի, էջ 21, «Այս բաներն իսկապես մենք գտանք հունարեն գրականության մեջ: Թեպետև իրենք հույները քաղղերենից փոխադրեցին իրենց լեզվին, և թեպետ քաղղեացիները կամ ինքնաբերաբար՝ հոժար կամքով այս կատարեցին, կամ թագավորի հրամանից հարկադրված՝ ինչպես մի ոմն Առիոս և ուրիշ շատերը, բայց մենք հույներին ենք համարում, նրանցից ուսած լինելով» (Մովսես Խորենացի, էջ 90-91):

4. Աստվածաշնչական տոհմաբանության համեմատությունը դիցաբանության հետ

Մովսես Խորենացու պատմահամեմատական մեթոդն ուրույն դրսևորում է ստացել դիցաբանության բնագավառում, որին նա անդրադարձել է ազգաբանության խնդրի առնչությամբ: Աստվածաշնչի և «հին պատմությունների» զուգահեռ համադրությունը Նոյի որդիների՝ Սեմի, Քամի և Հաբեթի տոհմաբանությունների մասին տեղեկություններին նրան բերել է այն եզրակացության, որ Հայկը Հաբեթի տոհմածառից Թորգոմի որդին էր, որին հաջորդել էին Արամանյակը, Արամայիսը, Ամասիան, Գեղամը, Հարման, Արամը և Արա Գեղեցիկը³⁸⁸:

Հայրենիքի ազատության գաղափարի հիմքում Մովսես Խորենացին դրել է Հայկի խոսքը՝ ուղղված իր զորքին, Բելի և նրա գլխավորած ամբոխի դեմ կռվից առաջ: Հայկը ասաց. «Յեւլանելն մեր հանդէպ ամբոխին Բելայ... Ջի կամ մեռցուք, եւ աղխմեր ի ծառայութիւն Բելայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ՝ ցրուեսցի ամբոխն եւ մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք»³⁸⁹:

Պատմահայրը, ելնելով հունական առասպելաբանության (տիտաններ) և սեմական («բել»³⁹⁰) դիցաբանական հասկացություններից, կիրառել է «Տիտանյան Բել» հորջորջանքը՝ որպես չկարգավորված, քառսային ուժերի արտահայտություն, քանի որ «տիտաններից» այստեղ նկատի է առնված Կռոնոսը, որը, ըստ հունական առասպելի, մանգաղով ամործատել էր իր հորը՝ Ուրանոսին (երկինքը մարմնավորող աստվածություն), և կուլ էր տալիս իր սեփական զավակներին, որոնցից միայն Ջևսը փրկվեց³⁹¹:

³⁸⁸ Մովսես Խորենացի, էջ 19:

³⁸⁹ Նույն տեղում, էջ 35, «Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ... կամ մեռնեն և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա՝ ամբոխը ցրվի և մենք հաղթություն տանենք» (Մովսես Խորենացի, էջ 101):

³⁹⁰ Սեմիտները խուսափում էին իրենց աստվածություններին կոչել սեփական անուններով և յուրաքանչյուր ցեղ կամ համայնք իր հովանավոր-աստծուն կոչել է «տեր, բալ, բել» (История Древнего Востока, т. I, Москва, 1983, с. 280):

³⁹¹ Мифы народов мира, т. II, с. 18, 549.

Ըստ հունական դիցաբանության, մի կողմից Ուրանոսից ու Գեայից սերած տիտանների և, մյուս կողմից՝ աստվածների նոր, Օլիմպիական սերնդի միջև տեղի ունեցած և վերջիններիս հաղթանակով ավարտված պայքարն, առասպելաբանական պատկերացմամբ արտացոլում էր քառսային աշխարհի կարգավորման գաղափարը³⁹²:

Հայկ նահապետի մասին հաղորդումը համադրելով Աստվածաշնչի և անտիկ դիցաբանության տեղեկություններ հետ՝ Մովսես Խորենացին գրել է. «ԶԲէլայ, առ որով նախնին մեր Հայկ՝ բազումք բազում ինչ այլ ընդ այլոյ պատմեն. բայց ես ասեմ զԿռոնոս անուն եւ զԲէլ՝ Նեբրովթ լեալ, որպէս եգիպտացիք թուեն հաւսար Մովսիսի՝ Հեփեստոս, Արեգակն, Կռոնոս, որ է Քամ, Քուշ, Նեբրովթ, թողեալ զՄեստրայիմ: Զի առաջին ասեն իւրեանց մարդ լեալ զՀեփեստոս եւ գտակ հրոյ»³⁹³: Այսպիսի համեմատության հիմքում Նեբրովթի կերպարն է, որի մասին Աստվածաշնչում գրված է, որ Քամի որդիներից Քուշը ծնեց «Նեբրովթին», որը «սկսաւ լինել սկայ ի վերայ երկրի... Եւ եղեւ սկիզբն թագաւորութեան նորա Բաբելոն»³⁹⁴: «Բաբելոն» անվան հիշատակությունը աստվածաշնչյան ընկալմամբ բացասականորեն է բնութագրում Նեբրովթին:

Մովսես Խորենացին աստվածաշնչյան Սեմի, Քամի և Հաբեթի առնչությամբ անդրադարձել է ինչպես հունական, այնպես էլ իրանական առասպելաբանություններին: Պատմահայրը, հունական դիցարանից երեք կերպար առանձնացնելով, նրանց դրել է հաջորդական կապի մեջ: Ըստ հունական առասպելաբանության, Զևսի որդին՝ Հեփեստոսը, Կռոնոսի (որին Պատմահայրը նույնացրել է Նեբրովթի հետ) թոռն էր, իսկ Հելիոսը (Արեգակ)՝ Կռոնոսի եղբոր՝ Հիպերիոնի որդին:

³⁹² Там же, т. I, էջ 301-302:

³⁹³ Մովսես Խորենացի, էջ 27-28, «Բելի մասին, որին ժամանակակից էր մեր նախնին՝ Դայկը, շատերը շատ բաներ խառնաշփոթ են պատմում, բայց ես ասում եմ, թե Կռոնոս կոչվածը և Բելը՝ Նեբրովթն է եղել, ինչպես եգիպտացիները Մովսեսի նման թվում են՝ Դեփեստոս, Արեգակ, Կռոնոս, որոնք են Քամը, Քուշը, Նեբրովթը, բաց թողնելով Մեստրայիմին, որովհետև նրանք ասում են, թե իրենց առաջին մարդն եղել է Դեփեստոսը, որ գտել է կրակը» (Մովսես Խորենացի, էջ 94-95):

³⁹⁴ Ծննդ., Ժ. 8-10:

Անտիկ գրականության մեջ Հեփեստոսը նույնացվել է հին եգիպտական Պտաքոս³⁹⁵ աստվածության հետ³⁹⁶: «Միցրայիմ»- «Եգիպտոս»³⁹⁷ ընկալումով է վաղ միջնադարյան գրականության մեջ իմաստավորված նաև Քամի կերպարը՝ որպես Եգիպտոսի և լիբիացիների նախահայր: Եվսեբիոս Կեսարացին գրել է. «Եւ 'ի Քամայ զԵգիպտոս եւ զլիբէացւոց աշխարհն...»³⁹⁸: Կռնոսին Նեբրովթի հետ նույնացնելու համար Սովսես Խորենացուն հիմք է ծառայել նաև իր կողմից հիշատակված Բերոսյան Սիբիլայից քաղված տողը՝ «Զրվանի, Տիտանի եւ Հապետոսթի» մասին, որից հետո Պատմահայրն ավելացրել է. «Որ ինձ թուին Սեմ, Քամ եւ Հաբեթ»³⁹⁹:

Սովսես Խորենացին Զրվանին (իրանական առասպելաբանությունում Ահուրամազդայի և Աիրիմանի՝ «երկակիություն» արտահայտող՝ բարի և չար աստվածությունների հայրը)⁴⁰⁰ նույնացրել է Սեմի, Տիտանին (հունական առասպելաբանությունում Ուրանոսից և Գեայից ծնված տիտանների ընդհանրական անվանում)՝ Քամի, իսկ Հապետոսթին⁴⁰¹ Հաբեթի հետ: Ուշագրավ է, որ Պատմահայրը Քամին կոչել է «Տիտան» ընդհանրական անունով, իսկ Նեբրովթին ուղղակի անվանել է Կռնոս: Կարելի է ենթադրել, որ Պատմահայրն այս կերպ ընդգծել է Աստվածաշնչում ներկայացված մարդկության ազգաբանության աղերսը հունա-

³⁹⁵ Հին Եգիպտոսում՝ Մեմփիսի գլխավոր աստվածը (Dictionary of Classical Mythology, p. 223)

³⁹⁶ Herodoti Historiac, Oxonii, 1912, II.2. Геродот. История, перев. и прим. Г. А. Страпановского, М., 1972, с. 509, прим., 3.

³⁹⁷ Հմմտ. Սսրը-Եգիպտոս (տես՝ Սասունցի Դավիթ, առաջաբանը, բառարանը և ժանոթագրությունները Ս. Բ. Հարությունյանի, Երևան, 1981, էջ 333):

³⁹⁸ Եւսեբի Պամփիլեայ Կեսարացույ ժամանականք երկնամենայ, մ. Ա, էջ 109:

³⁹⁹ Սովսես Խորենացի, էջ 23:

⁴⁰⁰ Ինչպես նշել է Գ. Սարգսյանը, «Իրանական թեոնիմիայի թափանցումը Հայաստան, այնուամենայնիվ, ոչ մի չափով չի վկայում Հայաստանում իրանական զրադաշտականության արմատավորման մասին իր դուալիզմով: Հայերը մնացին իրենց նախկին կրոնին՝ միայն մասնակիորեն փոխելով աստվածների անունները» (տես Գ. Саркисян, Черты эллинизма в духовной культуре древней Армении - ՊԲՀ, 1976, N 3 էջ 55):

⁴⁰¹ «Հապետոսը» հունական առասպելաբանությունում տիտաններից մեկն էր՝ Պրոմեթևսի հայրը, և հույները նրան համարում էին ամբողջ մարդկության նախահայրը (տես Dictionary of Classical Mythology, p. 133), Կռնոսը ընկալվել է նաև որպես ժամանակի աստվածություն՝ Քրոնոս (նույն տեղում, էջ 61):

կան և իրանական առասպելաբանության մեջ եղած դիցաբանական պատկերացումների հետ⁴⁰²:

Մովսես Խորենացին եզրակացնում է. «Ձիաուստին որչափ կարացեալ ի բազմացն ընտրեալ բանից՝ կարգեցաք զծնունդս երից որդւոցն Նոյի ցԱբրահամ եւ ցՆինոս եւ ցԱրամ. որում ոչ զոք ընդդիմանալ կարծեմ ի միտս ունողացն. բայց եթէ զճշմարտութեանն ոք խորհելով քակել զոճ՝ յառասպելս զճշմարիտ բանս ախորժելով փոփոխել փութասցէ»⁴⁰³:

Այսպիսով, Հայկ նահապետի և Հայկազունների հնուց եկող ազգաբանությունը ներդաշնակելով աստվածաշնչյան ազգաբանությանը՝ Մովսես Խորենացին անդրադարձել է նաև հունական և իրանական առասպելաբանություններում արտացոլված դիցաբանական պատկերացումներին:

5. Հայոց Արշակունյաց թագավորության պատմության համեմատությունը Աստվածաշնչի որոշ դրվագների հետ

Մովսես Խորենացին բազմաբնույթ աղբյուրագիտական հենքի վրա իր «Պատմութիւն Հայոց»-ը շարադրելիս՝ լայնորեն կիրառել է պատմահամեմատական մեթոդը: Ղա զգալի չափով վերաբերում է Աստվածաշնչին, որին նա անդրադարձել է որոշակի մոտեցումով՝ պայմանավորված քննարկվող խնդիրների պատմագիտական և աստվածաբանական բնույթով:

Եթե Հայոց ազգաբանության հարցերը քննարկելիս Մովսես Խորենացին մեկնողական տեսանկյունից հիմնականում անդրադարձել է Ծննդոց գրքին, ապա Մեծ Հայքի թագավորու-

⁴⁰² Ն. Դանիելյան, Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում աստվածաշնչյան և առասպելաբանական պատկերացումների արտացոլման հարցի շուրջ.- «Լրաբեր», հաս. գիտ., N 3, 1997, էջ 146:

⁴⁰³ Մովսես Խորենացի, էջ 22, «Բազմաթիվ գրվածքներից ընտրելով հավաստին, որքան կարողացանք՝ նշանակեցինք Նոյի երեք որդիների սերունդները մինչև Աբրահամը, մինչև Նինոսը և մինչև Արամը, որին, կարծում եմ, խելացի մարդկանցից ոչ ոք չի հակառակի, եթե միայն մարդ չցանկանա պատմության ճիշտ կարգը խանգարելով, ճշմարիտ պատմություններն առասպելների վերածել: Այս բանով թող ամեն մեկը ուրախանա, ինչպես կամենում է» (Մովսես Խորենացի, էջ 91):

թունում՝ հայ Արշակունիների հարստության գահակալության ժամանակաշրջանում, հատկապես Տրդատ III Մեծի, Խոսրով Կոտակի, Տիրանի, Արշակ Բ-ի, այնուհետև Արշակունյաց անկման ընթացքում տեղի ունեցած որոշ կարևոր իրադարձություններին անդրադառնալիս, Պատմահայրը համեմատություններ է կատարել Հին Կտակարանի մյուս գրքերի հետ:

Մովսես Խորենացին, Տրդատ III Մեծ թագավորի գորավարական հաջողությունների մասին խոսելիս, համեմատություններ է կատարել քանանացի գորավար Եղեանի՝ իր թշնամիների դեմ տարած հաղթանակի հետ: Մովսես Խորենացին գրում է. «Իսկ քաջին Տրդատայ երագապէս եւ բազում ճակատս տուեալ, նախ ի Հայս եւ ապա ի Պարսս՝ իւրով անծամբ առնէր գլաղթութիւնն: Որ ի միում նուագի, առաւել քան զԵղիանանն զայն ի հնումն, կանգնեաց զնիզակն յոգնական համաթիւ վիրաւորաց»⁴⁰⁴:

Աստվածաշնչում Եղեանի հետ կապված դրվագը հետևյալ կերպ է ներկայացված. «Այս անուանք են զօրավարացն Դաւթի. Յեբուսթէ Քանանացի՝ իշխան երիւր մասինն, Ադինոն Ասուվնացի, ի վերայ ութ հարիւրոց վիրաւորաց ի միում նուագի: Եւ յետ նորա Եղէանան որդի հօրեղբօր նորա՝ որդի Սովացույն. ի մէջ երից զօրավարացն Դաւթի, յԹեմա ի նախատել նորա զայլազգիս, ուր զումարեցան ի պատերազմ եւ խրախուսեաց այր Իսրայելի, Եւ նա յարեաւ եւ եհար յայլազգեացն մինչեւ մատգեցաւ ձեռն նորա սրովն. եւ արար Տէր փրկութիւն մեծ յաւուր յայնմիկ»⁴⁰⁵:

⁴⁰⁴ Մովսես Խորենացի, էջ 225, «Իսկ քաջ Տրդատը արագորեն բազմաթիվ ճակատամարտեր տալով նախ Հայաստանում և ապա Պարսկաստանում՝ ինքն անծամբ տանում էր հաղթությունը: Մի անգամ նա ավելի (մեծ քաջություն ցույց տվեց) քան հնումը Եղիանը և իր նիզակը կանգնեցրեց նույնքան թվով վիրավորների օգնական» (Մովսես Խորենացի, էջ 243):

⁴⁰⁵ «Արանք են Դավթի զօրավարների անունները. մանանացի Յեբուսթ՝ նույն ինքը ասուվնացի Ադինոն մեկ երրորդ մասի իշխանը: Սա սուր էր բարձրացրել միանգամից ութ հարյուր զինվորների վրա: Նրանից հետո գալիս է Եղեանը՝ նրա հորեղբորորդին, սովացվու որդին, որը Դավթի երեք զօրավարներից մեկն էր: Երբ նա նախատեց այլազգիներին Թեմայում, ուր հավաքվել էին պատերազմելու, և խրախուսեց Իսրայելի մարդկանց: Եվ վեր կացավ ու այլազգիներին այնքան հարվածեց, որ ձեռքը կպավ սրին: Եվ Տերն այդ օրը մեծ փրկություն պարգևեց» (Բ. Թազ., ԻԳ. 8-10): :

Մովսես Խորենացին Տրդատի գործերի հետ համեմատել է Վարազդատ թագավորի (374-378) քաջագործությունները («Այլ որ առ ազգին Ղանկուարտացն նորա արութիւնք քաջութեան՝ համարձակիմ ասել հաւասար սրբոյն Տրդատայ. քանզի հինգ նահատակս ի թշնամեացն ընդդէմ իւր յարձակեալ՝ ի վերայ իրերաց սպան սուսերաւ. եւ ի բերդ ինչ դիմեալ, ի վերայ պատուարին եօթնելտասն այր նետիւք հարեալ՝ վերուստ ի վայր հոսեաց միմեանց զկնի») և այդ կարգով կրկին նկարագրական անդրադարձ է կատարել Հին Կտակարանի մի դրվագին. «Իբր ի սաստիկ իմն մրրկէ վաղահասուկ թգենեաց»⁴⁰⁶: Այստեղ ոճական բնույթի համեմատություն է Եսայի գրքի հետևյալ տողի հետ. «Եւ եղիցի ծաղիկն յուսոյ թօթափեալ ի փառաց անտի՝ ի վերայ գլխոյ լերինն բարձու, իբրեւ զվաղահասուկն թգոյ, զոր տեսեալ ուրուք՝ մինչեւ ի ձեռն առեալ կամիցի կլանել»⁴⁰⁷:

Տրդատ III Մեծ թագավորի բարեպաշտ վարքի և Հայ եկեղեցու գործերի նկատմամբ նրա ցուցաբերած հոգածության մասին Մովսես Խորենացին նույնպես Նոր Կտակարանի ոգով է շարադրել: Պատմահայրը գրել է. «Սա (Տրդատ - Ն. Դ.) յետ հաւատոցն որ ի Քրիստոս, ամենայն առաքինութեամբք բացափայլեալ՝ եւս քան զեւս յաճախէր որ ինչ յաղագս Քրիստոսի գործ եւ բան. սաստելով եւ հաւանեցուցանելով զմեծամեծ նախարարսն, միանգամայն եւ զամենայն բազմութիւն ռամկին, լինել արդարեւ Քրիստոսի. որպէս զի վկայեսցեն հաւատոցն՝ ամենեցուն եւ գործքն»⁴⁰⁸:

⁴⁰⁶ Մովսես Խորենացի, էջ 308, «Իսկ այն քաջ և արիության գործերը, որ նա կատարեց Ղանկվարտների (լանգորբարդներ) ազգի դեմ, համարձակվում եմ ասել, թե հավասար էին սուրբ Տրդատի գործերին, որովհետև թշնամիների կողմից հինգ ախոյան հարձակվեցին նրա վրա և նա մեկը մյուսի հետևից բոլորին սրով կոտորեց. և մի բերդի վրա դիմելով, բերդի պատվարի վրա տասնյոթ մարդ նետով զարկելով իրար վրա ներքև գլորեց, ինչպես շուտ հասունացած թզերը թափվում են սաստիկ մրրկից» (Մովսես Խորենացի, էջ 308):

⁴⁰⁷ Ես., ԻԸ 4:

⁴⁰⁸ Մովսես Խորենացի էջ 246 «Սա (Տրդատը-Ն.Դ.) Քրիստոսին հավատալուց հետո ամեն տեսակ առաքինություններով փայլելով՝ ավելի և ավելի ջանքեր էր անում խոսքով ու գործով Քրիստոսի (հավատի) համար, սաստելով և, համոզելով մեծամեծ նախարարներին, այլև ռամիկ մարդկանց ամբողջ բազմությունը, իրապես Քրիստոսի (հավատացյալ) լինելու, որպեսզի նրանց գործերը համապատասխանեն նրանց հավատին» (Մովսես Խորենացի, էջ 259):

Մովսես Խորենացու հաղորդմանը համահունչ է Փավստոս Բուզանդի հետևյալ տեղեկությունը. «Արդ 'ի թագաւորութեանն Տրդատայ՝ որդւոյն Խոսրովու, լուսաւորութեամբ հաճոյական սիրով եւ աստուածպաշտութեամբն հաւատոյ, ծանօթութեամբ 'ի ձեռն Գրիգորի՝ որդւոյն Անակայ, մեծի քահանայի... 'ի ժամանակաց 'ի թագաւորութենէն Տրդատայ, յորմէ հետէ զտէրն ճանաչելոյ՝ արար խաղաղութիւն, եւ լռեցոյց շուրջ զթշնամիս նոցա, զի ցածոյց տէր զմարտ պատերազմացն 'ի սահմանաց նոցա, եւ մինչև յայն ժամանակ ոչ ընդ ումեք բանք գոյին ամբոխի կամ խռովութեան, եւ 'ի մեծի խաղաղութեան էին բնակեալք»⁴⁰⁹:

Մովսես Խորենացին սբ.Գրիգոր Լուսավորչի միջոցով Վրաց դարձի վերաբերյալ պատմելիս, Միհրան III թագավորի (IV դ. առաջին կես)⁴¹⁰ հետ տեղի ունեցած դեպքի մասին գրել է. «Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ելանել Միհրանայ յորս. մոլորեցաւ ի դժուարս լերանց, խաւարեալ օդով, այլ ոչ տեսանելեօք, ըստ այնմ՝ եթէ կոչէ զմէզ բարբառով, եւ դարձեալ՝ թէ զտիւ ի գիշեր մթացուցանէ: Այսպիսեաւ Միհրան ըմբռնեալ խաւարաւ, որ եղև նմա առիթ մշտնջենաւոր լուսոյն. քանզի զարհուրեալ, յիշեաց զոր լուան վասն Տրդատայ, եթէ ի ճանապարհ ելեալ, կամելով յորս գնալ՝ հասին նմա հարուածք ի Տեառնէ... Իսկ երանելւոյն Նունէի խնդրեալ արս հաւատարհիմս՝ յղեաց առ սուրբն Գրիգոր, եթէ զինչ հրամայեսցէ նմա գործել այնուհետեւ, քանզի յօժարութեամբ ընկալան Վիրք քարոզութիւն Աւետարանին»⁴¹¹:

⁴⁰⁹ «Արդ՝ Խոսրովի որդի Տրդատի թագավորության ժամանակ (Գայոց աշխարհը) լուսավորվեց հաճոյական սիրով և աստվածպաշտության հավատով, որին ծանոթացավ մեծ քահանայի՝ Գրիգորի միջոցով, որ Անակի որդին էր... Տրդատի թագավորության ժամանակից ի վեր, երբ Տիրոջը ճանաչեցին՝ Աստված խաղաղություն պարգևեց. նրանց թշնամիներին լռեցրեց, նրանց սահմաններից պատերազմները հեռացրեց և ոչոքի հետ նրանք թշնամանքի կամ խռովության գործ չունեին և ապրում էին կատարյալ խաղաղության մեջ» (Փաւստոս Բուզանդ, էջ 6, 39-40):

⁴¹⁰ Мовсес Хоренаци, с. 253, прим. 546.

⁴¹¹ Մովսես Խորենացի, էջ 232, «Այդ օրերում դեպք եղավ, որ Միհրանը որսի գնաց և մոլորվեց լեռների դժվարակոխ տեղերում, օդի, բայց ոչ աչքերի խավարելուց, ինչպես որ գրված է. «խոսքով մեզ է բերում» կամ՝ «ցերեկը մթնեցնում գիշեր է դարձնում: Այսպիսով Միհրանը բռնվեց խավարով, որ նրա համար մշտնջենավոր լույսի առիթ եղավ. քանզի զարհուրեց, հիշելով Տրդատի մասին լսածը. թե ինչպես նա, կամենալով որսի գնալ, ճանապարհ ելնելով,

Այստեղ Մովսես խորենացին հենվել է Յոբի և Ամոսի գրքերի հետևյալ հատվածների վրա. «Կոչիցե՞ս զմեզ բարբառով...»⁴¹², «...եւ զտիւ ի գիշեր մթացուցանէ»⁴¹³:

Պատմահայրը Լուսավորչի գերեզմանի մասին գրել է. «Եւ ծածկեալ ամս բազումս աստուածային իմն գոգցես տեսչութեամբ, իբրեւ զՄովսէսն զայն ի հնումն...»⁴¹⁴: Այս տեղեկության գեղարվեստական ընկալուունը հիմնված է Հին Կտակարանի վրա. «Եւ վախճանեցաւ Մովսէս ծառայ Տեառն յերկրին Մովաբու ըստ բանի Տեառն: Եւ թաղեցին զնա ի Գայի... եւ ոչ ոք զհտաց զգերեզման նորա մինչեւ ցայսօր»⁴¹⁵:

Մովսես խորենացին, Գրիգոր Լուսավորչի ողջ կյանքը բնութագրելով Աստվածաշնչի ոգով, գրել. «Յարեւելից կողմանց աշխարհիս մերոյ՝ արևելք ճշմարիտ ծագեալ մեզ եւ իմանալի արեգակն եւ հոգետոր ճառագայթ, ի խորին չարութենէ կռապաշտութեան ելք, երանութեան եւ շինութեան հոգետորի առիթ, աստուածային արդարեւ արմաւենի տնկեալ ի տան Տեառն եւ ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեալ: Եւ այսպիսեօք եւ այսքանեօք ժողովրդովք բազմացեալ, ի ծերութիւն պարարտութեան հոգետորի զմեզ ժողովեաց ի փառս եւ ի գովեստ Աստուծոյ»⁴¹⁶: Սաղմոսների գրքում Աստծո փառաբանության հատվածում ասված է. «Ար-

հարվածներ ստացավ Տիրոջից... Իսկ երանելի Նունեն, գտնելով հավատարիմ մարդկանց, նրանց ուղարկեց սուրբ Գրիգորի մոտ, թէ ինչ կիրամայի նրան անել, քանզի Վիրք հոժարությամբ ընկալեցին Ավետարանիքարոզությունը ...» (Մովսես խորենացի, էջ 249):

⁴¹² «Ձայնովդ կկանչե՞ս մեզը...» (Յոբ, ԼԸ. 34):

⁴¹³ «...և ցերեկը մթնեցնում ինչպես գիշեր» (Ամոս, Ե. 8):

⁴¹⁴ Մովսես խորենացի էջ 244, «Եվ այսպես (մարմինը) երկար տարիներ ծածուկ մնաց, կարծես ինչ-որ աստվածային տնօրինությամբ, ինչպես հնում Մովսեսինը...» (Մովսես խորենացի, էջ 258):

⁴¹⁵ «Եվ Տիրոջ ծառա Մովսեսը վախճանվեց Մովաբի երկրում, Տիրոջ խոսքի համաձայն: Նրան թաղեցին Գայիում... և ոչ ոք մինչև այսօր չգիտի, թե որտեղ է նրա գերեզմանը» (Երկ. Օրինաց, ԼԴ 5-6):

⁴¹⁶ Մովսես խորենացի, էջ 244-245, «Մեր երկրի արևելյան կողմերից մեզ ճշմարիտ արևելք ծագեց և իմանալի արեգակ և հոգևոր ճառագայթ... ճշմարիտ բարի և դիվախալած, երանության և հոգևոր շինության առիթ, իսկապես Տիրոջ տանը տնկված և մեր Աստծու զավթում ծաղկած աստվածային արմավենի: Նա այսպիսի և այսքան ժողովուրդներ բազմացրեց և մեզ պատրաստեց հոգևոր պարարտ ծերության ի փառս և ի գովեստ Աստծու» (Մովսես խորենացի, էջ 258):

դարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին, որպէս զմայրսն Լիբանանու բազումք եղիցին: Տնկեալք եղիցին ի տան Տեառն, եւ ի զաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեսցին: Եւս եւ բազումք եղիցին ի ծերութիւն պարարտութեան, զիրգք եւ փափուկք եղիցին: Ի պատմել ուղիղ է Տէր Աստուած մեր եւ ոչ գոյ ի նմա անիրաւութիւն»⁴¹⁷: Այս սաղմոսին համահունչ է Նոր Կտակարանում փիլիպեցիներին ուղղված Պողոս առաքյալի խոսքը. «Եւ զայն աղօթս առնեն, զի սէրն ձեր եւս քան զեւս առաւել լիցի ի գիտութեան եւ յամենայն իմաստութեան: Ընտրել ձեզ զլաւն՝ զի իցէք հաստատունք եւ առանց զայթակղութեան յօրն Քրիստոսի: Լցեալ պտղովք արդարութեան ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի փառս եւ ի գովեստ Աստուծոյ»⁴¹⁸: Սաղմոսների ու Ավետարանի վրա հիմնված վերոհիշյալ հատվածը Պատմահոր՝ քրիստոսաբանության անաղարտության պահպանության գաղափարին հարազատ մնալու վկայությունն է:

Ըստ Մովսէս Խորենացու, Գրիգոր Լուսավորչի ավագ որդու՝ Կրթանես եպիսկոպոսապետի (կաթողիկոս) երեց որդուն՝ մանուկ Գրիգորիսին հյուսիսարևելյան կողմերում որպէս եպիսկոպոս առաքելիս, Տրդատ թագավորը, «թէպէտ եւ յանլիութիւն աւուրցն հայելով՝ պարականոն զիրն վարկանէր», համաձայնվում է, քանզի «տեսեալ զհոգւոյն մեծանձնութիւն», և՛ հիշելով «զՍողոմոն երկոտասանամեայ թագաւորեալ Իսրայելի» մասին⁴¹⁹: Այս համեմատությունը կատարված է Երրորդ Թագաւորութեանց գրքի հիման վրա. «Եւ Սողոմոն նստաւ յաթո՞ Դաւթի հօր իւրոյ, ամաց երկոտասանից»⁴²⁰:

⁴¹⁷ «Արդարներն արմավենու պես կծաղկեն, Լիբանանի մայրիների պես՝ կբազմանան: Դրանք կտնկվեն Տիրոջ տանը, ու կծաղկեն մեր Աստծու զավիթներում: Դրանք պտղաբեր կլինեն նաև ծերության ժամանակ՝ զիրգ ու փափուկ, որպեսզի ավետեն, թե ճշմարիտ է մեր Տեր Աստվածը և նրա մեջ անիրավություն չկա» (Սաղմ., ՂԱ 13-16):

⁴¹⁸ «Եվ ահա այս աղոթքն են անում. թող ձեր սերը ավելի և ավելի առատանա գիտության և ամենայն իմաստության մեջ, որպեսզի դուք լավն ընտրեք, հաստատուն մնաք և առանց զայթակղության լինեք Քրիստոսի օրվա համար՝ լցված արդարության պտուղներով, Հիսուսի Քրիստոսի միջոցով, ի փառս և ի գովեստ Աստծու» (Փիլիպ., Ա 9-11):

⁴¹⁹ Մովսէս Խորենացի, էջ 259, «Սողոմոնը տասներկու տարեկան հասակում թագավորեց իսրայելցիների վրա» (Մովսէս Խորենացի, էջ 267):

⁴²⁰ «Սողոմոնը նստեց իր հոր՝ Դավթի գահին, երբ տասներկու տարեկան էր»

Տրդատը մանուկ Գրիգորիսին «առաքել բազում համար-
ձակութեամբ, հանդերձ Սանատրկաւ ոմամբ յիրմէ ազգէն Արշա-
կունեաց: Որոյ երթեալ՝ լինէր օրինակ բարի, հայրենականօքն
վարելով առաքինութեամբք. այլ կուսութեամբ գեր ի վերոյ քան
գհարսն, եւ պատժականաւ զոյգ ընդ թագաւորին: Իսկ ի հասանել
համբաւոյ վախճանին Տրդատայ, ի դաւելոյ նորին Սանատրկոյ եւ
այլոց ոմանց հանապազասուտ արանց Աղուանից՝ սպանին գե-
րանելին, ընթադրեալ ձիովք, բարբարոսքն ի Վատնեան դաշ-
տին, մերձ ի Կասբիականն կոչեցեալ ծով: Ջոր բարձեալ սարկա-
ւագաց նորին, բերելով ի փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւա-
նի: Իսկ Սանատրկոյ թագ կապեալ ինքեան՝ ունի զքաղաքն Փայ-
տակարան. զօրութեամբ օտար ազգաց խորհէր տիրել բոլորունս
Հայոց»⁴²¹:

Սանատրուկի (իմա՝ Սանեսան) գործողությունների,
Տրդատի մահվան և Աղծնիքի Բակուր բղեշխի «տիրագլուխ» լի-
նել կամենալու ժամանակաշրջանը Մովսես Խորենացին որպես
«անիշխանութեան եւ անխաղաղութեան» ժամանակ է համարել՝
գրելով. «Որպէս յաստուածայինսն գտանեմք ասացեալ պատմու-
թիւնս, եբրայական ազգին, յետ դատաւորացն, ի ժամանակի
անիշխանութեանն եւ անխաղաղութեան, ոչ լինել թագաւոր, եւ
առն ըստ հաճոյից իւրոց գնալ՝ սապէս եւ ի մերունս էր տեսանել
աշխարհի: Քանզի ի վախճանել երանելոյն Տրդատայ՝ մեծ իշ-
խանն Բակուր, որ բղեաշխն Աղծնեաց կոչէր, տեսեալ զՍանատ-
րուկ թագաւորեալ ի Փայտակարան՝ զնոյն խորհեցաւ եւ ինքն. թէ-

(Գ. Թագ., Բ.12):

⁴²¹ Մովսես Խորենացի, էջ 259-260, «...մեծ վստահությամբ ուղարկեց մի ոմն
Սանատրուկի հետ, որ իր Արշակունի տոհմից էր: Նա գնալով՝ բարի օրինակ էր
դառնում ըստ հայրենական առաքինությունների վարվելով, բայց կուսությամբ
գերազանցելով հարերից, իսկ պատժելու կողմից՝ թագաւորին հավասարվելով:
Իսկ երբ Տրդատի վախճանվելու լուրը հասավ, բարբարոսները նույն Սանատ-
րուկի և ուրիշ մի քանի միշտ սուտ խոսող աղվանների դավերով երանելի (Գրի-
գորիսին) սպանեցին Վատնյան դաշտում Կասբիական կոչվող ծովի մոտ, ձիերի
ոտնատակ տալով: Նրա սարկավագները նրա մարմինը բերին Փոքր Սյունիք
(Արցախի մյուս Հաբանդ գավառը - Ն. Դ.), թաղեցին Ամարաս ավանում: Իսկ Սա-
նատրուկը ինքը իրեն թագադրելով՝ գրավեց Փայտակարան քաղաքը, և մտա-
ծում էր ամբողջ Հայաստանին տիրել օտար ազգերի օգնությամբ» (Մովսես
Խորենացի, էջ 267): Պատմահոր հիշատակած մագքթաց Սանատրուկ Արշակու-
նուն (էջ 266) Փավստոս Բուզանդը (էջ 26-30) նշել է Սանեսան անունով:

պէտ եւ ոչ թագաւորել, զի ոչ էր Արշակունի, այլ տիրագլուխ կամեցաւ լինել. ճեղքեալ ի միաբանութիւնէ Հայոց՝ ձեռս ետ յՌոմիզդարքայ Պարսից»⁴²²:

Աստվածաշնչի հիշատակութիւնն այստեղ վերաբերում է Ղատաւորաց գրքի հետևյալ դրվագին. «Եւ գնացին որդիքն Իսրայելի ի ժամանակին յայնմիկ այր յիրաքանչիւր ցեղ իւր եւ յազգատոհմ իւր, եւ ելին անտի այր յիրաքանչիւր ժառանգութիւն իւր: Յաւուրսն յայնոսիկ ոչ գոյր թագաւոր Իսրայելի, եւ այր յիրաքանչիւր գհաճոյս աչաց իւրոց առնէր»⁴²³: Հայոց պատմության որոշ դրվագների՝ Աստվածաշնչի հետ («Միթէ ո՞չ հանէք դուք զքահանայսն Տեառն զորդիսն Ահարոնի եւ զՂեւտացիսն, եւ արարէք ձեզ քուրմս ի ժողովրդենէ երկրիդ...»⁴²⁴) համեմատական շարադրանքը բնորոշ է Մովսէս Խորենացու երկի համապատասխան հատվածներին. «Վասն որոյ իւրաքանչիւր ոք առ անձին է քուրմ եւ պաշտոնեայ, որպէս ասէ Գիր, որ է ըստ այժմուցս ի դէպ. ուր բազում խօսողք աստուածայնոցն, եւ զօրութեան մտացն ոչ հասուք. եւ խօսողք՝ ոչ ըստ հաճոյից Հոգւոյն, այլ ըստ օտարին: Վասն որոյ հիացումն իմն են ճառքս եւ սարսափելի՝ որոց միտս ունին. քանզի խօսի որ խօսին՝ զԱստուծոյ եւ զաստուածայինսն, եւ խորհուրդք խօսողին յօտարն հային»⁴²⁵: Այս-

⁴²² Մովսէս Խորենացի, էջ 260, «Ինչպէս Աստվածաշնչի մեջ գտնում ենք ասված՝ երբայական ազգը դատավորներից հետո, անիշխանության և անխաղաղ ժամանակ, չունեթ թագավոր, և ամեն մարդ վարվում էր իր հաճույքի, նույն բանը կարելի էր տեսնել և մեր երկրում: Որովհետև երբ երանելի Տրդատը վախճանվեց, Բակուր մեծ իշխանը, որ կոչվում էր Աղծնիքի բղեշխ, տեսնելով, որ Սանատրուկը թագավորեց Փայտակարանում, նույնը կամեցավ և ինքն անել, սակայն չթագավորել, որովհետև Արշակունի չէր, այլ կամեցավ ինքնագլուխ լինել: Ուստի Հայոց միաբանութիւնից անջատվելով՝ ձեռքը մեկնեց պարսից Ռոմիզդ (իմա՝ Շապուհ II-Ն.Գ.) թագավորին» (Մովսէս Խորենացի, էջ 268):

⁴²³ «Այն ժամանակ իսրայելցիները զնացին ամեն մեկն իր ցեղի և ազգատոհմի մոտ, և այնտեղից ամեն մարդ զնաց իր կալվածքը: Այն օրերին Իսրայելում թագավոր չկար, և ամեն մարդ անում էր այն, ինչ հաճելի էր իրեն» (Ղատ., ԻԱ. 24-25):

⁴²⁴ «Միթէ դուք չվնդեցիք Տիրոջ քահանաներին՝ Ահարոնի որդիներին ու Ղեւտացիներին, և ձեզ համար քրմեր ընտրեցիք մի այլ երկրի ժողովրդի միջից» (Բ Մնաց., ԺԳ. 9):

⁴²⁵ Մովսէս Խորենացի, էջ 249, «Այս պատճառով յուրաքանչյուր մեկը իր համար անձին քուրմ է և պաշտոնյա, ինչպէս ասում է սբ. Գիրքը, որ հարմար է գալիս ներկա պայմաններին, երբ շատերն են, որ խոսում են աստվածային նյութերի

տեղից երևում է, որ, պատմությանը բարոյախոսական տեսանկյունից անդրադառնալիս, Մովսես Խորենացին ընդգծված կերպով իր շարադրանքում ներմուծել է աստվածաշնչյան պատկերներ:

Պարթև Արշակունիների ծագման բացատրության կապակցությամբ Մովսես Խորենացին գրել է. «Ուստի եւ թագաւորեաց Արշակ Քաջ, որ էր ի գաւակէ Աբրահամու, ի Քետուրական ծննդոց, առ ի հաստատել բանին Տեառն առ Աբրահամ, թէ «թագաւորք ազգաց ի քէն ելցեն»⁴²⁶ Այնուիւետև այս առիթով ավելացրել է. «Քանզի ասէ, յետ մեռանելոյն Սառայի՝ առեալ Աբրահամու կին զՔետուրայ. յորմէ ծնան Եմբան եւ եղբարք նորա, զորս Աբրահամ ի կենդանութեանն իւրում մեկնեաց յԻսահակայ, արծակելով յերկիրն արեւելից»⁴²⁷: Այս տեղեկության հիմքում Ծննդոց գրքի հետևյալ հատվածն է. «Եւ եղեւ Աբրամ ամաց իննսուն եւ ինունց. եւ երեւեցաւ Տէր Աստուած Աբրամու եւ ասէ ցնա... Եւ եղից զուխտ իմ ընդ իս եւ ընդ քեզ, եւ բազմացուցից զքեզ յոյժ յոյժ... եւ եղիցես հայր բազմութեան ազգաց: ...Եւ աճեցուցից զքեզ յոյժ, եւ եղից զքեզ յազգս. եւ թագաւորք ի քէն ելցեն... Եւ Սարայի կնոջ քո ոչ կոչեսցի անուն նորա Սարա, այլ Սառա եղիցի անուն նորա: Եւ օրհնեցից զնա, եւ տաց քեզ ի նմանէ որդի, եւ օրհնեցից զնա... եւ թագաւորք ազգաց ի նմանէ եղիցին... Եւ յաւել Աբրահամ առնուլ կին որում անուն էր Քետուրա... Եւ ծնաւ նմա զԶեմբան... »⁴²⁸:

մասին, բայց առանց հասկանալու խնդրի էությունը, և խոսողները ոչ թե Սուրբ Գրքու հաճույքով են (ընտրված), այլ՝ օտարի: Ուստի ապշեցուցիչ են այս ճառերը և սարսափելի մտածող մարդկանց համար, որովհետև խոսողը խոսում է Աստծու և աստվածայինի մասին, բայց խոսողի միտքն ուղղված է դեպի օտարը» (Մովսես Խորենացի, էջ 261):

⁴²⁶ Մովսես Խորենացի, էջ 102, «Ուստի թագավորում է Արշակ քաջը, որ Աբրահամի սերունդից էր Քետուրայի զավակներից, որով հաստատվում էր Աբրահամին ուղղված Տիրոջ խոսքը, թե «Քեզանից ազգերի թագավորներ կծնվեն» (Մովսես Խորենացի, էջ 148):

⁴²⁷ Մովսես Խորենացի, էջ 203, «Որովհետև (ս. Գիրքը) ասում է, թե Սառայի մեռնելուց հետո Աբրահամը կին առավ Քետուրային, որից ծնվեցին Եմբանը և նրա եղբայրները, որոնց Աբրահամն իր կենդանության ժամանակ բաժանեց Իսահակից, ուղարկելով նրանց արևելյան երկրները» (Մովսես Խորենացի, էջ 227):

⁴²⁸ «Երբ Աբրամը իննսունինը տարեկան եղավ, Տեր Աստված երևաց Աբրահամին

Իսկ Տրդատ III Մեծի ողբերգական մահվան պատճառ եղածներին Աստվածաշնչի շարադրանքի ոճով դատապարտելով՝ Մովսես Խորենացին գրել է. «Ձի ոչ վասն որոյ խօսին՝ կրէ զաշխատութիւն, եւ ոչ մեղմով եւ հեզիկ, որպէս ուսան, թէ «մի՛ ոք լուիցէ արտաքոյ զբարբառ նորա», այլ յաղագս փառաց մարդկայնոց, եւ ճայթեցուցանելով հնչեցուցանեն ի լսելիս մարդկան»⁴²⁹: Նա համեմատությունը կատարել է Եսայի մարգարեության հետևյալ տողի հետ. «Մի՛ աղաղակեսցէ եւ մի՛ վիճեսցի, եւ մի՛ ոք լուիցէ արտաքոյ զբարբառ նորա»⁴³⁰:

Տրդատ III-ին հաջորդել էր նրա որդին՝ Խոսրով III Կոտակը (330-338 թթ.), որի գահակալության և Կրթանես եպիսկոպոսապետի աթոռակալության տարիներին, ըստ Փավստոս Բուզանդի՝ «խաղաղություն եւ շինություն, մարդաշատություն եւ առողջություն, պտղաբերություն եւ ստացուաշատություն եւ շահեկանություն, եւ մեծն աստուածասէր պաշտօն ի հաճոյակատարն բարություն յամս յաւուրս սոցա աճեալ բազմացաւ»⁴³¹:

ու ասաց նրան. «...Ուխտ եմ դնելու իմ և քո միջև. ես անչափ բազմացնելու եմ քո սերունդը... բազում ազգերի նախահայր եմ դարձնելու քեզ... Քո սերունդը շատ եմ աճեցնելու, քեզնից բազում ազգեր պիտի սերեն, թագավորներ պիտի ծնվեն քեզնից... Քո կին Սարայի անունը այլևս Սարա թող չլինի, այլ Սառա թող լինի նրա անունը: Ես կօրհնեմ նրան և նրա միջոցով քեզ զավակ կպարգևեմ, ես կօրհնեմ նրան, և նրանից ազգերի թագավորներ կծնվեն...Աբրահամը առավ մի կին էլ, որի անունը Զետուրա էր... Սա նրա համար ծնեց Ձեմրանին...» (Ծննդ., ժէ 1-6, 15-16, Իե 1-2):

⁴²⁹ Մովսես Խորենացի, էջ 249, «Որովհետև նա հոգում է ոչ թե խոսած նյութի մասին և ոչ էլ խոսում է մեղմ ու հեզաբար, ինչպես որ պատվիրված է, թե «ոչ ոք դուրսը նրա ծայնը չլսի», այլ (հոգում է) մարդկային փառքի համար, և, որոտաօին հնչեցնում են մարդկանց լսելիքը» (Մովսես Խորենացի, էջ 261):

⁴³⁰ «Նա չի աղաղակելու և չի վիճելու, ոչ ոք դրսում նրա ծայնը չի լսելու» (Ես., ԽԲ 2):

⁴³¹ «Սրանց տարիներում աճեցին ու բազմացան խաղաղություն և շենություն, մարդաշատություն և առողջություն, պտղաբերություն, առատություն և զործի աջողություն և աստվածային մեծ պաշտամունքը և աստվածահաճո բարի վարք» (Փավստոս Բուզանդ, էջ 15): Խոսրով Կոտակի կարևոր ձեռնարկումներից էր «Տաճար մայրի» և «Խոսրովակերտ» անտառների տնկումը, որոնք լինելու էին որատեղի արքայի ու ազնվականության համար: Ըստ Ղ. Ինժիճյանի, այդ անտառները տնկվում էին նաև ազնվական դասի զինվորական ուսուցման համար (Ղ. Ինժիճեան, Հնախօսություն աշխարհագրական Հայաստաննայց աշխարհի, հ. Գ, Վենետիկ, 1835, էջ 137-139):

Խոսքով III-ի դեմ ելած Աղծնիքի բղեշխին հնազանդեցնելու համար ուղարկված Մանաճիիր Ռշտունին (որին դեռևս Տրդատ III-ը Հայոց հարավային գործի հրամանատար էր նշանակել), ըստ Մովսես Խորենացու՝ «Ճակատ տուեալ ընդ Բակուր բղեշխի՝ սատակէ գնա, եւ զգօրս նորա եւ զպարսիկս օգնականս նմա հալածականս առնէ»⁴³²:

Միևնույն ժամանակ Պատմահայրը խիստ դատապարտել է Մանաճիիր Ռշտունուն Հակոբ եպիսկոպոս Մծբնացու և նրա սարկավագների հանդեպ գործադրած անարդարությունների համար, ինչպես նաև գրել է նրան բաժին հասած պատժի մասին. «Եւ Յակոբու դէմ եղեալ առ արքայ, առաւել եւս զչարի Մանաճիիր, եւ ի սադրելոյ գաւառականացն՝ զութեսին սարկաւագունս նորա, որք ի կալանսն էին, հրամայէ ի ծով ընկենուլ: Ջոր լուեալ մեծին Յակոբու՝ դառնայ ի տեղի իւր լի բարկութեամբ, որպէս Մովսէսն յերեսաց Փարաւոնի: Եւ ելեալ ի լեառն ինչ, յորմէ երևէր գաւառն ամենայն, անէծ զՄանաճիիր եւ զգաւառ նորին: Եւ ոչ ինչ յամեցին դատաստանքն Աստուծոյ հասանել ի վերայ. եւ նման Հերովդի պէս պէս ցաւովք սատակի Մանաճիիր. եւ պտղաբերութիւն ջրաւորաց գաւառին դարձաւ յաղտաղտուկ, եղեալ ի վերայ նոցա երկինք պղնձի ըստ Գրոց...»⁴³³:

Այստեղ Մովսես Խորենացու կողմից կատարված համեմատությունները և դրանցից ստեղծված պատկերները հիմնված են Ելից, Սաղմոսների ու Երկրորդ Օրենքի գրքերի վրա, ուր

⁴³² Մովսես Խորենացի, էջ 263, «պատերազմեց Բակուր բղեշխի դեմ և սպանեց նրան, իսկ նրա զորքերն ու նրան օգնության ուղարկված պարսիկներին հալածեց» (Մովսես Խորենացի, էջ 270):

⁴³³ Մովսես Խորենացի, էջ 264, «Հակոբը դիմում է թագավորին, սրա վրա Մանաճիիրն ավելի է չարանում, և գավառացիների թելադրությամբ նրա ութ սարկավագներին, որ կալանավորված էին, հրամայում է ծովը նետել: Երբ այս լսում է Մեծին Հակոբը, սաստիկ բարկացած վերադառնում է իր տեղը, ինչպես Մովսեսը Փարավոնի մոտից, բարձրանում է մի լեռ, որտեղից ամբողջ գավառն երևում էր, և անիծում է Մանաճիիրին և նրա գավառը: Եվ Աստուծու դատաստանը շուտ վրա է հասնում, որովհետև Մանաճիիրը Հերովդեսի նման տեսակ-տեսակ ցավերից բռնվում է և մեռնում, իսկ գավառի պտղաբեր ջրարբի հողերը աղուտների են փոխվում, երկինքը նրանց վրա պղինձ է դառնում ըստ սբ. Գրքի» (Մովսես Խորենացի, էջ 271): Հմմտ. Փավստոս Բուզանդ, էջ 41-43: Մ. Օրմանեան, Ազգապատում, մ. Ա, էջ 140-142:

կարդում ենք. «Եւ ել Մովսէս ի Փարաւոնէ լի բարկութեամբ... Արար գերկիրն պտղաբեր յաղտաղտուկս, վասն չարութեան բնակչաց նորա... «Եւ եղիցին ի վերայ գլխոյ քո երկինք պղնձի, եւ երկիր ի ներքոյ քո՝ երկաթի»⁴³⁴։

Հաջորդ համեմատությունը Հին Կտակարանի հետ Մովսէս խորենացին կատարել է, երբ, պատմելով Խոսրով Կոտակի ժամանակ մազքթաց թագավոր Սանատրուկի գլխավորությամբ 335 թվականին տեղի ունեցած հյուսիսական ցեղերի ներխուժման, Օշականի ճակատամարտում (336 թ.) նրանց կրած պարտության և Վահան Ամատունու կողմից Սանատրուկի սպանության մասին, նշել է. «Յայնժամ քաջին Վահանայ Ամատունոյ հայեցեալ յեկեղեցին կաթողիկէ, ասէ. «Օգնեա՛ ինձ, Աստուած, որ գ՛րաւթեան պարսաքարն դիպեցուցեր ճակատու խրոխտացելոյն Գողիաթու. ուղղեա՛ եւ զնիզակս իմ ական հզօրս այսորիկ»։ Եւ ոչ վրայեցաւ ի խնդրոյն. ընդ գաւակ ձիոյն հարեալ՝ յերկիր կործանեաց զահագին զվիրագն»⁴³⁵։

Այստեղ ակնհայտ է համեմատությունը Սողոմոնի որդու՝ Դավթի կողմից Գողիաթին պարսաքարով սպանելու մասին սբ. Գրքում նկարագրված դրվագի հետ. «Եւ ձգեաց Դաւիթ զծեռն իւր ի մախաղն, եւ առ անտի քար մի, եւ պարսաքարեաց եւ եհար զճակատ այլազգւոյն. եւ եմուտ քարն ընդ սաղաւարտն ի ճակատն, եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր»⁴³⁶։

⁴³⁴ «Մովսէսը փարավոնի մոտից դուրս եկավ խիստ զայրացած... Պտղաբեր երկիրն աղուտ դարձրեց՝ նրա բնակիչների չարության դիմաց... «Քո գլխի վրա երկինքը պղնձից կլինի, իսկ քո ներքևի երկիրը՝ երկաթից» (Եւ., ԺԱ 9, Սաղմ. 62 34, Երկր. Օրէնք, ԻԸ 23)։

⁴³⁵ Մովսէս խորենացի, էջ 267, «Այս ժամանակ քաջ Վահան Ամատունին դառնալով դեպի կաթողիկէ եկեղեցին՝ ասաց. «Օգնիր ինձ, Աստված, դու, որ Դավթի պարսաքարը դիպցրիր խրոխտացող Գողիաթի ճակատին, իմ նիզակս էլ ուղղիր այս հզորի աչքին»։ Նրա խնդրանքը զուր չանցավ. ձիու զավակից խփելով՝ գետին գլորեց ահագին հսկային» (Մովսէս խորենացի, էջ 273)։

⁴³⁶ «Դավիթը իր ձեռքը մտցրեց տուրակի մեջ, այտեղից մի քար առավ ու պարսատիկով նետելով՝ հարվածեց այլազգու ճակատին։ Քարը սաղալարտը ծակելով մտավ ճակատի մեջ և Գողիաթը երեսնիվայր գետին ընկավ» (Ա Թագ., ԺԷ 49)։

Պարսից Շապուհ II արքայի կողմից Տիրան թագավորի⁴³⁷ նենգ գերեվարման և կուրացման մասին հիշատակությունում Մովսես Խորենացին համեմատություն է կատարել Սեդեկիա թագավորի⁴³⁸ հետ, որին գերեվարել և կուրացրել էր Բաբելոնի Նաբուգոդոնոսոր II թագավորը (մ. թ. ա. 605-562 թթ.) Հրեաստանը (մ. թ. ա. 597 թ.) գրավելուց հետո: Մովսես Խորենացին գրում է, որ Շապուհը կշտամբեց Տիրանին «բանիւք յանդիման զօրաց իւրոց, եւ զաչս նորա կուրացոյց՝ որպէս զՍեդեկիային այնու ի հնունն»⁴³⁹: Պատմահոր համեմատությունը Սեդեկիային վերաբերող «Թագաւորաց Դ» գրքից քաղված դրվագի հետ միայն կուրացման կապակցությամբ է նմանություն կրում, քանզի վերջինում կարդում ենք. «Եկն Նաբուքոդոնոսոր արքայ Բաբելոնի եւ ամենայն զօրք իւր ի վերայ Երուսաղեմի... Եւ կալան զթագաւորն (Սեդեկիա - Ն. Դ.) եւ ածին առ արքայն Բաբելոնի ի Ռեբղաթա, եւ խօսեցաւ ընդ նմա դատաստանօք: Եւ զորդիսն Սեդեկեայ սպան առաջի նորա, եւ զաչսն Սեդեկեայ կուրացոյց» և շղթայակապ տարավ Բաբելոն⁴⁴⁰:

Պատմահայրն այնուհետև կրկին հենվել է Աստվածաշնչի վրա մ. թ. ա. VII դ. տեղի ունեցած մի իրադարձության կապակցությամբ: Նա գրել է. «...Սենեքերիմս կացեալ արքայ Ասորեստանի, որ զԵրուսաղէմ պաշարեաց առ Եզեկիայիւ Հրէից առաջնորդաւ. զոր սպանեալ որդւոց նորա Ադրամելէքայ և Սանասարայ՝ եկին փախստական առ մեզ»⁴⁴¹: Աստվածաշնչում Սենեքե-

⁴³⁷ Կ. Մելիք-Օհանջանյանը նշել է, որ Տիրան թագավորը իր պապի՝ Տրդատ III-ի ամուսնով կոչվել է նաև Տրդատ (Կ. Մելիք-Օհանջանյան, Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի - «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, հաս. գիտ., 1947, N 7, էջ 60-61):

⁴³⁸ Սեդեկիան Զուդայի վերջին թագավորն էր, որն իր գահակալության իններորդ տարում ապստամբեց Նաբուգոդոնոսորի դեմ, սակայն պարտվեց, զերի ընկավ մահացավ բանտում:

⁴³⁹ Մովսես Խորենացի, էջ 276, «...մախատեց խոսքերով իր զորքերի դեմ և նրա աչքերը կուրացրեց, ինչպես հնում Սեդեկիայինը» (Մովսես Խորենացի, էջ 399, ծան. 164):

⁴⁴⁰ Դ. Թագ., ԻԵ 2, 6-7:

⁴⁴¹ Մովսես Խորենացի, էջ 70, «Սենեքերիմը Ասորեստանի թագավոր է եղել, նա որ Երուսաղեմը պաշարեց հրեաների Եզեկիայի առաջնորդի ժամանակ: Նրա որդիները՝ Ադրամելեքը և Սանասարը (Մարասար), նրան սպանելով, փախան եկան մեզ մոտ», Մովսես Խորենացի, էջ 124):

րիմի մասին կարդում ենք. «Եւ եղև մինչդեռ երկիր պագաներ ի տան Նեսրաքայ աստուծոյ իւրում, Ադրամելէք եւ Սարասար որդիք նորա հարին զնա սրով, եւ ինքեանք զերծան յերկիրն Արարադայ. եւ թագաւորեաց Ասորդան որդի նորա ընդ նորա»⁴⁴²:

IV դարի 40-ական թթ. կեսերին պարսկա-հռոմեական հակամարտության զագաթնակետն էր Տիգրիսից ոչ հեռու՝ Սինգարայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, որն ավարտվեց պարսիկների հաղթանակով: Հ. Մանանդյանը իրավացի է համարել Ջ. Բյուրիի և Ն. Ադոնցի կարծիքը, որ այն տեղի էր ունեցել ոչ թե 348 թ., ինչպես նախկինում ենթադրվել է, այլ 345 թ.⁴⁴³: Միևնույն ժամանակ, Ն. Ադոնցի կարծիքը, թե Տիրան թագավորը գերի էր ընկել պարսիկների ձեռքը⁴⁴⁴, Հ. Մանանդյանը անհավանական և անընդունելի է համարել⁴⁴⁵:

Տիրանի կյանքի վերջին տարիների մասին Պատմահոր և Բուզանդի⁴⁴⁶ հաղորդումներից հետևում է, որ Մեծ Հայքն անկախ թագավորություն էր, որի թագավորը՝ Տիրանը, պարսկա-հռոմեական հակամարտության սրման պայմաններում, հայտնվել էր բավականին բարդ իրավիճակում, ինչից ցանկանում էր օգտվել պարսից արքան և Հայոց թագավորությունը ներքաշել իր ճամբարը՝ ընդդեմ Հռոմեական կայսրության: Ըստ Մովսես Խորենացու, Տիրան թագավորին Շապուհը խաբեությամբ հրավիրում է իր պալատը, իբրև թե բանակցությունների համար: Տիրա-

⁴⁴² «Երբ նա երկրպագում էր իր Նեսրաք աստծու տանը, նրա որդիներ Ադրամելէքն ու Սարասարը նրան սրով հարվածեցին և Արարատ երկիրը փախան: Նրա փոխարեն թագավորեց իր որդին՝ Ասորդանը», Դ Թագ. ԺԹ 37: հմմտ. «...փախստական ի Հայս», տես՝ ես. Լէ.38):

⁴⁴³ J. B. Bury, The Date of the Battle of Singara - Byzantinische Zeitschrift, V, 1896, p. 302-305. Н. Адонц, Фауст Византийский - Христианский Восток, 1917-1920, VI, 3, с. 254-255.

⁴⁴⁴ Н. Адонц, Фауст Византийский, с. 255.

⁴⁴⁵ Հ. Մանանդյան, Երկեր Բ, հ. Բ, մաս Ա, էջ 158:

⁴⁴⁶ Հ. Մանանդյանը (նույն տեղում, էջ 156) չի համաձայնվել այն տեսակետի հետ, թե Տիրանը, փոխելով իր հոր՝ Խոսրով Կոտակի ու պապի՝ Տրդատ Գ Մեծի քաղաքականությունը, բարեկամություն էր հաստատել Շապուհ Բ-ի հետ (Հ. Յ. Աստուրեան, Քաղաքական վերաբերություններ ընդ մեջ Հայաստանի եւ Հռովմայ 190-էն մ. թ. մինչեւ 428, յ. Բ., Վենետիկ, 1912, էջ 276: Հմմտ. Ա. Գարագաշեան, Զննական պատմութիւն Հայոց, մասն Գ, Պատմական ժամանակ. Թիֆլիս, 1895, էջ 37: Լեո, Երկերի ժողովածու, Ա, Հայոց պատմություն, հ. Ա, Երևան, 1966, էջ 438):

ընդ կամա թե ակամա ընդունում է Շապուհի հրավերը, որն իր «բարեկամական» հավաստիացումներն ամրագրել էր երդումով: Սակայն շուտով բացահայտվեց երդման կեղծությունը, քանզի Տիրան թագավորը մեկնեց Պարսկաստան, որտեղ և կալանավորվեց ու դաժանորեն կուրացվեց Շապուհի կողմից: Այնուհետև նա վերադարձավ Հայաստան, որտեղ և կնքեց իր մահկանացուն⁴⁴⁷:

Տիրան թագավորի կուրացման և կալանավորման պարագաները այլ կերպ է ներկայացրել Փավստոս Բուզանդը, որի համաձայն, պարսից արքա Շապուհ II-ը Ատրպատականում որպես պաշտոնյա էր թողել Վարազ Շապուհին, որը հաշտություն կնքելու պատրվակով դեսպաններ էր ուղարկում Տիրանի մոտ, սակայն իրականում նա դավեր էր նյութում Հայոց արքայի դեմ: Տիրան արքան իր մոտ է հրավիրում Վարազ Շապուհին: Նա երեք հազար սպառազինված զորքով ներկայանում է Տիրանին Ապահունյաց գավառում: Մի քանի օր նրանք որսով և գվարձություններով էին զբաղված, իսկ Հայոց զորավարներն այնտեղ չէին: Թագավորի հետ սակավաթիվ սպասավորներ էին մնացել: Ընթրիքի ժամանակ՝ Վարազ Շապուհի հրամանով նրա զինվորներն անսպասելիորեն հարձակվում և երկաթե կապանքներով շղթայում են արքային, իսկ թագավորական գանձերը և ընտանիքը՝ այն ամենը, ինչ գտնում են ճամբարում, ավար են առնում: Ճանապարհին Դալար գյուղ մտնելով, Վարազ Շապուհը ածուխով դադում է Տիրանի աչքերը, և այդ գյուղը արքան կոչում է Ածուխ⁴⁴⁸:

Մեկ այլ դրվագում Մովսես Խորենացին, պատմելով Տիրան թագավորի և նրա եղբորորդու՝ Գնելի ողբերգական մահվան մասին, Արշակ թագավորից հեռացած Ներսես կաթողիկոսի սուգը հետևյալ կերպ է բնութագրել. «Թէպէտ եւ Արշակ կարծեաց զանխուլ գործել զչարիսն՝ այն որ ոչն ծածկի յամենատես ականէն Աստուծոյ, յայտնի եւ աշխարհի, առ ի մեղուցելոց պակուցումն, որպէս զմահն Տիրանայ եւ Գնելոյ: Քանզի գիտացեալ ամենայն ուրուք՝ իմացաւ զայս եւ մեծն Ներսէս, եւ անէծ զԱրշակ

⁴⁴⁷ Մովսես Խորենացի, էջ 276, 283:

⁴⁴⁸ Փավստոս Բուզանդ, էջ 82-84:

ու գառիթ սպանմանն. եւ գնացեալ նստաւ ի սուգ գաւուրս բազունս, որպէս Սամուէլ վասն Սաւուղայ»⁴⁴⁹:

Ըստ Աստվածաշնչի. «Սաւուղ ել ի տուն իւր ի Գաբաա: Եւ ոչ եւս յաւել Սամուէլ տեսանել զՍաւուղ մինչեւ յօր մահուան իւրոյ. զի սուգ ունէր Սամուէլ ի վերայ Սաւուղայ. եւ զղջացաւ Տէր զի թագաւորեցոյց զՍաւուղ ի վերայ Իսրայելի»⁴⁵⁰:

Արշակ թագավորի ինքնասպանության մասին գրելիս Պատմահայրը համեմատության կարգով նշել է. «...սաւուղաբար արար ընդ անծին իւրում»⁴⁵¹, իսկ թե ինչ էր այդ նշանակում, երևում է Առաջին Թագաւորութեանց գրքի հետևյալ դրվագից. «Եւ ա՛ռ Սաւուղ զսուսերն իւր եւ անկաւ ի վերայ նորա»⁴⁵²:

Պատմահոր երկում Աստվածաշնչի հետ համեմատության մյուս դրվագը Ձիրավի ճակատամարտում (371 թ.) Ներսես կաթողիկոսի դրսևորած վարքն է. «Արդ՝ իբրեւ ետես մեծն Ներսէս զայն ամենայն՝ ել նա ի կատար լերինն Նպատայ. եւ ամբարձ զձեռս իւր յերկինս, անխոնարհելի պահելով ի խնդրուածս, հանգոյն նախամարգարէին Մովսիսի, մինչև պարտեցաւ երկրորդն Ամաղէկ»⁴⁵³:

Ներսես կաթողիկոսին «Մովսես նախամարգարեի» հետ համեմատելիս Պատմահայրը նկատի է ունեցել Աստվածաշնչի հետևյալ դրվագը. «Եկն Ամաղէկ, եւ տայր պատերազմ ընդ Իսրայելի յՌափիդիմ: Եւ ասէ Մովսէս ցՅեսու, Ընտրեա դու քեզ արս զօրաւորս, եւ ելեալ տացես պատերազմ ընդ Ամաղեկայ առ վա-

⁴⁴⁹ Մովսես հորենացի, էջ 285, «Թեպետ կարծում էր Արշակ, թե այդ չարիքները թաքուն գործեց, բայց ինչ որ չի ծածկվում Աստծու ամենատես աչքից, հայտնի է դառնում և երկրին, ի սարսափ հանցավորների, ինչպես Տիրանի և Գնելի մահը: Երբ բոլորն այս բանն իմացան, իմացավ նաև Մեծն Ներսեսը, որ անիծելով Արշակին և սպանության առիթ եղողին, զնաց սուգ նստավ երկար օրեր, ինչպես Սամվելը Սավուղի համար» (Մովսես հորենացի, էջ 288):

⁴⁵⁰ «Սավուղը ելավ զնաց Գաբաա, իր տունը: Սամուելը մինչև իր մահվան օրը այլևս չտեսավ Սավուղին, քանզի Սամուելը Սավուղի համար սուգ էր անում: Եվ Տերը զղջացել էր, որ Սավուղին թագավոր էր օծել Իսրայելի վրա» (Ա. Թագ., ԺԵ 35):

⁴⁵¹ Մովսես հորենացի, էջ 301:

⁴⁵² «Սավուղն առավ իր սուրը և իրեն նետեց դրա վրա» (Ա. Թագ., ԼԱ 5):

⁴⁵³ Մովսես հորենացի, էջ 304, «Երբ Մեծն Ներսեսն այս բոլորը տեսավ, բարձրացավ Նպատ լեռան գլուխը, ձեռները դեպի երկինք բարձրացրեց և առանց իջեցնելու աղոթք էր անում, նախամարգարե Մովսեսի նման, մինչև երկրորդ Ամաղեկը պարտություն կրեց» (Մովսես հորենացի, էջ 304):

ղիւ. եւ ահա ես եկեալ կայցեմ ի վերայ գլխոյ բլրոյն, եւ գաւազանն Աստուծոյ ի ձեռին իմում: Եւ արար Յեսու որպէս ասաց նմա Մովսէս, եւ ճակատեցաւ յանդիման Ամաղեկայ. եւ Մովսէս եւ Ահարոն եւ Ովր ելին ի գլուխ բլրոյն: Եւ լինէր յորժամ ամբառնայր Մովսէս զձեռս իւր. զօրանայր Իսրայէլ. եւ յորժամ խոնարհեցուցանէր զձեռս իւր զօրանայր Ամաղէկ»⁴⁵⁴:

Փափստոս Բուզանդը ևս անդրադարձել է այս դրվագին՝ նշելով, որ Նպատ լեռան գագաթին՝ բազուկները դեպի երկինք բարձրացրած, հաղթանակի համար աղոթող Ներսես կաթողիկոսի կողքին էր Պապ թագավորը⁴⁵⁵:

Մովսէս Խորենացին Սահակ Պարթև կաթողիկոսի կապակցությամբ պատմում է, որ նա պարսից արքային դիմել էր մի քանի խնդրանքներով, մասնավորապես, իր փեսային՝ Համագասպ Մամիկոնյանին ասպետ Սահակի մահից հետո Հայոց սպարապետ նշանակելու հարցով: Պարսից արքան կատարեց Սահակ կաթողիկոսի խնդրանքները «նախ վասն փեսայի նորա Համագասպայ, դարձեալ եւ վասն մնացելոցն ... ազգացն Կամսարական եւ Ամատունի, որք սուզեալք ղօղեալք էին յանյայտ տեղիս. վասն որոյ մաղթեաց գթալ, իբր յաստուածային հրամանէ՝ ոչ բառնալ որդւոց յանցանս հարց...»⁴⁵⁶: Այստեղ Պատմահայրը վերահիմաստավորել է Նոր Կտակարանով («...մի մեղիցէք. եւ եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս, զարդարն եւ զանարատ: Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց,

⁴⁵⁴ «Եկավ Ամաղեկը ու Ռափիդիմում պատերազմեց Իսրայելի դեմ: Մովսեսը ասաց Յեսուին. «Ուժեղ տղամարդիկ ընտրիր և առավոտյան վեր կենալով պատերազմիր Ամաղեկի դեմ: Ես կգամ ու կկանգնեմ բլրի գագաթին, և Աստուծովազմանը կլինի իմ ձեռքին»: Յեսուն արեց այնպես, ինչպես իրեն ասել էր Մովսեսը, նա պատերազմեց Ամաղեկի դեմ: Մովսեսը, Ահարոնը և Ովրը բարձրացան բլրի գագաթը: Երբ Մովսեսը բարձր էր պահում ձեռքերը, առավելության էր հասնում Իսրայելը, իսկ երբ իջեցնում էր ձեռքերը, առավելության էր հասնում Ամաղեկը» (Ել., Ժժ 8-11): Ռափիդիմի ճակատամարտը Ամաղեկի հետ տեղի ունեցած *երկրորդ* բախումն էր, որի ժամանակ վերջինս պարտվեց (Ել., Ժժ 12-16), իսկ առաջինի մասին տես՝ Երկրորդում Օրինաց, ԻԵ. 17-19:

⁴⁵⁵ Փափստոս Բուզանդ, էջ 162-163, 166:

⁴⁵⁶ Մովսէս Խորենացի, էջ 322, «Ունի նրա Համագասպ փեսայի վերաբերմամբ, և ապա ... Կամսարական և Ամատունի տոհմերի մնացորդների վերաբերմամբ, որոնք պահմտել թաքնվել էին անհայտ տեղերում: (սբ. Սահակը) խնդրեց նրանց գթալ, ինչպես աստվածային հրաման է, որ որդիներին իրենց հայրերի հանցանքների համար չդատեն...» (Մովսէս Խորենացի, էջ 322):

եւ ոչ եթէ մերոցն միայն, այլ եւ ամենայն աշխարհի»⁴⁵⁷), այլ ոչ թե Հին Կտակարանով («Տէր Աստուած... ոչ անպարտ առնէ զպարտաւորն. ածէ զանօրէնութիւնս հարց յորդիս եւ յորդուց յորդիս մինչեւ յերիս եւ ի չորիս ազգս»⁴⁵⁸):

Քանի որ Պարսկաստանում Արտաշիր II-ին հաջորդել էր Շապուհ III-ը (383-388 թթ.), այնուհետև՝ Վռամ IV-ը (388-399 թթ.), իսկ Հայոց թագավոր Խոսրով IV-ը, անտեսելով Շապուհ III-ին, Սահակ Պարթևին Հայոց կաթողիկոս էր նշանակել, ուստի Մովսէս Խորենացու տեղեկությունը Արտաշիր արքայի մոտ Սահակ կաթողիկոսի գնալու մասին, ժամանակագրական անհամապատասխանություն է առաջացնում: Ն. Ադոնցը, հետևելով Պատմահոր տեքստին, Արտաշիրին և Սահակ Պարթևին այդ դրվագում ժամանակակիցներ է համարել, միևնույն ժամանակ նշելով, որ Արտաշիրին հաջորդեց Վռամը⁴⁵⁹: Ն. Ադոնցի գրքի անգլերեն թարգմանությունում Ն. Գարսոյանն ուղղակի նշել է "Ardasir II" և "Vahram IV", միևնույն ժամանակ, հենվելով Ա. Քրիստենսենի աշխատության վրա⁴⁶⁰, ծանոթագրել է, որ Վռամ IV-ը չի եղել Արտաշիր II-ի անմիջական հաջորդը, քանզի նրանց միջև գահակալել էր Շապուհ III-ը⁴⁶¹:

Հայոց պատմության այդ ժամանակաշրջանի առումով կարևոր է հայ պատմիչների երկերում Հայաստանի և Պարսկաստանի արքաների հաջորդականության ցանկերի հստակեցումը, քանի որ այն կազմում է հայ-պարսկական հարաբերությունների ժամանակագրական հենքի կարևոր հանգույցը: IV դարի վերջին տասնամյակներին Սեծ Հայքի թագավորությունում գահակալեցին Արշակ III-ը (378-385 թթ., երկրի պարսկա-հռոմեական բաժանման պայմաններում արևմտյան մասում մինչև

⁴⁵⁷ «...չմեղանչեք, իսկ եթե մեկը մեղանչի, Աստծու առաջ բարեխոս ունենք Յիսուս Քրիստոսին՝ արդարին և անարատին. և նա է քավությունը մեր մեղքերի, և ոչ միայն մեր մեղքերի, այլև՝ ամբողջ աշխարհի» (Թուղթ Յովհաննու Ա, Բ. 1-2):

⁴⁵⁸ «Տեր Աստված... մեղավորին չի ազատում պատժից, հայրերի գործած մեղքերը բարդում է որդիների և որդիների որդիների վրա մինչև երրորդ ու չորրորդ սերունդը» (Ել., ԼԳ. 7):

⁴⁵⁹ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, с. 267-269.

⁴⁶⁰ A. Christensen, L'Iran sous les Sassanides, 2nd ed. Copenhagen, 1944, p. 253.

⁴⁶¹ N. Adontz, Armenia in the Period of Justinian. Transl. with partial revisions, A bibliographical note and Appendices by N. Garsoian, Lisbon, 1970, p. 210, 212-213.

387թ.), Խոսրով IV-ը (385-388 թթ.), Վռամշապուհը (388-414 թթ.), կրկին Խոսրով IV-ը (414 թ.), Արտաշես-Արտաշիրը (421-428 թթ.): Այս ժամանակաշրջանի պարսից արքաների հաջորդական շարքն է՝ Շապուհ (II), Արտաշիր (II), [Շապուհ III]⁴⁶², Վռամ (IV Կրման), Հազկերտ (I-ը՝ Շապուհ III-ի որդին), Վռամ (V), Հազկերտ (II):

Մովսես Խորենացին, պատմելով պարսկաստանի արքա Հազկերտ I-ի⁴⁶³ որդու Շապուհի Հայաստանում գահակալելու ժամանակ հանցավոր գործողությունների մասին, դրանք դատապարտել է, հենվելով ԼԲ սաղմոսի վրա. «Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց»⁴⁶⁴:

Հայ Արշակունի վերջին թագավորի՝ Արտաշեսի (Արտաշիր)⁴⁶⁵ (423-428 թթ.) վարքի հանդեպ ըմբոստացած նախարարներին հանդիմանող Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը նրանց ասել էր. «Ոչ առ սուտս ունիմ զծեզ. իմ իսկ լուեալ է զայդպիսի աղէտս ամօթալեաց, եւ բազում անգամ յանդիմանեալ՝ ուրացաւ: Եւ արդ՝ պարտ է փոքր մի տանել թերութեան առնն, մինչեւ զելս

⁴⁶² Մ. Օրմանյանը պատմիչների հաղորդումներում հստակորեն տարբերակել է Շապուհ II-ին, 379 թվականին նրան հաջորդած Արտաշիր II-ին և Շապուհ III-ին վերաբերող տեղեկությունները (Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 247): Խորենացու հաղորդումները հետազոտելով, Զ. Աստուրյանը Շապուհ II-ի և Շապուհ III-ի կերպարների հետ կապված իրադարձությունները նույնպես հստակորեն զանազանել է միմյանցից, իսկ Զայոց թագավոր Խոսրովի գահակալության տարիները նշել է 383-391 թթ. (Զ. Աստուրեան, նշվ. աշխ., էջ 315: Զմմտ. Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Զայոց պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 108-109):

⁴⁶³ Զետազոտելով Զազկերտ I-ի եւ նրա որդու՝ Շապուհի հետ կապված դեպքերը, այստեղ նշված իրադարձությունները Զ. Մանանդյանը թվագրել է 416-420 թթ. (Զ. Մանանդյան, Երկեր Բ, հ. Բ, մաս Ա, էջ 284-286):

⁴⁶⁴ Մովսես Խորենացի, էջ 330: Սաղմ., ԼԲ 10: Սաղմունքում «հեթանոս» բառը նախաքրիստոնեական առումով կիրառված է *ցեղ* կամ *ազգ* իմաստով: «Հեթանոս» բառը ծագել է հունարեն «էթնոս»՝ «ցեղ, ազգ» բառից, որը, ինչպես նշել է Զր. Աճառյանը, նախաքրիստոնեական ժամանակների առումով Աստվածաշնչում տրվել է «ոչ-հրեաներին»: Օրինակ՝ «հեթանոսք... հասին արդարութեան, այնմ արդարութեան՝ որ ի հաւատոց անտի», կամ՝ «ամենայն եկեղեցիք հեթանոսաց», Զոռվմ., Թ; ԺԶ): Այսինքն, նախաքրիստոնեական առումով «հեթանոս» տերմինը կիրառվել է «ցեղ, ազգ» իմաստով, իսկ միջնադարում «հեթանոս» էին կոչում «ոչ-քրիստոնյաներին, կռապաշտներին» (Զր. Աճառյան, Զայերեն արմատական բառարան, հ. III, էջ 74):

⁴⁶⁵ Մովսես Խորենացի, էջ 338:

իրացն խորհել մարթասցուք կայսերքն Յունաց Թեոդոսիւ, եւ ոչ անօրինաց մատնել ի ծաղր եւ յայպանումն»⁴⁶⁶:

Երբ նախարարները, այնուամենայնիվ, ջանացին Սահակ կաթողիկոսին իրենց համախորհուրդ անել, նա հայրենասիրական ոգով ավելացրեց. «Ինձ քաւ լիցի մատնել գայլոց զիմ մոլորեալ ոչխարս»⁴⁶⁷, եւ ոչ պատել զբեկեալն կամ զհիւանդացեալն, այլ գահավեժ առնել: Ձի եթէ էր հաւատացեալ թագաւորի առաջի՝ փութայի եւ ոչ յապաղէի, յուսալով զկանգնումն զլորելոյն. այլ հեթանոսաց, յառաւել կործանումն՝ ոչ առնում յանձն, ըստ այնմ՝ թէ մի մատնիր գազանաց զանձն խոստովանող քեզ»⁴⁶⁸: Սաղմոսներում կարդում ենք. «Մի՛ մատներ գազանաց զանձն որ խոստովան առնի առ քեզ, եւ զանձինս տնանկաց քոց մի՛ մոռանար ի սպառ»⁴⁶⁹:

Հայոց թագավոր Արտաշեսի հետ Պարսկաստան մեկնած Սահակ Պարթևը մեծ արժանապատվությամբ ներկայացավ պար-

⁴⁶⁶ Նույն տեղում, 346-347, «Ձեզ սուտ չեմ հանում, ինքս էլ լսել եմ նրա ցավալի, ամոթալի արարնունքները, շատ անգամ հանդիմանել եմ, բայց նա ուրացել է: Արդ՝ պետք է մի կարճ ժամանակ տանել այդ մարդու թերությունը, մինչև մտածենք մի ելք գտնենք հունաց Թեոդոս կայսրի միջոցով, բայց ոչ թե անօրեններին մատնել, ծաղր ու խայտառակ լինելու» (Մովսես Խորենացի, էջ 341):

Ռ. Թոմսոնը Մովսես Խորենացուն անհիմն և սխալ կերով համարելով VIII դ. հեղինակ (Moses Khorenats'i, Introduction, p. 60 տես նաև R. Thomson, Studies in Armenian Literature and Christianity. The Maccabees in Early Armenian Historiography. Variorum, 1994, VII, p. 332), գրել է, որ այս և հաջորդ հատվածները հիմնված են Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ից, և, որ միայն Թեոդոսի անունն է բացակայում վերջինում (Moses Khorenatsi, 1978, p. 339, n. 2, 3): Պատմահայրը, ինչպես և Ղազար Փարպեցին նույն՝ V դարի հեղինակներ են:

⁴⁶⁷ Համեմատության նման ոճը բնորոշ էր վաղմիջնադարյան հայ պատմագրությանը: Այսպես, Ագաթանգեղոսը, պատմելով սբ. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի մասին, գրել է. «Եւ ի գառանցն լինելոց են գայլք, որ կոտորելոց են զսուրբ գառինս...» (Ագաթանգեղոս, էջ 391):

⁴⁶⁸ Մովսես Խորենացի, էջ 347, «Քավ լիցի, որ ես իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին, որ ես չպատեմ բեկվածին կամ հիվանդացածին, այլ գահավեժ անեմ: Եթէ հավատացյալ թագավորի առաջ (պետք լիներ զնալ), կութայի, չէի հապաղի, հուսալով, թե զլորվածին ոտքի (կարելի է) կանգնել. այլ հեթանոսներին հանձնել, ավելի մեծ կործանման համար՝ հանձն չեմ առնում, համաձայն այն խոսքին, թե մի մատնիր գազաններին մի անձ, որ խոստովանում է քեզ» (Մովսես Խորենացի, էջ 342):

⁴⁶⁹ «Քեզ խոստովանողին մի՛ մատնիր գազաններին, և քո տնանկներին մի՛ մոռանար երբեք» (Սաղմ., ԳԳ 19):

սից պալատում⁴⁷⁰ Վռամ արքային, որի բոլոր հորդորներին՝ մեղադրանքներով հանդես գալ Արտաշեսի դեմ, Հայոց կաթողիկոսը պատասխանում էր մերժումով: Սահակ Պարթևին հակառակ՝ Սուրմակ երեցը բանսարկուների խմբի մեջ էր, «Քանզի գաթոռ եպիսկոպոսապետութեանն էր խոստացեալ նմա նախարարացն թշնամականացն եւ ոսոխասիրացն. վասն որոյ ինքնասիրութեամբ պատրաստեաց զլեզուն իւր սուսեր սատակիչ»⁴⁷¹: Մովսես Խորենացին այս դրվագում համեմատություն է կատարել Սաղմոսների հետևյալ տողերի հետ. «Եւ փրկեաց զանձն իմ ի միջոյ գագանաց, զի ննջէի ես խռովեալ. որդւոց մարդկան ատամունք իւրեանց զէն եւ նետք են, եւ լեզուք նոցա որպէս զսուր սուսերի»⁴⁷²: «Ոյք սրեցին որպէս սուսեր զլեզուս իւրեանց, լարեցին զաղեղունս իւրեանց յիրս դառնութեան»⁴⁷³:

Հայ եկեղեցու կաթողիկոսական աթոռի ծանր ժամանակներում Մովսես Խորենացին արդարության վերականգնման հույս ուներ՝ գրելով «...սակայն դու եւ ոչ յայնմ զքեզ ամայի բոլորիցն ցուցեր. զանդրէն քոյոյն յուսալով դարձ հովուակցաւն, ոչ որպէս տայգերբ, այլ որպէս նոյնագաւակ զուգահարբ, զմանկունս փայփայեցեր»⁴⁷⁴: Այստեղ Պատմահոր շարադրանքն արտահայտվել է Մաղաքիայի գրքի ոճով. «Եւ եղիցին ինձ, ասէ Տէր ամենակալ,

⁴⁷⁰ Գ. Մաքսուդյանի կարծիքով, սբ. Սահակին Գայոց կաթողիկոսական գահից Սասանյան արքունիքը հեռացրեց, քանզի նա հարազատ էր հայոց Արշակունյաց արքայական ընտանիքին (Chosen of God, The Election of the Catholicos of All Armenians from the Fourth Century to the Present by Father Krikor Vardapet Maksoudian, New York, 1995, p. 12).

⁴⁷¹ Մովսես Խորենացի, էջ 348-349, «Որովհետև թշնամաբար տրամադրված հակառակասեր նախարարները նրան էին խոստացել եպիսկոպոսապետության աթոռը, ուստի ինքնասիրությունից դրված իր լեզուն սատակիչ սուր դարձրեց» (Մովսես Խորենացի, էջ 343):

⁴⁷² «Գագանների միջից ազատեց ինձ, քանզի ես խռովված ննջում էի: Մարդկանց որդիների ատամները զենք և նետ են, իսկ նրանց լեզուները՝ ինչպես սուր սուսեր» (Սաղմ., ԾՁ 5):

⁴⁷³ «Նրանք սուսերի պես սրեցին իրենց լեզուները և իրենց աղեղները լարեցին դառը գործի համար» (Ույն տեղում, 4Գ 4):

⁴⁷⁴ Մովսես Խորենացի, էջ 359, «...բայց դու այս անգամ էլ ամեն բանով լքված չմնացիր, ակնարկելով քո (փեսայի) դարձին, դու հովվակցի ձեռքով մանուկներիդ փայփայեցի, ոչ ինչպես տագերոջ, այլ ինչպես նույն զավակների տեր երկրորդ հոր ձեռով» (Մովսես Խորենացի, էջ 351):

յաւուր յորում ես արարից փրկութիւն, եւ փայփայեցից զնոսա՝ որպէս փայփայէ հայր զորդի զբարուք ծառայեալն նմա»⁴⁷⁵:

Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մահը ողբալով՝ Մովսես Խորենացին գրել է. «Ոչ եւս տեսանեմ զբանաւոր քո հօտ ի վայրի դալարուջ եւ ոչ ի ջուրս հանգստեան սնեալ»⁴⁷⁶: Հայ եկեղեցու ամբողջ հօտի կորստի՝ Պատմահոր ոգեղեն ընկալման հիմքում սաղմոսի հետևյալ տողն է. «Ի վայրի դալարուջ անդ բնակեցոյց զիս, եւ առ ջուրս հանգստեան սնոյց զիս»⁴⁷⁷:

Ասողիկը, անդրադառնալով Մովսես Խորենացու «Ողբք»-ին, վկայել է նրա՝ որպէս Սահակ Պարթևի ժամանակակիցը լինելու մասին: Ասողիկը գրել է. «Եւ հաւանեալ Վռամայ արքայի Պարսից նախարարացն Հայոց՝ նոյնժամայն ի դուռն արքունի կոչեալ զթագաւորն Հայոց եւ զսուրբն Սահակի. եւ Արտաշիր կալեալ եւ կապեալ՝ ի Խուժաստան յուղարկեաց, եւ զսուրբն Սահակ հրամայեաց ընկենուլ յաթոռոյ հայրապետութեան... Ջոր տեսեալ մեծ վարդապետին Մովսիսի քերթողահօրն եւ զաղաղակ բարձեալ՝ թէ «Ողբա՛մ զքեզ, Հայոց աշխարհ, զի բարձաւ ի քէն թագաւոր եւ քահանայ: Ողբա՛մ զքեզ, եկեղեցի՛ Հայաստանեայց, զի բարձու ի քէն մարգարէ եւ խորհրդական», որպէս ժիր մանուկ մարգարէն Երեմիա ողբայր զկործանումն ազգին Հրէից եւ զանապատանալն Տաճարին: Եւ եկեալ սուրբն Սահակ դոյզն ժամանակ անցուցանել ի գաւառին Բագրևանդ ի գիւղն Բլուր՝ ի կամս Աստուծոյ վախճանեցաւ ի կենացս...»⁴⁷⁸:

⁴⁷⁵ Ամենակալ Տերը ասում է. «Նրանք իմը կլինեն այն օրը, երբ ես փրկություն կանեմ, կփայփայեմ նրանց, ինչպես հայրն է փայփայում իրեն բարությամբ ծառայած որդիներին» (Մաղ., 9 17):

⁴⁷⁶ Մովսես Խորենացի էջ 359, «Այլևս չեմ տեսնում քո բանավոր հոտը դալար տեղում և հանգիստ ջրերի մոտ սնվելիս» (Մովսես Խորենացի, էջ 354):

⁴⁷⁷ «Դալար վայրերում նա ինձ բնակեցրեց և հանդարտ ջրերի մոտ ինձ սնուցեց» (Մաղմ., ԻԲ 2):

⁴⁷⁸ Ասողիկ, էջ 76-77, «Եվ հավատալով Հայոց նախարարներին, Պարսից արքա Վռամը անմիջապես արքունի դուռ կանչեց Հայոց թագավորին և սուրբն Սահակին: Արտաշիրին ձերբակալելով և կապանքների մեջ դնելով, Խուժաստան ուղարկեց, իսկ սուրբ Սահակին հրամայեց հայրապետության աթոռից զրկել... Այդ տեսնելով, մեծ վարդապետ Մովսես քերթողահայրը բարձրագոչեց՝ թե «Ողբա՛մ քեզ Հայոց աշխարհ, քանզի չունես ոչ թագավոր և քահանա: Ողբա՛մ քեզ, եկեղեցի՛ Հայաստանյաց, քանզի զրկվեցին մարգարեից և խորհրդականից», ինչպես երիտասարդ մարգարե Երեմիան էր ողբում

Մովսես Խորենացու «Ողբք»-ում Աստվածաշնչից քաղված համեմատական հատվածներում զգալի տեղ են գրավում նաև Թագաւորութեանց, Յեսուի, Եզրասի, Ջաքարիայի գրքերում և Սաղմոսներում նկարագրված կերպարները (Ռոբովամ, Եղիա, Եղիսե, Հեսու, Ազայել, Սեղեկիա) և պատկերները, որոնց հետ կապված համեմատությունները նա կատարել է՝ Սահակ կաթողիկոսի մահվամբ պայմանավորված Հայաստանի և Հայ եկեղեցու կրած կորուստը շեշտադրելու նպատակով: Պատմահայրը, Սահակ Պարթևի մահը համեմատելով Մովսես մարգարեի մահվան հետ, գրել է. «Վասն զի Մովսէս բարձեալ լինի, եւ Յեսու ոչ յաջորդէ՝ առաջնորդել յերկիրն Աւետեաց»⁴⁷⁹: Այս տողերի հիմքում Աստվածաշնչի հետևյալ տողերն են. «Եւ եղեւ յետ վախճանելոյն Մովսիսի ծառայի Տեառն, խօսեցաւ Տէր ընդ Յեսուայ որդւոյ Նաւեայ պաշտօնէի Մովսիսի եւ ասէ, Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ. արդ յարուցեալ անցցես ընդ այդ Յորդանան դու եւ ամենայն ժողովուրդ քո յերկիրն զոր ես տաց որդւոցն Իսրայելի»⁴⁸⁰:

Պատմահայրը գրել է. «Ռոբովամ մերժեցաւ յիւրմէ ժողովրդենէն, եւ փոխանորդեաց որդին Նաբատայ»⁴⁸¹: Իսրայել-Հուդայի թագավոր Սողոմոնի մահվանից հետո նրա որդու՝ Ռոբովամի («Եւ ննջեաց Սողոմոն ընդ հարս իւր, եւ թաղեցին զնա ի քաղաքի Դաւթի հօր իւրոյ եւ թագաւորեաց Ռոբովամ որդի նորա ընդ նորա»⁴⁸²) օրոք (Ռոբովամը, արհամարհելով Իսրայելում բնակիչների խնդրանքը՝ թեթևացնել հարկերը, դրանք ավելի սաստկացրեց: Ռոբովամի ուղարկած հարկահավաքին իսրայել-

հրեական ազգի կործանումը և Տաճարի ամայացումը: Եվ սուրբն Սահակ, գալով ու Բագրևանդ գավառի Բլուր գյուղը, որոշ ժամանակ անցկացնելով այնտեղ, Աստու կամքով վախճանվեց...»:

⁴⁷⁹ Մովսես Խորենացի, էջ 360, «Ռոբովիտուն Մովսեսը մահանում է, բայց Յեսուն չի հաջորդում, որ առաջնորդի դեպի Ավետյաց երկիրը» (Մովսես Խորենացի, էջ 351):

⁴⁸⁰ «Տիրոջ ծառա Մովսեսի վախճանվելուց հետո Տերը խոսեց Մովսեսի օգնականի՝ Նավեի որդի Յեսուի հետ և ասաց. «Իմ ծառա Մովսեսը վախճանվեց, հիմա վեր կաց, անցիր Յորդանան գետով քո ամբողջ ժողովրդի հետ այն երկիրը, որ ես տալու եմ իսրայելցիներին» (Յեսու, Ա 1-2):

⁴⁸¹ Մովսես Խորենացի, էջ 360, «Ռոբովամն իր ժողովրդից մերժվեց, բայց նրան փոխարինեց Նաբատի որդին»:

⁴⁸² «Սողոմոնը զնաց իր նախնիների գիրկը, նրան թաղեցին իր հայր Դավթի քաղաքում, ու նրա փոխարեն թագավորեց նրա որդի Ռոբովամը» (Գ Թագ., ԺԱ 43):

ցիները սպանեցին. «Եւ արքայ Ռոբովամ աճապարեաց ելանել ի կառս՝ փախչել յԵրուսաղէմ: Եւ արհամարհեաց Իսրայել գտունն Դաւթի մինչեւ ցայսօր»⁴⁸³) թագավորությունը բաժանվեց երկու մասի («Եւ եղև իբրև լուաւ ամենայն Իսրայել եթէ դարձաւ Յերոբովամ [Եզիպտոսից], առաքեցին եւ կոչեցին գնա ի ժողովուրդն, եւ թագաւորեցուցին գնա [«Յերոբովամ որդի Նաբատայ»] ի վերայ Իսրայելի»⁴⁸³):

«Եւ Ռոբովամ որդի Սողոմոնի թագաւորեաց ի վերայ Յուդայ. որդի քառասուն եւ մի ամաց Ռոբովամ ի թագաւորել իւրում, եւ եւթնութասն ամ թագաւորեաց յԵրուսաղէմ քաղաքի... Եւ արար Ռոբովամ չար առաջի Տեառն... Եւ պատերազմ էր ի մէջ Ռոբովամայ եւ ի մէջ Յերոբովամայ գամենայն աւուրս: Եւ ննջեաց Ռոբովամ ընդ հարս իւր եւ թաղեցաւ ընդ հարս իւր ի քաղաքի Դաւթի»⁴⁸⁴:

Մովսես Խորենացին, վերոհիշյալ համեմատությունը, կատարելով, նկատի է ունեցել, որ ժողովրդի կողմից մերժված թագավոր Ռոբովամին փոխարինող եղավ Նաբատայի որդի Յերոբովամը, այնինչ՝, վերջին Արշակունյաց Արտաշես (Արտաշիւր) թագավորին փոխարինող չեղավ: Ընդ որում, Յերոբովամի⁴⁸⁵ կապակցությամբ Պատմահայրը նշել է, որ «գայրն Աստուծոյ ծախեաց ոչ առիւծ, այլ կատարունն ժամանակի»⁴⁸⁶: Առյուծից հո-

⁴⁸³ «Ռոբովամ արքան շտապեց կառք բարձրանալ ու փախչել Երուսաղէմ: Այսպիսով Իսրայելը ապստամբեց Դաւթի տան դէմ: Եվ այդպէս է մինչև այսօր: Երբ ամբողջ Իսրայելը լսեց, թէ Յերոբովամը վերադարձել է [Եզիպտոսից], մարդ ուղարկեցին, նրան ժողովրդի մոտ կանչեցին ու թագավոր օժեցին Իսրայելի վրա» (Գ Թագ., ԺԲ 18-20):

⁴⁸⁴ «Սողոմոնի որդի Ռոբովամը թագավորեց Յուդայի երկրի վրա: Քառասունմեկ տարեկան էր Ռոբովամը, երբ գահակալեց, և տասնյոթ տարի թագավորեց յԵրուսաղէմ քաղաքում... Ռոբովամը չար գործեց Տիրոջ առաջ... Ռոբովամը և Յերոբովամը միշտ պատերազմի մեջ էին: Ռոբովամը գնաց իր նախնիների գիրկը և թաղվեց իր նախնիների մոտ, Դաւթի քաղաքում» (Գ Թագ. ԺԱ 26, ԺԴ. 21, 22, 30.):

⁴⁸⁵ Նշվել է, որ հրեական թագավոր Ռոբովամը մերժվեց իր ժողովրդի կողմից, սակայն նրան փոխարինեց Նաբատը (Мовсес Хоренaиn, с. 266, прим. 767), ինչը վրիպակ է, քանի որ ըստ Հին Կտակարանի, Ռոբովամի որդին Աբիուն էր, իսկ Նաբատայի որդու՝ Յերոբովամի որդու անունն էր Նաբատա (Գ Թագ., ԺԴ 20, ԺԵ 1):

⁴⁸⁶ Մովսես Խորենացի էջ 360, «Աստուծո մարդուն ոչ թէ առյուծը ոչնչացրեց, այլ հասուն տարիքը» (Մովսես Խորենացի, էջ 351):

շուտված «Աստծո մարդու» մասին աստվածաշնչյան դրվագում ասվում է. «Եւ դարձաւ եւ գնաց, եւ եգիտ գնա առեւծ ի ճանապարհին, եւ սպան գնա. եւ էր մարմին նորա ընկեցեալ ի ճանապարհին»⁴⁸⁷:

Մովսէս Խորենացին Հայոց աշխարհի համար ստեղծված ծանր իրավիճակը ցույց տալու համար «Ողբքի» այս հատվածում աստվածաշնչյան կերպարների հետ կապված համեմատական շարադրանքը խտացված է ներկայացրել: Մեկ-երկու բացառությամբ, համեմատությունները «Թագաւորութեանց» գրքի դրվագների հետ է: Այսպես, Սահակ կաթողիկոսի մահը Պատմահայրը համեմատել է Եղիա մարգարեի համբարձման հետ և ցավով նշել, որ, եթե Եղիային փոխարինող եղավ, ապա Սահակին փոխարինող չեղավ: Մովսէս Խորենացին գրել է. «Եղիա համբարձաւ, եւ Եղիսէ ոչ մնաց կրկին ոգով օծանել զՅէնու»⁴⁸⁸:

Այստեղ Պատմահայրը նկատի է ունեցել ոչ միայն Սահակ Պարթևին որպես Գրիգոր Լուսավորչի տոհմից վերջին կաթողիկոսի, այլև՝ հայ Արշակունյաց թագավորության վերացումը: Նա համեմատությունը կատարել է Աստվածաշնչի հետևյալ հատվածների հետ. «Եւ եղեւ մինչդեռ գնային նոքա, երթային եւ խօսէին, եւ ահա կառք հրեղէնք եւ երիվարք հրեղէնք, եւ անջրպետեցին ի մէջ երկոցունց. եւ վերացաւ Եղիա շարժմամբ յերկինս»⁴⁸⁹: «Եւ Եղիսէ մարգարէ կոչեաց զմի յորդոց մարգարէիցն եւ ասէ ցնա, Պնդեա զմէջ քո, եւ առ զսրուակ իւղոյս ի ձեռին քում... եւ տեսցես անդ զՅէնու զորդի Յովսափատայ... եւ յարուսցես գնա ի միջոյ եղբարց իւրոց. եւ տարցես գնա սենեակ ի սենեկի: Եւ առցես զսրուակդ իւղոյ, եւ արկցես ի գլուխ նորա եւ ասասցես. Այսպէս ասէ Տէր. Օծի զքեզ թագաւոր ի վերայ Իսրայելի...»⁴⁹⁰:

⁴⁸⁷ Հերոբովամին Բեթելում բուժած «Աստծու մարդուն» «ճանապարհին հանդիպեց մի առյուծ, որը հոշոտեց նրան: Նրա դիակն ընկած էր ճանապարհին» (Գ Թագ. ԺԳ 1-24):

⁴⁸⁸ Մովսէս Խորենացի, էջ 360, «Եղիան համբարձավ, բայց Եղիսեն չմնաց կրկնակի հոգով՝ օծել Յեուին» (Մովսէս Խորենացի, էջ 351):

⁴⁸⁹ «Մինչ նրանք քայլում էին, մի հրեղեն կառք ու հրեղեն երիվարներ երևացին, նրանց միմյանցից բաժանեցին, և Եղիան պտտահողմի մեջ դեպի երկինք վերացավ» (Դ Թագ., Բ 11):

⁴⁹⁰ «Եղիսէ մարգարեն կանչելով մարգարեների որդիներից մեկին՝ ասաց նրան.

Մովսես Խորենացին աստվածաշնչյան դրվագների հետ համեմատություններ կատարելիս երբեմն միահյուսում է պատմական իրադարձությունները: Այդ երևում է Ազայելի գործողությունների հետ կապված դրվագից: Պատմահայրը գրել է. «...այլ եւ Ազայել հրաւիրեցաւ ի կոտորել զԻսրայել»⁴⁹¹: Մովսես Խորենացին Հին Կտակարանի հետ համեմատություն կատարելիս («Եւ բարկացաւ սրտմտութեամբ Տէր Իսրայելի, եւ ետ գնոսա ի ձեռս Ազայելի արքայի Ասորոց, եւ ի ձեռս որդւոյ Ադերայ որդւոյ Ազայելի զամենայն աւուրս»⁴⁹²), թերևս նաև նկատի է ունեցել պարսից արքա Վռամ V-ին:

Այսպիսով, Մովսես Խորենացին իր երկի այս հատվածում գրում է թե՛ Հայ եկեղեցու ունեցած մեծ կորուստների և թե՛ հայ Արշակունյաց թագավորության անկման մասին: Նկատի ունենալով Արտաշես թագավորի ձերբակալությունը Վռամ V-ի կողմից («Հրամայեաց Վռամ առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշէրէ, եւ անդէն արգելուլ զնա, եւ զամենայն ինչս ազգի նորա ունել յարքունիս...»⁴⁹³), այսինքն, Հայոց թագավորի գերեվարումը Պարսկաստան, Պատմահայրը, համեմատություն կատարելով Նաբուգոդոնոսորի կողմից գերեվարված հրեաների՝ Երուսաղեմ վերադառ-

«Գոտի կապիր մեջքիդ, յուղի այս սրվակը ձեռքդ վերցրու... ու երբ տեսնես Զովսափատի որդի Յեուի ... կանչիր նրան իր եղբայրների միջից, նրան մի ներքնասենյակ տար և այս սրվակի յուղը զլխին թափելով՝ ասա.«Այսպես է ասում Տերը. քեզ Իսրայելի թագավոր օծեցի ...» (նույն տեղում, Թ 1- 3):

⁴⁹¹ Մովսես Խորենացի, էջ 360, «այլ դեռ Ազայելն էլ հրավիրվեց Իսրայելին կոտորելու» (Մովսես Խորենացի, էջ 351):

⁴⁹² «Տիրոջ բարկությունը բորբոքվեց Իսրայելի դեմ, և Տերը նրանց շարունակ մատնեց ասորիների Ազայել արքայի ձեռքը...» (Դ Թագ., ԺԳ 3):

⁴⁹³ Մովսես Խորենացի, էջ 349, «... Նոյնպես եւ զմեծն Սահակ, եւ զտունն կաթողիկոսական ունել յարքունիս, եւ տալ փոխանակ նորա յաթոր եպիսկոպոսապետութեանն Զայոց զՍուրմակն զայն: Եւ մեծապարզև զնախարարսն արծակեաց պարսիկ մարզպանաւ, որում անուն էր Վեհմիհրշապուհ» (Մովսես Խորենացի, էջ 343, 348-349): «Վռամը հրամայեց՝ թագավորությունն առնել Արտաշիրից և նրան (Պարսկաստանում) արգելել և նրա տոհմի ամբողջ զույքը արքունիք գրավել... Նույնպես և մեծն Սահակի հետ վարվել և կաթողիկոսական տունը արքունիք գրավել, իսկ նրա փոխարեն Զայոց եպիսկոպոսապետության աթորը տալ այն Սուրմակին: Եվ նախարարներին մեծ պարզևներով արծակեց պարսիկ մարզպանի ուղեկցությամբ, որի անունն էր Վեհմիհրշապուհ» (Մովսես Խորենացի, էջ 343, 348-349):

նալու մասին պատմող Աստվածաշնչի համապատասխան հատվածի հետ («Եւ ելեալք յԵրուսաղէմ բնակեցին ի Հրէաստանի յիւրաքանչիւր քաղաքս: Եւ էին առաջնորդք նոցա Ջորաբաբէլ եւ Յեսու Յովսեփեկեանց...»⁴⁹⁴), գրել է. «Ի գերութիւն վարեցաւ Սեդեկիայ, եւ Ջորաբաբէլ ոչ ուրեք է, որ նորոգէ զպետութիւնն»⁴⁹⁵:

Մովսես Խորենացին հաջորդ անդրադարձները Աստվածաշնչին կատարել է՝ հիմնվելով Մակաբայեցիների գրքերի վրա: Պատմահոր երկի պահպանված խմբագրությամբ շարադրանքում Բագրատը նշված է սերած գերի եբրայեցի առաջնորդներից՝ Շամբաթից, իսկ Բագարատի որդիների նահատակությունը «...հետևող լինել Անանիանց եւ Եղիազարեանց»⁴⁹⁶: Անանիայի անվան հիշատակության կապակցությամբ ենթադրվել է⁴⁹⁷, որ խոսքը Բաբելոնի արքա Նաբուքոդոնոսոր II-ի (մ. թ. ա. 605-562 թթ.) ժամանակաշրջանում ապրած Սեդրաք-Անանիայի մասին է: Այս Անանիան երկու մյուս հրեաների՝ Միսաքի (Միսայել) և Աբեդնագովի (Ազարիա) հետ հրաժարվեց պաշտել Նաբուքոդոնոսորի աստվածներին և նրա կանգնեցրած ոսկե արծանը, ուստի արքայի հրամանով դահիճները նրանց կապեցին ու նետեցին բորբոքված կրակի հնոցը: Սակայն «հրեշտակ Աստուծոյ էջ եկաց ընդ Ազարիանս ի հնոցի անդ, եւ թօթափեաց զբոց հրոյն ի հնոցէ անտի»: Երեք դատապարտվածներն ազատվում են կրակի հնոցից⁴⁹⁸: Անանիան, ի տարբերություն Եղիազարի, չի նահատակվում: Մակաբայեցվոց Բ գրքում Եղիազարի նահատակության մասին գրված է. «Եղիազարոս այր մեծ ընդ առաջինսն ի գնդի անդ. լցեալ աւուրբք՝ ծերացեալ հասակաւ, գեղեցիկ երեսաւք. ածեալ զայլ ի բերան, ստիպէին ուտել խոզենի: Նորա ի մտի եղեալ՝ յամառեալ պնդեալ սրտիւ՝ յանձն առ ընդունել զմահ քաջ անուամբ, քան զկեանս խղճիւ, եւ ընկերաց ըստգտանելով: Ընտրեաց ինքնական հասանել ի տանջանս...»⁴⁹⁹:

⁴⁹⁴ «Սրանք վերադարձան Երուսաղեմ և բնակություն հաստատեցին Յրեաստանում՝ յուրաքանչյուրն իր քաղաքում: Նրանց առաջնորդներն էին Ջորաբաբելը և Յովսեփեկի որդի Յեսուն ...» (Ա Եզրաս, Ե 8):

⁴⁹⁵ Մովսես Խորենացի, էջ 360, «Սեդեկիան գերի տարվեց, բայց չկա Ջորաբաբելը, որ պետությունը նորոգի» (Մովսես Խորենացի, էջ 351):

⁴⁹⁶ Մովսես Խորենացի, էջ 119:

⁴⁹⁷ Г.Саркисян, ук. соч., с. 237, прим. 264, R. Thomson, The Maccabees in Early Armenian Historiography, p. 340.

⁴⁹⁸ Դան., Գ 12, 20, 49-93:

⁴⁹⁹ «Կար Եղիազար անունով ծերացած, գեղեցիկ դեմքով մի մարդ, որը (օրենս-

Պատմահայրը Բագրատունյաց տոհմի ծագման մասին ասում է՝ «ի Հայկայ գթագաղիր ազգ Բագարատունեաց լինել»⁵⁰⁰: Իրոք, ըստ Սեբեոսի երկի կազմում հանդես եկող Անանունի գրվածքի՝ Բագրատունիները Հայկազունի ծագում ունեն. «Հայկն, որ ծնաւ զԱրամանեակ», իսկ հետագայում, երբ Հայաստանում թագավորական իշխանությունն անցնում է Ջարեհին՝ «որդի որդւոց Արամենակայ, այր զուրաւոր և կորովի աղեղամբ. ապա Արմոգ. ապա Սարհանգ. ապա Շաւաշ. ապա Փառնավագ: Սա ծնաւ զԲագամ եւ զԲագարատ. եւ Բագարատ ծնաւ զԲիրատ, եւ զԲիրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեւմտից, այս ինքն է Անգեղ տուն...»⁵⁰¹: Քննելով սկզբնաղբյուրները և եղած կարծիքները՝ Ասլան Շահնագարյանը եզրակացրել է. «Հայ Բագրատունիների նախարարական տոհմը հրեաներից չի ծագել. նա առաջացել է հայկական հողի վրա և տեղական ծագում ունի...»⁵⁰²: Ա. Մուշեղյանը սկզբնաղբյուրների քննությամբ նույնպէս ապացուցել է «Բագրատունյաց տոհմի ծագումը Հայոց նախնի Հայկից»⁵⁰³:

Մովսէս Խորենացու երկում աստվածաշնչյան մյուս դրվագը վերաբերում է Մակաբայեցիների Ա գրքում տեղ գտած՝ Սելևկյանների բռնությունների դեմ հրեաների մղած պայքարին⁵⁰⁴, որը Պատմահայրը հիշատակել է՝ կրկին անդրադառնա-

գետների) խմբի մեջ առաջիններից մեկն էր: Նրա բերանին գելոց դնելով ստիպեցին խոզի միս ուտել: Նա որոշեց համառել, սրտապնդվել, գերադասեց քաջի անունով մահ ընդունել, քան ապրել խղճի խայթով ու պախարակվել ընկերներից: Նա նախընտրեց ինքնակամ տանջանքների մատնվել...» (Բ Մակաբ. 2 18-19):

⁵⁰⁰ Մովսէս Խորենացի, էջ 68-69:

⁵⁰¹ Սեբեոս, էջ 48, 51:

⁵⁰² Ասլան Շահնագարյան, նշվ. աշխ., էջ 174-175, 212:

⁵⁰³ Ա. Մուշեղյան, Մովսէս Խորենացու դարը, էջ 333-342:

⁵⁰⁴ Մ. ք. ա. 198 թ. Պանեասի ճակատամարտում (Պամասկոսից 60կմ հարավ-արևմուտք) Եգիպտոսի թագավոր Պտղոմեոս V Եպիփանեսի (մ. ք. ա. 204-180 թթ.) զորքերը վերջնական պարտություն կրեցին սելևկյան թագավոր Անտիոքոս III Մեծից (մ. ք. ա. 223-187 թթ.), որը գրավեց Ասորիքը և Պաղեստինը: Իսկ Անտիոքոս IV Եպիփանեսի օրոք (մ.ք.ա. 175-164 թթ.) բնակչության վիճակն էլ ավելի ծանրացավ, ինչը հանգեցրեց Մատաթիայի գլխավորած հրեա ժողովրդի ապստամբությանը (մ. ք. ա. 165-135 թթ.), որն այնուհետև շարունակեցին Սրա որդիները՝ Յուդա Մակաբեն, Յովնաթանը և Սիմոնը: Ապստամբության արդյունքում Սրանք ձեռք բերեցին ինքնավարություն, և վերջինս հիմնեց Մակաբայացիների (Յասմոններ) արքայատոհմը (մ. ք. ա. 140-37 թթ.):

լով 428 թվականից հայ Արշակունյաց թագավորական իշխանության անկման հետևանքով Հայաստանում ստեղծված ծանր վիճակին: Համեմատության կարգով Պատմահայրը գրել է. «Անտիոքոս բռնադատել թողուլ զօրէնս հայրենիս, եւ Մատաթիայ ոչ ընդդիմակայէ. պատերազմ զմեզ շուրջ պաշարէ, եւ Մակաբէ ոչ փրկէ: Այժմ մարտք ի ներքուստ եւ արհաւիրք արտաքուստ... եւ մարտք ի հերծուածողաց, եւ խորհրդականն չէ ի միջի, որ խրատէր եւ յարմարէր ի պատերազմ»⁵⁰⁵:

Պատմահայրն այստեղ նկատի է ունեցել Մակաբայեցիների Ա գիրքը, ուր ասվում է, որ Անտիոքը «եկն եհաս ի վերայ քաղաքին Երուսաղէմացուց մեծաւ պատերազմաւ... Ընդ ամենայն աշխարհս հրովարտակք արծակեցան, զի թողցեն ամենայն բնակիչք երկրի զաւրէնս իւրաքանչիւր եւ ի մի աւրէնս նորա կացցեն: Յանձն առին ազգք ամենայն՝ ըստ հրամանին արքունի... Ա՛զդ եղեւ իշխանաց թագաւորին եւ զաւրաց, որ էին ի քաղաքին Դաւթի, եթէ իջին արք ոմանք յամուրս անապատի, որ իշխեցին ցրել զհրաման թագաւորին, եւ բազումք միաբանեալ իջին ընդ նոսա: Ժամ ետուն, կազմեցան, պատրաստեցան, հեծան, հասին, պատեցին զամուրս անապատին. եկին ի մա՛րտ պատերազմի...: «Համբարձա՛ւ Յուդա, որ անուանեալ կոչէր Մակաբէ, որդի նորա ընդ նորա... Հալածեա՛ց զանաւրէնսն ի քննելն իւրում, եւ հրծի՛գ արար զխռովիչս ժողովրդեան իւրոյ»⁵⁰⁶:

Հայոց զորքի առջև արտասանած իր ճառի ավարտական մասում Վարդան Մամիկոնյանը նույնպես անդրադարձ էր կա-

⁵⁰⁵ Մովսէս Խորենացի, էջ 360, «Անտիոքոսը բռնադատում է թողնել հայրենի կրոնը, բայց Մատաթիան չի դիմադրում, պատերազմը մեզ շուրջանակի պաշարել է, բայց Մակաբեն չի փրկում: Այժմ ներսը կռիվներ, դրսից արհավիրք... և կռիվներ հերծվածողների կողմից, և չկա այն խորհրդականը, որ խրատեր և պատերազմի պատրաստեր» (Մովսէս Խորենացի, էջ 352):

⁵⁰⁶ «Մեծ զորքով հարձակվեց Երուսաղէմ քաղաքի վրա... Ողջ աշխարհում հրովարտակներ արծակվեցին, որ երկրի բոլոր բնակիչները հրաժարվեն իրենց օրենքներից և ընդունեն մեկ օրենք՝ նրա օրենքը: Բոլոր ազգերը ենթարկվեցին արքունի հրամանին... Թագավորի իշխաններն ու Դավթի քաղաքում գտնվող զորքը իմացան, որ թագավորի հրամանը չկատարող մի քանի հոգի իջել են անապատի մոտ գտնվող ապաստարանները, իսկ շատերը նրանց միանալով՝ զնացել են նրանց հետ: Ժամանակ նշանակեցին, պատրաստություն տեսան, ձի հեծած եկան ու պաշարեցին անապատի մոտ գտնվող ամրությունները: Նրանք պատերազմի պատրաստություն տեսան... Նրան փոխարինեց Մակաբե մականվամբ Դուդան՝ նրա որդին... Հետապնդելով հալածեց նա ամօրենների, կրակի մատնեց իր ժողովրդին անհանգստացնողներին» (Ա Մակ., Ա 22, 43, Բ 31, 32, Գ 1, 5):

տարել Մակաբայեցվոց պայքարին: Պատմագիտական առումով⁵⁰⁷, Եղիշեի երկում ներկայացված Վարդան Մամիկոնյանի՝ Ավարայրի ճակատամարտից (451թ. մայիսի 26) առաջ արտասանած ճառում Մակաբայեցիների գրքերի հիշատակությունը թելադրված էր տարբեր դարաշրջաններում և աշխարհաքաղաքական իրավիճակներում տեղի ունեցած իրադարձությունների պատմահամեմատական և հոգևոր իմաստավորմամբ:

Առաջաբանելով ճառի այդ հատվածը, Եղիշեն հաղորդում է, որ Վարդանը մանկությունից տեղյակ էր Սուրբ Կտակարաններին: Ճառի այդ հատվածը պատմիչը ներկայացրել է որպես Հայոց սպարապետի կողմից Աստվածաշնչից ուղղակի ընթերցված և ազատագրական ոգով մեկնված դրվագ: Վարդանը կարդում էր Մակաբայեցիների քաջ նկարագրի մասին, և թեպետ նրանք անտիոքացիների թագավորի դեմ պատերազմի մեջ իրենց մահը գտան, բայց նրանց քաջ անունն անմոռաց մնաց ոչ միայն երկրի վրա, այլև երկնքում: Վարդանը հիշեցնում էր հայ զորականներին նաև այն, թե ինչպես Մատաթիայի ազգատոհմից մարդիկ քակտվեցին-անջատվեցին նրա միաբանությունից և հնազանդվեցին թագավորի հրամանին, մեհյաններ շինեցին, պիղծ զոհեր մատուցին, Աստծուց շեղվեցին և մահվան պատիժ ստացան սուրբ միաբանվածների ձեռքով: Իսկ Մատաթիան և նրա հետ եղածներն ամենևին չվհատվեցին և չթուլացան, այլ էլ ավելի զորացան և երկար ժամանակ ձեռնամուխ եղան պատերազմի գործին: Ինչպես Եղիշեն նշել է, Վարդան Ջորավարն այդպես պատմում էր և միևնույն ժամանակ մարտադաշտում տեղավորում Հայոց զորքը և բոլոր կողմերից կարգավորում այրուծին⁵⁰⁸:

Մակաբայեցիների գրքերի տվյալները⁵⁰⁹ Եղիշեն վեր է հանել Նոր Կտակարանի հոգևոր հենքի վրա, այսինքն՝ քրիստոնեական ոգով: Այդ են վկայում Հայոց սպարապետի ճառի առաջին մասում Նոր Ուխտի ոգով ու լեզվամտածողությամբ արտասանած արտահայտությունները («վասն անմահ թագաւորին մե-

⁵⁰⁷ Պատմահայրը, IV դ. վերջին և V դ. առաջին տասնամյակների իրադարձությունների կապակցությամբ հիշատակել է Վարդան Մամիկոնյանին (Մովսես Խորենացի, էջ 333-335, 337, 348, 352, 356) սակայն, քանի որ նրա երկը ժամանակագրորեն ավարտվում է 440 թ. տեղի ունեցած Մեսրոպ Մաշտոցի մահվանը վերաբերող տեղեկությունով, ուստի 450-451 թթ. ազատագրական պայքարի մասին կարևորագույն սկզբնաղբյուրներն են Եղիշեի և Ղազար Փարպեցու երկերը:

⁵⁰⁸ Եղիշէ, էջ 212-213:

⁵⁰⁹ Ա Մակ., Ա46-47, Գ 19-20, 59-60, Դ 8-9, Բ Մակ. ԺԵ 21:

րոյ» կատարված քաջագործությունները, սրբավայրերը թշնամու պղծությունից մաքրելը, թշնամու մեծ քանակից չերկնչելով խիզախորեն կռվելը, պատերազմի դաշտում ընդունած փառավոր մահը անարգանքով ապրելուց նախապատվելի համարելը, մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեծ վկայության համար մեռնելը»⁵¹⁰: Պատմիչը հենվելով Նոր Կտակարանի վրա, կոչ է անում հաստատուն մնալ հավատի Ջորազլխի՝ Քրիստոսի վրա, քանզի «Մեք թէպէտ եւ մարմնով յերկրի ենք, այլ հաւատով յերկինս ենք շինեալ, ուր ոչ ոք կարէ հասանել յանձեռագործ շինուածն Քրիստոսի»⁵¹¹:

Ազատագրական պայքարի գաղափարը վառ կերպով արտահայտվել է հայ նախարարների՝ Թեոդոս Բ-ին (408-450 թ թ.) ուղարկած հրովարտակում. «Ընտրեցաք զմահ աստուածաշտութեամբ քան զկեանս ուրացութեամբ»⁵¹²: Այս ոգով էին համախմբվել հայ նախարարները՝ մարտնչել մինչ ի մահ բռնակալության դեմ, հանուն հայրենիքի ազատության և քրիստոնեական հավատքի:

Մովսես Խորենացու «Ողբք»-ը արտացոլում է նաև Սահակ Պարթևին արժանի հաջորդներ չլինելու տագնապը: Այստեղ է, որ Պատմահայրը մեկ նախադասությունում համատեղել է տեղեկություններ թե՛ Երեմիայի և թե՛ Ջաքարիայի մարգարեություններից, գրելով. «Ջարթիր Երեմիաս, զարթիր եւ ողբա՛ հանդերձ մարգարէանալով որ ինչ թշուառացաքս եւ որ ինչ թշուառանալոցս ենք. գուշակեա՛ զյառնել հովուաց տգիտաց, որպէս երբեմն Ջաքարիաս յԻսրայէլին»⁵¹³:

Պատմահայրը, նկատի ունենալով Հայաստանի արևմտյան և արևելյան մասերում բյուզանդական և սասանյան տիրապետությամբ ստեղծված ծանր վիճակը, գրել է. «Եւ ի վերայ

⁵¹⁰ Եղիշէ, էջ 204-207:

⁵¹¹ «Մենք էլ, թեպէտև մարմնով երկրի վրա ենք, բայց հավատով երկնքում ենք հաստատված, որտեղ ոչ ոք չի կարող հասնել Քրիստոսի անձեռագործ շինվածքին» (նույն տեղում, էջ 208-209):

⁵¹² «Գերադասեցինք մահն աստվածաշտտությամբ, քան կյանքն ուրացությամբ» (նույն տեղում, էջ 144-145): Եղիշեն իր երկում նկարագրել է մագդեգականությունը և դրանից հայ ժողովրդին սպառնացող աղետաբեր չարիքները՝ դրանց հակադրելով քրիստոնեական հավատքը:

⁵¹³ Մովսես Խորենացի էջ 363, «Ջարթիր Երեմիա, զարթիր և մարգարեանալով հանդերձ ողբա այն, ինչ թշվառություններ որ կրեցինք և ինչ դեռ պիտի կրենք. գուշակիր, որ տգետ հովիվներ պետք է երևան, ինչպես (գուշակեց) Ջաքարիան Իսրայելի համար» (Մովսես Խորենացի, էջ 353):

այսր ամենայնի խռովութիւնք յամենայն կողմանց, ըստ այնմ՝ եթէ չիք խաղաղութիւն ամբարշտաց: Զի թագաւորք տիրեալք խիստ եւ չարաչարք, բեռինս բառնալով ծանունս եւ դժուարակիրս, հրամանս տալով անտանելիս. վերակացուք անհարթարարք, անողորմք»⁵¹⁴: Այստեղ Պատմահայրը հենվել է Եսայի մարգարեության հետևյալ տողի վրա. «Այլ անօրէնք իբրեւ զծով ծփեսցին... Ոչ գոյ խաղաղութիւն ամբարշտաց, ասէ Տէր»⁵¹⁵:

Պատմահոր «Ողբքը» աստվածաշնչական կանոններով է գրված և շոշափում է հասարակության մեջ առկա տարբեր պրատավոր երևույթներին վերաբերող համամարդկային թեմաներ⁵¹⁶:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Հին Կտակարանից քաղված հատվածներին Մովսէս Խորենացու կատարած անդրադարձը մեթոդաբանական առումով վկայում է երեք կարգի մոտեցումների մասին. ա) մեկնողական, բ) առասպելաբանական, գ) ավանդական-պատմահամեմատական:

⁵¹⁴ Մովսէս Խորենացի էջ 365, «Եվ այս բոլորի վրա ամեն կողմից խռովություն, համաձայն այն խոսքի, թե ամբարիշտներին խաղաղություն չկա: Որովհետև տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձուն, անտանելի հրամաններ են տալիս, կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են...» (Մովսէս Խորենացի, էջ 355):

⁵¹⁵ «Իսկ անօրենները պիտի ծփան ծովի նման... Ամբարիշտների համար խաղաղություն չկա», - ասում է Տէրը» (Ես., ԾԷ 20- 21):

⁵¹⁶ Մովսէս Խորենացի, էջ 363-364:

Գ Լ ՈՒ Ն Ե Ր Ր ՈՐ Դ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»-ՈՒՄ

1. «Պատմութիւն Հայոց»-ը Նոր Կտակարանի լույսի տակ

Մովսես Խորենացին անդրադարձել է Նոր Կտակարանին հիմնականում «Պատմութիւն Հայոց»-ի Բ («Բան միջակ պատմութեան մերոց նախնեաց») և Գ («Աւարտաբանութիւն մերոց հայրենեաց») գրքերում: Միևնույն ժամանակ, Պատմահայրը Ա գրքի այն հատվածում, ուր Աստծու դատաստանի մասին Եպիփան Կիպրացու (315-403 թթ.) «Հերձուածոցն Յանդիմանութիւն» («Հերձվածների հերքում») գրքում տրված գնահատականով անդրադարձ է կատարել Ջրվանի և Տիտանյանների առասպելին, Հին և Նոր Կտակարաններից եկող մի հիշատակություն է արել. «Քանզի եւ որ Կիպրացւոց Կոստանդեայ Եպիսկոպոս»⁵¹⁷ Եպիփանոս ի Հերձուածոցն Յանդիմանութեան, յորժամ ճշմարիտ եւ արդարադատ զԱստուած ձեռնարկէ ցուցանել», խոսում է «վասն ջնջելոյ որդւոցն Իսրայելի զեօթն ազգսն...»⁵¹⁸: Այս տեղեկությունը քաղված է Ավետարանի «Գործք առաքելոց»-ում արտահայտված Պողոս առաքյալի խոսքի բովանդակության ոճով («...Եւ քալեալ ազգս եւթն յերկրին Քանանու՝ ժառանգեցոյց նոցա զերկիր

⁵¹⁷ Եպիփանը Կիպրոս կղզու վրա գտնվող Կոստանդիայի (Սալամիս) Եպիսկոպոսն էր 376 թվականից: Կիպրոսի արևելյան ափին՝ Պեդիոսի գետաբերանին գտնվող՝ անտիկ դարաշրջանից հայտնի Սալամիս քաղաք-պետությունը մ. թ. IV դ. սկզբներին տեղի ունեցած մի քանի երկրաշարժերի հետևանքով ավերվել էր: Կոստանդիոս II կայսրը (337-361 թթ.) վերակառուցեց քաղաքը և իր անունով կոչեց Կոստանդիա, որը դարձավ Եպիսկոպոսանիստ: Սուրբ Եպիփանը ամենից հայտնի Եպիսկոպոսն էր Կոստանդիայի Եպիսկոպոսական աթոռին:

⁵¹⁸ Մովսես Խորենացի, էջ 24-25, «Որովհետև Կիպրոսի Կոստանդիա (քաղաքի) Եպիսկոպոս Եպիփանը հերձվածների դեմ գրած գրքում, երբ ձեռնարկում է ապացուցանել Աստծու ճշմարտությունն ու արդարադատությունը», խոսում է «իսրայելցիների ձեռքով յոթն ազգերի ոչնչացման մասին...» (Մովսես Խորենացի, էջ 93):

նոցա»⁵¹⁹), որի հիմքումն է Հին Կտակարանի «Յեսու որդւոյ Նաւեայ» գրքի հետևյալ տեղեկությունը. «Եւ ասէ Յեսու. Այնու գիտասօջիք եթէ Տէր կենդանի է ի ձեզ, եւ սատակելով սատակեսցէ յերեսաց ձերոց զՔանանացին եւ զՔետացին եւ զԽեւացին եւ զՓերեզացին եւ զԳերզեսացին եւ զԱմովրիացին եւ զՅեբուսացին»⁵²⁰:

Հատկապես հետաքրքիր է աստվածաշնչյան այն տեղեկությունը, որին Պատմահայրը սկզբնաղբյուրային արժեք է տվել և դրել անմիջական կապի մեջ իր շարադրանքի բուն նյութի հետ: Խոսքը «Պատմութիւն Հայոց»-ի Բ գրքի ԼԱ գլխում («Թուղթ Աբգարու առ Փրկիչն») հիշատակված հետևյալ դրվագի մասին է. «Որոց տարեալ զթուղթն՝ պատահեցին նմա յԵրուսաղէմ: Չայս վկայէ եւ անտարանական բանն, եթէ «էին ոմանք ի հեթանոսաց եկելոց առ նա». վասն որոյ ոչ համարծակին, որք լուանն, ասել ցՅիսուս, այլ ասեն ցՓիլիպպոս եւ ցԱնդրէաս. եւ նոքա ասեն ցՅիսուս»⁵²¹:

Համեմատությունն Ավետարանի համապատասխան հատվածի («էին անդ ոմանք եւ հեթանոսք յեկելոցն անդր, զի երկիր պագանիցեն ի տօնին: Նոքա մատեան առ Փիլիպպոս որ ի Բեթսայիդայ Գալիլեացոցն էր, աղաչէին զնա եւ ասէին. Տէր, կամի՞մք զՅիսուս տեսանել: Գայ Փիլիպպոս եւ ասէ ցԱնդրէաս, Անդրէաս եւ Փիլիպպոս ասեն ցՅիսուս: Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա եւ ասէ. Եհաս ժամ զի փառաւորեսցի Որդի մարդոյ»⁵²²) հետ ցույց

⁵¹⁹ «Եվ Քանանի երկրում յոթը ազգեր խորտակելով՝ նրանց երկիրը որպես ժառանգություն տվեց նրանց» (Գործք, ԺԳ 19):

⁵²⁰ «Յեսուսն ասաց. «Ղրամով դուք կիմանաք, որ կենդանի Տերը ձեր մեջ է, և նա իսպառ ոչնչացնելու է ձեր առաջից քանանացիներին, քետացիներին, խևացիներին, փերեզացիներին, գերզեսացիներին, ամովրիացիներին և հեբուսացիներին» (Յեսու, Գ 10):

⁵²¹ Մովսես Խորենացի, էջ 150, «Թուղթ տանողները նրան հանդիպեցին Երուսաղեմում: Այս բանը հաստատում է և Ավետարանի խոսքը, թե «հեթանոսներից մարդիկ կային, որ եկել էին նրա մոտ»: Այս պատճառով խոսողները չհամարձակվեցին ասել Յիսուսին, այլ ասացին Փիլիպպոսին և Անդրեասին, և նրանք ասացին Յիսուսին» (Մովսես Խորենացի, էջ 184):

⁵²² «Այնտեղ կային նաև որոշ թվով հեթանոսներ՝ նրանց մեջ, որ Երուսաղեմ էին եկել, որպեսզի տոնի ժամանակ երկրպագություն անեն: Նրանք մոտեցան Փիլիպպոսին, որ գալիլիացիների Բեթսայիդա քաղաքից էր. աղաչում էին նրան ու ասում. «Տեր, կամենում ենք Յիսուսին տեսնել»: Փիլիպպոսը եկավ և

է տալիս, որ Մովսէս Խորենացին մեկնել է ավետարանական խոսքը: Պատմահոր շարադրանքի հիմքում Աբգար թագավորի Թուղթ-խնդրագիրն է, որը նրա ներկայացուցիչները՝ Աղծնիքի բղեշխ մար Իհաբը, Ապահունյաց տոհմի նահապետ Շամշագրամը և Անանը տարել էին Երուսաղեմ: Եվ հենց այնտեղ նրանք տեսել էին Հիսուս Քրիստոսին: Իր զբաղվածության պատճառով Քրիստոսը չէր գնացել Եդեսիա (Ուռհա)՝ բուժելու Աբգարին, որին Մովսէս Խորենացին որպէս Հայոց թագավոր է հիշատակել («...Վասն այնր զի գրեցեր դու առ իս, զալ ինձ առ քեզ՝ արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես»⁵²³):

Մովսէս Խորենացու շարադրանքի այս հատվածի հիմքում Քրիստոսի խոսքն է Թովմաս առաքյալին. «Արդ զի տեսերդ զիս եւ հաւատացեր. երանի որոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատասցեն»⁵²⁴: Ըստ այդմ Պատմահայրը գրել է. «Երանի իցէ այնմ, որ հաւատայ յիս՝ իբրեւ ոչ իցէ նորա տեսեալ զիս»: Այնուհետև, նկատի ունենալով Աբգարի նամակում բովանդակված այն հանգամանքը, որ Քրիստոսից «հրեայք տրտնջեն եւ կամին չարչարել», ինչը հետևանք էր այն բանի, որ նրանք տեսնելով նրան չէին հավատացել, Մովսէս Խորենացին Աստվածաշնչի խոսքը նրանց կապակցությամբ բերել է հետևյալ մեկնությամբ՝ «զի գրեալ է վասն իմ այսպէս. Ջի որք տեսանենն զիս՝ ոչ հաւատասցեն յիս, եւ որք ոչն տեսանենն՝ նոքա հաւատասցեն եւ կեցցեն»⁵²⁵:

Պատմագիտության մեջ Մովսէս Խորենացու հաղորդումներին՝ Աբգար թագավորի պետական և կրոնական բնագավառներում ծավալած գործունեության վերաբերյալ, տրվել են տարբեր գնահատականներ՝ պայմանավորված հետազոտողների հա-

Անդրեասին ասաց: Անդրեասը և Փիլիպպոսն էլ Հիսուսին ասացին: Եվ Հիսուս նրանց պատասխանեց ու ասաց. «Հասավ ժամը, որ փառավորվի մարդու Որդին» (Յով., ԺԲ 20-22):

⁵²³ Մովսէս Խորենացի, էջ 150, «...Իսկ որ դու ինձ գրեցիր, որ զամ քեզ մոտ, ես այստեղ պետք է կատարեմ այն բոլորը, որի համար ուղարկված եմ» (Մովսէս Խորենացի, էջ 185):

⁵²⁴ «Որովհետև դու ինձ տեսար և հավատացիր. երանի նրանց, որոնք չեն տեսել և սակայն հավատում են» (Յով., Ի 29, հմմտ. Ա Պետր., Ա 8):

⁵²⁵ Մովսէս Խորենացի, էջ 150, «Երանի նրան, ով ինձ հավատում է, ինձ տեսած չլինելով, որովհետև իմ մասին այսպես է գրված, թե որոնք ինձ տեսնում են, ինձ չեն հավատա, իսկ որոնք չեն տեսնում՝ կհավատան ու կապրեն» (Մովսէս Խորենացի, էջ 185):

յեցակարգային մոտեցումներով Մովսես Խորենացու ժամանակի, նրա օգտագործած սկզբնաղբյուրների տեղեկությունների և Հայ Առաքելական եկեղեցու ավանդության պատմական հենքի նկատմամբ:

Աբգար թագավորի մասին պատմության վաղ շրջանի սկզբնաղբյուրներն են սբ. Թադեոս առաքյալի քարոզությանը նվիրված գրույցները և դրանց հիման վրա առաջացած եկեղեցական ավանդության գրավոր տարբերակները, որոնք պահպանվել են Լաբուրնայի (Ղեբուբնա)⁵²⁶, Եվսեբիոս Կեսարացու⁵²⁷ և Մովսես Խորենացու⁵²⁸ և այլ երկերում:

Պատմահոր հաղորդումների հավաստիությունը խնդրո առարկա հարցի առնչությամբ պատմագիտության մեջ հիմնականում գնահատվել է Լեբուբնայի և Եվսեբիոս Կեսարացու երկերում պահպանված նյութերի հետ համադրության տեսանկյունից: Գ. Սարգսյանը, հիմնավորելով Մովսես Խորենացու V դարի հեղինակ լինելու ճշմարտացիությունը և անդրադառնալով նրան VIII դարի հեղինակ համարող Ռ. Թոմսոնի կարծիքին, ցույց է տվել վերջինիս դրույթների անհիմն լինելը: Ղրանցից է Պատմահոր օգտագործած դիվանների նյութերի կապակցությամբ Ռ. Թոմսոնի քննադատությունը, որի նպատակն է Աբգարի մասին պատմության հերքումը: Ռ. Թոմսոնը, օգտագործելով Ա. Կարիերի և Գ. Խալաթյանցի աշխատություններում Մովսես Խորենացու նկատմամբ եղած գերքննադատությունը⁵²⁹, ժխտել է Պատմահոր

⁵²⁶ Լաբուբնեայ դիւանագիր դարի Եղեսիոյ Թուղթ Աբգարու, յեղեալ յասորոյն ի ձեռն սբ. թարգմանչաց, Վնենտիկ, 1868; Ղեբուբնա Եղեսացի, Թուղթ Աբգարու թագաւորի Յայոց եւ քարոզութիւնք Սրբոյն Թադէի առաքելոյ, Յերուսաղէմ, 1868:

⁵²⁷ Եւսեբիոսի Կեսարացոյ Պատմութիւն Եկեղեցոյ, էջ 60:

⁵²⁸ Մովսէս Խորենացի, էջ 147-159:

⁵²⁹ Ա. Կարիերը և Գ. Խալաթյանցը, Մովսես Խորենացուն դիտելով որպէս VIII դարից ոչ շուտ ապրած հեղինակ, սբ. Թադեոս առաքյալի մասին նրա տեղեկությունները համարել են վստահություն չընծայող (A. Carrier, *Nouvelles sources de Moïse de Khoren, Vienné, 1893, p. 47*; Նույնի՝ *La légende d'Abgar dans l'Histoire d'Arménie de Moïse de Khorene, Paris, 1895, pp. 371-372*): Գ. Տաշյանը, չհամաձայնվելով Լ. Տիքսերոնի այն կարծիքի հետ, թե Մովսես Խորենացու «գյուտն է» «Աղէի» (Թադեոս) Արևելք կատարած ճանապարհորդությունը դեպի Յայաստան կատարած քարոզությամբ փոխարինելը (L. J., Tixeront, *Les origines de l'église d'Édesse et la légende d'Abgar, Paris, 1888, p. 128*), նշել է. «Խորենացին

տեղեկությունների հավաստիությունը⁵³⁰: Չ. Սարգսյանը նշել է, որ Ռ. Թոմսոնին լրիվ շփոթեցրել է դիվաններին վերաբերող հարցը⁵³¹, ինչը հետևանք էր Պատմահորը V դարի հեղինակ անհիմն կերպով չհամարելու և նրա երկի աղբյուրագիտական հիմքի ժխտման:

Հետագա ժամանակների սկզբնաղբյուրներից այս առնչությամբ կարևոր տեղեկություն է պարունակում Անանուն Եդեսացու (XII երկրորդ կես - XIII առաջին կես) երկը, որում Աբգարի տոհմի՝ հայկական ծագում ունենալու նշումը համահունչ է Մովսես Խորենացու հաղորդմանը Աբգարի՝ Հայոց արքա լինելու մասին: Անանուն Եդեսացին գրել է. «...ընդհատվեց Ուռհայի թագավորների սերունդը: Նրանք ծագում էին Սելևկյաններից... Չգտնվեց որևէ հույն, որ անցներ իշխանության գլուխ: Եվ քանի որ Ուռհայում բնակություն հաստատած և հզորացած հայերը հավատարիմ էին մնացել հունաց թագավորությանը, նրանց ազգից մեկին, որի անունն էր Աբգար, թագավոր հռչակեցին: Սա և իր սերունդները երեք հարյուր ութսուն տարի տիրեցին Ուռհային ու Միջագետքին, նրանցից շատերը կոչվեցին Աբգար, առաջին թագավորի անունով: Մեր Տիրոջ տնօրինության ժամանակներում եկավ և աշխարհում հայտնվեց Քրիստոսը, երբ Հռոմում տիրում էր Օգոստոս կայսրը⁵³²: Իսկ Ուռհայում թագավորում էր այս Աբգարը՝ Մանուի որդին, որն իր գույնի թխության պատճառով կոչվում էր Ուքամա»⁵³³:

գրած է ինչ որ գտած է» (Յ. Տաշեան, Սկզբնաղբյուրները Եդեսիոյ եկեղեցւոյն եւ Աբգարու գրոյցը - «Հանդէս ամսօրեայ», 1889, N 3, էջ 48, 63), այսինքն՝ Մովսես Խորենացին շարադրել է իր երկը այն սկզբնաղբյուրների հիման վրա, որոնք նրա ձեռքի տակ են եղել:

⁵³⁰ Ռ. Թոմսոնը ոչ միայն ժխտել, այլ նաև դուրս է եկել գիտական էթիկայի սահմաններից՝ գրելով. «Մովսեսը Աբգարին Հայոց թագավոր է դարձրել, և նրա համար դժվար չէր այդ խաբեությունը մի փոքր առաջ շարժել և պնդել, որ դիվանները հայկական նյութեր են պարունակել» (Movses Khorcnatsi, 1978, p. 34, 2006, p. 33):

⁵³¹ Мовсес Хоренати, с. XXXI-XXXII.

⁵³² Օգոստոս Օկտավիանոս (մ. թ. ա. 27 - մ. թ. 14 թթ.):

⁵³³ Անանուն Եդեսացի, ժամանակագրություն.-Ասորական աղբյուրներ, Բ, քարոզմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982, էջ 195-196: Լ. Տեր-Պետրոսյանը ժամանակագրորեն նշել է, որ այստեղ խոսքը Մանուի որդի Աբգար V Ուքամայի (մ. թ. ա. 4- մ. թ. 7, մ. թ. 13-

Հայաստանում | դարում տեղի ունեցած առաքելական քարոզության մասին պատմագիտության տվյալները շաղկապվում են եկեղեցական ավանդության հետ: Կարևորելով եկեղեցական ավանդության՝ պատմագիտությամբ պահպանելու հարցը, Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանը (1943-1952 թթ.) գրել է. «Ներկայ եկեղեցականներս շատ բանով երախտապարտ ենք մեր նախորդներին: Նոքա, մինչև իսկ ներկայ մտքով գիտութիւն չունենալով հանդերձ, իրենց հաւատարմութեամբ, աւանդապահութեամբ, նախանձախնդրութեամբ պահպանել են նախնեաց թողած ամենամեծ ժառանգութիւնը, բայց այսօր անհրաժեշտութիւն է դարձել, որ նախայիշեալ յատկութիւնների վերայ աւելանայ եւ գիտութեան ոգին: Աւանդութիւնը երկար ժամանակ պահպանում է սրբազան ժառանգութիւնները, բայց առանց գիտութիւնը կենդանացնող միջոցների նա աղօտանում է եւ կորցնում իր զօրութիւնը»⁵³⁴:

Մովսես Խորենացին սբ. Գրիգոր Լուսավորչի մահվան և հովիվների կողմից նրա մարմինը գտնելու մասին տեղեկությունը համեմատել է Քրիստոսի ծննդյան մասին Ավետարանում եղած նկարագրության հետ. «Բայց սրբոյն Գրիգորի ի Մանեայ այրն կեցեալ աներեւութաբար ամս բազումս՝ փոխի մահուամբ ի կարգս հրեշտակաց: Եւ հովուաց գտեալ զնա վախճանեալ՝ ի նմին տեղւոջ թաղեցին, ոչ գիտելով թէ ով ոք նա իցէ: Վայելէր իսկ նոցա, որք Փրկչին մերոյ ծննդեանն եղեն խորհրդածուք, լինել եւ աշա-

50 թթ.) մասին է, իսկ Եղեսիայում քրիստոնեության հաղթանակը համարել է տեղի ունեցած Աբգար VIII Մեծ թագավորի օրոք (177-212 թթ.): Նշելով, որ ուշագրավ է Անանուն Եղեսացու «վկայությունը Եղեսիայի թագավորների հայկական ծագման մասին», նա միաժամանակ գրել է. «Դա ցույց է տալիս, որ Աբգար թագավորի հայ լինելու առասպելը միջնադարում այնքան էր տարածված, որ ասորիներն անգամ հավատ էին ընծայում դրան: Ի դեպ, այդ առասպելը բոլորովին զուրկ չէ պատմական հիմքից. հայտնի է, որ հայ Պարթևների մի ճյուղը մ. թ. I դ. վերջում և II դ. սկզբում իսկապես կարճ ժամանակով տիրել է Եղեսիայի (Օսրեյների) թագավորության գահին» (ոույն տեղում, էջ 21, 239, ծան. 588): Մովսես Խորենացու և Անանուն Եղեսացու հաղորդումները կարևոր հիմք են Աբգարյանների հայկական ծագման մասին (Է. Դանիելյան, Սուրբ Թադեոս առաքյալի ավանդության արտացոլումը հայ պատմագրության մեջ - «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը», Երևան, 2000, էջ 49-54):

⁵³⁴ Գարեգին Ա Կաթողիկոս (Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն), Դեպի Լոյս եւ Կեանք, Երևան, 1994, էջ 30, 97-103:

կերտին յուղարկմանն սպասաւորք»⁵³⁵: Սբ. Գրիգոր Լուսավորչին անվանելով Քրիստոսի աշակերտ՝ նրա աճյունը գտնողներին Պատմահայրը համեմատել է այն հովիվների հետ, որոնք մասնակցել էին Փրկչի ծննդյան խորհրդին, ինչպես գրված է Ավետարանում. «Եւ հովիւք էին ի տեղւոջն յայնմիկ բացօթեագք, որք պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց: Եւ հրեշտակ Տեառն երեւեցաւ նոցա, եւ փառք Տեառն ծագեցին առ նոսա, եւ երկեան երկելո մեծ: Եւ ասէ ցնոսա հրեշտակն. Մի երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն: Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր...»⁵³⁶:

Մովսես Խորենացին սբ.Գրիգոր Լուսավորչի որդու՝ Արիստակես եպիսկոպոսի մասին գրել է. «...Եւ յետ նորա Արիստակէս ամս եօթն, ի քառասուն եւ յեօթներորդ ամէն Տրդատայ մինչեւ ցյիսուն եւ երրորդ ամն նորին, յորում եղել կատարունն Արիստակէայ: Զի արդարեւ էր սուսեր հոգելոր ըստ ասացելումն»⁵³⁷: Պատմահայրը, գրելով «ըստ ասացելումն», նկատի է ունեցել Աստվածաշունչը, որտեղ կարդում ենք. «Եւ առէք զսաղաւարտն փրկութեան եւ զսուսեր Հոգւոյն, որ է բանն Աստուծոյ»⁵³⁸: Արիստակեսին համարելով «սուսեր հոգևոր»՝ Մովսես Խորենացին այ-

⁵³⁵ Մովսես Խորենացի, էջ 244, «Իսկ սուրբ Գրիգորը Մանյա այրում երկար տարիներ աներևութաբար ապրելուց հետո մահվամբ փոխադրվում է հրեշտակների կարգը: Հովիվները նրան վախճանված գտնելով, նույն տեղում էլ թաղում են, առանց գիտենալու, թե ով է: Եվ հիրավի, վայել էր, որ նրանք, որոնք մեր Փրկչի ծննդյան խորհրդին մասնակից եղան, նաև սպասավոր դառնային նրա աշակերտի հուղարկավորությամբ» (Մովսես Խորենացի, էջ 258):

⁵³⁶ «Եվ այդ շրջանում բացօթյա բնակվող հովիվներ կային, որոնք իրենց հոտերի գիշերային պահպանությունն էին անում: Եվ Տիրոջ հրեշտակը երևաց նրանց, Տիրոջ փառքը ծագեց նրանց շուրջը, ու նրանք աստիկ վախեցան: Եվ հրեշտակը նրանց ասաց. «Մի վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որը ամբողջ ժողովրդինը կլինի, որովհետև այսօր ձեզ ծնվեց Փրկիչ, որ Օծյալ Տերն է» (Ղուկ., Բ 8-11): Մատթեոսի Ավետարանում այս հովիվները նշված են որպես Արևելքից եկած մոզեր (Մատթ., Բ 1-2):

⁵³⁷ Մովսես Խորենացի, էջ 243, «Երանից հետո (նստավ) Արիստակեսը յոթ տարի, Տրդատի քառասունյոթերորդ տարուց մինչև հիսուներեքերորդը, երբ տեղի ունեցավ Արիստակեսի մահը: Որովհետև նա իսկապես հոգևոր սուր էր, ինչպես ասված է» (Մովսես Խորենացի, էջ 257):

⁵³⁸ «Եվ առաքելք փրկության սաղավարտն ու Հոգու սուսերը, որ է Աստծու խոսքը» (Եփես., 2 17, հմմտ. Եբր., Դ 12):

նուհետև բացատրել է, որ նա թշնամի էր թվում բոլոր անհրավ և աղտեղագործ մարդկանց և հենց իր արդարամիտ վարքի համար էլ նահատակվեց Ծոփքի կողմերում վերակացու նշանակված Արքեղայոսի ձեռքով⁵³⁹: Փավստոս Բուզանդը ևս բարձր գովեստով է արտահայտվել Արիստակեսի մասին. «Արիստակես հորն էր գործակից եպիսկոպոսակից յամենայն ընթացս վարդապետութեան զամենայն աւուրս կենաց իւրոց մինչեւ յօրն քրիստոսակոչ հանգստեանն իւրոյ»⁵⁴⁰:

Տրդատ III Մեծը իր կյանքի վերջին ժամանակաշրջանում, ըստ Մովսես Խորենացու, տեսնելով, որ «զմեծամեծ նախարարսն, միանգամայն եւ զամենայն բազմութիւն ռամկին» ընդդիմանում էին իր կամքին «յաղագս կրօնից քրիստոսականաց», հեռացավ աշխարհիկ գործերից և գնաց «ի տեղի սուրբ ճգնաւորին Քրիստոսի, ծականուտ լեռնակեցիկ եղեալ»⁵⁴¹: Մ. Օրմանյանի կարծիքով, այստեղ խոսքը Գրիգոր Լուսավորչի («երբ տակաւին նա կենդանի էր») ճգնարանի (Մանյա Այրք) մոտ Տրդատի գնալու և բնակվելու մասին էր⁵⁴²:

Տրդատին կոչ են անում վերադառնալ և «ունել զթագաւորութիւնն», խոստանալով «լինել ըստ կամաց նորա»: «Իսկ ի չհաւանել սրբոյն՝ տան նմա արբումն, որպէս անդ ուրեմն ի հնումն Աթենացիքն Սոկրատայ զմոլեխինդն»⁵⁴³: Մովսես Խորենացին, խոսելով Տրդատի քրիստոնյա վարքի և մահվան մասին, այստեղ համեմատությունը կատարել է նախաքրիստոնէական ժամանակներում ապրած և մահապատժի ենթարկված հին հույն փիլիսոփա Սոկրատեսի (մ. թ. ա. 469-399 թթ.)⁵⁴⁴ հետ, իսկ հաջորդ համեմատությունը (որով Պատմահայրը հիմնավորում է

⁵³⁹ Մովսես Խորենացի, էջ 243: Պատմահոր շարադրանքից հետևում է, որ Արիստակեսի մահվանից հետո կաթողիկոսական աթոռին նրան հաջորդեց նրա ավագ եղբայրը՝ Վրթանեսը (նույն տեղում, էջ 244):

⁵⁴⁰ «Արիստակեսը իր հորը գործակից և եպիսկոպոսակից էր նրա վարդապետության ամբողջ ընթացքում իր կյանքի բոլոր օրերում մինչև քրիստոսակոչ վախճանի օրը» (Փավստոս Բուզանդ, էջ 14-15):

⁵⁴¹ Մովսես Խորենացի, էջ 246:

⁵⁴² Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 120-121:

⁵⁴³ Մովսես Խորենացի, էջ 246-247, «Իսկ երբ սուրբը չի համաձայնվում, նրան թունավոր ըմպելիք են տալիս, ինչպես հնում աթենացիները Սոկրատին տվին մոլեխինդը» (Մովսես Խորենացի, էջ 260):

⁵⁴⁴ B. Russell. A History of Western Philosophy, New York, 1966, p. 84-85.

Տրդատին սուրբ անվանելը) աստվածաշնչական բնույթի է. «...կամ թէ զմերն իսկ ասել, կատաղեալ Եբրայեցիքն ընպելի լեղեալ խառնեալ Աստուծոյ մերոյ...»⁵⁴⁵: «Պատմութիւն Հայոց»-ի այս հատվածը հիմնված է Ավետարանի վրա. «Ետուն նմա ընպել զինի ընդ լեղի խառնեալ. եւ իբրեւ ճաշակեաց, ոչ կամէր ընպել»⁵⁴⁶, «Եւ անդ կայր աման ինչ լի քացախով, եւ նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղոյ շուրջ եղեալ զմշտկաւ զոպայի մատուցին ի բերան նորա»: Իբրեւ առ Յիսուս զքացախն հանդերձ լեզուվն ասէ. «Ամենայն ինչ կատարեալ է» եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին»⁵⁴⁷: ..

Մովսես Խորենացին «Պատմութիւն Հայոց» երկն ավարտել է «Ողբքով», սակայն դեռևս Բ գրքում, Տրդատ III-ի մահը նշելով որպես դավադրաբար թունավորման հետևանք⁵⁴⁸, ինչպես նաև իր շարադրանքի վերոհիշյալ հատվածում, հենվելով Աստվածաշնչի վրա, օգտագործել է հնում և միջնադարում ընդունված «ողբքի» ոճը. «Վասն այսորիկ ես ի վերայ իմոցս ողբալով ասեմ, որպէս Պաւղոս յաղագս իւրոցն եւ թշնամեաց խաչին Քրիստոսի»: Պատմահոր օգտագործած «ի վերայ իմոցս ողբալով» արտահայտությունը և դրա շարունակությունը («բայց ասեմ ոչ զիմ բանս, այլ զՀոգւոյն սրբոյ: Ազգ թիւր եւ դառնացող, ազգ, որ ոչ ուղղեաց գսիրտ իւր, եւ ոչ հաւատարմացաւ Աստուծոյ ոգի նորա: Վրք Արամեանք, մինչև յե՞րբ էք ծանրասիրտք, ընդէ՞ր սիրէք զնանրութիւն եւ զանաստուածութիւն: Ո՞չ ծանեայք, զի սքանչելացոյց Տէր զսուրբն իւր. եւ ոչ Տէր լուիցէ յաղաղակել ձերում առ նա: Զի բարկացեալ մեղայք, եւ... ոչ զղջացարուք. քանզի զենէք զենումն անօրէնութեան, եւ գլուսացեալն ի Տէր արհամարհեցէք: Վասն այսորիկ եկեսցէ ձեզ որոգայթ՝ զոր ոչ ծանեայք. եւ որսն

⁵⁴⁵ Մովսես Խորենացի, էջ 247, «...կամ մերն ասելով՝ կատաղած եբրայեցիները մեր Աստուծուն տվին լեղի խառնած ընպելիք» (Մովսես Խորենացի, էջ 260):

⁵⁴⁶ «Նրան լեղի խառնած զինի տվեցին խմելու, և երբ համտեսեց չկամեցավ խմել» (Մատթ., Իէ 34):

⁵⁴⁷ «Եվ այնտեղ քացախով լի մի աման կար, նրանք լեղախառն քացախով մի սպունգ թրջեցին և այն դրին զոպայի խուրձին ու մոտեցրին նրա բերանին: Երբ Յիսուս լեղախառն քացախը բերանն առավ, ասաց. «Ամեն ինչ կատարված է»: Եվ գլուխը խոնարհեցնելով, հոգին ավանդեց» (Յով., ԺԹ 29-30):

⁵⁴⁸ Այս խնդրի մասին տես՝ Դ. Մանանդյան, Երկեր Բ, էջ 139-140:

զոր որսայցէ՞ ըմբռնեսցէ զծեզ, եւ նովին որոգայթին անկջիք: Այլ նորա անձն ցնծասցէ Տէրամբ եւ ուրախասցի ի փրկութեան իւրում, եւ ամենայնիւ ինքեամբ ասասցէ. Տէր, ո՛վ նման է քեզ»⁵⁴⁹) համապատասխանում են Պողոս առաքյալի խոսքին՝ «Եղբայրք... բազումք գնան, զորոց բազում անգամ ասէի ձեզ, բայց արդ եւ լալով իսկ ասեմ, զթշնամեաց խաչին Քրիստոսի»⁵⁵⁰:

Պատմահայրն այստեղ չնայած հիշատակել է «արք Արամեանք», սակայն ամբողջ պարբերության բովանդակությունն այլ միջավայրում ապրող օտար ազգի վարքի բնութագրմանն է վերաբերում: Նա իր խոսքը պատկերավոր դարձնելու նպատակով սկզբնաղբյուր է ծառայեցրել Սաղմոսների գրքի տողերը. «Որդիք մարդկան, մինչեւ յե՞րբ էք խստասիրտք, ընդէ՞ր սիրէք զանարութիւն, եւ խնդրէք զստութիւն: Ծաներուք զի սքանչելիս արար Տէր սրբոյ իւրում, եւ Տէր լուիցէ ինձ ի կարգալ իմում առ նա: Բարկանայք՝ եւ մի՛ մեղանչէք, զոր ինչ ասէք ի սիրտս ձեր յանկողինս ձեր՝ զղջացարուք... «Հասցէ ի վերայ նոցա որոգայթ զոր ոչ գիտացին, եւ որս զոր թաքուցին՝ առցէ զոտս նոցա, եւ յորոգայթ ի նոյն անկցին: Այլ անձն իմ ցնծասցէ ի Տէր, ուրախ եղիցի ի փրկութեան նորա: Եւ ամենայն ոսկերք իմ ասասցեն. Տէր, ո՞նման է քեզ... Որդիք որ ծնանին, յարիցեն եւ պատմեսցեն զայս որդւոց իւրեանց. Զի դիցեն առ Աստուած զյոյս իւրեանց, եւ մի՛ մոռացին զգործս Աստուծոյ, զպատուիրանս նորա խնդրելով խնդրեսցեն, Եւ մի՛ եղիցին որպէս եւ հարքն իւրեանց, ազգ չար եւ

⁵⁴⁹ Մովսէս Խորենացի, էջ 247-248, «Այս պատճառով ես իմոց վրա ողբալով ասում եմ՝ ինչպէս ասել է Պողոսն յուրախիմների և Քրիստոսի խաչի թշնամիների մասին. բայց ասում եմ ոչ իմ խոսքերը, այլ Սուրբ Զոգու. - Ո՛վ թյուր և դառնացող ազգ՝ որ իր սիրտը չուղղեց, և որի հոգին Աստծուն հավատարիմ չմնաց: Արամյան այրեր, մինչև ե՞րբ պիտի մնաք ծանրասիրտ, ինչո՞ւ էք սիրում ունայնությունը և անասովածությունը: Դուք չիմացա՞ք, որ Տէրը սքանչելի դարձրեց իր սրբին. և նա ձեզ չի լսի, երբ դուք աղաղակելով նրան դիմեք: Իսկ դուք բարկանալով մեղանչեցիք և... չզղջացիք. քանզի անօրենության մատաղ արեցիք և արհամարհեցիք նրան, ով հույսը դրել էր Տիրոջ վրա: Այս պատճառով ձեր վրա կհասնի որոգայթ, որը դուք չիմացաք, և այն որսը, որ դուք որսացիք, նա ձեզ կբռնի, և նույն որոգայթով կբռնվեք: Իսկ նրա անձն Տիրոջով կցնծա, կուրախանա իր փրկությամբ և իր ամբողջ տւթյամբ կասի. Տե՛ր, ո՞վ է քեզ նման»:

⁵⁵⁰ Փիլիպ., Գ 18:

դառնացող, ազգ որ ոչ ուղղեաց զսիրտ իւր եւ ոչ հաստատեաց առ Աստուած գիողի իւր»⁵⁵¹:

Մովսէս Խորենացի ընդհանրացնելով նշել է. «Բայց ասեմ ոչ զիմ բանս, այլ զՀոգւոյն սրբոյ: Ազգ թիւր եւ դառնացող... »⁵⁵²: Այստեղ, Պատմահայրը հենվել է Քրիստոսի հետևյալ խոսքի վրա. «Ով ազգ անհաւատ եւ թելր, մինչեւ յե՞րբ եղէց ընդ ձեզ եւ անսայցեմ ձեզ...»⁵⁵³:

Մովսէս Խորենացին իր շարադրանքը կառուցել է Նոր Կտակարանի տարբեր մասերում պարունակված տեղեկությունների հիման վրա: Այսպես, Պատմահայրը, որպես մխիթարության արտահայտություն («Եւ զի այսոքիկ ճշմարիտ այսպէս՝ մխիթարեսցուք մերովք վտանգիւքս եւ մեք. «զի եթէ ընդ փայտ դալար զայս արարին, ասէ Քրիստոս, իսկ ընդ չորն զի՞նչ լինիցի», «...ո՞վ ոք տուն կամ օթանոց մեզ պատրաստեաց») ⁵⁵⁴, բերել է Քրիստոսի խոսքը՝ ուղղված իր աշակերտներին («Ի տան Հօր իմոյ օթեվանք բազում են, ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, Եւ եթէ երթան եւ պատրաստեն ձեզ տեղի, դարձեալ զամ եւ առնում զձեզ առ իս. զի ուր ենս իցեմ, եւ դուք անդ գիցէք: Եւ ուր երթանմ՝ գիտիցէք, եւ զճանապարհն դիտիցէք»⁵⁵⁵):

⁵⁵¹ «Մարդկանց որդիներ, մինչև ե՞րբ պիտի խստասիրտ լինեք, ինչո՞ւ եք ունայնություն սիրում և ստություն փնտրում: Իմացեք, որ Տերը զարմանահրաշ գործեր արեց իր սրբի համար, և Տերը կլիսի ինձ, երբ օգնության կանչեմ նրան: Եթե բարկանաք մի՛ մեղանչեք, ձեր անկողնու մեջ ինչ էլ որ ասեք, ձեր սրտում զղջացեք... Նրանց վրա կհասնի մի որոգայթ, որի մասին չգիտեն նրանք. իրենց թաքցրած թակարդը կբռնի նրանց ոտքը, և նրանք կընկնեն այդ որոգայթի մեջ: Իսկ հոգիս կցնծա Տիրոջով, ուրախ կլինի նրա տված փրկությամբ: Իմ բոլոր ոսկորները կասեն. «Տեր, ո՞վ է քեզ նման... Որդիները, որ ծնվելու են, պիտի ելնեն և պատմեն դա իրենց զավակներին, որպեսզի իրենց հույսը դնեն Աստծու վրա և չմոռանան Աստծու գործերը՝ հետևելով նրա պատվիրաններին, որ իրենց հայրերի պես չար և դառնացող ազգ չլինեն, ազգ՝ որ չուղղեց իր սիրտը և իր հոգին չհաստատեց Աստծու վրա» (Սաղմ., Դ. 3-5. ԼԴ. 8-10, Դե. 6-8):

⁵⁵² Մովսէս Խորենացի, էջ 247, «Բայց ասում եմ ոչ իմ խոսքերը, այլ Սուրբ Գոգու: Ազգ թյուր և դառնացող...»:

⁵⁵³ «Ով անհավատ և մոլորված ազգ. մինչև ե՞րբ ձեզ հետ պիտի լինեն և ձեզ հանդուրժեն...» (Ղուկ., Թ 41):

⁵⁵⁴ Մովսէս Խորենացի, էջ 248, «Եվ որովհետև այս բոլորը ճշմարիտ այսպես է, ապա և մենք մխիթարվենք մեր նեղությունների մեջ: «Եթե կանաչող ճառին այսպես արին, ասում է Քրիստոս, ապա չորին ի՞նչ կանեն», «...ո՞վ մեզ տուն կամ իջևան պատրաստեց» (Մովսէս Խորենացի, էջ 261):

⁵⁵⁵ «Իմ Գոր տան մեջ բազում օթևաններ կան. թե չէ ես ձեզ կասեի, թե գնում եմ

Տրդատ թագավորի սպանողներին Մովսես Խորենացին դատապարտել է ավետարանական խոսքով. «Արգելում ասել զՔրիստոսին - տալ վրէժս յարենէն Աբելի արդարոյ մինչև ցարիւնն Չաքարիայ, որ կայ ի մէջ տաճարին եւ սեղանոյն»⁵⁵⁶: «Գիտութեան փականները թաքցնող» օրենսգետների և փարիսեցիների կեղծավորությունը դատապարտելով՝ Քրիստոսն ասել է, որ, ըստ Աստծու իմաստության, նրանց մոտ ուղարկված մարգարեներից և առաքյալներից ոմանց նրանք սպանելու և հալածելու են, որպեսզի այդ սերնդից պահանջվի արյունը բոլոր մարգարեների՝ թափված աշխարհի սկզբից՝ «Յարենէն Աբելի մինչեւ ցարիւնն Չաքարեայ կորուսելոյ ընդ սեղանն եւ ընդ տաճարն»⁵⁵⁷: Այս միտքն առկա է նաև Մատթեոսի Ավետարանում, սակայն, Մովսես Խորենացին հենվել է Ղուկասի Ավետարանի վրա, քանզի առաջինում Չաքարիայի կապակցությամբ հիշատակված է «որդւոյ Բարաքեայ»⁵⁵⁸, ինչը երկրորդում բացակայում է:

Մովսես Խորենացին Տիրան թագավորի կուրացման առիթով անդրադարձել է Ղանիել քահանայի նահատակությանը. «...վրէժս ընդ սրբոյ առնն (Ղանիել - Ն. Ղ.) այնորիկ պահանջեցաւ, որով լուսաւորէր աշխարհս, ըստ Աւետարանին ձայնի՝ գոլով լոյս աշխարհի»⁵⁵⁹: Մովսես Խորենացին Ղանիել քահանային համարելով քրիստոնեական հավատի համար նահատակված հոգևորական, նրան գնահատել է որպես Հայոց աշխարհի լուսավորող: Այս միտքն ասվել է Ավետարանի ոգով՝ արտացոլելով Քրիստոսի խոսքը. «Ես եմ լոյս աշխարհի»⁵⁶⁰:

Տիրան թագավորի և Ղանիել քահանայի հարաբերություն-

ծեզ համար էլ տեղ պատրաստեն, դարձյալ կգամ և ձեզ կվերցնեն ինձ մոտ, որպեսզի, ուր ես լինեմ, դուք ևս այնտեղ լինեք: Եվ թե ուր եմ գնում, այդ՝ գիտեք, գիտեք և ճանապարհը» (Յով., ԺԴ 2-3):

⁵⁵⁶ Մովսես Խորենացի, էջ 249, «Ես ինձ զսպում եմ Քրիստոսի խոսքը կրկնել, թե նրանք պետք է վճարեն վրեժը Աբելի արյունից սկսած մինչև Չաքարիայի արյունը, որ թափվեց տաճարում սեղանի առաջ» (Մովսես Խորենացի, էջ 262):

⁵⁵⁷ «Աբելի արյունից մինչև արյունը Չաքարիայի, որը կորստյան մատնվեց սեղանի և տաճարի միջև» (Ղուկ., ԺԱ 51):

⁵⁵⁸ Մատթ., ԻԳ 35:

⁵⁵⁹ Մովսես Խորենացի, էջ 276, «Գուցե սրանով նա վրեժը հաստատեց սուրբ մարդու (Ղանիել - Ն. Ղ.), որով լուսավորվում էր մեր երկիրն ըստ Ավետարանի խոսքի, աշխարհի լույսը լինելով» (Մովսես Խորենացի, էջ 281):

⁵⁶⁰ Յով., Ը 12, Թ 5:

ների ողբերգության խորությունն ընդգծելու համար Գնելի սպանության առիթով Արշակ II-ին խիստ խոսքերով հանդիմանած Տիրանին թագավորի հրամանով գաղտնաբար խեղդամահ անելը Մովսես Խորենացին, հիմնվելով Ավետարանի վրա, համարել է որպես Դանիելի սպանության հատուցում. «Բայց Տիրան հաննորա պատգամս խիստս յղեաց առ որդի իւր Արշակ. վասն որոյ հեղձամահ եղեւ յիւրոց սենեկապետաց ի հրամանէ արքայի ի գաղտնիս, եւ ի նմին աւանի Կուաշ թաղեցաւ, ոչ արժանի եղեալ հարցն՝ գերեզմանաց. թէ արդեօք զփոխարէնսն Դանիելի առնն Աստուծոյ հաւատոյց. որով չափով չափեաց՝ չափեալ եղեւ ըստ Գրոց»⁵⁶¹:

Մովսես Խորենացու հղումը կատարված է Նոր Կտակարանի («Տեսչէք զինչ լւէքդ... որով չափով չափէք, նովին չափեսցի ձեզ»⁵⁶²: «Տուք եւ տացի ձեզ... չափով որով չափէք՝ չափեսցի ձեզ»⁵⁶³: «Զի որով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք...»⁵⁶⁴) հիման վրա:

Պատմելով Հայոց Արշակունյաց վերջին թագավոր Արտաշեսի (Արտաշիր) գահից զրկվելու և պարսից արքա Վռամ V-ի (421-439 թթ.) կողմից ձերբակալության, ինչպես նաև Հայոց կաթողիկոսական աթոռին Սահակ Պարթևի փոխարեն Սուրմակ քահանային, այնուհետև ասորի Շմուելին նստեցնելու մասին՝ Մովսես Խորենացին անդրադարձել է նաև պարսից պալատում Սահակին արված Վռամի առաջարկին («միամիտ կալ ի ծառայութեան մերում, եւ ոչ խորիել իրս ապստամբութեան...»), որին Սահակ Պարթևը խիզախորեն պատասխանել էր. «...զնոցայն խայտառակելով զպաշտամունս, կատարեաց ի հրաշալի աստուածաբանութիւն...»: Սահակ Պարթևի խոսքին վերաբերող շարադ-

⁵⁶¹ Մովսես Խորենացի, էջ 283, «Բայց նրա (Գնելի - Ն. Դ.) պապը՝ Տիրանը, խիստ խոսքեր ուղղեց իր Արշակ որդուն, որի պատճառով իր սենեկապետների ձեռքով խեղդամահ եղավ՝ արքայի գաղտնի հրամանով և թաղվեց նույն Կվաշ ավանում, չարժանանալով իր հայրերի գերեզմանին. գուցե նա հատուցումն արավ Աստծու մարդու՝ Դանիելի մահվան: Ինչ չափով որ չափեց, նրանով էլ ինքը չափվեց, ինչպես ասված է սբ. Գրքում» (Մովսես Խորենացի, էջ 287):

⁵⁶² Մարկ., Դ 24:

⁵⁶³ «Տվեք, և ձեզ պիտի տրվի... այն չափով, որով չափում եք, նույն չափով պիտի չափվի ձեզ համար» (Ղուկ., Զ 38):

⁵⁶⁴ «... ինչ դատաստանով, որ դատեք, նրանով եք դատվելու...» (Մատթ., է 2):

րանքը Մովսես Խորենացին եզրափակել է աստվածաշնչյան տողով. «...և ոչ բովանդակ զբանին պայծառութիւն անհաւատիցն արկանել առաջի յայպանումն, որպէս զմարգարիտ խոզից ի կոխումն...»⁵⁶⁵: Այս միտքը հիմնվում է Նոր Կտակարանի հետևյալ արտահայտության վրա. «Մի՛ տայք զսրբութիւն շանց, եւ մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, զի մի՛ առ ոտն կոխիցեն զնոսա, եւ դարձեալ երգիծուցանիցեն զձեզ»⁵⁶⁶:

Մովսես Խորենացին Հայոց կաթողիկոսական աթոռի դէմ պարսից արքունիքի ծավալած գործողությունները դիտել է Սահակ Պարթևի անձնավորության շուրջ տեղի ունեցած իրադարձություններին անդրադառնալով: Ի վերջո, երբ Շնունելի մահվանից հետո հայ նախարարները գալիս և խնդրում են Սահակ Պարթևին նորից բարձրանալ կաթողիկոսական աթոռին, նա հրաժարվում է: Միայն շատ խնդրանքներից հետո, երբ նրանք ասում են, որ պարսից արքայից կխնդրեն վերականգնել նրա տոհմի ժառանգական իրավունքը Հայոց կաթողիկոսական գահին, Սահակ Պարթևը «պատմեաց զտեսիլն, որ յառաջ քան զբազում ժամանակս երեւութացաւ նմա ի քուն ապագայիցն յայտնութիւնք»⁵⁶⁷: Մովսես Խորենացին, ծանոթ լինելով Սահակ Պարթևի տեսիլքին և դրա մեկնությանը՝ թե՛ հայ Արշակունյաց թագավորական և թե՛ Գրիգոր Լուսավորչից սերող կաթողիկոսական տոհմերի դադարելու մասին, գրել է. «Ձոր լուեալ նախարարացն եւ գիտացեալ, թէ յաստուածային հրամանէ դադարեաց յազգէ նորա

⁵⁶⁵ Մովսես Խորենացի, էջ 351, «...նրանց պաշտամունքը խայտառակելով՝ խոսքն ավարտեց հրաշալի աստվածաբանությամբ, ...և ոչ թե պայծառ դավանությունը ամբողջովին զցեց անհավատների առաջ ծաղրելու համար, ինչպես մարգարիտը խոզերին ոտնակոխ լինելու...» (Մովսես Խորենացի, էջ 345):

⁵⁶⁶ «Մի՛ տվեք սրբությունը շներին. և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ զցեք, որպեսզի դրանք ոտքի կոխան չանեն և դառնալով ձեզ չպատառոտեն» (Մատթ., է 6):

⁵⁶⁷ Մովսես Խորենացի, էջ 354, «...պատմեց նրանց տեսիլքը, որով քնի մեջ շատ ժամանակ առաջ հայտնվեցին ապագայում գալիքները» (Մովսես Խորենացի, էջ 348): Պատմահոր երկում Սահակ Պարթևի տեսիլքի բովանդակությունը չկա: Գ. Սարգսյանը գրել է, որ կարելի էր սպասել, թե Մովսես Խորենացին կնկարագրեր այդ տեսիլքը դրան համապատասխան տեղում, ինչը, սակայն, չկա: Նա հնարավոր է համարել, որ այդ դրվագը «դուրս է մնացել բնագրից հաջորդ դարերում «Պատմութիւն Հայոց»-ի տեքստի արտագրման կամ խմբագրման ժամանակ» (Мовсес Хоренаци, с. 265, прим. 747):

քահանայապետութիւնն...»⁵⁶⁸, «Չմտաւ զայսոսիկ ածելով՝ հառա-
չումն յիս ի ներքս ընթանայ եւ արտօսը, եւ կամեցուցանէ բարբա-
ռել բան տխրական եւ սգաւոր: Եւ ոչ գիտեմ, եթէ զհարդ յարմա-
րեցից զողբերգութիւնս, եւ կամ զով արտասուեցից. զի՞քն իմ
մանուկ եւ թագաւոր, զխորհրդակցութեամբ վատթարն, զազգաւ
ի բաց ընկեցիկն, եւ նախ քան զմահուն մեռելութիւն՝ անփառու-
թեամբ յաթոռոյն ի վայր կործանեալ...»⁵⁶⁹:

Սահակ Պարթևի տեսիլքի ու դրա մեկնության ամբողջա-
կան բովանդակությունը պահպանել է Ղազար Փարպեցին՝ Ար-
շակունյաց տոհմի դադարելու և հատկապես Լուսավորչի տոհմի
սպառվելու հետևանքով Հայ եկեղեցու կաթողիկոսական աթոռի
հաստատությանը սպառնացող վտանգների մասին. «...Եւ նա-
փորտն բեհեզեայ, զոր տեսանէիր ծալեալ եւ եղեալ ի վերայ
սկտեղն, եւ գունդն ոսկի որ կայր մերձ նափորտանն՝ նշանակէ
մինն զքահանայութիւնն, եւ միւսն զթագաւորութիւնն: Եւ զի ոչ ոք
էր արկեալ զհրեաւ զնափորտն, եւ ոչ այն ոք էր որ զգունդն
ունէր ի ձեռին՝ լուր ստուգապէս, զի լռեսցէ մերձ ընդ մերձ թա-
գաւորութիւն յազգէդ Արշակունեաց, եւ քահանայութիւն ի ցեղէ
արժանաւոր քահանայապետին Գրիգորի: Եւ մագաղաթն հատո-
ւածածեւ, որ ցուցաւ քեզ գրեալ ի սկզբանն կարգս ինչ ոսկեղէն
գրով՝ զձեռնադրութիւն արանց սրբոց եցոյց քեզ շնորիք Հոգւոյն
սրբոյ, որք ի զաւակէ երանելւոյն Գրիգորի յաջորդեսցեն արժա-
նապէս զաթոռ քահանայապետութեան... գիտեա՛, զի նստելոց են
քահանայապետք ոմանք յաթոռ սրբոյն Գրիգորի, որք ոչ ըստ
հրամանի սրբոց առաքելոցն եւ ոչ ըստ կանոնի սուրբ ժողովոյն
երեքհարիւր ութուտասանիցն»⁵⁷⁰ լինին ձեռնադրեալք յերկնաւոր
պատիւ, այլ ըստ փառաց աշխարհիս ձգտին ի պատիւն

⁵⁶⁸ Մովսէս Խորենացի, էջ 354, «Նախարարներն այս լսելով և հասկանալով, որ
աստվածային հրամանով նրա տոհմից քահանայապետությունը դադարեց ...»
(Մովսէս Խորենացի, էջ 348):

⁵⁶⁹ Մովսէս Խորենացի, էջ 362, «Երբ մտածում են այս բաների մասին, իմ մեջ
հառաչանք և արտասուք են ծագում, ինձ թելադրում են տխրալից և սգավոր
խոսք ասել: Եվ չգիտեմ ինչպես հորինեմ իմ ողբը և կամ ում արտասվեմ,-
արդյոք. իմ թշվառ մանուկ թագավորի՞ն, որ վատթար խորհրդակցությամբ իր
տոհմով հանդերձ դեն գցվեց և մինչ մեռնելն անարգաբար աթոռից
կործանվեց...» (Մովսէս Խորենացի, էջ 353):

⁵⁷⁰ Նիկիայի ժողովը (325թ.):

յանդգնութեամբ, որք են արծաթասէրք առաւել քան աստուածասէրք...»⁵⁷¹:

Մովսէս Խորենացին, անդրադառնալով Սահակ Պարթևի տեսիլքին, այնուհետև գրել է, որ նախարարները, իմանալով այդ մասին, «...յարտասուս հարեալ, աւաղելով զինքեանս ըստ Աւետարանին բանի, թէ Հարկ է գալ գայթակղութեանն, բայց վա՛յ այնոցիկ, ընդ ոյր ձեռն գայցէ գայթակղութիւնն»⁵⁷²: Աստվածաշնչից կատարված այս մեջբերումը Մատթեոսի և Ղուկասի Ավետարանների տեքստերի հետ բովանդակությամբ նույնը լինելով, ոճական տեսանկյունից ավելի մերձավոր է Մատթեոսի Ավետարանի շարադրանքին. «...հարկ է գալ գայթակղութեանց, բայց վա՛յ մարդոյն այնմիկ յոյր ձեռն գայցէ գայթակղութիւնն»⁵⁷³, քանզի Ղուկասի Ավետարանում կարդում ենք. «Ոչ է մարթ չգալ գայթակղութեան, բայց վա՛յ այնմիկ է յոյր ձեռն գայցէ»⁵⁷⁴:

Մովսէս Խորենացին ևս մեկ անգամ հիշատակելով Սահակ Պարթևին՝ հայ Արշակունյաց վերջին թագավորի անկումից հետո նրան բնութագրել է որպէս հայ ժողովրդի առաջնորդի, որը որպէս քահանայապետ «...ուղղէր զդէմսն եւ սանձահարէր զԵ-

⁵⁷¹ «Եվ բեհեզյա նափորտն էլ, որ ծալած և սկուտեղի վրա դրած տեսար, և ոսկե գունդը, որ կար նափորտի կողքին, մեկը քահանայությունն է նշանակում, մյուսը՝ թագավորությունը: Եվ քանի որ ոչ ոք իր վրա չէր առել նափորտը, և ոչ ոք ձեռքում չունէր գունդը, լսիր և ճշմարտապես իմացիր, որ շատ շուտով պետք է լռեն Արշակունյաց տոհմի թագավորությունը և քահանայությունը արժանավոր քահանայապետ Գրիգորի տոհմից: Եվ մագաղաթը հատվածածև, որ քեզ երևաց՝ սկզբում մի քանի տող գրած ոսկեղեն գրերով, նշանակում է Սուրբ Հոգու շնորհած արժանավոր այն մարդկանց ձեռնադրությունը, որոնք երանելի Գրիգորի տոհմից արժանապես պիտի հաջորդեն քահանայապետության աթոռին... իմացիր, որ սուրբ Գրիգորի աթոռին ոմանք քահանայապետ են նստելու ո՛չ ըստ հրամանի սուրբ առաքյալների և ո՛չ ըստ երեք հարյուր տասնութի ժողովի կանոնի են ձեռնադրվելու այդ երկնային պատվի համար, այլ այս աշխարհական փառքի համար այդ պատվին են ձգտում հանդգնությամբ: Նրանք առավելապես արծաթասեր են, քան աստվածասեր...» (Ղազար Փարպեցի, էջ 76-79):

⁵⁷² Մովսէս Խորենացի, էջ 354, «...արտասուցին, ողբում էին ըստ Ավետարանի խոսքի. «Հարկ է, որ գայթակղությունը գա, բայց վա՛յ նրանց, ում ձեռքով գայթակղությունը կգա» (Մովսէս Խորենացի, էջ 348):

⁵⁷³ «... գայթակղությունները պետք է որ գան, բայց վա՛յ այն մարդուն, որի միջոցով կգա գայթակղությունը» (Մատթ., ժԸ 7):

⁵⁷⁴ «Անկարելի է, որ գայթակղություն չգա, բայց վա՛յ նրան, որի ձեռքով կգա» (Ղուկ., ժԷ 1):

զուս օտարաձայնս...»⁵⁷⁵: Սահակ Պարթևին ակնածանքով բնութագրելիս Պատմահայրն արտահայտվել է՝ հետևելով Նոր Կտակարանին. «Եթե ոք կամիցի կրօնաւոր լինել եւ ոչ սանձահարիցէ զլեզու իւր, այլ զբաղեցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն վայրապար է կրօնաւորութիւնն»⁵⁷⁶:

2. Առաջին երեք Տիեզերական ժողովները Մովսես Խորենացու լուսաբանմամբ

Մովսես Խորենացին իր «Պատմութիւն Հայոց» երկում՝ վաղ միջնադարյան Հայոց պատմությանը նվիրված շարադրանքում մանրամասն անդրադարձել է Տիեզերական առաջին երեք ժողովների (Նիկիա՝ 325 թ., Կոստանդնուպոլիս՝ 381 թ., Եփեսոս՝ 431 թ.⁵⁷⁷) որոշումներից բխող քրիստոսաբանական դավանաբանությանը: Պատմահայրը Նիկիայի ժողովում ընդունված Հավատո Հանգանակի ջերմեռանդ հետևորդն էր և առաջին երեք Տիեզերական ժողովների մասին գրել է որպես Քրիստոնեական Ընդհանրական եկեղեցու դավանության ջատագով: Նրա շարադրանքի մեջ ուրվագծվում է այն դավանանքային պայքարը, որը եկեղեցու հայրերը մղել էին նախ Արիոսի, այնուհետև Մակեդոնի և Նեստորի վարդապետությունների դեմ⁵⁷⁸:

⁵⁷⁵ Մովսես Խորենացի, էջ 363, «...ուղղություն էր տալիս մարդկանց և սանձահարում էր օտարոտի (մտքեր հայտնող) լեզուները ...» (Մովսես Խորենացի, էջ 353):

⁵⁷⁶ «Եթե մեկը կամենում է բարեպաշտ լինել և չի սանձահարում իր լեզուն, այլ զբաղեցնում է իր սիրտը, այդպիսի մեկի համար զուր է բարեպաշտությունը» (Յակոբ, Ա 26):

⁵⁷⁷ Ե. Տեր-Սիմասեանց, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորոց եկեղեցիների հետ, էջ 63: Հմմտ. Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչեան, Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, մաս Ա. Վաղարշապատ, 1908, էջ 191, Ա. Ղազարյան, Դավանաբանական պայքարը և քաղաքական կողմնորոշման հարցը քրիստոնյա Արևելքում և Հայ եկեղեցին (Դ-2 դդ.), ատենախոսության սեղմագիր, Երևան, 1995, էջ 11:

⁵⁷⁸ Նիկիայի ժողովին Տրդատ թագավորի և սբ. Գրիգոր Լուսավորչի ջմասնակցելու և իրենց փոխարեն Արիստակես եպիսկոպոսին ուղարկելու պատմական իրավիճակի հանգամանքների մասին Մովսես Խորենացու հաղորդման մեջ ներկայացված ժամանակագրությունը Ռ. Թոմսոնը ամհավանական է համարել և առանց խորանալու Պատմահոր ժամանակագրական կարգի մանրամասների

Մովսես Խորենացին նախ գրել է Արիոսի վարդապետության մասին. «Ընդ այն ժամանակս երեւեցաւ Արիոս Աղեքսանդրացի, որ ուսոյց չարաչար ամբարշտել, ոչ գոլ գՈրդի հաւասար Հօր, եւ ոչ ի բնութենէ եւ յեութենէ Հօր. եւ ոչ ծնեալ ի Հօրէ յառաջ քան գյաւիտեանս, այլ օտար զոմն եւ արարած եւ կրտսեր, եւ յետ ժամանակի զոյացեալ՝ որ ըստ արժանեաց իւրոց ամբարիշտս այս Արիոս ի գարշելիսն ընկալաւ զսատակումն»⁵⁷⁹.

Ըստ Արիոս Աղեքսանդրացու պաշտպանած տեսակետի, «Յիսուս Քրիստոս չէ Որդի Աստուծոյ մարդացեալ, այլ գերագոյն արարած մը, եւ թէ իրեն տրուած Որդի Աստուծոյ կոչումը բառա-

մեջ, այն աղավաղել է՝ իմաստագրկելով պատմիչի հաղորդումը (Moses Khorenats'i, 1978, p. 245, n. 4-5): Այնինչ, Արիոսի ուսմունքը մերժած Միկիայի ժողովի հետ կապված Հայ եկեղեցու կանոնադրական նյութերը (Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 131-132) հաստատում են Մովսես Խորենացու հաղորդումների հավաստիությունը:

⁵⁷⁹ Մովսես Խորենացի, էջ 239, «Այս ժամանակներն հայտնվեց Արիոս Աղեքսանդրացին, որ ուսուցանում էր չարաչար ամբարշտություն, թե Որդին Հորը հավասար չէ և ոչ էլ Հոր բնությունից և էությունից է և չի ծնված Հորից նախ քան որևէ ժամանակ, այլ օտար ոմն է, և արարած, և կրտսեր և ժամանակի ընթացքում գոյացած: Այս ամբարիշտ Արիոսը սատկեց գարշելիության մեջ»: Ռ. Թոմսոնն այս հատվածի առումով կրկին անհիմն կերպով անվստահություն է հայտնել Մովսես Խորենացու կողմից սկզբնաղբյուրների բնագրերից օգտվելու կապակցությամբ (Moses Khorenats'i, 1978, p. 244, n. 1-2): Այս տեսակետից արժեքավոր դիտողություն է կատարել Գ. Սարգսյանը. «Որոշ սկզբնաղբյուրների չհիշատակելը, որոնցից իր տեղեկությունները առատորեն քաղում էր Մովսես Խորենացին, անկասկած, բացատրվում է նրանով, որ այդ սկզբնաղբյուրները նա ընկալում էր որպես մեր տեղեկատուները, հանրագիտարանները հիշեցնող ինչ-որ մի բան, ընդ որում, որոնց վրա նույնիսկ այժմ պարտադիր չէ հղում կատարել: Այդպիսի ձեռնարկներ էին նրա համար, օրինակ, իր կողմից բազմիցս օգտագործված IV դարի հեղինակների՝ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը» և «Եկեղեցական պատմությունը», Գրիգոր Նազիանզացու աշխատությունները (թեպետ և նրանք երբեմն հիշատակվում են), V դարի հեղինակ Սոկրատեսի «Եկեղեցական պատմությունը» և այլն» (Мовсес Хоренати, с. XXX. Գ. Սարգսյանն իրավացիորեն նկատի է ունեցել, որ Պատմահայրն օգտագործել է նրանց աշխատությունների բնագրերը՝ հունարեն [եզվով]):

կան իմաստով առնելու չէ»⁵⁸⁰։ Չնայած Աղեքսանդրիայում տեղի ունեցած տեղական ժողովներում (319 և 321 թթ.) Արիոս երեցի վարդապետությունը մերժվեց, սակայն նա նույնիսկ եպիսկոպոսների միջից էլ հետևորդներ ունեցավ։

Աստվածաբանական վիճաբանություններն այդ ընթացքում թեժացան, և Ընդհանրական եկեղեցու մեջ ծագած հակառակությունները լուծելու նպատակով կայսր Կոստանդիանոս I-ը (324-337 թթ.) Նիկիա քաղաքում հրավիրեց Ընդհանրական եկեղեցու եպիսկոպոսների առաջին Տիեզերական ժողովը, ինչի մասին Մովսես Խորենացին գրել է. «Վասն որոյ ել հրաման յինքնակալէն Կոստանդիանոսէ՝ ժողով լինել բազմութեան եպիսկոպոսաց ի Նիկիա Բիւթանացուց։ Եւ ժողովեցան Բիտոնն եւ Բիկենդ երիցունք ի Հռոմ քաղաքէ, ձեռնարկութեամբ սրբոյն Սեղբեստրոսի, Աղեքսանդրոս Աղեքսանդրի, Եւստաթիոս Անտիոքայ, Մակարիոս Երուսաղէմի, Աղեքսանդրոս Կոստանդնուպօլսի եպիսկոպոսք»⁵⁸¹։

Կոստանդիանոսը ժողովին մասնակցելու հրավեր էր ուղարկել Հայոց արքա Տրդատ III-ին և Հայ եկեղեցու եպիսկոպոսապետ՝ կաթողիկոս Գրիգոր Լուսավորչին։ Մովսես Խորենացին գրել է ինչպես այդ հրավերի, այնպես էլ Տրդատ Մեծի ու սբ. Գրիգորի ժողովին չգնալու պատճառների մասին. «Յայնժամ գայ հասանէ հրովարտակ ինքնակալին Կոստանդիանոսի առ մեր արքայն Տրդատ, զի զսուրբն Գրիգոր առեալ ընդ իւր ի ժողովն երթիցէ. զոր ոչ առ յանձն Տրդատ։ Քանզի լուեալ էր զխնամենալն Շապիոյ ընդ Հնդկաց թագաւորին եւ ընդ արեւելեանն խաքանայ, եւ զգօրավարելն Ներսեհի, որ եւ թագաւորեաց ամս ինն, եւ Որմզդի, որ ապա եւ նա թագաւորեաց ամս երիս...։ Եւ ի կասկածի եղեալ, զի մի՛ արդեօք պայմանին ստիցէ... վասն այնորիկ ոչ եթող առանց իւր զաշխարիս»⁵⁸²։

⁵⁸⁰ Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 112։

⁵⁸¹ Մովսես Խորենացի, էջ 239։

⁵⁸² Նույն տեղում, «Այս ժամանակ ինքնակալ Կոստանդիանոսից հրովարտակ է հասնում մեր Տրդատ թագավորին, որ սուրբ Գրիգորին հետն առնելով գնա ժողովին։ Բայց Տրդատ հանձն չառավ, որովհետև լսել էր, թե Շապուհը խնամիացել է Յնդկաց թագավորի և արևելյան խաքանի հետ և զորավարություն է ամուսն Ներսեհը, որ թագավորեց ինը տարի, և Որմիզդը, որ նույնպես երեք տարի թագավորեց... ուստի կասկածի մեջ էր, մի գուցե (Շապուհը) պայմանին

Այս հատվածի կապակցությամբ Ռ. Թոմսոնը գրել է. «Ժամանակագրությունը անհավանական է. Շապուիը՝ Շապուի I-ն է, 240-272 թթ.; Ներսեիը գահակալել էր 293-302 թթ., իսկ Որմիզը՝ 272-273 թթ.: Վերջին երկուսը Շապուի I-ի որդիներն էին»⁵⁸³: Նախ, եթե Ռ. Թոմսոնը նույնիսկ իր քննադատության մեջ ցանկանում էր հետևողական լինել, չպետք է աղավաղեր Պատմահոր ժամանակագրական կարգը, քանզի «Պատմութիւն Հայոց»-ում Ներսեիի և նրանից հետո եկող Որմիզի մասին ասված է. «...զգօրավարելն Ներսեիի, որ եւ թագաւորեաց ամս ինն, եւ Որմզի, որ ապա եւ նա թագաւորեաց...»⁵⁸⁴: Այս հատվածից պարզ կերպով հետևում է, որ խոսքն այն Որմիզի մասին էր, որը հաջորդել էր Ներսեիին⁵⁸⁵:

Մովսես Խորենացին այս վերջին հատվածն ամբողջովին ներկայացրել է որպես անցյալում տեղի ունեցած իրադարձությունների մի շարք, որոնցով թելադրված էր Տրդատի հրաժարումը Կոստանդիանոսի հրավերից: Պատմահոր շարադրանքից հետևում է, որ Սասանյաններն արևելքից արդեն ապահովել էին իրենց թիկունքը, և, եթե Տրդատը բացակայեր, Շապուի II-ի գործերը կարող էին հարձակվել Մեծ Հայքի թագավորության վրա:

Մովսես Խորենացու շարադրանքում միահյուսվել են Շապուի I-ի և Շապուի II-ի կերպարները: Այնպես որ, Պատմահոր երկի այս հատվածը կարևոր տեղեկություն է պարունակում, որով բացատրվում է Տրդատի՝ պետական մտածողությամբ թելադրված մտահոգությունը երկրի անվտանգության մասին:

Նիկիայի ժողովը տեղի ունեցավ միջազգային հարաբերությունների զարգացման տեսանկյունից քաղաքականապես և տնտեսապես բարենպաստ ժամանակաշրջանում, երբ Հռոմեա-

ստե... այս պատճառով էլ մեր երկիրն առանց իր ներկայության չթողեց» (Մովսես Խորենացի, էջ 254):

⁵⁸³ Moses Khorenats'i, 1978, p. 245, n. 5:

⁵⁸⁴ Մովսես Խորենացի, էջ 239:

⁵⁸⁵ Իսկ Ռ. Թոմսոնը, չնայած անգլերեն թարգմանել է "...Ormizd, who also later reigned..." (Moses Khorenats'i, p. 245, n. 5), սակայն նշել է Որմիզը I-ին (272-273 թթ.) Որմիզը II-ի փոխարեն: Խորենացու երկի ռուսերեն թարգմանության ծանոթագրություններում Գ. Սարգսյանն այդպես էլ մեկնել է՝ նշելով, որ խոսքն այն Որմիզի մասին էր, որը գահակալել էր 302-309 թթ., այսինքն՝ Որմիզը II-ի (Мовсес Хоренацин, с. 255, прим. 569):

կան կայսրության և Սասանյան Իրանի միջև 298 թ. կնքված Մծբինի 40-ամյա խաղաղության պայմանագիրը կայուն իրավիճակ էր ստեղծել Առաջավոր Ասիայում և Մեծ Հայքի թագավորությունն իր բարգավաճման և հզորացման նոր փուլն էր ապրում: Այնուամենայնիվ, Տրդատը, որպես թագավոր, մեծ զգուշավորություն ցուցաբերելով, չհեռացավ Հայաստանից:

Գրիգոր Լուսավորչի հրաժարումը ժողովին մասնակցելուց Մովսես Խորենացին բացատրել է նրա խոստովանողական համբավով: Պատմահայրը գրել է. «Բայց եւ ոչ սուրբն Գրիգոր հաւանեցաւ երթալ, զի մի՛ գառաւել պատիւ վասն խոստովանողական անուանն ի ժողովոյն ընկալցի. որպէս զի այնպէս փափագանօք եւ մեծաւ փութով կոչէին»⁵⁸⁶. Սբ. Գրիգորի խոնարհությամբ թելադրված նման վարքը հայտնի է Ազաթանգեղոսից՝ նրա կյանքի մեկ այլ դրվագի նկարագրության կապակցությամբ: Երբ սբ. Գրիգորն արդեն եպիսկոպոսապետ էր, Տրդատը նրան խնդրեց մշտապես իր հետ մնալ և շրջել երկրում, իսկ սբ. Գրիգորը հրաժարվեց, նախընտրելով ապրել անբնակ վայրում (Մանյա Այրթ)՝ ինքն իրեն խոնարհեցնելով պահքով, «զի մի՛ տացէ հպարտութեանն բարձրանալ կոխել զինքն»⁵⁸⁷:

Տրդատ թագավորը և սբ. Գրիգորն իրենց փոխարեն Նիկիա են ուղարկում Արիստակես եպիսկոպոսին, ում մասին Պատմահայրը գրել է. «Այլ նոքա առաքեն փոխանորդ իւրեանց զԱրիստակէս, հանդերձ ճշմարիտ խոստովանութեամբ, երկոցունց գրով: Որոյ երթեալ հասանէ մեծին Ղեւոնդի...»⁵⁸⁸:

⁵⁸⁶ Մովսես Խորենացի, էջ 240, «Բայց սուրբ Գրիգորն էլ չհամաձայնվեց գնալու, որպեսզի ժողովից չափազանց պատիվներ չկրե իբրև խոստովանող, քանի որ նրան այնպիսի փափագով և մեծ փութով հրավիրում էին» (Մովսես Խորենացի, էջ 255):

⁵⁸⁷ Ազաթանգեղայ Պատմութիւն Յայոց, էջ 449, «...որ չլինի թե հպարտությունը գլուխ բարձրացնի և ոտնակոխ անի իրեն» (Ազաթանգեղոս, էջ 144):

⁵⁸⁸ Մովսես Խորենացի, էջ 240, «Նրանք իրենց փոխարեն ուղարկեցին Արիստակեսին, ճշմարիտ խոստովանությամբ և երկուսի գրով: (Արիստակեսը) գնալով հասանում է Մեծն Ղեւոնդին...» (Մովսես Խորենացի, էջ 255): Վ. Վարդանյանը, հետազոտելով Խորենացու հաղորդած տեղեկությունները, եզրակացրել է. «Արիստակեսին Նիկիա ուղարկելը վկայությունն էր այն փաստի, որ Տրդատ Մեծն իր հավանությունն էր տվել նրան Յայոց եկեղեցու առաջնորդ կարգելու վճռին» (Վ. Վարդանյան, Տրդատ Մեծի ավանդը Յայ Առաքելական եկեղեցու նվիրապետական համակարգի ձևավորման գործում. «Յայաստանը և Զրիստո-

Նիկիայի ժողովը սկսվում է 325 թ. հունիսի 19-ին: Մովսես Խորենացին գրել է. «Երթեալ Արիստակէս ընդ մեծին Ղեւոնդի, հասանէ ի քաղաքն Նիկիացոց, ուր եղեն ժողովեալ հարք երեք հարիւր եւ ութւտասն ի քակտումն արիանոսաց. զորս նգովեալ մերժեցին ի հաղորդութնէ եկեղեցոյ. սոյնպէս եւ ինքնակալն արտասահմանեաց ի մետաղս»⁵⁸⁹:

Արիստակէս եպիսկոպոսը, վերադառնալով Հայաստան, Նիկիայի ժողովում հաստատված Հավատո Հանգանակը և քսան կանոնները Վաղարշապատում ներկայացրեց հորը՝ Գրիգոր Լուսավորչին և Տրդատ Գ թագավորին⁵⁹⁰:

«Կանոնագիրք Հայոց»-ում նշված են «Կանոնք Նիկիական գլուխք Ի» հետևյալ հաջորդականությամբ. «Ա. Վասն որք կամաւ կտրեցին զերկաւորիս: Բ. Վասն որք յարտաքնոց հաւատացեալք: Գ. Վասն չծեռնադրելոյ զստահակս եւ զանձանաւթս: Դ. Վասն եպիսկոպոս ձեռնադրելոյ: Ե. Վասն բանադրելոյ եւ թէ երիցս ի տարւոջ ժողով լիցի: Զ. Վասն որ առանց կաթողիկոսի ձեռնադրեալ: Է. Վասն պատուելոյ զԵրուսաղէմի եպիսկոպոսն: Ը. Վասն կաթարոսաց այսինք է սրբոց: Թ. Վասն որ առանց քննելոյ մերձենայ յերիցութիւն: Ժ. Վասն որք ի ձեռն արժաթոյ ձեռնադրին: ԺԱ. Վասն ուրացողաց: ԺԲ. Վասն քահանայից որ մեղանչեն: ԺԳ. Վասն որք յանցաւոր մեռանին: ԺԴ. Վասն երախայից: ԺԵ. Վասն յափշտակելոյ: ԺԶ. Վասն ժառանգաւորաց որ ի զաւշաքաղութան է: ԺԷ. Վասն սարկաւագաց որ մկրտութիւն առնեն: ԺԸ. Վասն արուագիտաց: ԺԹ. Վասն որք հերձուածեցան ի հերձուածս: Ի Վասն կիրակէի»⁵⁹¹:

Ոյա Արևելքը», Երևան, 2000, էջ 97):

⁵⁸⁹ Մովսես Խորենացի, էջ 240, «Արիստակեսը Մեծն Ղեւոնդի հետ գնում հասնում է Նիկիա, որտեղ ժողովված էին երեք հարյուր և տասնութ հայրեր՝ արիանոսներին տապալելու, որոնց նգովեցին և եկեղեցու հաղորդությունից հեռացրին, և ինքնակալը (Կոստանդիանոս Ն. Դ.) նրանց աքսորեց հանքերը» (Մովսես Խորենացի, էջ 255):

⁵⁹⁰ Նույն տեղում, էջ 240-241:

⁵⁹¹ Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 114-131:

Մովսես Խորենացին, օգտագործելով «արժանահաւատ բան» արտահայտությունը, նկատի է ունեցել Հավատո Հանգանակը⁵⁹²:

Հայաստանում եկեղեցու դավանությունը ամուր պահելու տեսանկյունից է գնահատում Պատմահայրը Արիստակես եպիսկոպոսի՝ Նիկիայից բերած կանոններին սբ. Գրիգոր Լուսավորչի կանոնների ավելացումը. «Ընդ որ ուրախացեալ սրբոյն Գրիգորի, սուղ ինչ գլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու, վասն առաւել՝ զգուշութեան իւրոյ վիճակին»⁵⁹³:

Մ. Օրմանյանը նշել է, որ սբ. Գրիգոր Լուսավորչի կանոնները «Կանոնագրքի» մեջ պետք է երեսունը լինեն՝ «Սրբոյն Գրիգորի առաքելոյ Հայոց» մակագրությամբ, որոնք պարունակում են զանազան բարեկարգություններ և «ասով կը հաստատուի թէ Գրիգոր կարգապահութեան ալ մտադրութիւն դարձուցած էր և կանոնական բարեկարգութեան պատուէրներ ալ կազմած էր»: Ինչ վերաբերում է կանոնների կազմության լեզվին, ապա Մ. Օրմանյանը, հենվելով կանոններից մեկի վրա եղած մի գրության վրա, եզրակացրել է. «Հայերէն դպրութեան դեռ կազմուած չի նիւլը, մտածել կու տայ թէ դժուար էր Գրիգորի հայերէն լեզուով կանոններ հաստատել, և հաւանական է բոլորին վրայ տարածել այն ծանօթութիւնը, որ մէկուն վրայ միայն գրուած կը գտնենք թէ թարգմանեցաւ ընդ ձեռն Եզնակայ՝ հրամանաւ Երանելոյն Սահակայ»⁵⁹⁴:

Սբ. Գրիգոր Լուսավորչի կանոնները, ըստ «Կանոնագիրք Հայոցի», հետևյալներն են. «Ա. Վասն քահանայից որ մեղանչեն: Բ. Վասն քահանայի որ կին առնու: Գ. Վասն քահանայի որ վարդի առնու: Դ. Վասն որք ուտեն ի տունս հեթանոսաց: Ե. Վասն կուսանի եւ երկեակի: Զ. Որ գերկորդ կինն թողու եւ յառաջինն դառնայ: Է. Որք ի տեղոյ ուտիցեն: Ը. Երիցու որ գաղտ պսակ դնիցէ: Թ. Վասն առեւանկաց: Ժ. Որք ի ծիսն հային յագելապէս:

⁵⁹² Լիակատար Վարք եւ Վկայաբանութիւնք Սրբոց որք կան 'ի հին Տոնացոյցի եկեղեցոյ Գայաստանեայց, յօրինեալ վավերական բանիւք ճառընտրաց մերոց եւ այլոց ազգաց, հանդերձ ծանօթութեամբ ի Գ. Սկրտիչ վրդ. Ազերեան, հ. Ե, Վենետիկ, 1813, էջ 428: Գիրք թղթոց, 1901, էջ 44-45, 1994, էջ 152-153:

⁵⁹³ Մովսէս Խորենացի, էջ 241, «Մուրք Գրիգորն ուրախանալով՝ իր կողմից մասնավոր գլուխներ ավելացնում ժողովի կանոնների վրա՝ իր հոտի ավելի մեծ զգուշության համար» (Մովսէս Խորենացի, էջ 255):

⁵⁹⁴ Պատմութիւն ժողովոց Գայաստանեայց եկեղեցոյ, էջ 25, տես՝ Մ. Օրմանյան, Ազգապաւորում, Ա, էջ 103, 114:

ԺԱ. Վասն իգացելոց: ԺԲ. Վասն թովչաց: ԺԳ. Որ գկուսութիւն իւր Աստուծոյ նուիրեաց: ԺԴ. Մանուկ որ առանց կնքոյ մեռանի: ԺԵ. Որ զգերեզման բանայ առ անծուկ: ԺԶ. Վասն որ զղիս կողոպտեն: ԺԷ. Վասն որք կոծ դնեն: ԺԸ. Վասն նշխարաց վկայից: ԺԹ. Վասն որք զխառնակս անասնոց նկատեն: Ի. Վասն անապատականաց: ԻԱ. Վասն զիրաման մեռելոց ունել: ԻԲ. Վասն ծածուկ խոստովանութեան: ԻԳ. Վասն որ զկին իւր արծակեսցէ: ԻԴ. Վասն որ զկին իւր թողու: ԻԵ. Վասն որ արբենայ: ԻԶ. Վասն որ կաշառ առնու: ԻԷ. Վասն ձեռնածուաց: ԻԸ. Վասն կիրակէի: ԻԹ. Վասն վայրապար նգովելոյ: Լ. Վասն մոնազոնի»⁵⁹⁵:

Պատմահոր հաղորդման համաձայն՝ սբ. Գրիգորն այդ ավելացումը կատարեց իր վիճակի («վիճակ Թադէի»⁵⁹⁶) «առաւել զգուշութեան» համար, իսկ ըստ Ագաթանգեղոսի, նա «ի նոյն լուսաւոր կանոնսն յաւելեալ, առաւել եւս զիւր վիճակն, զՀայաստան երկիրն, պայծառացուցեալ, հանդերձ միաբանութեամբ արքային Տրդատայ՝ զամենայն աւուրս կենաց իւրոց լուսաւորէր»⁵⁹⁷:

Մովսէս Խորենացին, քանի որ իր շարադրանքում անդրադարձել է նաև զրադաշտականությունից, նեստորականությունից և այլ աղանդներից եկող վտանգներին, սբ. Գրիգոր Լուսավորչի կանոններում տեսել է Հայոց աշխարհի հոգևոր կյանքն օտար հարձակումներից պաշտպանելու հանգամանքը: Տիեզերական Ա ժողովի առումով Հայաստանում ծավալված հոգևոր ընթացքներին անդրադառնալիս, կարելի է եզրակացնել, որ, հավատարիմ մնալով աստվածաշնչային հիմքի վրա Ընդհանրական եկեղեցու մշակած դավանաբանությանը, Հայ եկեղեցին ազգային հողի վրա պաշտպանական միջոցներ էր ձեռնարկում թե՛ քրիստոսաբանության անաղարտությունը պահպանելու և թե՛ հնարավոր խորթ միտումների ներթափանցումից երկիրը զերծ պահելու նպատակով:

Ընդհանրական եկեղեցու մեջ լինելը դեռևս չէր նշանակում կայսրության՝ Հայաստանի հետ դաշնակցային հարաբե-

⁵⁹⁵ Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 243-249:

⁵⁹⁶ Փավստոս Բուզանդ, էջ 66:

⁵⁹⁷ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 466: Սբ. Գրիգորը «ավելացրեց լուսավոր կանոնները՝ իր վիճակը, Հայաստան երկիրն առավել ևս պայծառացնելով Տրդատ արքայի միաբանությամբ մեկտեղ իր կյանքի բոլոր օրերը լուսավոր դարձրեց» (Ագաթանգեղոս, էջ 152):

րությունների հաստատում, ինչպես ցույց տվեցին Կոստանդնուպոլսի Տիեզերական Բ ժողովին (381 թ.) նախորդած տասնամյակները:

363 թ. պարսկա-հռոմեական պայմանագիրը կնքելուց հետո [որը Ամմիանոս Մարկելլինոսը (330-IV դ. վերջ) անվանել է «ամոթալի դաշինք»⁵⁹⁸, նկատի ունենալով կարիքի դեպքում Հռոմեական կայսրության հրաժարումը Հայաստանին օգնելուց⁵⁹⁹] պարսից լայնածավալ հարձակումը (որին զոհ դարձան Արշակ II թագավորը, Փառանձեմ թագուհին և Արտազես բերդի բազում պաշտպանները) իր բացասական հետքը թողեց հայ Արշակունյաց թագավորության քաղաքական կացության վրա: Պապ թագավորին (368-374 թթ.) մեծ ջանքեր գործադրելով հաջողվեց Հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանի որդու՝ Մուշեղ Մամիկոնյանի օգնությամբ երկիրն ազատագրել (որի գագաթնակետն էր Ջիրավի 371 թ. հաղթանակը) օտար զավթիչներից և ոչ միայն վերականգնել Մեծ Հայքի տարածքային ամբողջականությունը, այլ նաև, որոշ պետական միջոցառումներ ձեռնարկելով, կրկին հզորացնել Հայոց թագավորությունը⁶⁰⁰, սակայն հենց ինքն էլ՝ Պապ թագավորը, հռոմեական նենգ դավադրության զոհ դարձավ:

Վարազդատ թագավորի (374-378 թթ.) և սպարապետ Մանվել Մամիկոնյանի (378-385 թթ.) հակամարտության⁶⁰¹, ինչպես նաև վերջինիս խնամակալության տակ Արշակ III-ի (378-385 թթ.) ու նրա իշխանակից եղբոր՝ Վաղարշակի թագավորության ժամանակներում պարսկա-հռոմեական մրցակցության ակտիվացումը⁶⁰² հանգեցրեց Արշակունյաց թագավորության թուլացմանը և բաժանմանը:

Հռոմեական կայսրությունը դավանանքային խնդիրներն արդեն ծառայեցնում էր իր քաղաքական ծրագրերին: Թեոդոս I-ը ձգտում էր իրականացնել կայսրության արևելյան երկրամասերի

⁵⁹⁸ Amm. Marc., XXV, 7, 9-12.

⁵⁹⁹ Զ. Մանանյան, Երկեր, Բ, էջ 184-187:

⁶⁰⁰ Զայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 103-104:

⁶⁰¹ Փավստոս Բուզանդ, էջ 356-366:

⁶⁰² W. Seyfarth, Römische Geschichte, Kaiserzeit 2, Akademie-Verlag, Berlin, 1975, S. 475.

կրոնաքաղաքական կենտրոնացումը, և այդ նպատակին ծառայող միջոցառումներից էր դրանք բնակեցնող ժողովուրդներին Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռին ենթակայեցնելը: 380 թ. փետրվարի 27-ին Թեսալոնիկում Թեոդոսի հրապարակած հրամանագրում ասված էր. «Մենք ցանկանում ենք, որ բոլոր ժողովուրդները, որոնք կառավարվում են մեր գթասրտությամբ, հավատարիմ մնան այն կրոնին, որն ուսուցանում էր աստվածային առաքյալ Պետրոսը հռոմայեցիներին և որը պահպանվել է իր ավանդական ձևով մինչև ներկայիս ժամանակները, այն կրոնին, որն այժմ դավանում են պապ Դամասիոսը և Ալեքսանդրիայի եպիսկոպոս Պետրոսը՝ առաքելական սրբության մարդը... Մենք թույլ ենք տալիս այս հավատքի սկզբունքի հետևորդներին ընդունել կաթողիկե քրիստոնյաների անվանումը... Մենք մնացած բոլորին խարանում ենք հերետիկոս անարգ անունով»⁶⁰³: Իսկ Կոստանդնուպոլսում ընդունված 381 թ. հունվարի 10-ի հրամանագրով կայսրության արևելյան նահանգների քրիստոնյա եկեղեցիները պետականորեն ընդգրկվեցին Արևելյան Հռոմեական կայսրության վարած կրոնական քաղաքականության ոլորտը⁶⁰⁴:

381 թ. մայիսին Կոստանդնուպոլսում կայացած Տիեզերական Բ ժողովի դավանաբանական հիմնահարցն էր Մակեդոնի վարդապետության հերքումը, երբ, ինչպես նշել է Մովսես Խորենացին, «...մինչև ճշմարտութեանն ստուգեցաւ հաւատ, որ յաղագս ամբարշտին Մակեդոնի»⁶⁰⁵ հայիոյութեանցն. զի ոչ Տէր խոստովանէր զՀոգին սուրբ, եւ ոչ երկրպագելի եւ փառաւորելի ընդ Հօր եւ ընդ Որդոյ, այլ օտար յԱստուծոյ բնութենէն, եւ ստացական եւ ծառայ եւ պաշտօնեայ, եւ ազդումն ինչ, եւ ոչ էութիւն անձնաւոր»⁶⁰⁶:

⁶⁰³ The Cambridge Medieval History, vol. IV, p. 43.

⁶⁰⁴ Ibid., p. 44.

⁶⁰⁵ Մովսես Խորենացի, էջ 297:

⁶⁰⁶ Լույն տեղում, «...մինչև ստուգվի ճշմարիտ հավատը՝ ամբարիշտ Մակեդոնի հայիոյությունների առիթով, որովհետև նա Սուրբ Հոգուն չէր խոստովանում իբրև Տիրոջ, և ոչ էլ երկրպագելի ու փառաբանելի էր համարում Հոր և Որդու հետ, այլ Աստծու բնությունից օտար, ստացական, ծառա, պաշտոնյա, ոչ թե մի անձնավորություն, այլ մի ազդումն» (Մովսես Խորենացի, էջ 298): Տե՛ս նաև Կնիք Հաւատոյ, էջ 26:

ժողովին հրավիրված Հռոմեական կայսրության արևելյան երկրամասերի բարձր հոգևորականության ներկայացուցիչները⁶⁰⁷ նգովելով մերժեցին *հոգեմարտներին*: Մովսես Խորենացին այդ մասին գրել է. «Եւ ժողովեալ սուրբ հարքն ի թագաւորեալ քաղաքն Բիւզանդիոն, Դամասիոս Հռոմայ, Նեքտառիոս Կոստանդնուպօլսի, Տիմոթէոս Աղեքսանդրի, Մելիտոս Անտիոքու, Կիրղոս Երուսաղէմի, Գրիգորիոս Նիւսիայ, Գեղասիոս Կեսարու, Գրիգորիոս Նաձիանձու, Անփիլոքսիոս Իկոնիու, եւ այլ եպիսկոպոսք, միանգամայն հարիւր եւ հիսուն հարք, որք նգովեալ մերժեցին զՄակեդոն եւ զամենայն հոգեմարտ»⁶⁰⁸:

Մ. Օրմանյանը, քննելով Մովսես Խորենացու «Սոփերք Հայկականք»-ի պարունակած⁶⁰⁹, ինչպես նաև Հովհաննես Դրասխանակերտցու⁶¹⁰ հաղորդումները, գրել է, որ «Աթոռներու մէջ տարածայնութեանց եւ բաժանմանց խնդիր չկար, Կոստանդնուպօլսոյ վճիռներն ու կանոնները Հայաստան բերուած ատեն՝ անհակառակ ընդունեցան Ասպուրակէս հայրապետի եւ Հայ եկեղեցւոյ եպիսկոպոսներու կողմէն»⁶¹¹:

Այնուամենայնիվ, Տիեզերական Բ ժողովի Գ կանոնի համաձայն, Կոստանդնուպօլսին առաջնություն տրվեց Ալեքսանդրիայի և Անտիոքի պատրիարքական աթոռների նկատմամբ և եկեղեցու ամբողջ հիերարքիայում Հռոմից հետո հինգ պատրիարքական աթոռների մեջ երկրորդը համարվեց և հայտարար-

⁶⁰⁷ Այնտեղ էին նշանավոր կապաղովկիական աստվածաբաններ՝ Բարսեղ Կեսարացու (330-379 թթ.) գրչակիցներ՝ Գրիգորիոս Նյուսացին (335-394 թթ.) Գրիգորիոս Նազիանզացին (333-390 թթ.) և ուրիշներ:

⁶⁰⁸ Մովսես Խորենացի, էջ 297-298, «Եվ թագավորանիստ Բիւզանդիոն քաղաքում ժողովվեցին սուրբ հայրերը՝ Դոմի Դամասիոսը, Կոստանդնուպօլսի Նեքտառիոսը, Աղեքսանդրիայի Տիմոթէոսը, Անտիոքի Մելիտոսը, Երուսաղէմի Կյուրեղը, Նյուսիայի Գրիգորիոսը, Կեսարիայի Գեղասիոսը, Նաձիանձի (Նազիանզ) Գրիգորիոսը, Իկոնիայի Անփիլոքսիոսը և այլ եպիսկոպոսներ, ընդամենը հարյուր հիսուն հայր, որոնք նգովեցին և մերժեցին Մակեդոնիս և բոլոր հոգեմարտներին» (Մովսես Խորենացի, էջ 299):

⁶⁰⁹ Սոփերք Հայկականք, հաւաքածոյ մանր մատենագրութեանց նախնեաց, Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց Հայրապետի, Վենետիկ, Ս. Ղազար, 1853, Զ, էջ 62, Է, էջ 25:

⁶¹⁰ Յովհաննէս Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, էջ 47, 51-52:

⁶¹¹ Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 246:

վեց՝ «Կոստանդնուպոլիսը Նոր Հռոմն է»⁶¹²: Քանի որ 381 թ. ժողովին հրավիրված էին կայսրության միայն արևելյան մասի բարձրաստիճան հոգևորականները, ուստի, ինչպես նշված է, այդ վերաբերելու էր միայն Արևելյան եկեղեցուն⁶¹³: Մինչ այդ միայն երեք պատրիարքական աթոռներն էին (Հռոմ, Ալեքսանդրիա, Անտիոք) առաքելական հիմնադրմամբ առաջացած համարվում, իսկ Քաղկեդոնի ժողովը (451 թ.) հաստատեց Կոստանդնուպոլսի աթոռի մասին 381 թ. ժողովի որոշումը⁶¹⁴: Այսպիսով ուրվագծվում է եկեղեցական նվիրապետության օգտագործման միտումը կայսրության նվաճողական քաղաքականության մեջ, քանի որ 451թ. ժողովի 28-րդ կանոնով հաստատվում էր նվիրապետական առաջնության սկզբունքը, ինչը նշանակում էր, որ կայսրության քաղաքական ոլորտում հայտնված Արևելյան եկեղեցիները դրվելու էին Կոստանդնուպոլսի պատրիարքության ենթակայության ներքո⁶¹⁵: Դրանով էր նաև բացատրվում դարեր շարունակ Բյուզանդական կայսրության կողմից քաղկեդոնականության պարտադրման քաղաքականությունը, ի թիվս այլ Արևելյան եկեղեցիների, նաև Հայ Առաքելական եկեղեցուն:

V դարի առաջին տասնամյակներին Ընդհանրական եկեղեցին ստիպված եղավ Հավատո Հանգանակով ամրագրված ճշմարիտ դավանաբանությունը պաշտպանել Դիոդորոս Տարսուսացու հայացքների վրա հիմնված Թեոդորոս Մոպսուեստացու և հատկապես նրա աշակերտի՝ Նեստոր Անտիոքացու ջանքերով մշակված կեղծ վարդապետությունից: Վաղ միջնադարում նեստորականության դեմ մղված դավանաբանական պայքարը իր գագաթնակետին հասավ Եփեսոսի երրորդ Տիեզերական ժողո-

⁶¹² The Cambridge Medieval History, vol. IV, p. 433. Կոստանդնուպոլսի ժողովի մասնակիցների թվում էր նաև Գռոմի պապ Դամասիոսը (336-384թթ.):

⁶¹³ F. Dvornik, The Idea of Apostolicity in Byzantium.-Dumbarton Oaks Studies IV, Harvard, 1958, Chapters 1, 2, 6.

⁶¹⁴ Քաղկեդոնի ժողովում առաջնություն տրվեց նաև երուսաղեմի պատրիարքական աթոռին՝ «...աթոռների թիվը հասցնելով հինգի: Եվ չնայած դարեր շարունակ Գռոմի պապերը մերժողական դիրք են գրավել 381 թ. Տիեզերական Բ ժողովի վճռի նկատմամբ, Կոստանդնուպոլսի աթոռը բյուզանդացիները անվերապահորեն ... հինգ աթոռների մեջ համարել են երկրորդը Գռոմից հետո» (R. L. Wolff, Politics in the Latin Patriarchate of Constantinople, 1204-1261 - Dumbarton Oaks Papers, VIII, Cambridge, Mass., 1954, p. 225-304).

⁶¹⁵ Կնիք Հաւատոյ, էջ 53:

վում (431 թ.): Կոստանդնուպոլսի պատրիարք Նեստորի (428-431 թթ.)⁶¹⁶ և նրա ուսմունքի դեմ Եփեսոսի ժողովում ընդունված վճռի մասին Մովսես Խորենացին գրել է. «Ընդ այն ժամանակս եկաց յաթոռ եպիսկոպոսութեանն Բիզանդացոց անարժանաբար ամբարիշտն Նեստոր»⁶¹⁷:

Պատմահայրը խիստ բացասական գնահատական է տվել Նեստորի գործունեությանը, քանի որ նա «հրեական իմացմանց հետեւեալ՝ հայիոյեաց զամենասուրբ կոյսն՝ մարդածին լինել եւ ոչ աստուածածին: Քանզի ծնեալն ի նմանէ առեալ սկիզբն՝ այլ որդի ասէր շնորհօք ի Մարիամայ, եւ այլ որդի ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս. որպէս զի լինել երկուս որդիս, որով Երրորդութիւնն չորրորդութիւն լինի»⁶¹⁸:

Հայ Առաքելական եկեղեցու դավանած Նոր Ուխտի ոգով էր Մովսես Խորենացին ընդունում քրիստոնեական հավատքը, քանզի Ավետարանում ասված է, որ Մարիամը «յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ... եւ ծնաւ զՈրդին իւր անդրանիկ... Որ է ի վերայ ամենեցուն Աստուած օրինեալ յաւիտեանս»⁶¹⁹:

Դարերի ընթացքում Հայ եկեղեցու հայրերը դավանանքային ուղորտներում տեղի ունեցող ալեկոծությունների ժամանակ կարողացել են պաշտպանել քրիստոնեական դավանաբանությունը: Նման ժամանակաշրջաններից էր Նեստորի հանդես գալը, որի ուսմունքը դատապարտելուց հետո Մովսես Խորենացին Եփեսոսի ժողովի և նրա մասնակիցների ընդունած որոշման մասին գրել է. «Վասն որոյ ժողովեալ սրբոց հարցն յԱսիա ի ծովահայեացն Եփեսոս գրաւորական վերծանութեամբ, Կելեստինոս Հռոմայ, Կիրղոս, Աղեքսանդրի, Յոբնաղիոս Երուսաղեմի, Յով-

⁶¹⁶ The Cambridge Medieval History, vol. IV, p. 20.

⁶¹⁷ Մովսես Խորենացի, էջ 342, «Այս ժամանակները բյուզանդացիների եպիսկոպոսության աթոռը նստեց անարժանաբար ամբարիշտ Նեստորը» (Մովսես Խորենացի, էջ 338):

⁶¹⁸ Մովսես Խորենացի, էջ 342, «հրեական հասկացողության հետևելով հայիոյեց ամենասուրբ կոյսին, (ասելով, թե) նա մարդածին է և ոչ աստվածածին: Որովհետև, (ասում էր նա) ծնվածը նրանից սկիզբ առավ. ուրիշ էր Մարիամից շնորհով ծնված որդին և ուրիշ էր Հորից հավիտենական ժամանակներից առաջ ծնված որդին, այնպես որ լինում են երկու որդի և Երրորդությունը դառնում է չորրորդություն» (Մովսես Խորենացի, էջ 338):

⁶¹⁹ Մատթ. Ա 19, Ղուկ. Բ 7, Հռովմ., Թ 5: Գիրք թղթոց, 1901, էջ 44: Վարք սրբոց, հ. Ե., էջ 428:

հաննէս Անտիոքայ, Մեմնոն Եփեսոսի, Պաւղոս Հեմեսու, Թէոդոտիս Անկիրիայ, եւ այլք բազումք, համանգամայն երկերիւր հարք, նգովեալ զՆեստոր՝ խոստովանեցին մի Որդի Աստուծոյ, զՏէր մեր Յիսուս Քրիստոս, եւ Աստուածածին զամենասուրբ Կոյս Մարիամ»⁶²⁰: Եփեսոսի երրորդ Տիեզերական ժողովը Նեստորին զրկեց Կոստանդնուպոլսի պատրիարքի աթոռից⁶²¹:

Մովսես Խորենացու սկզբունքային դիրքորոշումն արտացոլում էր Ընդհանրական եկեղեցու նվիրյալներին համակած համոզումները, ինչի մասին վկայում է դավանանքային հարցերի շուրջ Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի թղթակցությունը Կոստանդնուպոլսի Պրոկղ պատրիարքի, Կյուրեղ Աղեքսանդրացու և Ակակ Մելիտինացու հետ: Մովսես Խորենացին գրել է. «Եւ վասն զի ոչ հանդիպեցան յայնմ ժողովի մեծն Սահակ եւ Մեսրոպ՝ գրեն առ նոսա Կյուրեղ Աղեքսանդրացի եւ Պրոկղոս Կոստանդնուպոլսի եւ Ակակ Մելիտինեայ եպիսկոպոսք, զգուշացուցանելով զնոսա. քանզի լուան, եթէ ոմանք ի չարափառացն աշակերտաց առեալ զգիրսն Թէոդորոսի Մամուեստացւոյ, զվարդապետին Նեստորի, եւ զաշակերտին Թէոդորի՝ գնացին աշխարհն Հայոց»⁶²²:

Ե. Տեր-Մինասյանն այն կարծիքին էր, որ հոգևոր հայերը, զգուշացված լինելով Թեոդոր Մոպսուեստացու և Նեստորի մոլորությունների մասին, «իրենց աշխատեցին հեռու պահել այդ

⁶²⁰ Մովսես Խորենացի, էջ 342, «Այս առիթով Ասիայի ծովահայաց Եփեսոս քաղաքում ժողովվեցին գրավոր վավերագրերի ընթերցմամբ սուրբ հայրերը - Յոննի Կելեստինոսը, Աղեքսանդրիայի Կյուրեղը, Երուսաղեմի Յոբնաղը, Անտիոքի Յովհաննեսը, Եփեսոսի Մեմնոնը, Յեմեսու Պողոսը, Անկյուրայի Թեոդոտիոսը և ուրիշ շատերը, ընդամենը երկու հարյուր հայր, որոնք Նեստորին նգովելով՝ խոստովանեցին մի Որդի Աստուծու՝ Տեր մեր Յիսուս Քրիստոսին, և Աստուածածին՝ ամենասուրբ Մարիամ Կոյսին» (Մովսես Խորենացի, էջ 338):

⁶²¹ Տէն Կնիք Յաւատոյ, 1998, էջ 126: The Cambridge Medieval History, vol. IV, p. 56, 78:

⁶²² Մովսես Խորենացի, էջ 342-343, «Եվ որովհետև նուն ժողովում չհանդիպեցին Մեծն Սահակը և Մեսրոպը, ուստի նրանց գրեցին Կյուրեղ Աղեքսանդրացին, Կոստանդնուպոլսի Պրոկղոս և Մելիտինեի Ակակ եպիսկոպոսները, նրանց զգուշացնելով, քանզի լսել էին, թե չարափառ աշակերտներից ոմանք եկել են Յայոց աշխարհ, իրենց հետ վերցնելով Թեոդորոսի Մամեստացու (Մոպսուեստացի) գրքերը, որ Նեստորի ուսուցիչն էր եղել և Թեոդորի աշակերտը» (Մովսես Խորենացի, էջ 338-339):

գիտնականների հետետողներին»⁶²³։ Նա ուշադրություն է դարձրել վերոհիշյալ թղթակցությունների⁶²⁴ վրա, այնուամենայնիվ, գրել է. «Ընդհանրական Եկեղեցու մեծ պայքարը դավանանքի համար Ե դարում, կարելի է ասել, բոլորովին աննկատելի էր անցել Հայոց Եկեղեցու համար»⁶²⁵։ Սակայն հենց այդ թղթակցությունների փաստը վկայում է հակառակը, ուստի պետք է իրավացի համարել այն տեսակետը, որի համաձայն. «Հայ Եկեղեցին Ե դարի հենց սկզբից անտարբեր չէր դավանական հարցերի նկատմամբ և դավանական պայքարն Ընդհանրական Եկեղեցու ներսում, հատկապես Եփեսոսի Տիեզերական ժողովից հետո աննկատելի չի անցել մեր Եկեղեցու համար»⁶²⁶։

Այսպիսով, Հայ Եկեղեցին, ընդունելով Տիեզերական առաջին երեք ժողովների հաստատած քրիստոսաբանական սկզբունքները, հայ Արշակունյաց թագավորության անկումից հետո էլ սկզբունքայնորեն պաշտպանեց հայ ժողովրդի հոգևոր ոլորտը։

3. Դավանանքային խնդիրները և պայքարն աղանդավորության դեմ

V դարում Հայաստանում գոյություն ունեցած հականեստորական տրամադրությունների և ընդհանրապես աղանդավորականների դեմ պայքարի վկայությունն են Ղազար Փարպեցու երկում պահպանված տեղեկությունները։ Անդրադառնալով աղանդների և դրանց ղեկավարների դեմ եկեղեցական հայրերի պայքարին՝, պատմիչը նախազգուշացնում է իր ժամանակ գործած ծպտյալ աղանդավորության վտանգի մասին. «Բայց իմ ըստ կարի պարապեալ յունական ուսմանցն, եւ ըստ զօրելոյ տկարամտութեանս իմոյ կա՛րդացեալ զգիրս արանց սրբոց, որք վա-

⁶²³ Ե. Տեր-Մինասեանց, նշվ. աշխ., էջ 64։

⁶²⁴ Թուրք Պրոկղեայ եպիսկոպոսի առ Սուրբ Սահակ հայրապետ հայոց եւ առ Սուրբն Մաշտոց, Պատասխանի թղթոյն Պրոկղի երանելոյ, ի Սահակայ եւ ի Մաշտոցէ, սուրբ վարդապետացն Հայոց (տե՛ս Գիրք թղթոց, էջ 1-8, 11-12)։

⁶²⁵ Ե. Տեր-Մինասեանց, նշվ. աշխ., էջ 63, 3-մտ. Կարապետ վարդապետ Տեր-Սկրտչեան, նշվ. աշխ., էջ 191։

⁶²⁶ Ա. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 11։

ռեալք սուրբ Հոգւոյն զինու՝ զսուրս հոգեփողոտս աղանդաւոր ուսմանցն դարձուցանէին անդրէն ի սիրտս նոցունց, եւ զաղեղունս նոցա փշրեցին, եւ զփրկագործ վարդապետութիւնն՝ իւրեանց գրով մեզ աւանդեցին... զսրբոցն ասեմ զԱթանասէ Աղեքսանդրացւոյ, եւ զԵրկուց միանուն արանցն՝ զԿիւրղէ Աղեքսանդրացւոյ եւ զԿիւրղէ Երուսաղեմացւոյ, եւ զԲարսղէ Կեսարացւոյ, եւ զԳրիգորէ Նազազացւոյ, որ եւ յաղագս առաւելեալ ի նմա շնորհի ուղղափառ գիտութեան Աստուածաբան յորջորջեցաւ. եւ զմերոյին առաքելանման նահատակին Գրիգորի, զվարդապետէն Հայոց. եւ զնոցունց նմանեցան, որք զնոյն շաւիղ առողջմտութեանն հետեւեալ վարդապետեցին... Յաղագս որոյ եւ զայլսն ամենայն եւ զորս առ նոսա արանցն՝ ծառայք նորա ունին զամենայն գրեալսն, զԱրիոսի Աղեքսանդրացւոյ եւ զԱպողինարոսի Լաւողիկեցւոյ, եւ զՆեստորի զԱնտիոքացւոյ, եւ զԵւտիքեայ Կոստանդինուպօլսեցւոյ, եւ Կումբրիկայ ստրկի, որ եւ յետոյ Մանի զինքն անուանափոխեաց, ուստի եւ Մանիքեցիք կոչեցան աշակերտեալքն նմա. եւ զայլոցն բազմաց զնոյնանման կորստեան ճանապարհին ուղեկցած, զորս սուրբ կաթողիկէ եւ առաքելանման եկեղեցւոյ նզովեալ եւ արտաքս ընկեցեալ՝ յամենայնէ ի բաց եւ մեկուսացեալք ի յԱստուծոյ ուղղափառ ուխտէն, մինչեւ ցայսօր վարին ներկեալք իւրաքանչիւր ախտիւ, անծածուկքն միմեանց, եւ յայտնի են ամենայն ուղղախառ ժողովրդոց»⁶²⁷ :

⁶²⁷ «Բայց ես իմ կարողության չափ հունական գիտությամբ զբաղվելով՝ մտքիս տկար ուժի համեմատ կարդացել եմ գրքերը սուրբ այրերի, որոնք Սուրբ Չոգու ուժով զինված, աղանդավոր ուսմունքների հոգեսպան սրերը դարձրին նրանց սրտերի դեմ, փշրեցին նրանց աղեղները և իրենց գրով մեզ ավանդեցին փրկագործ վարդապետություն... Խոսքս սրբերի մասին է՝ Աթանաս Աղեքսանդրացու, Երկու միանուն այրերի՝ Կյուրեղ Աղեքսանդրացու և Կյուրեղ Երուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու, և Գրիգոր Նազազացու, որն իր ուղղափառ գիտության մեծ շնորհի պատճառով Աստվածաբան հորջորջվեց, և մեր առաքելանման նահատակ Գրիգորի՝ Հայոց վարդապետի, ու նրանց նմանների մասին, որոնք քարոզեցին՝ հետևելով նույն առողջ մտքի շավիղին... Այդ պատճառով էլ բոլոր մյուսները և նրանց մոտ եղած մարդիկ՝ նրանց ծառաները ունեն բոլոր գրվածքները՝ Արիոս Աղեքսանդրացու և Ապողինարոս Լավողիկեցու, Նեստոր Անտիոքացու և Եվտիքես Կոստանդնուպոլսեցու, Կումբրիկ Ստրկի, որն իրեն հետո վերանվանեց Մանի, որից էլ մանիքեցիներ կոչվեցին նրա աշակերտները, և կորստյան ճանապարհի բազում նույնանման

Հայաստանում աղանդավորության դեմ պայքարի մասին են վկայում Շահապիվանի ժողովի⁶²⁸ (443/447 թ.) ընդունած կանոնները, որոնցից մի քանիսը մծղնեից աղանդին պատկանող անդամների դատաստանին են վերաբերում⁶²⁹:

360-ական թվականներին Հյուսիսային Միջագետքում կամ Ասորիքում առաջացած «մծղնեանների» կամ «մեսայյանների» աղանդի հետևորդները չէին ընդունում գոյություն ունեցող հասարակական ու պետական կարգերը, մերժողական դիրք էին գրավել եկեղեցու արարողությունների, մկրտության, հաղորդության նկատմամբ, իրենց ունեցվածքը վաճառում, ստացված գումարը բաժանում էին աղքատներին, և իրենք աղքատ դառնալով խումբ-խումբ շրջում էին քաղաքներում ու մուրացկանություն անում⁶³⁰:

Լ. Խաչիկյանը մանրամասն հետազոտելով այս աղանդի սկզբնական պատմությունը, նշել է, որ *մեսայյանների* դեմ առաջին անգամ լուրջ հալածանք սկսվել էր Եդեսիայում, ուր նրանք շատ հետևորդներ էին ունեցել, իսկ այնտեղից արտաքսվելուց հետո նրանք քաշվում էին Պամփիլիայի կողմերը, սակայն այնտեղ ևս, ինչ-որ ժողովում դատապարտվելով՝ անցել Փոքր Հայք և իրենց կողմն էին գրավել մի շարք մենաստաններ: «Նրանց դեմ խիստ պայքար է սկսում Փոքր Հայքի մայրաքաղաք Մելիտիների եպիսկոպոս Չետորիոսը: Հրդեհում են նրանց մենաստանները, շատերը զոհ են գնում այդ հրդեհին: Փրկվածները Մելիտիներից փախուստ տալով սիրալիր ընդունելություն են չգտնում մի այլ հայ եպիսկոպոսի մոտ...»⁶³¹: Լ. Խաչիկյանի կարծիքով «մեսայյաններին ապաստանող հայ եպիսկոպոսը Սեբաստիայի Եվս-

ուղեկիցներ, որոնց սուրբ կաթողիկե և առաքելական եկեղեցին նզովելով, դեմ ձգեց, և նրանք, Աստծո ուղղափառ ուխտից հեռացած, մինչև այսօր գործում են՝ ներկված ամեն տեսակ ախտով, հայտնի են իրար, ինչպես և հայտնի են բոլոր ուղղափառ ժողովուրդներին» (Ղազար Փարպեցի, էջ 462-463):

⁶²⁸ Կանոնագիրք Չայոց, հ. Ա , էջ 423-466: Չ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, 349-350,

377: Չայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 501-502:

⁶²⁹ Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 331-334:

⁶³⁰ Ի. Փափագեանց, Պատմութիւն եկեղեցական, Վենետիկ, 1848, էջ 193-195:

Կ.Տէր-Սկրտչեան, Մծղնեից աղանդը - «Արարատ», Ա, 1895, էջ 6-7:

⁶³¹ Կարծիք է հայտնվել, որ խոսքը Չայոց Ներսես Պարթև կաթողիկոսի (353-373 թթ.) մասին է (Ի. Փափագյան, Պատմութիւն եկեղեցական, էջ 195):

տատիոսն է եղել» և Բարսեղի⁶³² կողմից «Եվիպպիոսի որդիներ և թոռներ» անվանված աղանդավորները հենց նույն մեսալյաններն են»⁶³³:

Մծղնեական աղանդիանդամները գրականության մեջ երբեմն նույնացվել են բորբորիտոնների հետ, որոնց մասին տեղեկություններ են հաղորդում Մովսես Խորենացին և Կորյունը:

Կոստանդնուպոլսի պատրիարք Ատտիկոսի (406-426 թթ.) Սահակ կաթողիկոսին ուղղված թղթի համաձայն, որը պահպանել է Մովսես Խորենացին, տեղի էր ունեցել հետևյալը. «Արդ՝ հրամանաւ ինքնակալին Աւգոստոսի տուեալ լիցի քեզ իշխանութիւն վարդապետել զկողմնդ մեր»⁶³⁴. Եւ աղանդոյդ բորբորիտոնաց⁶³⁵ կամ հաւանեցուցանել, կամ հալածել ի քումնէ վիճակէդ: Եւ զառաքեալս ի քէն զՄեսրոպ ձեռնադրեցաք լինել եկեղեսիաստիկոս»⁶³⁶:

Չնայած Բյուզանդական կայսրությունը զավթել էր Հայաստանի արևմտյան մասը, սակայն կայսրը ճանաչել էր Սահակ Պարթևի հոգևոր իշխանությունն այնտեղ, դրանով իսկ պահպանվել էր Հայ Առաքելական եկեղեցու անբողջությունը՝ Հայաստանի արևելյան և արևմտյան մասերում: Ատտիկոս պատրիարքի

⁶³² Բարսեղ Կեսարացի:

⁶³³ Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դար), Երևան, 1951, էջ 33-34:

⁶³⁴ Պարսկա-բյուզանդական առաջին բաժանումից հետո Բյուզանդական կայսրության տիրապետության տակ անցած Հայաստանի արևմտյան մասում:

⁶³⁵ «Բորբորիտ» կամ «բորբորիտոն» բացատրված է որպես «տիղմ, որպես տղմասեր, գարշ, պիղծ...» (ՆԲՅԼ, հ. Ա, էջ 507): Գ. Սարգսյանը նշել է, որ ոմանց կարծիքով այն կարող է ծագած լինել «բարբարոս» բառից (Мовсес Хоренаци, с. 263, прим. 710):

⁶³⁶ Մովսես Խորենացի, էջ 336, «Մեր ինքնակալ Ավգոստոսի հրամանով քեզ իշխանություն է տրվում վարդապետել մեր կողմի (Արևմտյան Հայաստան - Ն. Դ.). իսկ բորբորիտների աղանդը կամ հավանության բեր կամ հալածիր քո վիճակից: Եվ քեզանից ուղարկված Մեսրոպին ձեռնադրեցինք եկեղեսիաստիկոս» (Մովսես Խորենացի, էջ 334): «Եկեղեսիաստիկոս» բառը բացատրվել է որպես «եկեղեցական, և ժողովական. մանաւանդ իբր անուն պատուոյ ըբառնապետաց առ յոյնս» (ՆԲՅԼ, հ. Ա, էջ 651): Գ. Սարգսյանն ուղղակի թարգմանել է "проповедник" (Мовсес Хоренаци, с. 263, прим. 711), այսինքն «քարոզիչ»: Նշենք, որ հին հունարեն-անգլերեն բառարանում այն թարգմանված է "clerical", այսինքն «հոգևորական» իմաստով (A Greek-English Lexicon. Compiled by H. Liddell and R. Scott, Clarendon Press, Oxford, 1996, p. 509):

Թղթից տեղեկանալով Թեոդոս II-ի (408-450 թթ.)՝ աղանդավորության դեմ պայքարելու հրամանի մասին (որը, փաստորեն, Արևմտյան Հայաստանում վարդապետելու թույլտվության նախապայմանն էր, ինչը համահունչ էր Հայ եկեղեցու դավանաբանական գաղափարախոսությանը), Սահակ Պարթևը հրամայում է Մեսրոպ Մաշտոցին «քննել զժանդագործ բորբորիտոնսն, եւ եթէ ոչ հեզութեամբ եւ ոչ սաստիւ գայցեն յուղղութիւն՝ չարչարանօք հալածել. զի որպէս թշնամիք ի թշնամեաց վրէժ առնուցուն, եւ խայտառակեսցի իրաւացի մահուամբ անիրաւ մահ հոգւոց »⁶³⁷:

Մովսես Խորենացու շարադրանքի համաձայն, բորբորիտոնների աղանդի նկատմամբ Սահակ Պարթևի ձեռնարկած այդպիսի խիստ քայլերը թելադրված էին ոչ միայն Թեոդոս II կայսեր հրամանը կատարելու անհրաժեշտությամբ, այլ նաև երկրի ներսում նրանց քայքայիչ գործողությունների դեմ պայքար ծավալելու հրամայականով⁶³⁸:

Այս նույն անցքերի մասին գրելով՝ Կորյունը, առանց Ատտիկոս պատրիարքի՝ Սահակ Պարթևին գրած Թուղթը հիշատակելու, շեշտը դրել է Մեսրոպ Մաշտոցի անձի և գործունեության վրա. «Եւ ապա յետ Պասեքին կատարելոյ՝ ցուցեալ կայսերն զպիտոյիցն զհանգամանս, եւ առեալ զանընդդիմակաց հրամանն հանդերձ սակերօք⁶³⁹ կայսերագիր նշանակելովք՝ վասն մանկտոյն յաշակերտութիւնն առ ի կէս ազգէն Հայոց ժողովելոյ, եւ վասն ժանտագործ ազգին բարբարիանոսաց⁶⁴⁰ եւ եկեղեցեաց հաստատութեան...»: Երբ Մեսրոպ Մաշտոցը գալիս է Արևմտյան Հայաստանի կողմերը, այնտեղ նա «պատահեալ սպարապետին Հայոց... Եւ նորա առեալ սակերս կայսերական նշխանօք, փու-

⁶³⁷ Մովսես Խորենացի, էջ 337, «քննել պղծագործ բորբորիտոններին, և եթէ ոչ մեղմությամբ և ոչ խնտությամբ ուղղության չգան, ապա չարչարանքներով հալածել, ինչպես թշնամիներ թշնամիներից վրէժ առնեն, որպեսզի իրավացի մահով հոգիների անիրավ մահը խայտառակվի» (Մովսես Խորենացի, էջ 335):

⁶³⁸ Ինչպես մի քանի տասնամյակ անց Ղազար Փարպեցին գրել է աղանդավորների մասին, որոնք մինչև իր ժամանակները գործում էին պղծված ամեն տեսակ ախտով (Ղազար Փարպեցի, էջ 462-463):

⁶³⁹ «Սակերք – սրբազան գիր կայսրի, կայսերական մամակ, sacra rescripta – սրբազան հրամանագիր» (Կորյուն, էջ 320, ժամ. 110)

⁶⁴⁰ Այս աղանդը բնութագրված է նաև որպես «զժպիրի և զամաւոր աղանդ բորբորիանոսացն» (տես՝ Սոփերք Չայկականք, ԺԱ, Կորիւն վարդապետի պատմութիւն Սրբոյն Մեսրոպբայ, Վենետիկ, 1854 էջ 14-15):

թայր վաղվաղակի գիրամանն կատարել: Եւ հրեշտակս արծա-
կեալ այնուհետեւ ի գաւառս կէս ազգին Հայոց յիշխանութեանն
կայսեր, բազմութիւն մանկտոյ ժողովել եւ նոցին ռոճիկս կարգել
ի պատեհագոյն տեղիս, յորս եւ երանելին զվարդապետութիւնն
իւր ի գործ արկեալ, եւ ժողովելոցն քաղցրացուցանէր: Ապա յետ
այնորիկ ձեռն արկանէր զդժպատեհ եւ զկամակոր բարբարիա-
նոս աղանդն քննելոյ: Եւ իբրև ոչինչ գտանէր հնարս յուղղութիւն
ածելոյ, առեալ ի գործ արկանէր զթշուառացուցիչ գաւազանն,
ծանրագոյն պատուհասիւք ի բանդս, ի տանջանս, ի գելարանս:
Իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկութենէն գտանէին,
խորտակեալս, ապա խանձեալս, մրեալս եւ գունակ գունակ խայ-
տառակեալս, եւ յաշխարհէն կորզէին»⁶⁴¹: Մովսես Խորենացու և
Կորյունի հաղորդումներից հետևում է, որ պայքարը բորբորիտ-
ների դեմ այս ժամանակաշրջանում ծավալվել էր Արևմտյան Հա-
յաստանում:

Բորբորիտների դեմ մղված գործողությունների վերաբեր-
յալ պատմիչների հաղորդումներում որոշ տարբերություն է
նկատվում: Կորյունը, բացի Մեսրոպ Մաշտոցի կրթական գոր-
ծունեու- թյունից, ուղղակի տեղեկացնում է, որ բորբորիտների
դեմ ձեռնարկվեցին պատժիչ գործողություններ, իսկ Մովսես Խո-
րենացին այդ կապակցությամբ միայն նշել է Սահակ կաթողիկո-
սի՝ Մաշտոցին տված հանձնարարականի մասին, ինչպես նաև,
խոսելով այդ ընթացքում Արևմտյան Հայաստանում Մեսրոպ

⁶⁴¹ «Եվ ապա զատիկն անելուց հետո՝ կայսրին բացատրեց նա պիտույքի
հանգամանքները և անընդդիմանալի հրաման առավ՝ կայսերագիր դրոշմած
սակերներով Հայոց կես ազգից սովորեցնելու նպատակով մանուկներ
ժողովելու համար, բարբարիանոսների ժանտագործ աղանդի վերաբերյալ ու
եկեղեցու հաստատության... հանդիպեցին Հայոց սպարապետին... Եվ երբ նա
ստացավ կայսերական դրոշմներով սակերները, շտապեց իսկույն հրամանը
կատարելու: Եվ այնուհետև պատգամավորներ ուղարկեց կայսրի իշխանության
մեջ եղած Հայոց կես ազգի զավառները՝ բազմաթիվ մանուկներ ժողովելու և
նրանց թռչակ նշանակելու հարմարավոր տեղերում, ուր և երանելին իր
ուսուցչությունը գործադրում և հաճելի էր դարձնում ժողովվածների համար:
Ապա դրանից հետո ձեռնարկեց նա անպատշաճ ու ծուր բարբարիանոս աղան-
դը քննել: Եվ երբ ոչ մի հնար չգտավ ուղղության բերելու, սկսեց թշվառացնող
զավազանը գործադրել խիստ ծանր պատուհասներով - բանտերով, տանջանք-
ներով, գելարաններով: Իսկ երբ դրանով էլ փրկությունից զուրկ մնացին, [այն
ժամանակ] սաստիկ ծեծեցին, ապա խանձեցին, մրեցին և պեսպես ձևերով
խայտառակեցին և աշխարհից դուրս քշեցին» (Կորյուն, էջ 116-117):

Մաշտոցի ծավալած կրթական գործունեության մասին, հիշատակել է այն վայրը, որտեղ նա հանգրվանել էր իր աշակերտների հետ. «Մեսրոպայ կացեալ յանապատ եւ ի հովանաւոր տեղիսն, որ Շաղագոմքն անուանին՝ բովանդակեաց զվարդապետութիւնս առաջին առելոց խմբիցն: Քանզի ոչ որպէս զարուեստ ուսուցանէր, այլ իբրեւ զհոգի առաքելաբար աշակերտացն տայր: Յետ որոյ թողեալ վերակացուս յիւրոց աշակերտացն ի նմին տեղուջ, զՂեւևոնդ եւ զԵնովք ի Սպեր, իսկ ի Դերջան զնոցին եպիսկոպոսն զԳինդ, եւ յԵկեղեաց զԴանան...»⁶⁴²:

Մովսես Խորենացու և Կորյունի հաղորդումներից հետևում է, որ Արևմտյան Հայաստանում Մեսրոպ Մաշտոցը կրթական գործը կազմակերպել էր Բարձր Հայք աշխարհի Շաղագոմք, Դերջան, Եկեղեաց և Սպեր գավառներում⁶⁴³, իսկ «Հայոց սպարապետը» (իմա՝ Արևմտյան Հայաստանի զորավարը) ղեկավարել էր պատժիչ գործողությունները բորբորիտոնների դեմ: Մեսրոպ Մաշտոցը, ըստ Կորյունի, «...ինքն բազում աշակերտօք գայր, անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց ...», հասնում է Նոր Քաղաքն՝ Վաղարշապատ⁶⁴⁴:

Նախքան այս իրադարձությունների մասին գրելը, գրերի գյուտից առաջ Մեսրոպ Մաշտոցի՝ Գողթնում իշխան Շաբիթի աջակցությամբ ծավալած քարոզչական գործունեությունը նկարագրելիս, Կորյունը նշել է. «Առն, զոր ի նախակարդ բանիս նշանակեմք, վասն որոյ եւ փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշթոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի արն երանելոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւա-

⁶⁴² Մովսես Խորենացի, էջ 339-340, «Մեսրոպը մնալով Շաղագոմք կոչված անապատ և հովանուտ տեղերում՝ առաջին հավաքված խմբերի ուսուցումը վերջացրեց: Նա ոչ թե սովորեցնում էր որպես արվեստ, այլ աշակերտներին կարծես հոգի էր ներշնչում իբրև առաքյալ: Սրանից հետո այնտեղ իր աշակերտներից վերակացուներ թողնելով՝ Սպերում Ղևուդին, Դերջանում նրանց Գինդ եպիսկոպոսին, իսկ Եկեղեաց գավառում Դանանին...» (Մովսես Խորենացի, էջ 336):

⁶⁴³ Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 49, 50, 73, 81:

⁶⁴⁴ Կորյուն, էջ 118:

նին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ եւ հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զհնուորական արուեստին իւրոց զօրականանց: Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ եւ թեւամուխ միջամուխ եղեալ, յաստուածատուր հրամանացն հանգամանս, եւ ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնս: Եւ յետ այնորիկ ըստ անետարանական չափուցն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ... Եւ հաճեալ հրամանացն՝ ի խաչակիր գունդն Քրիստոսի խառնէր, եւ անդէն վաղվաղակի ի միայնակեցական կարգ մտանէր... Առեալ այնուհետեւ երանելոյն զհավատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ եւ յանդարման տեղիս Գողթան: Այլ եւ ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկիւղած եւ աստուածասէր, որում անուն էր Շաբիթ, եւ ասպնջական հիւրամեծար գտեալ՝ բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի: Իսկ երանելոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց ականդելոց, եւ ի սատանայական դիվապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր: Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ, յայտնի իսկ բնակչաց գաւառին նշանք մեծամեծք երեւէին, կերպարանակերպ նմանութեամբ դիւացն փախստական լինելով՝ անկանէին ի կողմանս Մարաց»⁶⁴⁵:

⁶⁴⁵ «Մաշթոց էր անուն այն մարդու, որ հիշեցինք մեր խոսքի սկզբում, որի համար և մենք հոգ ենք տարել պատմելու: Նա Տարոն գավառից էր, Հացեկաց գյուղից, Վարդան անունով երանելի մարդու որդին: Մանկական հասակում նա կրթվել էր հելլենական դպրությամբ, [ապա] եկել, հասել էր Մեծ Հայքի Արշակունի թագավորների դուռը, կացել էր արքունի դիվանատանը՝ դառնալով արքայի տված հրամանի ծառայողը՝ ոմն Առավանի՝ մեր Հայոց աշխարհի հազարապետության ժամանակ: Նա տեղակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին: Եվ այնտեղ հենց ջանալով ուշադրությամբ հետևում էր աստվածային գրքերի ընթերցանությանը, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց, խորամուխ եղավ աստվածային հրամանների հանգամանքների մեջ, և ամեն պատրաստությամբ զարդարելով իրեն՝ իշխանների ծառայությունն էր կատարում: Եվ դրանից հետո նա՝ ըստ ավետարանական կանոնի՝ դարձավ մարդասեր Աստծու

Կորյունի այս տեղեկությանը համահունչ է Մովսես Խորենացու երկի հետևյալ հատվածը. «Տեսեալ թէ ի վերջ հասեալ է թագաւորութիւնն Հայոց, եւ զխռովութիւնն նիւթ իւրոյ համբերութեանն գտեալ Մեսրոպայ, որ էր ի Հացեկաց Տարօնոյ, սնեալ եւ ուսեալ առ մեծին Ներսիսի, եւ յետ ելից նորա յաշխարհէ՝ ի դրանն արքունի կարգեալ քարտուղար. սա սիրեաց զմիայնակեցութեան վարս... Եւ երթեալ ի գաւառն Գողթան բնակէ, զմիայնակեցութեան վարս ստացեալ: Եւ որ ի նմա ղօղեալ աղանդն հեթանոսական, թագուցեալ յաւուրցն Տրդատայ մինչեւ ցայն ժամանակս, եւ ապա յայտնեցաւ ի վատթարել թագաւորութեանն Արշակունեաց, զայն եբարձ օգնականութեամբ իշխանի գաւառին, որում անուն էր Շաբիթ: Ուր նշանք աստուածայինք լինէին, որպէս առ սրբովն Գրիգորիւ. հալածական լեալ դեք մարմնաւոր տեսլեամբ անկանէին ի կողմանս Մարաց...»⁶⁴⁶:

Կորյուն վարդապետի և Մովսես Խորենացու հաղորդումների համաձայն, Մեսրոպ Մաշտոցը իշխան Շաբիտի աջակցությամբ

ծառայությանը... Եւ [հավատքի] հրամաններին հավանելով՝ խառնվեց Քրիստոսի խաչակիր գնդին ու շուտով մտավ միայնակեցական կարգի մեջ... Երանելին այնուհետև իր հավատացյալներին՝ առավ, զնաց իջավ Գողթնի անկարգ ու անխնամ տեղերը: Նրա առաջ ղուրս եկավ նաև Գողթնի իշխանը, մի երկյուղած և աստվածասեր մարդ, որի անունը Շաբիթ էր և հյուրամեծար ասպնջական հանդիսանալով՝ բարեպաշտությամբ սպասավորում էր [նրան] Քրիստոսի հավատքի աշակերտների կարգի համաձայն: Իսկ երանելին իսկույն իր ավետարանական արվեստը բանեցնելով՝ իշխանի հավատարիմ օգնությամբ սկսեց [քարոզել] գավառում. ամենքին իրենց հայրենական ավանդույթներից ու սատանայական դիվապաշտ ծառայությունից գերեց, բերեց ի հնազանդություն Քրիստոսի: Եվ երբ նրանց մեջ սերմանեց կյանքի խոսքը, հայտնապես մեծամեծ հրաշքներ երևացին գավառի բնակիչներին, դևերը զանազան կերպարանքներով փախան, ընկան Սարերի կողմերը» (Կորյուն, էջ 84-89):

⁶⁴⁶ Մովսես Խորենացի, էջ 316-317, «Տեսնելով, որ Հայոց թագավորության վերջը հասել է, Մեսրոպը խռովություններն իր համբերության նյութը դարձրեց: Նա Տարոնի Հացեկաց [գյուղից] էր, սնվել ու սովորել էր Մեծն Ներսեսի մոտ և նրա վախճանվելուց հետո արքունի դռանը քարտուղար էր նշանակվել: Նա սիրեց մենակեցության վարքը... Գնում է Գողթան գավառը և ապրում է մենակյացի կյանքով: Այդտեղ թաքնված հեթանոսական աղանդը, որ Տրդատի օրերից մինչև այն ժամանակ ծածուկ էր մնում և Արշակունյաց թագավորության տկարանալու ժամանակ երևան եկավ, նա վերացրեց գավառի իշխանի օգնությամբ, որի անունն էր Շաբիթ: Այստեղ աստվածային հրաշքներ երևացին, ինչպես սուրբ Գրիգորի ժամանակ, մարմնավոր կերպարանքով դևերը հալածվում, ընկնում էին Մարաց կողմերը ...» (Մովսես Խորենացի, էջ 316):

յամբ «սատանայական դիապաշտ սպասաւորութիւն»-ը կամ «աղանդն հեթանոսական», արմատախիլ էր արել Գողթան գավառից և չարքերը՝ «դևերը», փախել էին Մարաց կողմերը:

«Աշխարհացոյց»-ում մարերի բնակեցրած տարածքների մասին գրված է. «Պտղոմէոս զՄարս յելից [եւ ի հարաւոյ] Կասբից [ծովուն] ասէ բնակել. եւ զոր ասեն ընդ մի իշխանութեամբ, եւ ոչ ուրեք գտանին Մարք. բայց Պտղոմէոս ասէ զաշխարհս սոցա՝ Կասբ, Քաղուշ, Գելք, Դիլումք...»⁶⁴⁷: Այս տեղեկության համաձայն, իրանական մարերի ցեղի բնակեցրած տարածքը հնում՝ ըստ Կղավդիոս Պտղոմէոսի⁶⁴⁸, ավելի ընդարձակ է եղել, քան վաղ միջնադարյան սկզբնաղբյուրում հիշատակված «Մարաց ամուր աշխարհը», որի տեղադրության մասին Ս. Կանայանցը նախ գրել է, որ «Ատրպատականից արեւմուտք էր, Ուրմիո ծովից ոչ շատ հեռու, հավանորեն դեպի արևմուտք, Կորդուքից և Մահկերտունից դեպի արևելք»⁶⁴⁹, այնուհետև, հիմնվելով Անանունի մի հաղորդման վրա⁶⁵⁰, եզրակացրել. «Մարաց աշխարհը Զարասպից էլ արևելք պիտի տարածուած լինէր»⁶⁵¹: Բյուզանդական Հերակլ կայսեր (610-641թթ.) Ատրպատականով անցած պարսկական արշավանքների երթուղիների մասին Սեբեոսի մի հաղորդումից⁶⁵² ևս հետևում է, որ «Մարաց ամուր աշխարհն» ընդգրկել է Ատրպատականի դժվարմատչելի լեռնային շրջանները⁶⁵³:

Մեսրոպ Մաշտոցի՝ երկրորդ անգամ Գողթան գավառ գնալուն և այնտեղ հակաաղանդավորական գործունեությանը

⁶⁴⁷ Ս. Երեմյան, Գայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 115:

⁶⁴⁸ Ptolem., VI, 2.

⁶⁴⁹ Հմմտ. «Մարաց ամուր աշխարհի - այսպես պիտի կոչվեր Նիխորական, Մահկերտ-տուն եւ Դասն գավառների տերիտորիան» (Ս. Երեմյան, Գայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 65):

⁶⁵⁰ Արշակունիների գահակալության առումով Անանունը խոսում է Մեծ Գայքի թագավորության տարածքի մասին, մասնավորապես, նշելով՝ «...եւ ցիւսիսոյ կողմանէ ի լեռոն մեծ Կովկաս, որ ձգի ընդ կողմանս արեւելից եւ անցանէ առ սահմանան առ ամուր աշխարհան Մարաց, եւ հասանէ ի լեռոն Զարասպ, եւ անցանէ առ Նոր Շիրակ երկրան» (Սեբեոս, էջ 53-54):

⁶⁵¹ Ս. Կանայեանց, Անհայտ գավառներ, Էջմիածին (Վաղարշապատ), 1914, էջ 107:

⁶⁵² Սեբեոս, էջ 125, «...դառնայ առ ամուր աշխարհան Մարաց. գայ հասանէ ի Փայտակարան»:

⁶⁵³ Ս. Կանայանց, նշվ. աշխ., էջ 97:

Կորյունը և Մովսես Խորենացին անդրադարձել են գրերի գյուտից հետո՝ լուսավորչական աշխատանքի մասին պատմելիս: Ըստ Կորյունի՝ «Առնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց, որպէս զի տէր Եպիսկոպոսն ի կայենականսն»⁶⁵⁴, եւ նա ի սփիւռս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն: Եւ հրաժարեալ ի նոցանէն հանդերձ օգնականօքն, որոց առաջնունն Տիրայր անուն ի Խործենական գաւառէն, եւ երկրորդին Մուշէ անուն ի նահանգէ Տարօնոյ, որք էին սուրբք եւ զուարթագոյնք, հանդերձ այլովք եւ սպասաւորօք ատարարանին... Որովք յանձն եղեալ երանելին շնորհացն Աստուծոյ, երթեալ իջանէր յՌոտաստակն Գողթան, յառաջին դաստակերտն իւր: Եւ անդ ընդելական սովորութեամբն ի կիր արկեալ զվարդապետութիւնն՝ հաւասարութեամբն բարեպաշտին Շաբաթայ (Շաբիթ - Ն. Դ.), լի առնէր զգաւառն ողջունիւ ատարարանին Քրիստոսի. եւ կարգէր յամենայն գիւղս գաւառին դասս սրբոց վանականաց: Որում եւ հասեալ ժամանեալ հայրաբարուն Գտայ, որդւոյ Շաբաթայ առն Քրիստոսասէրի բազում սպասաւորութիւն իբրեւ հաւասարի որդւոյ վարդապետին տանէր»⁶⁵⁵:

Մովսես Խորենացու հաղորդման համաձայն՝ Մեսրոպ Մաշտոցը «եկեալ յԱյրարատ՝ անցանէ յառաջնոյ բնակութեան գաւառն Գողթն: Քանզի մնացեալ արմատ դառնութեան»⁶⁵⁶ հեթա-

⁶⁵⁴ Մանուկ Աբեղյանի կարծիքով՝ խոսքն այստեղ Սահակ Պարթև կաթողիկոսի մասին է, որը «պետք է «ի կայենականսն», այսինքն՝ «ի կանանս զօրացն» եղեղներին սովորեցներ, մնալով Այրարատյան գավառում, թագավորանիստ տեղերում» (Կորյուն, էջ 315-316, ծան. 93):

⁶⁵⁵ «Երանելի Մաշթոցը համաձայնութիւն ստացավ, որ տեր Եպիսկոպոսը կայենականների մեջ, իսկ ինքը հեթանոսների սփյուռքում սերմանեն կյանքի խոսքը: Եվ բաժանվեց նրանցից իր օգնականների հետ, որոնցից առաջինի անունը Տիրայր էր, Խործենական գավառից, և երկրորդի՝ Մուշե, Տարոնի նահանգից, որոնք սուրբ աչքաբաց էին, այլ և Ավետարանի ուրիշ սպասավորների հետ... Երանելին նրանց հետ միասին հանձնվելով Աստուծո շնորհներին, զնաց իջավ Գողթնի Ռոտաստակը, իր առաջվա դաստակերտը: Եվ իր մշտական սովորությամբ իր վարդապետությունը բանեցնելով այնտեղ՝ բարեպաշտ Շաբաթի ընկերությամբ գավառը լիացրեց Քրիստոսի Ավետարանի ողջույնով, և զավառի բոլոր գյուղերում կարգեց սուրբ վանականների դասեր: Նրա մոտ եկավ և հայրաբարո Գիտը, Քրիստոսասեր այր Շաբաթի որդին, բազում ծառայություն էր անում, իբրև մի որդի, վարդապետին» (Կորյուն, էջ 108-109):

⁶⁵⁶ Նման արտահայտության հանդիպում ենք Կանոնագիրք Հայոց-ում. «Որք պղծեցան յանասունսն կամ յարուսն, այնպիսեացն խաւարեալ են ոգիքն եւ

նուսական աղանդոյն ի ժամանակի անհշխանութեանն ի վեր երեւեալ՝ ի բազումս տարածեցաւ. զորս բնաբարձ արարեալ երանելոյն հանդերձ օգնականութեամբ հօրաբարոյին Գտայ որդւոյ Շաբիթայ, իշխանի գաւառին, տեղեկանայր եւս, եթէ չարեացն վարդապետք նածագոյնք ի Բաղասականն են կոմանս»⁶⁵⁷:

Մովսես Խորենացին կարևոր ժամանակագրական նշումներ է կատարել Գողթնում տեղ գտած աղանդի մասին՝ «ի ժամանակի անհշխանութեանն ի վեր երեւեալ...», «թագուցեալ յաւուրցն Տրդատայ»:

«Ժամանակ անհշխանութեան» մասին Մովսես Խորենացին, դիմելով Սահակ Բագրատունուն, գրել է. «Իսկ որ ինչ գկնի մահուանն Խոսրովայ մինչեւ ցթագաւորութիւնն Տրդատայ ի ժամանակս անհշխանութեանն պատմէ (Փերմելիանոս - Ն. Դ.)՝ ստոյգ համարելով երկրորդեմք քեզ համառօտ բանիւք...»⁶⁵⁸:

Մովսես Խորենացին, թվարկելով իրար հաջորդած Վալերիանոս (253-260 թթ.)⁶⁵⁹, Կղավդիոս II (268-270 թթ.), Ավրեղիանոս (270-275 թթ.), Կվինտոս (270թ.), Տակիտոս (275-276 թթ.), Փղոռիանոս (276 թ.) հռոմեական կայսրերին, նրանց հաճախակի

աւտարք յևստոժոյ, զի եւ ոչ են արժանի կրել զանուն քրիստոնէութեան... բայց անասունն ի հուր այրեցի, իսկ խոհերքն միմեանց արուամոլքն՝ հեռացին ի միմեանց տարաբնակութեամբ, զի մի՛ արմատ դառնութեան ի վեր երեւեալ դարձեալ պղծիցին» (Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 195-196):

⁶⁵⁷ Մովսես Խորենացի, էջ 340, «իմքը գալիս է Այրարատ և գնում է Գողթն, իր առաջին բնակության գավառը: Որովհետև հեթանոսական աղանդից մնացած դառն արմատն անհշխանութեան ժամանակ նորից երևան էր եկել և շատերի մեջ տարածվել: Երանելին նրանց բնաջինջ արեց Շաբիթի որդի հարաբարո Գիտի օգնությամբ, որ այդ գավառի իշխանն էր: Նաև տեղեկացավ, որ չարության առաջին ուսուցիչները Բաղասական կողմերում են» (Մովսես Խորենացի, էջ 337): Գողթան գավառն այդ ժամանակ Մեծ Հայքի թագավորության Վասպուրական աշխարհի կազմում էր (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, с. 318-319; Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 109):

⁶⁵⁸ Մովսես Խորենացի, էջ 214, «Իսկ ինչ որ նա պատմում է Խոսրովի մահից հետո մինչև Տրդատի թագավորելը, անհշխանության տարիների մասին, մենք ստույգ համարելով կրկնում ենք քեզ համար համառոտ խոսքերով...» (Մովսես Խորենացի, էջ 235):

⁶⁵⁹ Վալերիանոսից հետո գահակալած Գալլիենոս (260-268 թթ.) կայսրին Մովսես Խորենացին չի հիշատակել:

փոփոխմամբ է բացատրել սասանյան Արտաշիրի գլխավորությամբ պարսիկների՝ հռոմեացիների նկատմամբ ունեցած առավելությունը և հաջողությունները: Պատմահայրը գրել է. «Բայց Յունաց թագաւորեաց Պռոքոս⁶⁶⁰ եւ խաղաղութիւն արարեալ ընդ Արտաշիրի՝ բաժանէ զաշխարհս, սահմանադրութեամբ փոսս գործելով⁶⁶¹... Իսկ Արտաշիրի... զմեհենիցն պաշտամունս առաւել եւս յորդորէ. այլ եւ գիւորն որմզդական, որ ի վերայ բագնին որ ի Բագաւան, անշէջ հրամայէ լուցանել: Բայց զանդրիսն, զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ արեգակամբ եւ լուսնիւ յԱրմաւիր, եւ փոխեցան յԱրմաւրայ ի Բագարան եւ դարձեալ յԱրտաշատ՝ զայնոսիկ փշրէ Արտաշիր: Եւ զերկիրս գրով ընդ հարկաւ իւրով արկանէ, եւ ամենեւիմբ զիւր անունն հաստատէ: Նա եւ զսահմանս հաստատեալս յԱրտաշիստ⁶⁶², զքարինս յերկրի կացուցանելով, նորոգեաց, եւ յիւր ամունն փոխելով Արտաշիրական անուանեաց: Եւ կալաւ զաշխարհս մեր որպէս զմի յաշխարհացն իւրոց, պարսիկ գործակալօք, ամս քսան եւ վեց. եւ յետ նորա որդի նորին, որ անուանեցան Շապուհ... ցթագաւորելն Տրդատայ, ամ մի...»⁶⁶³:

⁶⁶⁰ Հռոմեական կայսր Պռոքոսը գահակալել է 276-282 թթ.:

⁶⁶¹ Հմմտ. Ազաթանգեղոս. «Ձերկիրն Հայոց... եկեալ արքային Պարսից յիւր անուն զտեղիսն անուանէր. եւ զգօրսն Յունաց փախստական արարեալ հալածական տանէին մինչեւ ի սահմանս Յունաց: Վիսս փոսացուցեալ սահմանս հաստատէին, եւ տեղւոյն անուն եղեալ Դրունս Փոսից... Եւ զայլ մարդիկ երկրին խաղաղացոյց, եւ զաշխարհն յինքն գրաւեաց» (Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 24) («Պարսից արքան գալով այնուհետև Հայաստան իր անվամբ կոչեց այդ վայրերը և հունաց զորքը փախուստի մատնելով հալածեց մինչև հունաց սահմանները: Փոսեր փորելով սահմաններ հաստատեց և տեղի անունը դրեց Փոսից դրունք... Մնացած բնակիչներին տեղահանեց և երկրին տիրացավ») (Ազաթանգեղոս, 36):

⁶⁶² Արտաշես I, մ.թ.ա. 189-160թթ.:

⁶⁶³ Մովսէս Խորենացի, էջ 215-216, «Բայց հույների վրա թագավորեց Պռոքոսը և Արտաշիրի հետ խաղաղություն կնքելով՝ մեր երկիրը բաժանում է՝ սահմանացույց փոսեր փորելով... Իսկ Արտաշիրը... մեհյանների պաշտամունքն էլ ավելի հորդորում է, այլև հրամայում է անշէջ պահել որմզդական հուրը Բագավանի բագնի վրա: Բայց այն արձանները, որ Վաղարշակը շինել տվեց իր նախնիների պատկերներով, ինչպես և արեգակի և լուսնի պատկերներն Արմավիրում, որոնք Արմավիրից փոխադրվեցին Բագարան և նորից Արտաշատ՝ Արտաշիրը հրամայում է փշրել: Մեր երկիրը նա հարկատու է դարձնում և ամեն բանում իր անունն է հաստատում: Նաև Արտաշեսի հաստատած սահմանները, գետնի մեջ քարեր կանգնեցնելով, նա նորոգեց և, իր անունով փոխելով, կոչեց

Մովսես Խորենացին, քանի որ որպես «անհիշխանության ժամանակի» սկիզբ նշել է Խոսրովի սպանության պահը, իսկ վերջը՝ Տրդատ III-ի գահակալությունը, ուստի «անհիշխանության ժամանակի» սկզբնական փուլը համապատասխանել է Փերմելիանոս Եպիսկոպոսի [«Փերմելիանոս Եպիսկոպոս Կեսարու Կապադովկացուց էր այր սքանչելի յուսումնասիրութեան, որ եւ ի տղայութեան իւրում առ Որոզինէս (փիլիսոփա և աստվածաբան Որիզենեսը - Ն. Դ.) երթեալ վարժեցաւ: Սա բազում խօսս արար, յորոց մի է պատմութիւն հալածանաց եկեղեցւոյ...»]⁶⁶⁴ վերջին տարիներին, այսինքն՝ III դարի 60-ական թթ. Փերմելեանոսի մասին գրելիս, Մովսես Խորենացին մի քանի պատմական դեմքեր է հիշատակել. փիլիսոփա և աստվածաբան Որիզենես, կայսրեր՝ Մաքսիմիանոս (235-238 թթ.) (Մովսես Խորենացու ներկա տեքստում Մաքսիմիանոս է), Դեկոս (249-251 թթ.), Դիոկղետիանոս (284-305 թթ.)⁶⁶⁵:

Արտաշիրական: Նա մեր երկիրը կառավարեց պարսիկ գործակալների ձեռքով, ինչպես իր երկրներից մեկը. քսանվեց տարի և նրանից հետո նրա որդին, որ անվանվեց Շապուհ... թագավորեց մեկ տարի, մինչև Տրդատի թագավորելը» (Մովսես Խորենացի, էջ 237):

⁶⁶⁴ Մովսես Խորենացի, էջ 213, «Կապադովկյան Կեսարիայի Փերմելիանոս Եպիսկոպոսը սքանչելի էր ուսումնասեր լինելով, որ և երեխա հասակում Որիզենեսի մոտ գնաց ուսանելու: Նա շատ գրվածքներ գրեց, որոնցից մեկն է պատմությունը եկեղեցու հալածանքների...» (Մովսես Խորենացի, էջ 234): Գ. Սարգսյանը նշել է, որ Պատմահայրը Փերմելիանոս Եպիսկոպոսին (230-268 թթ.) հիշատակել է Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության» միջոցով (Мовсес Хоренаци, 1990, с. 251, прим. 497): Եվսեբիոսի երկի հայերեն թարգմանության մասին Մովսես Խորենացին գրել է. «...Եկլէսիաստէ գիրք Եւսեբի Կեսարացւոյ, զոր ետ թարգմանել Երանելի վարդապետն մեր Մաշտոց ի հայ լեզու» (Մովսես Խորենացի, էջ 120): Պատմահոր երկի համար Փերմելիանոսի աշխատության՝ որպէս սկզբնաղբյուրի հիշատակությունը կասկածի տեղիք էր տվել (Ա. Գարագաշեան, Զննական պատմութիւն Հայոց, մասն Գ, էջ 313), ի նշը ժամանակին քննադատել էր Բ. Գեորգյանը: Նա, կարևորելով Փերմելիանոսի երկի սկզբնաղբյուրային նշանակությունը Պատմահոր համար, նշել է. «Խորենացին Փիրմելեանոսից օգտուել է, *անշուշտ*, բայց *միայն* Խոսրովի մահից յետոյ անհիշխանութեան ժամանակի համար» (Բ. Գեորգեան, նշվ. աշխ., Ա հատոր, էջ 91, 101): Նրա վախճանի մասին նշվել է. «Հանգեալ (Փերմելիանոս – Ն. Դ.) ի Զրիստոս յամի 272» (Յովիաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւառացն Այրարատայ, հատոր Առաջին, Էջմիածին, 1842, էջ 160):

⁶⁶⁵ Մովսես Խորենացի, էջ 213, Դիոկղետիանոսին վերաբերող տողը Բ. Գեորգյանը համարել է Փերմելեանոսի գրած պատմությանը չվերաբերող, այլ «պարզ ընդմիջարկութիւն է Խորենացու՝ «ի յիշատակաց... դիւանագիր մատե-

Այսպիսով, ընդհանուր առմամբ, ըստ Մովսես Խորենացու, «անհիշխանության ժամանակը» ընդգրկել է քսանյոթ տարի, և հենց դա է նկատի ունեցել Սամվել Անեցին՝ գրելով. «Խոսրով սպանաւ յԱնակայ եւ անհիշխան մնաց աշխարհս Հայոց զամս Իէ»⁶⁶⁶.

Մովսես Խորենացու հիշատակած Արտաշիրի կերպարի մեջ միահյուսվել են Սասանյան արքաներ Արտաշիր I-ի (226-240 թթ.) և Ռոմիզդի (Արտաշիր) (272-273 թթ.), իսկ Շապուհի կերպարի մեջ՝ Շապուհ I-ի (240-272 թթ.) և Ռոմիզդ-Արտաշիրի որդու՝ Ռոմիզդակ-Շապուհի (272-276 թթ.) կերպարները, ինչը III դարի 60-ական թվականներից Հայոց գահին պարսից գահաժառանգների գահակալման հետևանքն էր: Նրանցից վերջինն էր Ռոմիզդ-Արտաշիրի (261-272 թթ.)⁶⁶⁷ (սասանյան գահին թագավորեց՝ 272-273 թթ.) եղբայրը՝ Ներսեհը (276-293 թթ.), որն Իրանի շահնշահ դարձավ 293 թ. (մինչև 302 թ.)⁶⁶⁸:

Այսպիսով, նկատի ունենալով Տրդատի անընդմեջ գահակալության սկիզբը՝ 287 թ. (Հայաստանի արևմտյան մասում, ինչն այնուհետև ընդգրկեց ամբողջ Մեծ Հայքի թագավորությունը), կարելի է ասել, որ Մովսես Խորենացու նշած «անհիշխանության

նից Յունաց»... տեղեկացած գիտեցածը»: Հետազոտողը նշել է, որ «անհիշխանութեան ժամանակը ոչ թե 27, այլ 7-8 տարի էր», իսկ Հայաստանում Ռոմիզդ-Արտաշիրի գահակալության , «յամս քսան եւ վեց» եղած պիտի լինի «ամս տասն եւ վեց...» (Բ. Գեորգեան, նշվ. աշխ., Ա հատոր, էջ 93, 101): Սակայն, նկատի ունենալով պատմիչների հաղորդումները, կարելի է ասել, որ 27 տարիներն, ընդհանուր առմամբ, վերաբերում են «անհիշխանության» ժամանակաշրջանին, որի մեջ մտնում էր պարսից արքայազների գահակալությունը:

⁶⁶⁶ Սամուելի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 61: Ս. Երեմյանի կարծիքով, 256-283 թթ. ընդգրկող քսանյոթ տարին, որ «բռնագրաված հռոմեական Հայաստանի Սասանյանների պայտիհի իշխանության տարիներն են», չպետք է շփոթել 261-287 թթ. ընդգրկող քսանվեց տարվա հետ, որ «ամբողջ Հայաստանի վրա հայ Արշակունիների ընդհատման տարիներն էին»: Այնուհետև Ս. Երեմյանը եզրակացրել է, որ պարսկական տիրապետությունը Հայաստանի մեծագույն մասում տևել է 261-293 թթ. (Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 64)

⁶⁶⁷ Տե՛ս Ս. Ս. Երեմյան, Նախշ-ի Ռուստեմի «Քաաբաի Ջարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, էջ 63-68:

⁶⁶⁸ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 37, 63: Ներսեհը հայտնի էր որպես «Արմենիայի մեծ թագավոր» (В. Г. Луконин, Завоевания Сасанидов на Востоке и проблема кушанской абсолютной хронологии – «Вестник древней истории», 1964, N 3, с. 36):

տարիները» համապատասխանել են III դարի 60-80-ական թթ., երբ հայ Արշակունյաց գահակալությունն ընդհատվել էր թագավորության ողջ տարածքի վրա, և պահանջվեց ևս վեց տարի, որպեսզի Տրդատ III-ի թագավորական իշխանությունը տարածվեր Մեծ Հայքի մնացած մասի վրա⁶⁶⁹:

Մովսես Խորենացին հստակորեն զանազանել է «հեթանոսական աղանդի» արմատավորման՝ «անիշխանության ժամանակը» Տրդատ III-ի գահակալության («թագուցեալ յաւուրցն Տրդատայ») ժամանակաշրջանից, ուստի, վաղմիջնադարյան աղանդավորության ուսումնասիրության տեսանկյունից, անհրաժեշտ է ժամանակագրական, տերմինաբանական մոտեցումով՝ հետազոտել Մովսես Խորենացու հաղորդումները:

Գողթնում եղած աղանդավորականների մասին Մովսես Խորենացու հաղորդած տեղեկության շուրջ տարբեր կարծիքներ են հայտնվել:

«Հեթանոսական աղանդ» հասկացության կապակցությամբ Կ. Տեր-Մկրտչյանը, նշելով, որ Մեսրոպ Մաշտոցը ստիպված էր իշխան Շաբիթի, ինչպես նաև նրա որդու օրոք պայքարել «հեթանոսական աղանդի» դեմ, սխալ է համարել այս հարցի կապակցությամբ Մովսես Խորենացու հիշատակած «հեթանոսների» հետ «բորբորիտոններին» նույնացնող տեսակետը⁶⁷⁰: Կ. Տեր-Մկրտչյանն այն կարծիքին էր, որ «Դժուար է որոշել՝ այս աղանդը ինքը հեթանոսութիւնն էր պարզապէս, թէ քրիստոնէական տարրեր եւս կը պարունակէր իր մէջ... Այդ աղանդը Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ երեւան եկած է եւ իհարկէ այնտեղ ալ արմատներ նետած: Եւ սակայն, ի զուր պիտի ըլլար իր

⁶⁶⁹ Ըստ Ս. Երենյանի, Տրդատը մինչ վերջնական հաստատվելը, ընդմիջումներով էր գահակալել Հայոց գահին՝ նախ Հայաստանի Հռոմին ենթակա մասում 274-276, 287-293 թթ., այնուհետև նաև պարսկական ենթակայության տակ գտնվող արևելյան մասի վրա (293-297 թթ.), իսկ 298 թ. Սմբինի դաշնագրով վերջնականապես ծանաջվեց և վերականգնվեց Մեծ Հայքի թագավորության միասնական տարածքի վրա (տես՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 64-65, 70):

⁶⁷⁰ Սի քանի տարի անց Բ. Գեորգյանը կրկին այն կարծիքը հայտնեց, որ «անիշխանության ժամանակի» առումով Մովսես Խորենացու հիշատակած «հեթանոսական աղանդ» արտահայտությունը վերաբերում էր հենց բորբորիտոնների աղանդին (Բ. Գեորգեան, նշվ. աշխ., Ա հատոր, էջ 103):

անունը որոնել հայ մատենագրութեան մէջ: Ատոր հակառակ՝ հոն կը գտնենք «մծղնէ» բառը... Եւ ինչպէս որ ցոյց կուտան մատենագրական հետազայ հատակտորները, իրաւ ալ ան անունն է աղանդի մը որ իր վրայ մեսալեականութեան բոլոր նշանները կը կրէ: Եւ սակայն, ուղղափառ հաւատացեալներու բերնին մէջ այդ բառը յետոյ առած է նախատական իմաստ մը եւ այժմ որպէս սոսկ ածական կը նշանակէ «պիղծ»⁶⁷¹:

Մծղնեական աղանդի հետևորդների մասին հայ իրականության մէջ հնագույն գրավոր տեղեկությունը պահպանվել է Շահապիվանի (444թ.) ազգային-եկեղեցական ժողովի որոշումներում, մասնավորապես ԺԴ, ԺԹ և Ի կանոններում, որոնց նախաբանում գրված է. «Յետ փոխելոյ յերկրէս վարդապետացս, հարցն արդարոց եւ ճշմարիտ արեւնսդիր առաջնորդացն, եւ մանաւանդ սրբոյ քահանայապետին Սահակայ Հայոց կաթողիկոսի եւ հոգելից, հոգելիի ճշմարտասէր վարդապետին Մեսրոպայ, որ լուսաւորեաց զերկիրս Հայոց վարդապետութեամբ իւրով, ի փոխել նոցա յերկրէս լինէր եղծումն եւ քայքայումն կարգաց եւ արինաց սրբոյ եկեղեցւոյ... Բազմանային որք յաճախէին ի գործս պղծութեան... եւ ոչ ոք էր, որ քաղէր զորոմնն եւ սրբէր զգաղծն վնասակար, քանզի արմատացեալ էր սէգն եւ տարածանէր ար ըստ արեւ. լինէր հաճախումն մծղնէից եւ այլոց չարեաց կնահանէից, պոռնկաց, զողոց, անձնականակաց, ամենայն խոտորնակ չարագործաց յաշխարհիս Հայոց, ի մէջ տանս Թորգոմայ. եւ լինէր սուզ եւ տրտմութիւն...»⁶⁷²:

Ղազար Փարպեցու մի հաղորդման («Իսկ Հայոց աշխարհի աղանդ զոր ասեն՝ անանուն է ըստ վարդապետի եւ անգիր ըստ բանի») ⁶⁷³ կապակցությամբ Կ. Տեր-Մկրտչյանը գրել է. «ՂԺուար թէ կասկած մը ծագի այն մասին թէ մեսալեանց մասին է այստեղ խոսքը»⁶⁷⁴:

⁶⁷¹ Կ. Տեր-Մկրտչեան, Մծղնէից աղանդը, էջ 5:

⁶⁷² Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 425-426:

⁶⁷³ «Իսկ Հայոց աշխարհի աղանդը, որ ասում են, ոչ վարդապետի անվամբ է կոչվում, ոչ էլ գրի է առնված» (Ղազար Փարպեցի, էջ 464-465):

⁶⁷⁴ Կ. Տեր-Մկրտչեան, Պաղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ եւ մերծաւոր հերծուածային երեւոյթները Հայաստանի մէջ : Գերմ. բնագրէն թարգմ. տոքթ. Ա. Աբեղեան, Երուսաղէմ, 1938, էջ 61-62, 74:

Մ. Օրմանյանը, անդրադառնալով «անիշխանության» և Տրդատի գահակալության ժամանակներին վերաբերող հաղորդումներին, նշել է, որ Մովսես Խորենացին «բորբորիտոններուն կամ մծղնեայններուն երեւոյթը կանուանէ մնացեալ արմատ դառնութեան հեթանոսական աղանդոյն, ի ժամանակի անիշխանութեան ի վեր երեւեալ»⁶⁷⁵:

Ե. Տեր-Մինասյանը գտնում էր, որ Մովսես Խորենացու՝ «հեթանոսական աղանդի» մասին արտահայտությանը չպետք է լայն իմաստ հաղորդել, քանզի «դժվար է իրոք պատկերացնել, թե աղանդավորությունը Ե դարու սկզբներին այդքան տարածված է եղել Հայաստանում»⁶⁷⁶: Նա ճիշտ է համարել Կ. Տեր-Մկրտչյանի կարծիքը՝ «Գողթն գաւառում հեթանոսական մնացորդներ շատ կային. սբ. Մաշթոցը Շաբիթ իշխանի օգնութեամբ յաջողում է Աւետարանի քարոզութիւնը հաստատուն հիմունքների վրայ դնել, հեթանոսական պաշտամունքն արմատախիլ անել եւ այդ պաշտամունքին հաւատարիմ մնացած քուրմերին հալածել դէպի Մարաց կողմերը»⁶⁷⁷:

Հ. Մելքոնյանը, քննելով անապատական շարժման տարբեր դրսևորումները, եզրակացրել է, որ «բորբորիտոն» արտահայտությունն առաջացել է ոչ թե հունարեն «բորբորոս» բառից, որը նշանակում է «տիղմ, աղբ»⁶⁷⁸, այլ ասորական «բարբարիտ»-ից, որը նշանակում է «անապատի որդի»: Նա այնուհետև եզրակացրել է. «Համենայն դեպս մեսայանները և կամ մծղնեականներն ու բորբորիտոնները անապատական շարժման շարունակողներն էին ու նրանց սկզբունքների (աշխատանքից հրաժարում, ունեցվածքի ժխտում) իրագործմանը ձգտողներ»⁶⁷⁹: Ե. Տեր-Մինասյանը նշել է, որ բորբորիտների աղանդը «ասորական կամ, ավելի ճիշտ, արևելյան ծագում ունի», և կոչվել է «բար-

⁶⁷⁵ Մ. Օրմանեան, Ազգապատում, մ. Ա, էջ 297:

⁶⁷⁶ Ե. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 66:

⁶⁷⁷ Կ. Տեր-Մկրտչեան, նշվ. աշխ., էջ 106:

⁶⁷⁸ Դր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. I, էջ 476:

⁶⁷⁹ Զ. Գ. Մելքոնյան, IV դարի Միջագետքի և Հայաստանի սոցիալական շարժումների պատմությունից.- «Տեղեկագիր», ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ., 1963, N 12, էջ 33:

բուրյանե»⁶⁸⁰ ասորերենում, և, որ Կորյունի ու Պատմահոր մոտ խոսքը «բորբորիտոնների կամ բորբորիտների աղանդի մասին է»: Ե. Տեր-Մինասյանը, համաձայնվելով Գ. Ֆնտզյանի հետ⁶⁸¹, սխալ է համարել՝ բորբորիտների աղանդը նեստորականների հետ նույնացող Կոնիբերի պաշտպանած տեսակետը՝ նշելով, որ Մաշտոցի գործունեությունը «բորբորիտոն» աղանդի դեմ պետք է տեղի ունեցած լիներ 415-423 թթ., իսկ նեստորականությունը որպես աղանդ նգովվեց 431 թ. Եփեսոսի ժողովում⁶⁸²:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Ե. Տեր-Մինասյանը համաձայն էր Կ. Տեր-Մկրտչյանի (նա մի դեպքում մծղնեականներին և բորբորիտոններին իրարից զանազանել է, մյուս դեպքում դիտել սերտ կապվածության մեջ) և Մ. Օրմանյանի կարծիքին, որ Կորյունի հիշած «բորբորիտների աղանդը» պետք է սերտ առնչություն ունեցած լիներ մծղնեության հետ, որով ստիպված էին զբաղվել Մեսրոպ Մաշտոցի աշակերտները⁶⁸³:

Հայկական սկզբնաղբյուրներում ներկայացված բորբորիտոնների և մծղնեականների աղանդներից բացարձակապես տարբեր էր անապատական շարժումը, որի դրսևորումներից էր Հայաստանում IV դարում առաջացած «խոտաճարակների անապատը»: Փավստոս Բուզանդը բարձր գնահատական է տվել վերջինիս առաջնորդներին՝ Առյուծ լեռան անապատից ասորի Շաղիտային, Անահտա աթոռ անապատից հույն Եպիփանին և Տարոն գավառից հայ ձգնավոր Գինդ Սլկունուն⁶⁸⁴: Մ. Օրմանյանը, հենվելով Փավստոս Բուզանդի հաղորդումների, ինչպես նաև «Յայսմաուրք»-ի վրա, Շաղիտային, Եպիփանին և Գյուտին նշել է որպես Ներսես Ա Պարթև կաթողիկոսի (353-373 թթ.) գործակիցների: Մ. Օրմանյանը Հայ Առաքելական եկեղեցու պատմության մեջ նշանակալից տեղ է տվել այս անապատական-ձգնավորների շարժմանը և նշել. «Գինդ վերջի ատեններ իրեն յատուկ ձգնա-

⁶⁸⁰ G. Hoffmann, Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer, Leipzig, 1880, S. 124.

⁶⁸¹ Կորին, Վարք Մաշտոցի, ուղղեալ եւ լուսաբանեալ, Գ. Ֆնտզյան, Երուսաղեմ, 1930, Ներածություն, էջ ԻԲ-ԻԵ, ԼԸ, 36, 38:

⁶⁸² Ե. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 68:

⁶⁸³ Կ. Տեր-Մկրտչեան, Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, մ. Ա, էջ 108, Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 296-297, Ե. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 69:

⁶⁸⁴ Փավստոս Բուզանդ, էջ 185-186, 230-231:

րան ընտրած էր Ծաղկեոյ լեռները, ուր են ակունք Եփրատայ, եւ ուր նախապէս ճգնած էին Ոսկեան նահատակները: Գինդ Սլկունին, իբր բուն հայագոյի եւ իբր հայ վանականութեան նախահայր արժանի էր տօնելի, գոնէ յիշատակելի ըլլալու, սակայն անոր անունը Յայսմաուրքի իսկ անցած չէ: Պէտք է ըսել թէ մերագնեայց համար շատ հին է օտարներու վրայ հիանալու եւ իրենցինները անտեսելու սովորութիւնը»⁶⁸⁵: Անհրաժեշտ է հիշել, որ Մեսրոպ Մաշտոցի կապակցութեամբ Մովսէս Խորենացին նույնպէս մի խումբ անապատականներ է հիշատակել, որոնք բնակություն էին հաստատել Բարձր Հայքի Շաղագոմբ գավառում⁶⁸⁶:

Ինչ վերաբերում է բորբորիտոններին և մծղնեաներին, ապա սկզբնաղբյուրներում նրանք իրարից բավականին տարբեր են հիշատակված: Այնուամենայնիվ, հետազոտողները նրանց հաճախ մերժեցնում են, իսկ երբեմն էլ՝ նույնացնում, ինչը, ըստ Ե. Տեր-Մինասյանի, հետևանք է այն բանի, որ «Հայոց լեզվի մեջ մծղնություն բառը ստացել է զազրագործություն կամ սեռական պղծություն իմաստը, իսկ մծղնե բառը ուղղակի դարձել է «պիղծ», «պղծագործ» բառերի հոմանիշը, բոլորովին կորցնելով իր սկզբնական «աղոթք» իմաստը և ստանալով հունարեն borboros=պիղծ բառի նշանակությունը. բորբորիտոն և մծղնե աղանդների նույնացման պատճառներից մեկն էլ այդ է»⁶⁸⁷:

Գողթնում Մեսրոպ Մաշտոցի ծավալած հակաաղանդավորական գործունեությունը հետազոտողները դիտարկել են կամ բորբորիտոնների ու մծղնեաների, կամ էլ «հեթանոսական աղանդի»՝ «հեթանոսական մնացորդների» դեմ կիրառված պայքարի տեսանկյունից:

«Անիշխանության ժամանակի» առումով օգտագործված «հեթանոսական աղանդ» արտահայտությունն անհրաժեշտ է դիտել այդ ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցած Որմիզդ-Արտաշիրի ձեռնարկած միջոցառումների⁶⁸⁸ շրջանակում: Ուրեմն, խոսքը կա-

⁶⁸⁵ Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 221-222: Անապատականների մասին տես Կանոնագիրք Հայոց, Ա հատ., էջ 247:

⁶⁸⁶ Մովսէս Խորենացի, էջ 339-340:

⁶⁸⁷ Ե. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 69, 73-85:

⁶⁸⁸ Արտաշիրը «զմեհենիցն պաշտամունս առաւել եւս յորդորէ. այլ եւ զհուրն որմզդական, որ ի վերայ բազմին որ ի Բագաւան, անշէջ հրամայէ լուցանել»:

րող էր լինել պարսից արքունիքի կողմից կիրառված հակահայկական կրոնական քաղաքականության ընթացքում հայոց միջավայրում հայտնված օտարածին աղանդի մասին⁶⁸⁹:

Իրանում գրադաշտականությունը պետական կրոնի մակարդակի էր հասել III դարում՝ Շապուհ I-ի և Որմիզդի (272-273 թթ.) գահակալության ժամանակներում «Ահուրա Մազդայի մոբեդ» հռչակված՝ գերագույն քուրմ Կարտիրի ջանքերով, որը հայտնի է «Քաաբա-ի-Ջարդուշտի» արձանագրությունից⁶⁹⁰: Կարտիրը հատկապես ձգտեց կրակի տաճարներ հիմնել և գրադաշտականություն տարածել Իրանին հարևան երկրներում: Ռ. Ֆրայը գրել է. «Այլադավանների դեմ հետապնդումները տեղի են ունեցել նաև Կարտիրից էլ առաջ՝ հայկական և ասորական սկզբնաղբյուրները պատմում են այն ջանադրության մասին, որով Արտաշիրը հիմնում էր կրակի տաճարներ և քանդում հեթանոսական մեհյանները, հատկապես Հայաստանում»⁶⁹¹: Նույն կրքոտությամբ Կարտիրը պայքարեց Իրանի ներսում տեղ գտած կրոնական ուղղությունների դեմ, որոնց պաշտոնական գրադաշտականությունը չէր ընդունում:

Այս տեսանկյունից կարևոր է Գ. Ֆնտզյանի կարծիքը, որ Կորյունի հիշատակած աղանդավորները պետք է լինեին մանիքեականները⁶⁹²: Ուրեմն, «անիշխանության ժամանակ» Գողթան գավառում տեղ էր գտել Պարսկաստանից հալածված մանիքեականությունը, որը և Մովսես Խորենացին բնութագրել է որպես

Մեհեան նշանակում է *տաճար հեթանոսաց* (ՆԲՅԼ, հ. Բ, էջ 245), այսինքն՝ նախաքրիստոնեական ժամանակներից պահպանված հայկական ազգային՝ *հեթանոսական* տաճարները Որմիզդ-Արտաշիրը հրամայել էր վերածել մազդեզական կրակատների, իսկ Բագավանում գտնվող բազիլում հրամայել էր իր անունով կրակ վառել: Այդ ընթացքում Որմիզդ-Արտաշիրի հրամանով պարսիկ մոզերը նաև պղծել և քանդել էին հին հայոց պաշտամունքային հուշարձանները («Բայց գանդրիսն, զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեացն... զայնոսիկ փշոէ Արտաշիր») և շինությունները:

⁶⁸⁹ Հմմտ. պարսկական կողմի խոստումնազանց լինելու մասին Պատմահոր դատապարտող խոսքը. «...զի մի արդեօք պայմանին ստիցէ ըստ սովորութեան հեթանոսութեանն...» (Մովսես Խորենացի, էջ 239), «...հեթանոսության սովորությամբ արդյոք (Շապուհը) չի խախտի պայմանը...» (Մովսես Խորենացի, էջ 255):

⁶⁹⁰ P. Фраг, ук. соч., с. 300-303.

⁶⁹¹ Там же.

⁶⁹² Կորիւն, Վարք Մաշտոցի, Գ. Ֆնտզյան, Ներածություն, էջ ԼԸ:

«հեթանոսական աղանդ»: Մանիքեականների դավանած ուսմունքը քննադատվել է Եզնիկ Կողբացու կողմից՝ որպես զրվանականությանը հավասարագոր աղանդավորական վարդապետություն: Եզնիկը գրել է, որ մանիքեականներն ու զրվանականները «յայտ է՝ թէ վարուք եւեթ մեկնեալ են ի միմեանց. զի նոքա կերպարանողք են, եւ սոքա զեղխք, եւ յայտ յանդիման անձնադիրք, այլ կրօնիւք նոյնք եւ նոյնպիսք»⁶⁹³:

Ի դեպ, Մովսես Խորենացին գրել է, որ «անիշխանության ժամանակ» արմատ գցած «հեթանոսական աղանդը», թաքնված պահպանվել էր Տրդատի ժամանակից մինչև Արշակունյաց թագավորության վիճակի վատթարանալը: Այսինքն, Հայոց գահին Տրդատ III-ի գահակալությունից սկսած՝ «հեթանոսական աղանդը» բացահայտ այլևս չէր գործում մինչև V դարի սկզբները: Կորյունը հիշատակել է նաև «սատանայական դիւապաշտ սպասարութիւն», ինչը պետք է օտար միջավայրի ծնունդ լիներ: Միևնույն ժամանակ, պաշտամունքային տեսանկյունից, այդտեղ, նաև պատմիչի խոսքով ասած՝ «հայրենեաց աւանդելոց» հետևողներ կային: Ուրեմն, տեղական՝ հայկական հնագույն սովորույթներին հետևողները Մեսրոպ Մաշտոցի քարոզությամբ պետք է մնացած լինեին Գողթան գավառում, իսկ «սատանայական դիւապաշտ» սպասավորները՝ մանիքեականները, փախել էին իրենց աշխարհը՝ Մարաց կողմերը (հյուսիսային Իրան):

Այսպիսով՝ Մովսես Խորենացու հաղորդումները հիմնարար պատկերացում են տալիս Հայոց աշխարհում Մեսրոպ Մաշտոցի ծավալած լուսավորչական և հոգևոր գործունեության մասին, ինչը մեծ ավանդ էր Հայ Առաքելական եկեղեցու դավանանքի ամրապնդման գործում, որն էլ ուժեղացնում էր նրա ազգապահպան նշանակությունը հայ ժողովրդի կյանքում:

Հայ Առաքելական եկեղեցու դիրքորոշումը աղանդավորության հանդեպ միանշանակ կանոնագրված է. «Իսկ ոմանք հանդիպին վասն իւրեանց անզեղջ սրտին որ զաշխարհի զփառս անվախճան համարին, աղաւթից եւ պահոց անփոյթ լինին, ընթա-

⁶⁹³ Եզն ըկայ վարդապետի Կողբացոյ, էջ 82, 203, «պարզ է, որ (մանիքեականներն ու զրվանականները) միայն վարքով են միմյանցից տարբերվում: Թեև նրանք կեղծող են, և սրանք՝ զեղխ ու բացահայտորեն փափկասեր, սակայն կրոնով նույն են» (Եզնիկ Կողբացի, էջ 87):

նան առ գրարարս եւ առ պէսպէս աղանդս եւ զհլրեանց ոգին պղծեն եւ դատին ի հուր զեհենին ընդ սատանայի»⁶⁹⁴:

Ըստ Շահապիվանի ժողովի ԺԴ կանոնի՝ «Եպիսկոպոս ոք կամ երէց կամ սարկաւազ կամ ովէւիցէ ոք ի պաշտոնէից կամ յուխտէ, տանտիկին կին մի՝ իշխեսցէ ունել, որպէս եւ սովորութիւն է մծղնէից», ԺԹ կանոնի՝ «Եթէ ոք ի մծղնեութեան գտցի կամ երէց կամ սարկաւազ կամ ի հաբեղայից՝ քահանայութենէն լուծցի, աղուէսադրոշմ ի ճակատն դիցի եւ ի տեղիս ճգնաւորաց յապաշխարութիւն տացեն: Ապա թէ դարձեալ ի նմին գտցի, զջիղսն երկոսեան կտրեսցեն եւ ի գողենոց տացեն...»:

Շահապիվանի ժողովի Ի կանոնում ասված է. «Եթէ ի նախարարի տան գտցին պղծութիւնքն, կա՛մ կին նորա, կա՛մ դուստր կա՛մ որդի կա՛մ ինքն իսկ գլխովին... ապա եթէ ինքն եւս ընդ ընտանիսն ի մծղնեութեան գտցի, կալցին միաբան պղծագործ ընտանեօքն հանդերձ եւ ի հրապարակ անցեն եւ առաջի գլխավոր եպիսկոպոսին եւ առաջի մեծամեծաց իշխանացն եւ ասագ դատաւորաց, եւ միաբան վրեժխնդիր լինիցին օրինացն Աստուծոյ»: «Կանոնագիրք Հայոց»-ում մծղնէից աղանդի դեմ անհանդուրժողական վերաբերմունքի մասին խոսվում է նաև «Կանոնք տեառն Յովհաննիսի իմաստասիրի Հայոց կաթողիկոսի» ԼԲ. կանոնում. «Ոչ պարտ ի չարաղանդ մծղնէիցն տեղիս, որ կոչին պոլիկեանք ասել ունեք եւ կամ յարել եւ խաւսակից լինել եւ երթեւեկութիւն առնել, այլ ամենեւին հեռանալ ի նոցանէ, զարշել եւ ատել զնոսա, զի որդիք սատանայի են եւ լուցկիք յաւիտենական հրոյն, եւ աստարացեալ են ի սիրոյ կամաց Արարչին»⁶⁹⁵:

Միջնադարյան հայ իրավական մտքի պատմության մեջ աղանդավորականությունը ուխտազանցությանը հավասարագոր է համարվել: Ելնելով այդպիսի մոտեցումից՝ Մխիթար Գոշը (1120-1213 թթ.) խստորեն դատապարտել է նաև ուրացությունը. «Եթէ պատրեալ ի սատանայէ եւ ի նորին արբանակեաց կամ ի բռնութենէ՝ ուրանցի այր, մի՛ բնակեսցէ կին նորա ընդ նմա, թէ եւ

⁶⁹⁴ Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 172:

⁶⁹⁵ Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 461-462, 534-535:

բռնադատից, զի մի՛ ի մուլորութիւն նորա անկցի... Զնոյն իրաւունս պահելի է գխոտորեալն յաղանդս եւ ի հերձուածս»⁶⁹⁶:

Այսպիսով, հայոց բարոյահոգևոր կանոնագրության ակունքների ուսումնասիրությանը մեծագույնս նպաստում է հայ վաղմիջնադարյան պատմագիտական ժառանգությունը, որի շնորհիվ պահպանվել են դարերի խորքից ավանդաբար ժառանգված ազգային արժեքները: Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը կարևոր սկզբնաղբյուր է պատմագիտական հայեցակարգով գնահատելու Հայ Առաքելական եկեղեցու պայքարը Հայոց աշխարհի հոգևոր-գաղափարական ոլորտներին սպառնացող օտարամուտ աղանդավորականության դեմ:

4. Մովսես Խորենացու երկի գաղափարական ուղղվածությունը

Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի ստեղծման ժամանակաշրջանը բնութագրվում է վաղ միջնադարում՝ քաղաքական, մշակութային և հոգևոր բնագավառներում տեղի ունեցած մի շարք իրադարձություններով և երևույթներով, որոնք իրենց խորը հետքը թողեցին Հայոց պատմության մեջ:

V դարը քաղաքական առումով անցումային այն ժամանակաշրջանն էր, երբ հայ Արշակունյաց հարստությունն արտաքին և ներքին անբարենպաստ քաղաքական պայմաններում անկում ապրեց: Հայկական պետականությունը հարատևեց ի դեմս նախարարական համակարգի, որը Հայաստանում սերելով տոհմատիրական ժամանակներից, հնագույն ժամանակներից թագավորական իշխանության նեցուկն է եղել և հետագայում նրա հիման վրա վերականգնվեց Հայոց թագավորությունը Բագրատունյաց արքայատոհմի գլխավորությամբ (885-1045 թթ.):

Եղիշեն, IV դ. կեսերից մինչև V դ. առաջին տասնամյակներն ընկած ժամանակաշրջանը բնութագրելիս, գրել է. «Քանզի ի բառնալ ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանյան պարսկի, որ վարէր զիր իշխանութիւնն օրի-

⁶⁹⁶ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխ. Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 43:

նօք մոզուց. և բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ՝ որ ոչ ընդ նովին օրինօք մտանէին, սկիզբն արարեալ յամացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ, եւ կռուէր մինչեւ յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Վռամշապիոյ: Եւ իբրեւ զնա եւս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ եւ գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուծին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»⁶⁹⁷: Եղիշեն Արշակունիների թագավորող հարստության անկումը դեռևս չէր համարել թագավորության, ասել է թե՛ պետականության անկում, այլ դրա կրողն է համարել նախարարներին:

Սովսես Խորենացու երկի՝ «Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց» վերտառութիւնը կրող Ա գիրքը նվիրված է հայկական նախարարական տների ծագումնաբանութեանը⁶⁹⁸, որը Պատմահայրը, ներկայացնելով որպէս Հայոց հնագոյն՝ Հայկազունների իշխանական և թագավորական տոհմաբանութիւն, նշել է սերված Հայկ նահապետից:

Գրելով Մեծ Հայքի «Ծննդաբանութիւն»-ը և օգտագործելով Հայոց պետության՝ *Մեծ Հայք* պաշտոնական անվանումը⁶⁹⁹, Սովսես Խորենացին դրա հետ մեկտեղ զաղափարական միասնության մեջ տվել է հայկական պետականության ծագումնաբանական հիմքը կազմող Հայոց նախարարական տոհմերի պատմութիւնը:

⁶⁹⁷ «Երբ Արշակունյաց տոհմը վերացավ, Հայոց աշխարհին տիրեց պարսիկ Սասանի տոհմը, որ իր իշխանութիւնը վարում էր նրանց դեմ, ովքեր չէին ընդունում նույն կրոնը. սկսելով Տիրանի որդի Արշակ արքայի օրերից կռուում էր մինչև Վռամշապուհի որդի Հայոց Արտաշես արքայի վեցերորդ տարին: Եվ երբ նրան էլ զրկեց թագավորութիւնից, Հայոց նախարարներին անցավ թագավորութիւնը, որովհետև թեպէտև հարկը Պարսից արքունիքն էր զնում, սակայն Հայոց այրուծին ամբողջապէս նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ» (Եղիշէ, էջ 12-13):

⁶⁹⁸ Սովսես Խորենացի, էջ 5-88:

⁶⁹⁹ Այն, որ «Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց» վերնագրում առկա է *Մեծ Հայք* հասկացութիւնը, երևում է նշված ձևով այդ անվան կիրառումից առաջին գրքի ԻԹ գլխի մի արտահայտութիւնից՝ «զամենայն ընտիրս Հայոց Մեծաց և Փոքունց», որտեղ միանշանակ խոսքը Մեծ Հայքի և Փոքր Հայքի մասին է:

Պատմահայրը, գովերգելով Սահակ Բագրատունու տոհմական ծագումը, ողջ հայկական նախարարական տների առումով ընդհանրացնելով, գրել է. «Ազգի ես նախնականի, եւ քաջ եւ արգասաւոր՝ ոչ միայն ի բանս եւ ի պիտանաւոր խոհականութիւնս, այլ եւ ի մեծամեծս եւ ի բազում գործս արժանաւիառս. զորս յիշատակեսցուք ի կարգի պատմութեանս, յորժամ զորդի ի հօրէ ծննդաբանելով ազգաբանիցեմք զբովանդակն. իսկ զՀայաստանեայցս նախարարութիւնս, զամենեցուն զուստն եւ զգիարդն յայտնելով համառօտ եւ հաւաստի, որպէս ի յունականս ոմանս կայ ի պատմութիւնս»⁷⁰⁰:

Եվ այսպէս, ըստ «Պատմութիւն Հայոց»-ի շարադրանքի, հին ժամանակներից՝ դարեր շարունակ բնականորեն հարատեւել են հայ ազգը⁷⁰¹, պետությունը, թագավորությունը և նախարարական համակարգը:

Մովսէս Խորենացին հայ Արշակունյաց հարստության և թագավորական իշխանության անկման, ինչպէս նաև Հայ եկեղեցուն սպառնացող վտանգների ականատեսն էր: Ուստի, նա իր երկը եզրափակել է «Ողբք վասն բառնալոյ թագաւորութեանն Հայոց յազգէն Արշակունեաց, եւ եպիսկոպոսապետութեանն յազգէ սրբոյն Գրիգորի» վերտառությունը կրող գլխով, որի առաջին իսկ տողերում շեշտադրված են թե՛ հայ Արշակունյաց թագավորության անկման (428 թ.) և թե՛ Սահակ Պարթևի մահվամբ (439թ.) Հայոց կաթողիկոսական գահին Ս. Գրիգոր Լուսավորչի տոհմի դադարեցման իրողությունները. «Ողբամ զքեզ Հայոց աշ-

⁷⁰⁰ Մովսէս Խորենացի, էջ 6-7: «Դու պատկանում ես նախնական և քաջ ազգի, արգասավոր ոչ միայն խոսքի և պիտանի խոհականության մեջ, այլև բազմաթիվ մեծամեծ փառավոր գործերով, որոնք մենք կհիշատակենք այս պատմության ընթացքում, երբ հորից որդի ծննդաբանությունը տալով՝ կազմենք բովանդակ ազգաբանությունը, իսկ Հայաստանյայց նախարարությունների, ամեն մեկի որտեղից և ինչպէս ծագելը համառոտ և հավաստի կպատմենք, ինչպէս որ կամի քանի հունական պատմությունների մեջ» (Մովսէս Խորենացի, էջ 80):

⁷⁰¹ Ս. Մախասյանը «ազգ», «նախարար», «տոհմ» տերմինների մասին գրել է. «Նախարարն իր ընտանիքով (եղբայրներ, որդիք, թոռներ) հին լեզվով կոչվում էր ազգ («ազգ Բագրատունեաց», «ազգ Սիւնեաց» և այլն)... Դարերի ընթացքում «ազգը» բազմանալով, ճյուղավորվելով՝ առաջ էին գալիս ընտանիքներ, որոնք թեպետ այդ ազգից էին ծագում, բայց շատ հեռացել էին և խզել էին կապը «ազգի» բուն ներկայացուցիչների հետ: Այսպիսի ընտանիքները կոչվում էին «տոհմ»... (Մովսէս Խորենացի, էջ 359-360):

խարհ, ողբամ զքեզ հանուրց հիւսիսականաց վեհագոյն. զի բարձաւ թագաւոր եւ քահանայ, խորհրդական եւ ուսուցող. վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն. դրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն»⁷⁰²:

Հայոց հինավուրց թագավորութեան ժամանակաշրջանի ազգապետական գաղափարախոսութեան վրա հիմնված Մովսէս Խորենացու աշխարհայացքային ընկալմամբ, հայ Արշակունյաց թագավորական իշխանութեան վերացմամբ խախտվում էր Հայոց աշխարհի կարգն ու կանոնը:

Եվ որքան ծանր էր Մովսէս Խորենացու համար գիտակցել, որ երկրում ստեղծված իրավիճակը՝ պարսկա-բյուզանդական նվաճողական քաղաքականութեամբ հանդերձ, արդյունք էր նաև ներքին՝ նախարարական խմբավորման ընդվզման: Սակայն նրա շարադրանքից երևում է, որ թագավոր-նախարարներ հակամարտությունը ոչ թե համակարգային (քանզի այդ խմբավորումը ցանկանում էր, որ մեկ այլ թագավոր բարձրանար Հայոց գահին), այլ քաղաքական կողմնորոշումների և սկզբունքների պայքարի հետևանք էր, ինչը նաև դրսևորվեց հետագայում՝ Հայոց պատերազմի ժամանակ (451 թ.), երբ նախարարների մեծ մասը Վարդան Մամիկոնյանի հետ գնաց դեպի Ավարայր:

Մովսէս Խորենացին հայ Արշակունիների թագավորութեան անկման պատճառը համարել է թագավորի վարքով պայմանավորված «ամենայն նախարարացն»⁷⁰³ զայրույթով և պարսից արքունիքի կողմից իրահրվող հակամարտութեամբ: Սահակ Պարթևի դիրքորոշման նկարագրությունից երևում է, թե ինչպես Հայաստանում, այնպես էլ Պարսկաստանում եղած ժամանակ Հայոց կաթողիկոսը ձգտում էր բարձր արժանապատվութեամբ պահպանել հայրենի երկրի պատիվը և կասեցնել օտարի կողմից նվաճվելու վտանգը: Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի վարքի

⁷⁰² Մովսէս Խորենացի, էջ 358, «Ողբ՝ Հայոց թագավորութեան Արշակունյաց տոհմից և եպիսկոպոսապետութեան՝ սուրբ Գրիգորի տոհմից դադարելու մասին»: «Ողբում են քեզ, Հայոց աշխարհ, ողբում են քեզ, բոլոր հյուսիսականների մեջ վեհագոյնդ, որովհետև վերացան թագավորդ և քահանայդ, խորհրդականդ և ուսուցանողդ. վրդովեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտութեամբ չարափառությունը» (Մովսէս Խորենացի, էջ 350):

⁷⁰³ Մովսէս Խորենացի, էջ 346 :

նկարագրությունում երևում է Մովսես խորենացու գաղափարական համոզմունքը և համախոհությունը նրա նկատմամբ:

Արտաշես-Արտաշիր թագավորին ամբաստանողների հորդորներին՝ միանալ իրենց («չարախօսել առ արքային Պարսից, եւ ի բաց ընկենուլ զթագաւորն իւրեանց, եւ պարսիկ ածել ունող աշխարհիս»⁷⁰⁴), Սահակ կաթողիկոսը հստակ պատասխանել էր. «Պարտ է փոքր մի տանել թերութեան առնն, մինչեւ զելս իրացն խորհել մարթասցուք կայսերքն Յունաց Թէոդոսիւ, եւ ոչ անօրինաց մատնել ի ծաղր եւ յայպանումն»⁷⁰⁵: Իսկ երբ նրանք ջանացին Սահակ կաթողիկոսին իրենց ընտրած ուղուն համախորհուրդ դարձնել, նա նրանց ասաց. «Ինձ քաւ լիցի մատնել գայլոց զիմ մոլորեալ ոչխարս, եւ ոչ պատել զբեկեալն կամ զհիւանդացեալն, այլ գահավէժ առնել: Ձի եթէ էր հաւատացեալ թագաւորի առաջի՝ փութայի եւ ոչ յապաղէի, յուսալով զկանգնումն զլորելոյն... Եւ զի՞արդ լինիցի այդ, փոխանակել զիմ ախտացեալ ոչխարն ընդ առողջ գազանին, որոյ առողջութիւնն է մեզ պատուհաս»⁷⁰⁶:

Հայոց վերջին Արշակունի թագավորի դեմ գործած անձանց կապակցությամբ Մովսես խորենացին նշել է «ամենայն նախարարացն», սակայն հենց նրա շարադրանքից երևում է, որ արտաքին քաղաքականության մեջ խոսքը հիմնականում պարսից կողմնորոշում ունեցող նախարարների խմբավորման մասին էր: Իսկ վերջիններս, ներքին ուժերին ապավինողներին, կամ հունական կողմնորոշում ունեցողներին ներկայացնում էին որպես Բյուզանդիայի կողմը հակվածների, ինչպես հետևում է

⁷⁰⁴ Մովսես խորենացի, էջ 346, «չարախօսեն պարսից թագավորի առաջ, իրենց թագավորին դեն զցեն և պարսիկ բերեն աշխարհին կառավարող» (Մովսես խորենացի, էջ 341):

⁷⁰⁵ Մովսես խորենացի, էջ 347, «Պետք է մի կարճ ժամանակ այդ մարդու թերությունը տանել, մինչև մտածենք մի ելք գտնենք հունաց Թեոդոս կայսրի միջոցով, բայց ոչ թե անօրեններին մատնել, ծաղր ու խայտառակ լինելու» (Մովսես խորենացի, էջ 341):

⁷⁰⁶ Մովսես խորենացի, էջ 347, «Քավ լիցի, որ ես իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին, որ ես չպատեմ բեկվածին կամ հիվանդացածին, այլ գահավէժ անեմ: Եթե հավատացյալ թագավորի առաջ (պետք լիներ գնալ), կփութայի, չէի հապաղի, հուսալով, թե զլորվածին ոտքի (կարելի է) կանգնեցնել ... Եվ ինչպե՞ս կարելի է այդ իմ ախտացյալ ոչխարը փոխել առողջ գազանի հետ, որի հենց առողջությունը մեզ համար պատուհաս է» (Մովսես խորենացի, էջ 342):

հետևյալ շարադրանքից. «Իսկ նախարարացն գնտաւ ասեալ, իբր թէ խաբկանօք իցէ գործն՝ յապաղել գնօսա, զի թագաւորն պատրաստեցուսէ՝ ասեն ամենեքեան. «Վասն զի ոչ համակամեցար մեզ՝ չթագաւորել նմա, արդ եւ մեք կամեսցուք՝ եւ քեզ չքահանայանալ մեզ»: Եւ միաբանեալ ամենեքին, անցին առ արքայն Պարսից Վռամ, հանդերձ Սուրմակաւ ոմամբ Արծկեացի փառամոլ երիցու, չարախօսեալ զարքայէն իւրեանց զԱրտաշէրէ, և զմեծէն Սահակայ՝ զՅունօք գլեալ խորհրդովն»⁷⁰⁷:

Երբ պարսից արքա Վռամ V-ի (421-439թթ.) պահանջով պարսից արքունիք ժամանեցին Արտաշես-Արտաշիւրը և Սահակ Պարթևը, որից խնդրեցին ամբաստանել թագավորին, կաթողիկոսը հրաժարվեց որևէ բան ասելուց՝ չար կամ բարի: Երբ Սուրենյան Պահլավ տոհմից հազարապետը, համոզելով Հայոց կաթողիկոսին, ասաց. «Զի արիւն իմ ես եւ հարազատութիւն՝ զբարին քո խորհելով ասեմ. եթէ միայն այժմ միաբանեսցիս ընդ նախարարսդ՝ մեծարեալ լինիցիս յարքայէն Պարսից. եւ զթոռն քո զՎարդան կարգեսցէ ի վերայ Հայոց զուզահաւասար թագաւորին եւ համապատիւ», ապա Սահակ կաթողիկոսը պատասխանեց. «Զիա՞րդ վասն սնափառութեան եւ իշխանասիրութեան չարաբանիցեմ զընկերէ. կամ ընդէ՞ր ձեր այդպիսի յօժարութիւն՝ ընկենուլ զԱրտաշիւր. զի ես գնորա ապստամբութեան ինչ խորհուրդ ոչ գիտեմ. ապա եթէ վասն անառակ ինչ վարուց, զոր նոքա ամբաստանեն՝ պատուոյ արժանի է ի ձէնջ. ըստ ձերում անմաքրասէր օրինացդ, թէպէտ ըստ մերումն դատապարտի. բայց սակայն յինէն ոչ ինչ էք լսելոց ամենեւին»⁷⁰⁸:

⁷⁰⁷ Մովսէս Խորենացի, էջ 347, «Իսկ նախարարները մտածելով, թէ խաբելու նպատակով է այդպէս անում, որպեսզի իրենց անելիքը հետաձգել տա և թագավորին պատրաստի, միաբերան՝ ասում են. «Որովհետև դու չկամեցար մեզ հետ համակերպվել, որ մա չթագավորի, ահա մենք էլ չենք կամենում, որ դու մեզ քահանա լինես»: Եվ բոլորը միաբանությամբ ելան զնացին Պարսից Վռամ արքայի մոտ, մի ոմն փառամոլ երեցի՝ Արծկեացի Սուրմակի հետ, չարախոսելու իրենց Արտաշիւր արքայի և մեծն Սահակի վրա, թէ նրանք հույների կողմն են թեքվել» (Մովսէս Խորենացի, էջ 342):

⁷⁰⁸ Մովսէս Խորենացի, էջ 348: Պարսից հազարապետ. «Որովհետև դու ինձ արյունակից ես և հարազատ, ուստի քո բարին խորհելով ասում եմ. եթէ միայն այժմ միաբանես նախարարների հետ, Պարսից արքայից մեծարանք կգտնես, և մա քո թոռ Վարդանին Հայոց վրա կնշանակի՝ թագավորին հավասար և համապատիվ»: Սահակ կաթողիկոս. «Ինչպե՞ս կարող եմ ընկերոջ մասին

Մովսես Խորենացու շարադրանքի համաձայն, Հայոց թագավորին գահընկեց անելու դավադրությունում պարսից արքայի դերն ավելին էր, քան հայ նախարարների դիրքորոշումը: Ուստի, պարսից հազարապետի խոստումը՝ միջնորդել պարսից արքայի առջև Վարդան Մամիկոնյանին Արևելյան Հայաստանի վրա թագավորի իշխանությանը հավասար իշխանությամբ օժտելու մասին, ոչ այլ ինչ էր, քան խաբեությամբ պարսիկների կողմը կաթողիկոսին գրավելու փորձ, Հայոց թագավորության կործանման քաղաքականությունն իրականացնելու նպատակով: Դրա վկայությունն այն գործողություններն էին, որոնք հանգեցրին Արշակունյաց հարստության անկմանը, ինչպես նաև հող նախապատրաստեցին Լուսավորչի տան վերացման համար⁷⁰⁹:

Թագավորական իշխանության վերացումը Հայաստանում Սասանյանների վաղեմի ծրագիրն էր, պայմանավորված նրանց պայքարով՝ նախկինում իրենց գահակալական ախոյան հանդիսացող պարթև Արշակունիների և այնուիետև վերջիններից ճյուղավորված հայ Արշակունիների դեմ: Այնպես որ, հայ նախարար-

չարախոսել սնամիառությունից կամ իշխանասիրությունից, կամ ինչո՞ւ էք դուք այդպես ցանկանում Արտաշիրին գահընկեց անել: Ինձ բոլորովին հայտնի չէ, թե նա ապստամբության խորհուրդ ունեցած լինի. իսկ եթե նրան ամբաստանում են անառակ վարքի համար, նա դրանով պետք է պատվի արժանանա համաձայն ձեր ամնաքրասեր կրոնի, թեպետ մեր կրոնով դատապարտելի է: Ինձնից համենյան դեպս դուք ոչինչ չեք լսի» (Մովսես Խորենացի, էջ 343):

⁷⁰⁹ Մովսես Խորենացի, էջ 348-349: «Ապա գայրացեալ Վռամայ, ի մեծի հրապարակին արարեալ քննութիւն, եւ ոչ դնելով ունկն Արտաշրի՝ յօժարութեամբ լսէր չարախոսացն, առաւել եւս յոյժ աղտեղութեան բանիցն Սուրմակայ... Մինչ հրամայեաց Վռամ առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշրէ, եւ անդէն արգելուլ զնա, եւ զամենայն ինչս ազգի նորա ունել յարքունիս. նոյնպէս եւ զմեծն Սահակ, եւ զտունն կաթողիկոսական ունել յարքունիս, եւ տալ փոխանակ նորա յաթող եպիսկոպոսապետութեանն Յայոց զՍուրմակն գայն: Եւ մեծապարգև զնախարարսն արծակեաց պարսիկ մարզպանաւ, որուն անուն էր Վեհմիհրչապուհ» (Մովսես Խորենացի, էջ 348-349): «Ապա Վռամը գայրանալով մեծ հրապարակում քննություն արեց, և չունկնդրելով Արտաշիրին, հոժարութեամբ լսում էր չարախոսներին, առավել ևս Սուրմակի հույժ աղտեղ բառերին... Մինչդեռ Վռամը հրամայեց թագավորությունը վերցնել Արտաշիրից, նրան արգելափակել, իսկ իր տոհմի ունեցվածքը գրավել արքունի, նույնպես և մեծն Սահակի հետ վարվել և կաթողիկոսական տունը գրավել արքունի, իսկ նրա փոխարեն Յայոց եպիսկոպոսապետության աթոռը տալ այն Սուրմակին: Եվ նախարարներին մեծ պարգևներով արծակեց պարսիկ մարզպանի ուղեկցությամբ, որի անունն էր Վեհմիհրչապուհ» (Մովսես Խորենացի, էջ 343):

ների մի խմբավորման՝ թագավորի դեմ ուղղված գործողությունները չպետք է դիտել որպես ամբողջ նախարարական համակարգի հակադրում թագավորական իշխանությանը: Քանզի այդ բարդ ժամանակներում հենց Հայոց նախարարական համակարգն էր, որ պահպանեց պետականությունը Հայաստանում:

Այս ծանր և դրան նախորդած ժամանակներին, հոգևոր իմաստով, Եղիշեն հետևյալ գնահատականն է տվել. «Վասն որոյ և աստուածապաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբան տէրութեանն Շապոյ արքայից արքայի մինչև յամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ, զոր եգիտ սատանայ իւր գործակից, եւ զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց, եւ ելից գնա իբրեւ զպատկանդարան դեղեալ նետիւք»⁷¹⁰:

Այստեղ խոսքը IV դ. վերջին և V դ. առաջին երեք տասնամյակների միջև ընկած ժամանակաշրջանի⁷¹¹ մասին է: Աստվածապաշտության կապակցությամբ բնութագիրը կապված է Սահակ Պարթևի կաթողիկոսության (388-438 թթ.) և Մեսրոպ Մաշտոցի հոգևոր-լուսավորչական գործունեության հետ:

Սովսես Խորենացին բարձր է գնահատել Սահակ Պարթևի վարքը՝ պարսից արքունիքում նրա եղած ժամանակ: Ի պատասխան պարսից արքայի առաջարկի («Երդմնեցուցանեմ զքեզ ի քոյին հաւատ՝ միամիտ կալ ի ծառայութեան մերում, եւ ոչ խորհել իրս ապստամբութեան՝ պատրել ի մոլար հաւատակցութիւնն Յունաց, եւ լինել պատճառ կորստեան ի մէնջ Հայոց աշխարհին, փոխել զբարերարութիւնն մեր ի չարութիւն»⁷¹²), Սահակ Պարթևը

⁷¹⁰ «Այս պատճառով էլ աստվածապաշտությունը բաց ճակատով ու ինքնիշխան երևելի էր Հայոց աշխարհում, արքայից արքա Շապուի թագավորության սկզբից մինչև Վռամի որդի արքայից արքա Յազկերտի երկրորդ տարին, որին՝ սատանան իրեն գործակից գտավ, և հավաքված ամբողջ թույնը թափեց և լցրեց նրան ինչպես թունավորված նետերով կապարձ» (Եղիշե, էջ 12-13):

⁷¹¹ Այսինքն՝ մինչև Յազկերտ II-ի (439-457թթ.) գահակալության սկիզբը (երբ սաստկացան Սասանյանների տնտեսական ճնշումը և կրոնական հալածանքները) ընկած ժամանակաշրջանը:

⁷¹² Սովսես Խորենացի, էջ 351, «Երդվեցնում են քեզ քո հավատով, որ հավատարիմ մնաս մեր հպատակության մեջ, ապստամբության խորհուրդներ չտածես՝ խաբվելով հունաց մոլորական հավատակցությունից, պատճառ դառնալով, որ Հայոց աշխարհը մենք կորուստի մատնենք, և մեր բարերարությունը չարության փոխարկես» (Սովսես Խորենացի, էջ 345):

խիզախորեն «սկսաւ ճառել զերախտիս ծառայութեանն, եւ զապերախտն ի նոցանէ լինել. ընդ նմին եւ զկեղծաւոր քաղցրաբանութիւն նոցա յանդիմանելով, եւ զդառնութիւն խորհրդոց եւ զգործս չարաչարս. յարելով ի նոսին զընդդիմաբանել անմիտ հայիոյութեանցն արտաճառեցելոց, զոր ասաց մուլար հաւատակցութիւն. եւ զնոցայն խայտառակելով զպաշտամունս, կատարեաց ի հրաշալի աստուածաբանութիւն»։ Այնուհետև, երբ նրան արծաթ առաջարկվեց («հրամայեաց Վռամ արծաթ բազում տալ նմա՝ իբրեւ քաջաբանի եւ ուժգնասրտի առն համարձակախօսի առաջի այնքանոյ թագաւորի»), կաթողիկոսը պատասխանեց Սուրենյան Պահլավի տոհմից հազարապետին. «Արծաթ նորա նմա լիցի. բայց դու հաւանեցուցես զնա՝ տալ ինձ գերկուսս զայս միայն. զգահ նախարարացն Հայոց⁷¹³, որպէս կարգեալ յԱրտաշրէ վարեցան մինչեւ ցայժմ՝ նորին օրինակաւ հրամայեսցէ եւ առ յապայ, զի մարգպանք պարսիկք մի՛ կարասցեն ծանուցումն սակս այնր առնելով ինչ գերազանցօրէն՝ փոփոխել ըստ կամաց իւրեանց»⁷¹⁴։

Մովսէս Խորենացին, շարունակելով ներկայացնել Սահակ Պարթևի խոսքը, գրում է. «Եւ միւս՝ զի դարձուցէ զտուն ազգականին իմոյ եւ քո, զմանկանն Գազաւոնի զորդւոյն Հրահա-

⁷¹³ «Գահնամակի» մասին մանրամասն տես՝ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, с. 208, 249-250, 271-272, 291, Բ. Հարությունյան, «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը, ՊԲՀ, 1976, N 2, էջ 57-74, Գ. Սարգսյան, Մովսէս Խորենացու նախարարական տոհմերի ցանկը, ՊԲՀ, 1996, N 2, էջ 76 և այլն։

⁷¹⁴ Մովսէս Խորենացի, էջ 351-352, «Ակսեց ճառել իր ծառայութեան երախտիքների և իր հանդեպ նրանց ապերախտության մասին, միևնույն ժամանակ հանդիմանելով նրանց կեղծավոր քաղցր խոսքերը, ու դառը խորհուրդները և չարաչար գործերը, սրա հետ միասին նա ընդդիմախոսեց այն անմիտ հայիոյութեանը, որ արտահայտեց (Վռամը)՝ ասելով «մուլար հավատակցություն»։ և նրանց պաշտամունքը խայտառակելով՝ խոսքն ավարտեց հրաշալի աստվածաբանությամբ... Վռամը հրամայեց շատ արծաթ տալ նրան՝ իբրև ճարտարախոս ու խիզախ հռետորի, որն այդպիսի համարձակությամբ խոսում է այնպիսի թագավորի առաջ...»։ Սահակ Պարթևը պատասխանեց. «Նրա արծաթը թող իրեն մնա, բայց դու նրան համոզիր, որ այս երկու բանը կատարի ինձ համար, նախ՝ հրամայի, որ Հայոց նախարարների գահը մնա այնպես, ինչպես սահմանվել է Արտաշիրից եւ պահպանվում է մինչև այսօր, և պարսիկ մարգպաններն իրավունք չունենան չափազանցրած գեկուցումներ տալով, կամայապանորեն փոփոխել» (Մովսէս Խորենացի, էջ 345)։

տայ, թէ եւ ոչ յիւրում ետեղ, գԱրշակունին յաչաղելով անուն, գէթ ի կարգ ընկեցեալ՝ ընդ այլ նախարարս թուեսցի, յորում ետեղ ինքն կամեսցի, որպէս համազն նորա Կամսարականն, կամ յԱմատունին թափեալ ի հարցն գահուէ եւ յառաջամասինն պատուոյ ի ստորնակայինն, եւ կամ գրեթէ որպէս զարքունի գործակալութիւն նմա հաւատասցէ եւ նորուն զաւակաց համանմանակի ընտանութեամբ, մինչեւ Աստուած քաղցրասցի դարծուցանել ի կարգ հայրենի ընդ ձեռն որոյ եւ է թագաւորի»⁷¹⁵:

Ուրեմն, Հայ եկեղեցու կաթողիկոս Սահակ Պարթևը ջանքեր էր գործադրել, որ նախարարական համակարգը Արևելյան Հայաստանում մնար անձեռնմխելի պարսից մարզպանների կամայականութիւններէն:

Մովսես Խորենացու շարադրանքում միահիյուսվել են Շապուհ II-ի և Շապուհ III-ի օրոք կատարված իրադարձությունները և, փաստորեն, նրանց կերպարները ներկայացվել են որպէս մեկ անձ⁷¹⁶: Ի դեպ, նման մոտեցում է նկատվում նաև Ղազար Փարպեցու երկում. «...եւ ի բաժանելն զթագաւորութիւն Արշակունւոյն յերկուս, առ ի հնազանդեցուցանել զկողմն արեւմտից աշխարհիս Հայոց՝ թագաւորին Յունաց ընդ իշխանութեամբ իւրոյ տէրութեանն, եւ զկողմն արեւելից խոնարհեցուցանելով դառն եւ բռնաւոր ծառայութեամբ՝ արքային Պարսից՝ երթեալ այնուիտեւս նախարարքն Հայոց ի վիճակէ մասին արքային Պարսից՝ խնդրէին իւրեանց թագաւոր ըստ բնիկ նախնի կարգին յազգէն Արշակունեաց: Եւ արքայն Պարսից Շապիոյ կատարել զհայցուածս նոցա՝ շնորհէր նոցա թագաւոր Խոսրով անուն յազգէն Արշակունեաց... Իսկ իբրեւ մերժեալ լինէր Խոսրով ի թագաւորութենէն՝ խնդրէին Հայք ընդ Շապուհ՝ այլ թագաւոր իւրեանց. եւ նա հաւանեալ թա-

⁷¹⁵ Մովսես Խորենացի, էջ 352, «եվ երկրորդ՝ որ իմ ու քո ազգականի, Հրահատի որդու՝ պատանի Գազավոնի՝ տունը վերադարձնի, եթե ոչ իր տեղը տալով, քանի որ նա (Վռամը) ատում է Արշակունի անունը, զոնե նախարարների կարգի մեջ մտցնելով, ինչ տեղում որ ինքը կամենա, ինչպես (արեց) նրա ազգակից Կամսարականին, կամ Ամատունուն, սրանց հայրենական գահից և առաջնակարգ պատվից իջեցնելով ստորին աստիճանին: Կամ զոնե (որևէ) արքունական գործակալություն վստահի նրան (Գազավոնին - Ն. Դ.), ինչպես նրանց և նրանց զավակներին, մինչև Աստված շնորհ անի և նրան վերադարձնի հայրենական կարգը որևէ թագավորի ձեռքով») (Մովսես Խորենացի, էջ 346):

⁷¹⁶ Մովսես Խորենացի, էջ 310-312, 319-321:

գաւորեցուցանէր նոցա զՎռամշապուի զեղբայր նորին Խոսրովու, յազգէն Արշակունեաց. եւ թագաւորեցուցեալ զՎռամշապուի՝ արծակէր ի Հայս... Մեռաւ եւ Շապուի արքայն Պարսից, եւ թագաւորեաց Վռամ որդի նորա, որ էր Կրծան արքայ. յորմէ խնդրեցին իւրեանց Հայք թագաւոր զնոյն միւս անգամ զԽոսրով զեղբայր Վռամշապուի... Եւ եկեալ Խոսրով յաշխարհս Հայոց եւ կեցեալ ամիսս ութ՝ վախճանէր... Եւ ոչ կամեցեալ Յազկերտի թագաւորեցուցանէր ի վերայ աշխարհիս Հայոց յազգէն Արշակունեաց՝ թագաւորեցուցանէր ի վերայ սոցա զիւր զորդին, որուն անուն էր Շապուի»⁷¹⁷:

Ղազար Փարպեցու կողմից Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի կյանքին ու գործունեությանը տրված բնութագրերից ևս երևում է, որ Հայոց հոգևոր-լուսավորչական շարժումն էր նկատի ունեցել Եղիշեն՝ գրելով «աստվածապաշտության բարձրագույն կամակարության» ժամանակաշրջանի մասին: Ղազար Փարպեցին, գրելով, որ Հայոց աշխարհի բոլոր ավագ քահանաները, երանելի Մեսրոպ Մաշտոցի և բոլոր նախարարների հետ հավաքվեցին Հայոց թագավոր Վռամշապուի մոտ և նրա հետ միասին սկսեցին աղաչել Սահակ սուրբ կաթողիկոսին, որպեսզի նա Աստվածաշունչը հունարեն լեզվից թարգմանի հայերեն լեզվի, այնուհետև նշել է. «Եւ լուեալ զայս ամենայն բարեպաշտ կաթողիկոսն Հայոց սուրբն Սահակ ի թագաւորէն Հայոց Վռամշապ-

⁷¹⁷ «...Երբ Արշակունյաց թագավորությունը երկու մասի բաժանեցին, Հայոց աշխարհի արևմտյան մասը, իր տերության իշխանությամբ հանդերձ, ենթարկվեց Հունաց թագավորին, և արևելյան կողմը դառն ու բռնավոր ծառայությամբ խոնարհեցվեց Պարսից արքային: Այնուհետև Պարսից արքային վիճակված մասի Հայոց նախարարներն իրենց համար թագավոր խնդրեցին Արշակունյաց տոհմից՝ բնիկ նախնյաց կարգի համաձայն: Եվ Պարսից Շապուի արքան, նրանց թագավոր տվեց Արշակունյաց տոհմից Խոսրով անունով մեկին... Իսկ երբ Խոսրովն արդեն հեռացված էր թագավորությունից, հայերը Շապուից իրենց համար խնդրեցին ուրիշ թագավոր: Եվ նա էլ համաձայնելով՝ նրանց վրա թագավոր կարգեց Խոսրովի եղբայր Վռամշապուիին՝ Արշակունյաց տոհմից: Եվ Վռամշապուիին թագավոր դարձնելով ուղարկեց Հայաստան... Մեռավ նաև Պարսից Շապուի արքան, և թագավորեց նրա որդի Վռամը, որ էր Կրծան արքա: Հայերը նրանից խնդրեցին իրենց թագավոր դարձնել նույն Խոսրովին՝ Վռամշապուիի եղբորը... Եվ Խոսրովը զալով Հայոց աշխարհ ու մնալով ութ ամիս՝ վախճանվեց... Հազկերտը, չկամենալով Հայոց աշխարհի վրա թագավորեցնել Արշակունյաց տոհմից որևէ մեկին, սրանց վրա թագավոր կարգեց իր որդուն, որի անունն էր Շապուի» (Ղազար Փարպեցի, էջ 18-19, 40-43):

հոյ եւ յերանելոյն Մաշտոցէ եւ յամենայն ուխտէ քահանայիցն, եւ առաւել յաւագ տանուտերացն եւ յամենայն նախարարացն Հայոց՝ զուարճացաւ յոգի իւր, փառաւորելով զՓրկիչն ամենեցուն զՏէր Յիսուս Քրիստոս: Եւ կամաւոր յօժարութեամբ ետ զանձն ի գործ, պանծացեալ յԱստուծոյ գործակցութիւնն, որ ետ նմա զայնպիսի շնորհս առաւելապէս գիտութեան...»⁷¹⁸:

Այսպիսով, Մովսես Խորենացին, Եղիշեն և Ղազար Փարպեցին հայ Արշակունիների թագավորության վերջին փուլը, իր բոլոր բարոյություններով հանդերձ, իմաստավորել են հոգևոր-լուսավորչական շարժման տեսանկյունից: Պատմիչների գնահատմամբ այդ ասպարեզում կարևոր էին Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի վեհ կերպարը և նրա ազգանվեր գործունեությունը, որի լուսապսակն էին Մեսրոպ Մաշտոցի իրականացրած հայ գրերի գյուտը, թարգմանչական ու լուսավորության գործը:

Կաղ միջնադարում սասանյան և բյուզանդական արքունիքների վարած նվաճողական քաղաքականության իրագործմամբ, իրադարձություններն ընթանում էին հայ ժողովրդի համար ոչ բարենպաստ պայմաններում: Լեոն, մանրամասն քննելով հայ Արշակունյաց թագավորության անկման ժամանակաշրջանին վերաբերող Ղազար Փարպեցու տեղեկությունները⁷¹⁹, որոշակի եզրահանգման է եկել Հայոց պատմության մեջ նախարարական համակարգի ունեցած տեղի և դերի վերաբերյալ՝ նշելով, որ, թեպետ և պատմիչը Արշակունյաց թագավորության անկումը աղետ է համարել, սակայն բոլորովին անձեռնմխելի էր մնում նախարարությունը, որը ժողովրդի մեծամասնության համար դարեր ի վեր եղել է իրական ազգային իշխանությունը, թեկուզ և պառակտված գավառական առանձնության մանր և նեղ շրջանակների մեջ⁷²⁰:

⁷¹⁸ «Եվ Հայոց բարեպաշտ կաթողիկոս սուրբն Սահակն այս ամենը լսելով Հայոց Վռամշապուհ թագավորից, երանելի Մաշտոցից և քահանաների ամբողջ միաբանությունից, առավելապես՝ Հայոց ավագ տանուտերներից և բոլոր նախարարներից, հոգով զվարճացավ, փառավորելով ամենքի Փրկիչ Տեր Յիսուս Քրիստոսին: Կամավոր հոժարությամբ իր անձը տվեց գործին, պանծացրեց Աստծո գործակցությունը, որը նրան տվել էր առավելապես գիտության այնպիսի շնորհներ...» (Ղազար Փարպեցի, էջ 38-39):

⁷¹⁹ Նույն տեղում, էջ 25:

⁷²⁰ Լեո, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1967, էջ 12:

Մովսես Խորենացու երկի գաղափարական հենքը երևում է պատմական անցքերի շարադրանքի ոգուց և պատմական երևույթներին տրված գնահատականներից: Պատմահայրն իր մտախոհ հայացքը սկեռել է դարերի միջից լուսարծակող Հայկ նահապետի և նրա սերունդների աշխարհաշեն կերպարների և գործերի վրա, որոնք բյուրեղացել են որպես հայ ժողովրդի հարատևության գաղափար: Պատմահայրը Հայոց հինգհազարամյա ամբողջական պատմության մեջ է դիտել պատմական առանձին դրվագները: IV դարի երկրորդ կեսը Հայոց պատմության բարդագույն ժամանակաշրջաններից էր, երբ Առաջավոր Ասիայում Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև ծավալվող հակամարտության պայմաններում տեղ գտած քաղաքական անբարենպաստ ընթացքների հետևանքով տեղի ունեցավ Մեծ Հայքի թագավորության պարսկա-հռոմեական բաժանումը, որը հանգեցրեց հայ Արշակունյաց հարստության անկմանը (428 թ.):

Միջազգային ասպարեզում Հայաստանին սպառնացող վտանգները գալիս էին երկրի պարսկա-բյուզանդական բաժանվածությամբ պայմանավորված իրավիճակից և, հատկապես, Սասանյան Պարսկաստանի նվաճողական քաղաքականության սաստկացումից: Հայ Արշակունյաց հարստության անկումից հետո նախարարական համակարգը Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր և գաղափարական առաջնորդությամբ իր ձեռքն էր վերցրել երկրի ղեկը: Օտար տիրապետության տարածմանը հայ ժողովուրդը դիմակայեց թե՛ ազատագրական պայքարով և թե՛ հոգևոր ինքնուրույնության պահպանումից բխող մշակութային բարձր արժեքների ստեղծմամբ: Այսպիսի մթնոլորտում էր ստեղծագործում Մովսես Խորենացին, և բնական է, որ իր ապրած ժամանակի ոգին նրան թելադրեց խորանալ հայ ժողովրդի պատմության խորքերը և գիտականորեն վեր հանել նրա փառքի և կորուստների հիմնական պատճառները:

Մովսես Խորենացու երկում անքակտելի ամբողջություն է կազմում *Հայրենիք* և *Հայոց պետություն* ու *ազգային և քրիստոնեական հավատք* հասկացությունների գաղափարական միասնությունը: Հայկ նահապետը Հայրենիքի պաշտպանության գաղափարի նախակարապետն էր, Հայկի սերունդները՝ Հայկազուն-

ները, հայրենի տարածքների ամբողջացման և շենացման, ինչպես նաև ճշմարիտ աստվածապաշտության ջատագովներ էին: Նրանց ապրած ժամանակներին երանի տալով՝ Մովսես Խորենացին գրել է. «Քանզի ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք եւ իմոյ արեան առուք եւ հաւաստի հարազատք: Եւ սիրելի էր ինձ՝ յայնժամ գալ Փրկչին եւ զիս գնել, եւ առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել, եւ նոցա տէրութեամբն խրախճանալ, եւ յարդեացս ապրել վտանգիցս»⁷²¹:

Մովսես Խորենացին իր հայացքը սևեռում է Հայոց պետականությունը կրող նախարարական համակարգի և այն ներկայացնող իշխանական տների ազգաբանության վրա՝ «Պատմութիւն Հայոց»-ի առաջին գիրքը վերնագրելով «Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց»: Դրանով Պատմահայրն ընդգծել է այն տեղն ու նշանակությունը, որ հայ իշխանական տներն ունեցել են Հայոց աշխարհի կյանքում՝ կազմելով հայկական պետականության և թագավորական իշխանության հիմքը: Եվ արդեն պարզ է դառնում V դարի հայ պատմագրության մեջ առկա այն աշխարհայացքային հենքը, որի համաձայն նախարարություններն էին հանդիսանում թագավորական իշխանության, ասել է թե՛ հին և միջին դարերում պետականության գերագույն դրսևորումը: Առավել հակիրճ այս դրույթը ձևակերպել է Եղիշեն, երբ, IV դ. կեսերից մինչև V դ. առաջին տասնամյակներն ընկած ժամանակաշրջանը բնութագրելիս, ինչպես վերը նշվեց, գրել է, որ «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն»:

Եղիշեն հայ Արշակունյաց թագավորող հարստության անկումը չի համարել թագավորության, ասել է թե՛ պետականության անկում, այլ դրա կրողն է համարել նախարարական համակարգը: Լրացնելով Մովսես Խորենացուն, որը հին Հայոց պետականության զարգացման գործում նախարարական տները դիտարկում էր որպես թագավորական իշխանության հիմք, Եղիշեն նախարարներին, միջնադարի առումով, նշել է որպես պետականու-

⁷²¹ Մովսես Խորենացի, էջ 66-67, «Քանզի մեր թագավորների մեջ ինձ այս մարդիկ են սիրելի, իբրև բնիկներ, արյունակիցներ և իսկական հարազատներ: Եվ ինձ սիրելի էր, որ այն ժամանակ Փրկչին եկած և ինձ գնած լիներ, որ նրանց ժամանակ ես աշխարհ եկած լինեի, նրանց տերությամբ խրախճանայի և այժմյան վտանգներից խուսափած լինեի» (Մովսես Խորենացի, էջ 122):

թյան կրող, ինչը դարեր անց իր դրսևորումը գտավ Հայոց թագավորական իշխանության վերականգնման ընթացքում՝ Մեծ Հայքում Բագրատունիների և Կիլիկիայում Ռուբինյանների օրոք:

Բարձր գնահատելով Մովսես Խորենացու ներդրումը հայ պատմագիտության պատմության մեջ՝ Գ. Սարգսյանը գրել է. «Մովսես Խորենացին առաջինը մտահղացավ և իրականացրեց հայ ժողովրդի՝ սկզբից մինչև իր ժամանակի ամբողջական պատմության ստեղծման գաղափարը, մի գործ, որն իր նշանակությամբ անմիջապես հետևում է Մաշտոցի դարակազմիկ սխրագործությանը... Մովսես Խորենացին իր ժողովրդին ցույց տվեց նրա ամբողջական պատմական կերպարը, նրա ակունքները, անցյալի փառապանծ էջերը և գործիչներին, դրանով իսկ նրան ուժ էր հաղորդում և վստահություն ներշնչում, որոնք այնքան անհրաժեշտ էին սպասվող դժվարին պատմական ուղու վրա...»⁷²²:

Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի գաղափարական հիմքը կազմում է Հայրենիքի և հավատքի ազատությունը՝ որպես ազգային գոյատևման անհրաժեշտ նախապայման: Հայկի ազատատենչ հաղթական պայքարին նվիրված շարադրանքով սկսվող և համազգային զգոնության կոչ բովանդակող «Ողբքով» ավարտվող Պատմահոր երկի առանցքն են՝ անձնագոհ պայքարով Հայրենիքի պաշտպանությունը, անկախ պետականության ամրապնդմամբ՝ պետության հզորացումը և շենացումը, Հայոց հոգևոր ընկալմամբ՝ հնագույն ժամանակներից նախնիների պաշտամունքին⁷²³ նվիրումով և քրիստոնեության ընդունումով, հավատքային ամբողջությունը: Մովսես Խորենացին վեր է հանել հնագույն ժամանակներից մինչև վաղ միջնադար՝ ազգային արժեքներով կարևորված Հայոց պատմության հիմունքները:

⁷²² Мовсес Хоренаци, с. VIII-IX.

⁷²³ Հին Հայոց հեթանոսության մեջ երկակիություն չի եղել: Ինչպես նշել է Գ. Սարգսյանը, «Հայ հեթանոսության մեջ բացակայում է երկակիությունը, ինչով և հայկական հեթանոսական կրոնը տարբերվում է իրանական զրադաշտականությունից» (Мовсес Хоренаци, с. XLII, 231, прим. 172):

HISTORICAL-SPIRITUAL SYSTEM OF MOVSES KHORENATSI'S «THE HISTORY OF ARMENIA» AND THE BIBLE

Norayr E. Danielyan

Summary

After the proclamation of Christianity as the state religion (301 AD) in Armenia the Bible preached in churches orally since the invention of the Armenian alphabet (405 AD) by Mesrop Mashtots being translated in written form appeared to be at the centre of the attention of the Armenian historians and especially of Movses Khorenatsi (the 5th century AD) in historical spiritual questions.

Movses Khorenatsi in his work "The History of Armenia" widely used citations from the Bible (Old and New Testaments) as was accepted in the early Middle Ages. At the same time he mentions "old histories" which he used for his work to give a full picture of ancient history of the nations which had not been mentioned in the Bible.

The ideological basis of Movses Khorenatsi's "The History of Armenia" constitutes the concept of the freedom of the Fatherland and Faith as a fundamental precondition of its national existence. The backbone of the work begins with the description of the Haik's freedom-loving struggle and ends with "Lamentations", which was a call for national vigilance. The Father of Armenian historiography then presents the ideas of the defence of the Fatherland as a self-sacrificing struggle and the country's prosperity by the strengthening of its independent statehood, as well as the integrity of faith by devotion to the ancestors' worship since ancient times.

The Bible citations testify to the interpretative and historic-comparative methods of the approach of Movses Khorenatsi to the correlation between data contained in the Bible and antique and early medieval sources. In Movses Khorenatsi's work the problem of the interrelation of historic events and spiritual phenomena is presented within the frame of a complete value system of national pre-Christian and Christian epochs.

Movses Khorenatsi exposed the pivot of the development of the history of Armenia, from ancient to early medieval times, determined by millennia-old national values.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբյուրներ

Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչյանի եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909:

Ազաթանգեղոս, Պատմություն Հայոց: Աշխարհաբար թարգմ. ներածությունով և ծան. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1977:

Անանուն Եղեսացի, ժամանակագրություն. - Ասորական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագիրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982:

Աստվածաշունչ. Մատեան Հին եւ Նոր Կտակարանների: Արեւելահայերէն նոր թարգմանութիւն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994:

Աստուածաշունչ մատեան, Հին եւ Նոր Կտակարանաց, Երեւան, 1997:

Գիրք Աստուածաշունչք Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1860:

Գիրք թղթոց. Մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901 (երկրորդ հրատարակություն, Երուսաղէմ, 1994):

Գիրք Թուոց, Քննական բնագիր, աշխատ. Ա. Զեյթունյանի, Անթիլիաս, 1998:

Գիրք Ծննդոց. Քննական բնագիր, աշխատ. Ա. Ս. Զեյթունյանի, Երևան, 1985:

Գիրք Ելից. Քննական բնագիր, աշխատ. Ա. Զեյթունյանի, Երևան, 1992:

Գիրք Ղետացոց. Քննական բնագիր, աշխատ. Ա. Զեյթունյանի, Անթիլիաս, 1993:

Գիրք Մակաբայեցոց. Քննական բնագիր, աշխատ. Հ. Ս. Ամալյանի, Երևան 1996:

Եզնըկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914:

Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց, Աղանդների հերքումը, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970:

Եղիշէ. Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին: Թարգմ. և ծան. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989:

Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ Ժամանակականք երկմասնեայ, մասն Ա, Ժամանակագրութիւն պատմական, Վենետիկ, 1818:

Եւսեբիոսի Կեսարացոյ Պատմութիւն Եկեղեցոյ, յեղեալ յասորւոյն ի հայս, պարզաբանեալ նոր թարգմանութեամբ ի յոյն բնագրէն ի ձեռն Հ. Աբրահամ վ. Ճարեան, Վենետիկ, 1877:

Թովմայի վարդապետի Արծրունիոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս էած Ք. Պատկանեանի, Ս. Պետերբուրգ, 1887:

Լաբուբնեայ դիւանագիր դպրի Եղեսիոյ Թուղթ Աբգարու, յեղեալ յասորւոյն ի ձեռն սբ. թարգմանչաց, Վենետիկ, 1868:

Լիակատար Վարք եւ Վկայաբանութիւնք Սրբոց որք կան 'ի հին Տոնացոյցի եկեղեցոյ Հայաստանեայց, յօրինեալ վավերական բանիւք Ճառընտրաց մերոց եւ այլոց ազգաց, հանդերձ ծանօթութեամբ ի Հ. Մկրտիչ վրդ. Աւգերեան, հ. Ե, Վենետիկ, 1813:

Խաչիկյան Լ., Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», Երևան, 1992:

Կանոնագիրք Հայոց, հ. Ա, հ. Բ, աշխատասիրութեամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964-1971:

Կնիք Հաւատոյ Ընդհանուր սուրբ եկեղեցոյ յուղղափառ և սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց, յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ, հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի, Էջմիածին, 1914 (Լուսատիպ վերահրատարակութիւն եպիս. Տէր-Մկրտչեանի), Անթիլիաս, 1998:

Կորիւն, Վարք Մաշտոցի, ուղղեալ եւ լուսաբանեալ, Գ. Ֆնտզլյան, Երուսաղէմ, 1930:

Կորյուն, Վարք Մաշտոցի (Պատմութիւն վարուց և մահուան առն երանելոյ սրբոյն Մաշթոցի վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին), բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմ., առաջաբանով և ծան. ի ձեռն Ս. Աբեղյանի, Երևան, 1981:

Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան: Աշխատ. Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան: Աշխարհաբար թարգմ. և ծան. Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982:

Ղեբուբնա Եղեսացի, Թուղթ Աբգարու թագաւորի Հայոց եւ քարոզութիւնք Սրբոյն Թադէի առաքելոյ, Յերուսաղէմ, 1868:

Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատ. Խ. Թորոսյանի, Երևան, 1975:

Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց: Աշխատութեամբ Մ. Աբեղեյան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913 (Լրացումները Ա. Բ. Սարգսյանի, Երևան, 1991):

Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ., ներածություն և ծան. Ստ. Մալխասյանի, Երևան, 1961, 1981:

Յերոնիմեայ վասն ի քսան և յերկուս գիրս առ ի Հեբրայեցուց զպատմութիւնսն բաժանելոյ: Գերմաներէն-հայերէն ներածութեամբ և հայ-լատին բնագրով հրատարակեց Հ. Արիստակէս Վարդանեան (Մխիթ. Ուխտէն), Վիեննա, 1920:

Յովհաննու Իմաստասիրի Աւծնեցույ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1953:

Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979:

Սամուէլի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:

Սասունցի Ղափիթ, առաջաբանը, բառարանը և ծանոթագրությունները Ս. Բ. Հարությունյանի, Երևան, 1981:

Սոփերք Հայկականք, հաւաքածոյ մանր մատենագրութեանց նախնեաց, Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց Հայրապետի, Ջ, Է, Վենետիկ, Ս. Ղազար, 1853:

Սոփերք Հայկականք, Կորին վարդապետի պատմութիւն Սրբոյն Մեսրոպայ, ԺԱ, Վենետիկ, 1854:

Ստեփանոս Սիւնեցի, Մեկնութիւն չորից Աւետարանչաց: Աշխ. Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի, Երևան, 1994:

Ստեփանոսի Տարօնեցույ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:

Փաւստոսի Բիւզանդացույ Պատմութիւն Հայոց: Բնագիրը Բ. Պատկանյանի, թարգմ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987:

Փիլոնի Եբրայեցույ Մնացորդք 'ի Հայս, որ են մեկնութիւն Ծննդոց եւ Ելից, Ճառք 'ի Սամփսոն, ի Յովնան եւ յԵրիս մանկունս կամ 'ի հրեշտակս, հայերէն բնագիր եւ հանդիպադիր լատիներէն թարգմանութիւն, աշխատասիրութեամբ Մ. Ավգերեյանց, Վենետիկ, 1826:

Геродот. История, перев. и прим. Г. А. Страпановского, Л., 1972.

Мовсес Хоренаци. История Армении, перев. с древнеарм. введение и примечания Г. Х.Саркисяна, 1990.

Ammiani Marcelini Rerum gestarum libri, qui supersunt, rec. C. U. Clark, vol. 1-2, Berolini, 1910-1915.

Biblia Hebraica, Stuttgart, 1990.

Biblia Sacra Vulgata, Deutsche Bibelgesellschaft, 1969.

Claudii Ptolemaei Geographia. Vol. Primi, Pars Secunda, Parisiis, 1901.

Eusebius. The History of the Church. Transl. by G.A. Williamson. Revised and edited with a new introduction by A. Louth, London, 1989.

Hebraisches und aramaisches Wörterbuch zum Alten Testament, herausgegeben von G. Fohrer, Berlin-New York, 1989.

Herodoti Historiae, Oxonii, 1912.

Le Nouveau Testament de notre Seigneur Jesus-Christ. Traduit en Français sur l'original Grec avec des notes littérales. T. I, 1718

Moses Khorenats'i, History of the Armenians. Translation and Commentary on the Literary Sources by R.W. Thomson, Cambridge, Massachusetts, London, 1978, Revised edition, Ann Arbor, 2006.

Strabo. The Geography, with an English translation by H. L. Jones, Camb., Mass., London, in eight volumes, vol. VI, 1960.

The Apostolic Fathers, with an English transl. by K. Lake, in 2 vol., London, 1959.

The Hebrew-English Old Testament from the Bagster Polyglot Bible, London, 1971.

The Holy Bible. New York, 1953.

The Septuagint version of Old Testament, with an English translation, Michigan, 1970/1971.

Պատմագիտական գրականություն

Աբեղյան Մ., Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի ու գրականության սկիզբը - «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, Երևան, 1962:

Աբեղյան Մ., Երկեր, հ. 3, Երևան, 1968:

Ադոնց Ն., Մաշթոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների. - «Մեսրոպ Մաշտոց»:

Ալիշան Ղեւոնդ, Այրարատ, Բնաշխարհի Հայաստանեայց, Վենե-

տիկ, 1890:

Ալիշան Ղեւոնդ, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869:

Ակինեան Ն., Սուրբ Գրքի հայերէն թարգմանութիւնը, «Հանդէս ամսօրեայ», N 10-12, 1935:

Աճառյան Հր., Տիմոթէոս Կուզ Եւ սբ. Գրքի նորաբեր թարգմանութիւնը, «Շողակաթ», գիրք առաջին, Վաղարշապատ, 1913:

Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. I, III, IV, Երևան, 1971, 1977, 1979:

Աճեմեան Շահե, Խորենացին և Աստուածաշունչը. - Միջազգային գիտաժողով՝ «Աստվածաշնչական Հայաստան», Զեկուցումների դրույթներ, Օշական, 1999, Երևան, 2005:

Այվազյան Ա. Մ., Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագիտության մեջ (քննական տեսություն), Երևան, 1998.

Անասյան Հ. Ս., Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը. - «Էջմիածին», ԺԱ-ԺԲ, 1966:

Անասյան Հ. Ս., Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Ա, Երևան, 1959:

Անասյան Հ. Ս., Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Բ, Երևան, 1976:

Աստուրեան Հ. Յ., Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հայաստանի եւ Հռովմայ 190-էն ն. Ք. մինչեւ 428, յ. Ք., Վենետիկ - Ս. Ղազար., 1912:

Բարթիկյան Գր., Մատթեոսի Ավետարանը հունարենի և հայերենի բաղդատությամբ, - Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005,

Աւգեր Հայր Յ., Ակնարկ մը սբ. Գրոց հայկական թարգմանութեան վրայ. - «Բազմավէպ», 1935, N 9-12, էջ 353-384:

Բիւզանդացի Ն., Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Գիրք Մակաբայեցոց, Եւթաղ Աղեքսանդրացի, Ագաթանգեղոս եւ Փաւստոս Բիւզանդ, Տփղիս, 1900:

Գարագաշեան Ա., Քննական պատմութիւն Հայոց, Ա - Գ, Թիֆլիս, 1895:

Գարեգին Ա Կաթողիկոս (Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն),
Դէպի Լոյս եւ Կեանք, Երևան, 1994:

Գէորգեան (Ճուղուրեանց) Բարդուղիմէոս, Խորենացին Ե. դարի առաջին քառորդից մատենագիր, Վաղարշապատ, 1908:

Գէորգեան (Ճուղուրեանց) Բ., Խորենացուն Խորենացով պետք է հասկանալ, Վաղարշապատ, Ա և Բ հատորներ, Վաղարշապատ, 1899:

Դանիելյան Է., Սուրբ Թադեոս առաքյալի ավանդության արտացոլումը հայ պատմագրության մեջ – «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը», Երևան, 2000:

Դանիելյան Է., Մովսես Խորենացու ավանդագրույցի Սիսակ-Առանյան ճյուղի «նորագույն քննադատության» սնանկությունը – ՊԲՀ, N 2, 2008:

Դանիելյան Է., Հայ գրի, թարգմանական և ինքնուրույն գրականության պատմական նշանակությունը քաղաքակրթությունների երկխոսության տեսանկյունից. - «21-րդ դար», 2010, N 1

Դանիելյան Ն., Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում աստվածաշնչյան և առասպելաբանական պատկերացումների արտացոլման հարցի շուրջ, «Լրաբեր», հաս. գիտ., N 3, 1997:

Դանիելյան Ն., Աստվածաշնչի հայերեն թարգմանության փուլերի մասին, ՊԲՀ, N 1, 2001:

Դանիելյան Ն., Աստվածաշնչին անդրադառնալու Մովսես Խորենացու պատմահամեմատական մեթոդը, «Հայոց պատմության հարցեր», ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2001:

Դուրեան Ե., Նկատողութիւններ Եզնիկի աստուածաշնչական վկայութիւններու մասին, «Ամբողջ երկեր», Զ, Երուսաղէմ, 1935:
Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963:

Երեմյան Ս. Տ., Նախշ-ի-Ռուստեմի «Քաաբա ի Ջարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, ՊԲՀ, 1966, N 2:

Ջարբեհանալեան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ - ԺԳ), Վենետիկ, 1889:

Թորոսեան Հ. Յ., Հայ Ոսկեդարը եւ Աստուածաշունչի թարգմանութիւնը, «Բազմավէպ», 1935, N 9-12, էջ 293-313:

Թոփչյան Ա., Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը, Երևան, 2001:

Ինզլիզեան Հ. Վ., Հայաստան Սուրբ Գրքի մէջ, Վիեննա, 1947:

Ինճիճեան Ղ., Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Մեծ Հայք, Վենետիկ, 1822:

Ինճիճեան Ղ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Գ, Վենետիկ, 1835:

Լեո, Երկերի ժողովածու, Ա, Հայոց պատմություն, հ. Ա, Երևան, 1966:

Լեո, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1967:

Խաչիկյան Լ., Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դար), Երևան, 1951:

Ծովական Ն. վրդ. (Պողարեան), Աստուածաշունչի հայերէն հին թարգմանութիւնները, «Սիոն», 1945, 1946:

Կանայեանց Ս., Անհայտ գավառներ, Էջմիածին (Վաղարշապատ), 1914:

Կիլեսերյան Բ., Եղիշէ. Քննական ուսումնասիրութիւն. Ազգային Մատենադարան, ԾԷ, Վիեննա, 1909:

Կիլեսերեան Բ., Վարդապետութեան աստիճանները Հայ եկեղեցւոյ մէջ, Անթիլիաս, 1980:

Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, 18, Դ.Ճ. Вардумян, Дохрестованские культуры армян, Երևան, 1991:

Հարությունյան Բ., «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը. ՊԲՀ, 1976, N 2:

Հարությունյան Ս.Բ., Հայոց առասպելաբանություն, Երևան, 2000:

Ղազարյան Ա., Ղազանաբանական պայքարը եւ քաղաքական կողմնորոշման հարցը քրիստոնյա Արևելքում եւ Հայ Եկեղեցին (Դ-Ձ դդ.): Ատենախոսության սեղմագիր, Երևան, 1995:

Ղափանցյան Գ., Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940:

Մալխասյանց Ստ., Բանասիրական հետազոտություններ, Երևան, 1982:

Մանանդյան Հ., Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար. - «Մեսրոպ Մաշտոց»:

Մանանդյան Հ., Երկեր Բ, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, մաս Ա, Երևան, 1978:

Մարկվարտ Հ., Հայոց այբուբենի ծագումը և Մաշտոցի կենսագրությունը. - «Մեսրոպ Մաշտոց»:

Մելիք-Օհանջանյան Կ., Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի, «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, հաս. գիտ., 1947, N 7:

Մելքոնյան Հ. Գ., IV դարի Միջագետքի և Հայաստանի սոցիալական շարժումների պատմությունից, «Տեղեկագիր», ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ., 1963, N 12:

Մուշեղյան Ա., V դարի հայ մատենագրության ժամանակագրական խնդիրներ - Ատենախոսություն բանասիրական գիտ. դոկտ. գիտ. աստիճան հայցելու համար, Երևան, 1996:

Մուշեղյան Ա., Հայ եկեղեցու և Հայոց պետության փոխհարաբերությունները V դարի հայ մատենագրության մեջ, «Հայոց եկեղեցի և պետություն», Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2000:

Մուշեղյան Ա., Ո՞ր լեռան վրա է իջել Նոյան տապանը, ՊԲՀ, 2003, N1:

Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007:

Մուրադյան Կ., Բարսեղ Կեսարացին և նրա «Կեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976:

Մուրադյան Պ., Ղազար Փարպեցու մի տեղեկության պատմամշակութային նշանակությունը, «Էջմիածին», 1980, N 1:

Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, հ. Ա, հ. Բ, Վենետիկ, 1836-1837 (Երևան, 1979):

Շահխաթունեանց Յովհաննէս եպիսկոպոս, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Այրարատայ, հատոր Առաջին, Էջմիածին, 1842:

Շահնազարյան Ասլան, Բագրատունյաց նախարարական տոհմի ծագումը, Պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», հ. I, Երևան, 1948:

Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784:

Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987:

Սարգսյան Գ. Խ., Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965:

Սարգսյան Գ. Խ., Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966:

Սարգսյան Գ. Խ., Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ, Բանբեր Մատենադարանի Մ, N 3, 1956, էջ 31-42:

Սարգսյան Գ. Խ., Մովսես Խորենացու նախարարական տոհմերի ցանկը, ՊԲՀ, 1996, N 1-2:

Սարգսյան Գ. Խ., Նախահայրենիքի, ժողովրդի կազմավորման և Ուրարտուի մասին, ՊԲՀ, N 1, 1990:

Սարգսյան Գ. Խ., Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները (Հայկի և Հայկյանների առասպելի պատմականության և զարգացման փուլերի խնդիրը), ՊԲՀ, 1992, N2:

Սարգսյան Ա., Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» և Մովսես Խորենցին, Երևան, 1991:

Վարդանյան Վ., Տրդատ Մեծի ավանդը Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետական համակարգի ձևավորման գործում, «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը», Երևան, 2000:

Տիրացյան Գ. Ա., Հին հայկական պետության առաջացումը, ՊԲՀ, 1966, N 4, էջ 83-102:

Տէր-Մինասեանց Ե., Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորիոց եկեղեցիների հետ, Սբ. Էջմիածին, 1908:

Տեր-Մինասյան Ե., Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971:

Տէր-Մկրտչեան Գ., Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան հայ թարգմանութեան ժամանակը եւ Սուրբ Գրքի երրորդ կամ «նորաբեր» հայ թարգմանութիւնը, «Արարատ», Էջմիածին, 1908:

Տէր-Մկրտչեան Կ., Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, մաս Ա, Վաղարշապատ, 1908:

Տէր-Մկրտչեան Կ., Մծղնէից աղանդը, «Արարատ», Ա, 1895:

Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984:

Տէր-Մկրտչեան Կ., Պաղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ եւ մերձաւոր հերձուածային երեւոյթները Հայաստանի մէջ: Գերմ. բնագրէն թարգմ. տոքթ. Ա. Աբեղեան, Երուսաղէմ, 1938:

Տէր-Մկրտչեան Կ., Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, մասն Ա., Վաղարշապատ, 1908:

Տեր-Պետրոսյան Լ., Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախօրինակը, «Էջմիածին», Ա, Թ, 1975:

Տեր-Ղևոնդյան Ա., Ագաթանգեղոսի արաբական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը, ՊԲՀ, 1973, N 1:

Տէր-Մինասեանց Ե., Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորիոց եկեղեցիների հետ, Սբ.Էջմիածին, 1908:

Տրայինա Ջուստո, Մովսես Խորենացիի «դասական» ավանդույունը Հայոց պատմության Ա գրքի 5-րդ գլխուն մեջ, ՊԲՀ, 1992,

N 1:

Տաշեան Յ., Սկզբնաւորութիւնը Եդեսիոյ եկեղեցւոյն եւ Արգարու զրոյցը, «Հանդէս ամսօրեայ», 1889, N 3:

Տեր-Մինասյան Ե., Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմութիւնից, Երևան, 1968:

Փափազեանց Ի., Պատմութիւն եկեղեցական, Վենետիկ, 1848:

Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կոստանդնուպոլիս, 1911

(Երևան, 1993):

Օրմանեան Մ., Ազգապատում, Կոստանդնուպոլիս, մասն Ա, 1913:

Адонц Н., Начальная история Армении у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фавста Византийского.— ВВ , т. VIII, 1901, вып. 1-2:

Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971.

Адонц Н., Фауст Византийский. - Христианский Восток, 1917-1920.

Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы, т. 2, Тбилиси, 1984.

Джаукян Г. Б., О соотношении хайасского и армянского языков. - ՊԲՀ, 1988, N 2.

Иванов Вяч. Вс., Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Вахагну. - ՊԲՀ, 1983, N4.

История древнего Востока, М., 1979.

История Древнего Востока, т. 1, 2, М., 1983, 1988.

Карагезян О., Проблема этногенеза и самоназвания армянского народа по клинописным источникам, «Լրաբեր» հիւ. գիտ., 1988, N 7:

Луконин В. Г., Завоевания Сасанидов на Востоке и проблема кушанской абсолютной хронологии. - ВДИ, 1964, N 3.

Луконин В. Г., Иран в III в, М., 1979.

Мифы народов мира, т. I-II, М., 1991-1992.

Рожанский И. Д., Развитие естествознания в эпоху антич-

ности, Москва, 1979.

Саркисян Г., Черты эллинизма в духовной культуре древней Армении, *ՊԲՀ*, 1976, N 3:

Саркисян Г. X., К предыстории армянской письменности, "Кавказ и Византия", Ереван, 1980, вып. 2.

Саркисян Г. X., "История Армении" Мовсеса Хоренаци, Ереван, 1991.

Тер-Мовсисян М., История перевода Библии на армянский язык, СПб., 1902.

Фрай Р. Наследие Ирана „М., 1972.

Abgarjan G. Selbstbild der Armenier. Bild der Armenier in Deutschland. "Europäische Hochschulschriften", Reihe, XXI, Berlin-Bonn-New York-Paris-Wien, 1993, Bd. 123.

Adontz N. Armenia in the Period of Justinian. Transl. with partial revisions, A bibliographical note and Appendices by N. Garsoian, Lisbon, 1970.

The Cambridge Medieval History, IV: The Byzantine Empire. Cambridge, 1966.

Bo Johnson, Die armenische Bibelübersetzung als hexaplarischer Zeuge im 1. Samuelbuch, Lund, 1968.

Bury J.B., The Date of the Battle of Singara.-Byzantinische Zeitschrift, V, 1896.

Carrier A., Nouvelles sources de Moïse de Khoren, Vienne, 1893.

Carrier A., La légende d'Abgar dans l'Histoire d'Arménie de Moïse de Khorenc, Paris, 1895.

Dvornik F., The Idea of Apostolicity in Byzantium.-Dumbarton Oaks Studies IV, Harvard, 1958.

Field Frederick, Origenis Hexaplorum quae supersunt, Oxford, 1867-1875.

Hoffmann G. Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer, Leipzig, 1880.

A Greek-English Lexicon. Compiled by H. Liddell and R. Scott, Clarendon Press, Oxford, 1996.

Inglisian V., Armenien in der Bibel, Wien, 1935.

Lexikon der Antike, Leipzig, 1972.

La Croze M., Histoire du Christianisme d'Éthiopie et d'Arménie, La Haie, 1739.

Lyonnet S., Les origines de la version Arménienne et le Diatessaron. – Biblica et Orientalia N 13, Roma, 1950.

Maksoudian Krikor. Chosen of God. The Election of the Catholicos of All Armenians from the Fourth Century to the Present by Father, New York, 1995.

Russell B. A History of Western Philosophy, New York, 1966

Seyfarth W., Römische Geschichte, Kaiserzeit 2, Akademie-Verlag, Berlin, 1975.

Thomson R., Studies in Armenian Literature and Christianiy. The Maccabees in Early Armenian Hisroriography. Variorum, 1994.

Tixeront L.J., Les origines de l'nglise d'Edesse et la lngende d'Abgar, Paris, 1888.

Wolff R.L., Politics in the Latin Patriarchate of Constantinople, 1204-1261.-Dumbarton Oaks Papers, VIII, Cambridge, Mass., 1954.

Zimmerman J.E., Dictionary of Classical Mythology, New York, 1980.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ
ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. Աստվածաշնչի հայերեն թարգմանության պարբերացման հարցը 10
2. Աստվածաշնչի թարգմանությանը Մովսես Խորենացու
մասնակցության խնդիրը 39
3. V դարի հայ պատմիչների պատմահամեմատական մոտեցումը
Աստվածաշնչին 48
4. Առասպելներին մոտեցման պատմագիտական սկզբունքը 63

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ»-ՈՒՄ

1. Ծննդոց Գրքի մեկնությունը Մովսես Խորենացու երկում 70
2. Աստվածաշնչական աշտարակաշինության ավանդության արծագանքը
«Պատմութիւն Հայոց»-ում 87
3. Հայոց ազգաբանությունը «ազգերի ծննդաբանության»
լույսի տակ..... 97
4. Աստվածաշնչական տոհմաբանության համեմատությունը
դիցաբանության հետ.....107
5. Հայոց Արշակունյաց թագավորության պատմության
համեմատությունը Աստվածաշնչի որոշ դրվագների հետ 110

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ»-ՈՒՄ

1. «Պատմութիւն Հայոց»-ը Նոր Կտակարանի լույսի տակ 142
2. Առաջին երեք Տիեզերական ժողովները Մովսես Խորենացու
լուսաբանությամբ158
3. Դավանանքային խնդիրները և պայքարն աղանդավորության դեմ..... 172
4. Մովսես Խորենացու երկի գաղափարական ուղղվածությունը 195

SUMMARY210

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 211

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ223

[2500գր.]

ՆՈՐԱՅՐ ԷՂՈՒԱՐԴԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»-Ի
ՊԱՏՄԱՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ
ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

НОРАЙР ЭДУАРДОВИЧ ДАНИЕЛЯН

ИСТОРИКО-ДУХОВНАЯ СИСТЕМА
“ИСТОРИИ АРМЕНИИ” МОВСЕСА ХОРЕНАЦИ
И БИБЛИЯ

Սրբագրիչ՝ Խոնարհիկ Քարաուղլանյան

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՊԱԳՐԻՉ՝

ԳԱՅԱՆԵ ԲՈՒՐՈՒՅԱՆ
ՍՈՒՐԱԴՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

0019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24/4

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0187992

A $\frac{\pi}{97143}$